

Հավելված N1  
ՀՀ կառավարության 2009 թվականի  
Հունիսի 26-ի N 782-Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
2010-2013 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

|  |   |            |
|--|---|------------|
|  | <b>ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 2010-2013 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ</b> | <b>4</b>   |
|  | <b>1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</b>  | <b>7</b>   |
|  | <b>2. ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ</b>  | <b>13</b>  |
|  | <b>3. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ</b>  | <b>15</b>  |
|  | <b>4. ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱԿՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ</b>   | <b>31</b>  |
|  | 4.1. ՓՄՁ ոլորտի իրավիճակի վերլուծություն  | 31         |
|  | 4.2. Ծրագրի արդյունքները և հետագա խնդիրները   | 33         |
|  | 4.3. Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրները  | 34         |
|  | 4.4. Մասնավոր հատվածի զարգացման 2010-2013թթ. առաջնահերթությունները  | 35         |
|  | 4.5. Մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացման ծրագրի տրամաբանական հենքը   | 38         |
|  | <b>5. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ</b>   | <b>40</b>  |
|  | 5.1. Կրթություն   | 40         |
|  | 5.1.1. Կրթության ոլորտի իրավիճակի վերլուծություն  | 40         |
|  | 5.1.2. Կրթության ոլորտի ռազմավարությունը  | 51         |
|  | 5.2. Մշակույթ, սպորտ և երիտասարդություն   | 52         |
|  | 5.2.1. Մշակույթ   | 53         |
|  | 5.2.2. Երիտասարդության հարցեր   | 60         |
|  | 5.2.3. Սպորտ  | 61         |
|  | 5.3. Առողջապահություն   | 62         |
|  | 5.3.1. Առողջապահության ոլորտի իրավիճակի վերլուծություն.   | 62         |
|  | 5.3.2 Առողջապահության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը  | 77         |
|  | 5.4. Սոցիալական պաշտպանություն  | 78         |
|  | 5.4.1. Սոցիալական պաշտպանության ոլորտի իրավիճակի վերլուծություն   | 78         |
|  | 5.4.2. Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը  | 98         |
|  | 5.5. Երեխաների իրավունքների պաշտպանություն  | 99         |
|  | <b>6. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿԱ</b>  | <b>101</b> |
|  | 6.1. ՀՀ Սյունիքի մարզում արդյունաբերության և էներգետիկայի իրավիճակն ու ներկա ցուցանիշները   | 101        |
|  | 6.2. Հիդրոէլեկտրաէներգիայի արտադրություն  | 108        |
|  | 6.3. Արդյունաբերություն ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը  | 117        |
|  | <b>7. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ</b>  | <b>118</b> |
|  | 7.1. Գյուղատնտեսության ոլորտի իրավիճակի վերլուծությունը   | 118        |
|  | 7.2 Գյուղատնտեսության զարգացման ծրագրի նպատակները և ռազմավարությունը  | 134        |
|  | <b>8. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>  | <b>141</b> |
|  | 8.1. Ոլորտի իրավիճակի վերլուծություն  | 141        |
|  | 8.2. Բնապահպանության ոլորտի խնդիրները և ռազմավարությունը  | 147        |
|  | <b>9. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ</b>   | <b>151</b> |

|            |  |            |
|------------|--|------------|
| 9.1.       | Զբոսաշրջության ոլորտի իրավիճակի վերլուծությունը                                      | 151        |
| 9.2.       | Զբոսաշրջության ոլորտի զարգացման ռազմավարությունը                                     | 154        |
| <b>10.</b> | <b>ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ</b>  | <b>158</b> |
| 10.1.      | Բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակում                             | 158        |
| 10.2.      | Հանրակրթական դպրոցների շինարարություն և հիմնանորոգում                                | 158        |
| 10.3.      | Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում   | 160        |
| 10.4.      | Մշակութային օբյեկտների հիմնանորոգում   | 160        |
| 10.5.      | Մարզական օբյեկտների հիմնանորոգում  | 160        |
| 10.6.      | Բնակարանաշինություն և քաղաքաշինական այլ խնդիրներ                                     | 160        |
| 10.7.      | Բնակֆոնդի և վարչական շենքերի հիմնանորոգում   | 162        |
| 10.8.      | Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների ձևավորում                                | 162        |
| 10.9.      | Կայուն զարգացման ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումներ                          | 163        |
| <b>11.</b> | <b>ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ</b>                                     | <b>164</b> |
| 11.1.      | Ենթակառուցվածքների ոլորտի իրավիճակի վերլուծություն                                   | 164        |
| 11.2.      | ճանապարհաշինություն. տրանսպորտային ենթակառուցվածքներ                                 | 164        |
| 11.5.      | Զրամատակարարում  | 168        |
| 11.4.      | Գազամատակարարում   | 173        |
| <b>12.</b> | <b>ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ</b> | <b>175</b> |
| 12.1.      | Տարածքային կառավարում  | 175        |
| 12.1.1     | Վարչատարածքային բաժանում   | 175        |
| 12.1.2     | Գերակայություններ և հիմնախնդիրներ  | 175        |
| 12.1.3     | Մարզպետարանի կառավարում  | 177        |
| 12.1.4     | Քաղաքացիական ծառայություն  | 178        |
| 12.1.5     | Էլեկտրոնային կառավարում  | 179        |
| 12.2.      | Տեղական ինքնակառավարում  | 180        |
| 12.2.1     | Համայնքային խնդիրներ   | 180        |
| 12.2.2     | Համայնքային ծառայություն   | 184        |
| 12.2.3     | Տեխնիկական ապահովվածություն  | 188        |
| 12.2.4     | Համայնքների զարգացում  | 189        |
| 12.3.      | Քաղաքացիական հասարակություն  | 195        |
| <b>13.</b> | <b>ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>               | <b>198</b> |
| 13.1       | Քարաթափերի կանխարգելում  | 198        |
| 13.2       | Բնական աղետներ   | 199        |
| 13.3       | Տեխնածին աղետներ   | 199        |
| 13.4       | Բնական և տեխնածին աղետների ռիսկի նվազեցում   | 200        |
| <b>14.</b> | <b>ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ</b>   | <b>201</b> |
| <b>15.</b> | <b>ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ</b>                             | <b>207</b> |
| <b>16.</b> | <b>ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ</b>   | <b>209</b> |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ  
ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 2010-2013 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**



Սյունիքը եղել և այժմ էլ հանդիսանում է Հայաստանի ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող բնավարչատարածքային միավորներից մեկը: Այս առումով Սյունիքի զարգացումը միշտ էլ կարևորվել է Հայաստանի Հանրապետության բարձրագույն իշխանության կողմից:

Այսօր մարզը կարիք ունի կենտրոնական կառավարման մարմինների ավելի մեծ ուշադրության ու աջակցության և տրամաբանական է, որ մարզի հիմնախնդիրների լուծման գործընթացը մշտապես գտնվում է առաջին հերթին հենց Հայաստանի Հանրապետության Նախագահի տեսադաշտում: Հայաստանի Հանրապետության Նախագահի 2008

թվականի հունիսի 30-ի ՆԿ-128-Ն կարգադրությամբ հաստատված միջոցառումների ժամանակացույցում ներառվել են նաև Սյունիքի մարզի մի շարք համայնքներում Հանրապետության Նախագահի նախընտրական հանդիպումների ժամանակ արձարձված հիմնախնդիրները, որոնց մի մասն արդեն լուծում է ստացել, իսկ մյուս մասն ընդգրկված է Սյունիքի մարզի զարգացման սույն ծրագրում:

Ծրագիրը համահունչ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությանը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N1207-Ն որոշմամբ հաստատված Կայուն զարգացման ծրագրին:

Կարծում ենք՝ այն կնպաստի Սյունիքի 109 համայնքների կողմից ներկայացված առաջնահերթությունների ու մարտահրավերների արդյունավետ լուծմանը և նմանատիպ ծրագրերի իրականացման շնորհիվ Սյունիքն աստիճանաբար կդառնա Հայաստանի զարգացած տարածքներից մեկը:

Ծրագիրը կազմվել է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N38 արձանագրային որոշմամբ հաստատված հայեցակարգի: Ծրագրի մշակման ընթացքում օգտագործվել է 2004թ. «Սյունիքի մարզի տնտեսական զարգացման հիմնական ուղղությունների» և 2008 թվականի հունիսին «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2008-2012 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղությունների» կազմման ժամանակ Սյունիքի մարզպետարանում կուտակված փորձը:

Մարզային զարգացման հանձնաժողովում, ոլորտային աշխատանքային խմբերում ընդգրկվել են հնուտ և փորձառու մասնագետներ, որոնց ջանադիր աշխատանքի արդյունքում էլ կազմվեց մարզի համար կարևոր նշանակություն ունեցող այս փաստաթուղթը:

Ծրագրի կազմման աշխատանքների համակարգման գործում զգալի է եղել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության դերը: Ոլորտային խնդիրների ճիշտ ձևակերպումներին ու մարզի զարգացման ծրագրում դրանց ընդգրկմանը նպաստել է համագործակցությունը ճյուղային

նախարարությունների, հանրապետական գործադիր և պետական կառավարման այլ մարմինների հետ:

Մասնակցային գործընթացի ապահովման համատեքստում, ծրագրի մշակման ընթացքում հաշվի են առնվել բնակչության տարբեր սոցիալական խմբերի, գործարարների, հասարակական և այլ կազմակերպությունների առաջարկություններն ու դիտողությունները:

Մարզի զարգացման ծրագիրը Սյունիքում նաև ներդրումներ կատարելու առաջարկ է՝ ուղղված միջազգային, դոնոր և այլ կազմակերպություններին, գործարարներին, շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց: Սյունիքի մարզպետարանն ակնկալում է, որ նշված շահագրգիռ սուբյեկտների համար ծրագրում ընդգրկված խնդիրներն ու առաջարկները հետաքրքրություն կներկայացնեն և բոլոր ներդրողների հետ պատրաստ է փոխշահավետ համագործակցության՝ հանուն Սյունիքի մարզի կայուն զարգացման:

Ծրագրի մշակմանն աջակցած պետական կառավարման մարմիններին, Սյունիքի մարզի խորհրդի անդամներին, Մարզային զարգացման հանձնաժողովին, ստեղծված աշխատանքային խմբերին և աշխատանքների հաջող իրականացման գործում կարևոր ներդրում ունեցած բոլոր անձանց Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի անունից հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

**ՀՀ Սյունիքի մարզպետ Ա.Խաչատրյան**

**ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ**

|         |   |
|---------|---|
| ԱԱՌ     | Ազգային անվտանգության ռազմավարություն                     |
| ԱԱՀՀՀ   | Առավել աղքատ համայնքների համալիր հետազոտություն           |
| ԱԽ      | Աշխատանքային խումբ  |
| ԱՀՈԾ    | Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր               |
| ԱՄԳ     | Աղքատության մասնակցային գնահատում                         |
| ԱՎԾ     | Ազգային վիճակագրական ծառայություն                         |
| ԳԷՖ     | Գլոբալ էկոլոգիական ֆոնդ                                   |
| ԵՄ      | Եվրամիություն   |
| ԿԶԾ     | Կայուն զարգացման ծրագիր                                   |
| ՀԿ      | Հասարակական կազմակերպություն                              |
| ՄԱԿ ԶԾ  | ՄԱԿ-ի զարգացման ծրագիր                                    |
| ՄԺԾԾ    | Միջին ժամկետ ծախսային ծրագիր                              |
| ՄԱՄՀ    | Մարդկային աղքատության մոդիֆիկացված համաթիվ                |
| ՄԱԿ ՀՊԾ | ՄԱԿ-ի համաշխարհային պարենի ծրագիր                         |
| ՄԶԱՀ    | Մարդկային զարգացման ազգային հետազոտություն                |
| ՄԶԳ     | Միջազգային զարգացման գործակալություն                      |
| ՄԶՄԿ    | Մարդկային զարգացման միջազգային կենտրոն                    |
| ՄՍՈՒՀ   | Միջին մասնագիտական ուսումնական հաստատություն              |
| ՄԶԾ     | Մարզի զարգացման ծրագիր                                    |
| ՄՎ      | Մոնիտորինգ և վերլուծություն                               |
| ՆԴՀ     | Նախադպրոցական հաստատություն                               |
| ՍԾՏԳ    | Սոցիալական ծառայության տեղական գրասենյակ                  |
| ՍՄՎ     | Սոցիալական մոնիտորինգ և վերլուծություն                    |
| ՏԻՄ     | Տեղական ինքնակառավարման մարմին                            |
| ՏԻ      | Տեղական ինքնակառավարում                                   |
| ՈւԹՀՎ   | Ուժեղ և թույլ կողմերի հնարավորությունների վերլուծություն  |
| ՓՄԶ     | Փոքր և միջին ձեռնարկություններ                            |
| ՓՄԶ ԶԱԿ | Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոն |

## 1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N1207-Ն որոշմամբ հաստատվեց Կայուն զարգացման ծրագիրը, որը 2003 թվականից Հայաստանում իրականացվող ԱՅՈՒՑ-ի վերանայված տարբերակն է: Ծրագրի հիմնական ռազմավարական գերակայությունները ներառում են կայուն և արագ տեմպերով տնտեսական աճի ապահովումը, նպատակային սոցիալական քաղաքականությունը և պետական կառավարման ոլորտի արդյունավետության բարձրացումը: ԿԶԾ-ը ըստ էության երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրն է և այստեղ կարևորվում է ոչ միայն աղքատության հաղթահարումը, այլ երկրում տևական տնտեսական աճի քաղաքականության ապահովումը:

2. ԿԶԾ-ում ուշադրության են արժանացել նաև Հայաստանում տնտեսական աճի արագացմանը զուգընթաց խորացող տարածքային զարգացման անհամաչափությունների վերացման խնդիրները, որը ենթադրում է, որ անհրաժեշտ կլինի էականորեն արագացնել մարզերի տնտեսական զարգացման տեմպերը, դրանք մոտեցնելով Երևանի զարգացման տեմպերին, իսկ 2015 թվականից սկսած այնպես անել, որ դրանք գերազանցեն մայրաքաղաքի տնտեսական աճի տեմպերին: Այդ տեմպերն ապահովելու նպատակով անհրաժեշտ կլինի իրականացնել մի շարք հիմնարար միջոցառումներ, որոնց մեջ էական դեր կխաղա ինչպես պետական, այնպես էլ, հատկապես մասնավոր ներդրումների վերաուղղումը Երևանից դեպի մարզեր, ինչպես նաև դրանց միջմարզային բաշխման հավասարեցման խրախուսումը: Համաձայն ԿԶԾ-ում ներկայացված փորձագիտական գնահատումների՝ 2000-2006թթ. տնտեսական աճի միջին տարեկան տեմպը Երևանում կազմել է 16.8%՝ նույն ժամանակահատվածում երկրում արձանագրված միջին տարեկան 11.5% տնտեսական աճի պարագայում: Միևնույն ժամանակ, Երևանից դուրս տնտեսական զարգացման միջին տեմպը 2000-2006թթ. կազմել է 6.3%, այդ թվում՝ Հանրապետության այլ քաղաքներում՝ 7.6%, իսկ գյուղական բնակավայրերում՝ 5.4%: Ինչ վերաբերում է մարզային աճի տեմպերին, ապա միակ մարզը, որտեղ աճի տեմպերը գերազանցել են միջին հանրապետական ցուցանիշները՝ Սյունիքի մարզն է (միջին տարեկան 18.3% աճ)՝ հիմնականում պայմանավորված լեռնահանքային արդյունաբերության արագ զարգացմամբ: Ըստ մարզերի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշների վերլուծությունները վկայում են, որ տնտեսական զարգացման մակարդակների տարբերության խորացման միտումը Երևանի և մարզերի միջև բնորոշ է եղել բոլոր մարզերին, բացառությամբ՝ Սյունիքի մարզի, որի զարգացման տեմպերը 1999-2006 թթ. գերազանցել են Երևանի համապատասխան ցուցանիշները: Չնայած Սյունիքի մարզում գրանցված այս աճի տեմպերին, մարզն այսօր, ունենալով ռազմավարական և աշխարհաքաղաքական կարևոր դիրք, բնահումքային հարուստ պաշարներ, արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով Հանրապետության ամենախոշոր վարչական և տնտեսական միավորներից մեկը, դեռևս մնում է որպես Հանրապետության համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես թույլ յուրացված, սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական լուրջ հիմնախնդիրներ ունեցող տարածքներից մեկը: Այս առումով Սյունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման սույն ծրագրի նպատակը մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված տևական և կայուն քաղաքականության իրականացման ապահովումն է:

3. Սյունիքի ՄԶԾ-ը կազմվել է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 38 արձանագրային որոշմամբ հաստատված հայեցակարգի: Ծրագրի մշակման ընթացքում օգտագործվել է 2004թ. «Սյունիքի մարզի տնտեսական զարգացման հիմնական ուղղությունների» և 2008 թվականի հունիսին «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2008-2012

թվականների սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղությունների» կազմման ժամանակ Սյունիքի մարզպետարանում կուտակված փորձը:

4. ՄԶԾ առանցքը մարզի բոլոր համայնքների հիմնախնդիրներն են, որոնց լուծման գործընթացը 2004-2008 թվականների ընթացքում մշտապես գտնվել է Սյունիքի մարզպետի ուշադրության կենտրոնում: Մարզպետի դերը զգալի է եղել նաև մարզի զարգացման խնդիրների լուծման մեջ մասնակցության գործընթացի ապահովման ուղղությամբ: 2004-2008 թվականների ընթացքում Սյունիքի մարզպետը մարզի քաղաքային և գյուղական բոլոր համայնքներում անձամբ հանդիպում էր բնակչության տարբեր սոցիալական խմբերի, գործարարների, հասարակական և այլ կազմակերպությունների հետ, լսում նրանց առաջարկությունները, դիտողությունները, դրանք հանձնարարականների տեսքով ներկայացնում մարզպետարանի աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներին և պահանջում մշակել հիմնախնդիրների լուծման ծրագրեր: Բացի այդ, մարզում պարբերաբար կազմակերպվել են մարզպետարանի աշխատանքային խմբերի հանդիպումներ համայնքների բնակչության հետ, որոնց հիմնական նպատակն էր մարզի բնակչության իրական սոցիալ-տնտեսական վիճակի բացահայտումը, բնակիչներին մտահոգող և նրանց կողմից առաջ քաշված կարևորագույն հարցերի քննարկումը, հետադարձ կապի ապահովումը, ինչպես նաև մարզի զարգացման խնդիրների վերաբերյալ բնակչության իրազեկության մակարդակի բարձրացումը: Արդյունքում մարզի հիմնախնդիրները մարզպետի կողմից պարբերաբար ներկայացվել են կենտրոնական իշխանությանը և դրանց լուծումն ընթացք է ստացել: Այսպես՝ ՀՀ Նախագահի 2008 թվականի հուլիսի 30-ի ՆԿ-128-Ն կարգադրությամբ հաստատված միջոցառումների ժամանակացույցում ներառվել են նաև Սյունիքի մարզի մի շարք համայնքներում Նախագահի նախընտրական հանդիպումների ժամանակ արժարժված հիմնախնդիրները, որոնք նույնպես ներկայացված են ՄԶԾ-ում: Մարզի զարգացման հիմնական ուղղությունների համառոտ քննարկում է եղել նաև ՀՀ Նախագահի մոտ 2009 թվականի մարտի 31-ին ՀՀ Սյունիքի մարզպետարանում կայացած խորհրդակցության ժամանակ, որին մասնակցում էին ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետը, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարը, ՀՀ գյուղատնտեսության նախարարը, ՀՀ Սյունիքի մարզպետը, պաշտոնատար այլ անձինք և գործարարներ: Քննարկման ժամանակ արվել են առաջարկություններ և դիտողություններ, որոնք նույնպես ներառվել են ՄԶԾ-ում:

5. Ծրագրի կազմման աշխատանքների համակարգման գործը կատարել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունը: Ոլորտային խնդիրները քննարկվել են ճյուղային նախարարություններում, հանրապետական գործադիր և պետական կառավարման մարմիններում:

6. Մարզի զարգացման ծրագրի մշակման ինստիտուցիոնալ համակարգը ձևավորվել և աշխատանքներն ընթացել են հետևյալ հերթականությամբ.

ՀՀ Սյունիքի մարզպետի 2009թ. փետրվարի 11-ի որոշմամբ ստեղծվել են Սյունիքի մարզային զարգացման հանձնաժողովը, մարզի զարգացման ծրագրի մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խումբը, ոլորտային աշխատանքային յոթ խմբերը: Նշված ինստիտուցիոնալ կառույցները հետևյալներն են՝

- 1) Սյունիքի մարզային զարգացման հանձնաժողով ( կազմը՝ 27 հոգի)
- 2) Սյունիքի ՄԶԾ մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խումբ (կազմը՝ 12 հոգի)



- 3) Սյունիքի ՄՁԾ կրթության. մշակույթի և սպորտի ոլորտային աշխատանքային խումբ (կազմը՝ 14 հոգի, ոլորտները՝ կրթություն, մշակույթ, սպորտ, երիտասարդության հարցեր)
- 4) Սյունիքի ՄՁԾ առողջապահության ոլորտային աշխատանքային խումբ (կազմը՝ 7 հոգի, ոլորտը՝ առողջապահություն)
- 5) Սյունիքի ՄՁԾ սոցիալական ապահովության ոլորտային աշխատանքային խումբ (կազմը՝ 8 հոգի, ոլորտները՝ սոցիալական ապահովություն, երեխաների իրավունքների պաշտպանություն)
- 6) Սյունիքի ՄՁԾ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման և քաղաքացիական հասարակության ոլորտային աշխատանքային խումբ (կազմը՝ 7 հոգի, ոլորտները՝ տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում, քաղաքացիական հասարակություն, արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանություն)
- 7) Սյունիքի ՄՁԾ համայնքային ենթակառուցվածքների զարգացման ոլորտային աշխատանքային խումբ (կազմը՝ 9 հոգի, ոլորտները՝ քաղաքաշինություն, մարզային և համայնքային ենթակառուցվածքներ)
- 8) Սյունիքի ՄՁԾ արդյունաբերության, առևտրի, մասնավոր հատվածի և փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ոլորտային աշխատանքային խումբ (կազմը՝ 7 հոգի, ոլորտները՝ արդյունաբերություն, էներգետիկա և բնական պաշարներ, զբոսաշրջություն, առևտուր, մասնավոր հատվածի և փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացում)
- 9) Սյունիքի ՄՁԾ գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտային աշխատանքային խումբ (կազմը՝ 11 հոգի, ոլորտները՝ գյուղատնտեսություն, բնապահպանություն):

7. Աշխատանքային խմբերի գործունեության արդյունքում մշակված ոլորտային ռազմավարությունները քննարկվել են Մարզային զարգացման հանձնաժողովի կողմից, ընդգրկվել են ծրագրում և ծրագրի նախնական տարբերակը ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի միջոցով ներկայացվել է ճյուղային նախարարություններին ու պետական կառավարման այլ մարմիններին: Ծրագրի նախագծի նախնական տարբերակը քննարկման է դրվել նաև ՀՀ տարածքային կառավարման նախարարության և Սյունիքի մարզպետարանի պաշտոնական կայքերում՝ հասարակայնության հետ լայն քննարկում ապահովելու նպատակով: Նախարարություններից, պետական կառավարման մարմիններից և հասարակայնությունից ստացված դիտողությունների ու առաջարկությունների հիման վրա ծրագրի նախագիծը մարզպետարանում լրամշակվել է: 2009 թվականի մայիսի 22-ին ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալի մոտ բոլոր շահագրգիռ հանրապետական գործադիր մարմինների և Սյունիքի մարզպետարանի ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունեցել ՄՁԾ նախագծի նախնական տարբերակի լայն քննարկում, որի արդյունքում արված առաջարկություններն ու դիտողությունները հաշվի են առնվել և ընդգրկվել նախագծում: ՄՁԾ-ի վերջնական տարբերակը հաստատվել է ՄՁՀ նախագահի՝ ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից և ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետին:

8. Ծրագրի վերջնական տարբերակը քննարկելու նպատակով ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի կողմից 2009 թվականի -ին կազմակերպվել է Սյունիքի ՄՁԾ քննարկում. որին մասնակցում էին շահագրգիռ նախարարություններ, ՀՀ ԱԺ պատգամավորներ, Հայաստանում գործող դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչներ, հասարակական կազմակերպություններ, Սյունիքի մարզպետարանի ներկայացուցիչներ: Քննարկման մասնակիցները նույնպես ներկայացրեցին իրենց առաջարկությունները և դիտողությունները, որոնք հաշվի են առնվել Ծրագրում:
9. Այս քննարկումներից և լրամշակումներից հետո ՄՁԾ վերջնական տարբերակը հաստատման է ներկայացվել ՀՀ կառավարություն:

### **Սյունիքի մարզի զարգացման ծրագրի կառուցվածքը**

10. Մարզի ընդհանուր համառոտ բնութագրից հետո, 3-րդ գլխում տրվում է աղքատության գնահատականը, վերլուծվում են դրա հիմնական պատճառները, վերջին տարիների միտումները և նախանշվում են այն ոլորտները, որտեղ ինստիտուցիոնալ բարեփոխումները որոշ ներդրումային ծրագրերի հետ համատեղ, հնարավորություն կտան առավել նպատակային և արդյունավետ ձևով կրճատել աղքատության մակարդակը: Այդ ոլորտներն են գործարար և ներդրումային միջավայրի զարգացումը, փոքր ու միջին ձեռնարկատիրությանն աջակցումը, արդյունաբերությունը, էներգետիկան, գյուղատնտեսությունը, զբոսաշրջությունը, սոցիալական ոլորտները (առողջապահություն, կրթություն, սոցիալական պաշտպանություն), համայնքների զարգացումը (կառավարման ապակենտրոնացում, տեղական ինքնակառավարման ուժեղացում, մասնակցային գործընթացի ակտիվացում, մարզային և համայնքային ենթակառուցվածքներ) և բնապահպանությունը:
11. Մարզի տնտեսական զարգացման և աղքատության հաղթահարման կարևորագույն ուղղությունը գործարար ակտիվության բարձրացումն է մասնավորապես փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության միջոցով (Գլուխ 4): Այս գլխում վերլուծվում է մարզի տնտեսության իրավիճակը, նրա ուժեղ և թույլ կողմերը, զարգացման հնարավորություններն ու խոչընդոտները, դոնորների կողմից տնտեսության զարգացման աջակցմանն ուղղված միջոցառումները:
12. Մարզի սոցիալական ոլորտներում իրավիճակի վերլուծությունը, հիմնախնդիրները և զարգացման համար առաջարկվող միջոցառումները (Գլուխ 5) նպատակաուղղված են այդ ծառայությունների որակի և մատչելիության բարձրացմանը: Այս ուղղությամբ վերջին տարիներին բավականաչափ ծրագրեր են իրագործվել, սակայն ՄՁԾ-ով նախատեսված միջոցառումներն ամբողջությամբ իրագործելու համար զգացվում է լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման և կառավարության ու դոնորների առավել համակարգված գործունեության անհրաժեշտությունը:
13. Սյունիքի արդյունաբերության և էներգետիկայի ոլորտների վերաբերյալ վերլուծությունները, ոլորտների զարգացման հեռանկարները, ռազմավարությունը ներկայացված են Գլուխ 6-ում: Այստեղ կարևորվել է մարզի արդյունաբերության և էներգետիկայի բնագավառներում ունեցած հզոր ներուժի հիման վրա ոլորտների բազմաճյուղ զարգացումը:
14. Մարզի գյուղատնտեսության իրավիճակը և ոլորտի ռազմավարությունը վերլուծված է Գլուխ 7-ում: Այս ոլորտում կարևոր նպատակ է ֆերմերների եկամուտների ավելացումը և որպես արդյունք՝ գյուղական աղքատության կրճատումը, հիվանդությունների կանխարգելումը. գյուղական ենթակառուցվածքների զարգացումը, ֆերմերներին մատուցվող ուսուցողական-խորհրդատվական ծառայությունների

բարելավվումը, գյուղատնտեսական արտադրանքի ապրանքայնության աճի ապահովումը:

15. 8-րդ գլխում ներկայացված է բնապահպանությունը, որտեղ առաջնային խնդիր է համարվում Սյունիքի մարզում արդյունաբերական և բնապահպանական ռազմավարությունների խոր, այլընտրանքային վերլուծությունը, դրանց համադրումը, միասնական արդյունաբերա-բնապահպանական համալիր ծրագրի ընդունումը և իրականացումը, որը կնպաստի մարզի սոցիալ-տնտեսական հզորացմանը: Այստեղ ներկայացված են բնապահպանական իրավիճակը, ոլորտի խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումները, մասնավորապես՝ անտառների համայնքային կառավարման խնդիրները. այլընտրանքային և էկոլոգիապես անվտանգ արդյունաբերության, էներգետիկայի զարգացումը. բնապահպանական խնդիրների վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինների իրազեկության բարձրացումը, մարզի լեռնային արոտավայրերի վիճակի գնահատումը և նրանց բարելավման միջոցառումների մշակումը և այլն:

16. 9-րդ գլխում ներկայացված է Սյունիքում դեռևս չզարգացած, սակայն զարգացման ներուժ և հեռանկար ունեցող զբոսաշրջության ոլորտը: Այստեղ կարևորվել է Սյունիքի համար զբոսաշրջության զարգացման համալիր ծրագրի մշակումը, որն իր մեջ կընդգրկի առկա ներուժի ամբողջական ուսումնասիրությունը, իրավիճակի գնահատականը և զարգացման ուղղությունների նախանշումը: Նշված է, որ արդյունավետ գործելու դեպքում մարզի տնտեսության մեջ զբոսաշրջության մասնաբաժինը կարելի է հասցնել ցանկալի արդյունքի և ոլորտը կարող է առաջնային տեղ զբաղեցնել լեռնահանքային արդյունաբերության, էներգետիկայի և գյուղատնտեսության կողքին:

17. 10-րդ գլխում ներկայացված է քաղաքաշինությունը, որտեղ ընդգրկված են մարզի բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հանրակրթական դպրոցների շինարարության և հիմնանորոգման, առողջապահական, մշակութային, մարզական օբյեկտների, բնակֆոնդի և վարչական շենքերի հիմնանորոգման, բնակարանաշինության, բարեկարգման, քաղաքային համայնքներում բազմաբնակարան շենքերի կառավարման գործի բարելավման և այլ քաղաքաշինական խնդիրներ:

18. 11-րդ գլուխը նվիրված է մարզային և համայնքային ենթակառուցվածքներին: Այստեղ կարևորվել են մարզի և համայնքների ճանապարհային, ջրամատակարարման և գազամատակարարման ցանցերի զարգացումը, մարզի համայնքների գազիֆիկացման գործընթացի ավելի արագ շարունակումը, բնակարանաշինության խնդիրները և այլն:

19. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացմանն ու քաղաքացիական հասարակության զարգացմանն ուղղված խնդիրները ներկայացված են 12-րդ գլխում: Այստեղ կարևորվել է տարածքային կառավարման և ՏԻ բնագավառի օրենսդրության կատարելագործումը, համայնքների, ինչպես նաև մարզպետարանի կարողությունների հզորացումը, քաղաքացիական հասարակության հետ հարաբերություններում մասնակցային գործընթացի ապահովումը՝ մարզային և համայնքային մակարդակի որոշումների ընդունման, ծրագրերի կազմման և իրագործման գործընթացում:

20. Արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության խնդիրները ներկայացված են 13-րդ գլխում, որտեղ տրված են քարաթափերի, բնական և տեխնածին աղետների կանխարգելման և դրանց ռիսկերի նվազեցման համար անհրաժեշտ միջոցառումները:

21. 14-րդ գլուխը նվիրված է ՄԶԾ իրագործման ընթացքի մոնիտորինգին և գնահատմանը: Այստեղ հիմնավորված է այս գործառույթների անհրաժեշտությունը՝ Ծրագրի արդյունավետ կառավարման, հետազայում նրանում անհրաժեշտ շտկումներ և

փոփոխություններ անելու առումով: Ծրագրի արդյունավետ իրագործման երաշխիքը այս գործառնությունների գծով մարզպետարանի կարողությունների բարձրացումն է, որի ուղղությամբ նախատեսված են որոշակի միջոցառումներ: Այս գլխում առանձին աղյուսակով ներկայացված են Ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումները, դրանց իրագործումից ակնկալվող արդյունքը և արդյունքի մոնիտորինգի ցուցանիշները, ինչպես նաև մարզի տնտեսական զարգացումը և աղքատությունը բնութագրող համալիր ցուցանիշները:

22. Ծրագրի բոլոր հիմնական բաժինները շարադրված են հետևյալ տրամաբանական կառուցվածքով.

- 1) Ոլորտի ներկա իրավիճակի վերլուծություն
- 2) Ոլորտի զարգացման հիմնախնդիրների բացահայտում
- 3) Ծրագրի նպատակները և ռազմավարություն
- 4) Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ միջոցառումներ:

23. Յուրաքանչյուր ոլորտի զարգացման համար պահանջվող ֆինանսական ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփված է 15-րդ գլխում: Ծրագրի իրականացման համար պահանջվող ընդհանուր գումարը կազմում է ավելի քան 71.9 մլրդ. դրամ, արտարժույթով նախատեսվող ՄԶԾ ֆինանսավորման ծավալները՝ 437.9 մլն. ԱՄՆ դոլար և 208.9 մլն. եվրո: Համայնքների քառամյա ծրագրերով ոլորտային կապիտալ ծրագրերի ֆինանսավորման համար պահանջվող ընդհանուր գումարը կազմում է շուրջ 28.5 մլրդ. դրամ:

24. Սյունիքի մարզի զարգացման ծրագրի գաղափարախոսությունը, ռազմավարությունը համահունչ են ԱԱՌ-ին, ԿԶԾ-ին, Հազարամյակի զարգացման նպատակներին և թիրախներին:

25. Ծրագրի նպատակը մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված տևական և կայուն քաղաքականության իրականացման ապահովման շնորհիվ մարզի կայուն զարգացումն է: Ծրագրի իրագործման ընթացքում ակնկալվում է ստանալ հետևյալ հիմնական արդյունքները.

- 1) Մարզի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման վրա շոշափելի արդյունքների արձանագրում
- 2) Բնակչության եկամուտների աճ և մարդկային աղքատության կրճատում
- 3) Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում
- 4) Արդյունաբերության զարգացում
- 5) Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում
- 6) Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում
- 7) Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում
- 8) Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացում
- 9) Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացում
- 10) Մարզպետարանի կարողությունների ուժեղացում
- 11) Կառավարման արդյունավետության բարձրացում՝ օպտիմալ ապակենտրոնացում
- 12) Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդարձակում
- 13) Հանրային կառավարման համակարգում հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների արմատավորում
- 14) Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում, մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում
- 15) Տեղեկատվության ազատության աստիճանի բարձրացում:

**2. ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

26. Սյունիքի մարզը զբաղեցնում է Հայաստանի Հանրապետության հարավ-արևելքում գտնվող պատմական Սյունիքի (Սիսական) մի մասը. կազմավորվել է 1995 թվականին Գորիսի, Կապանի, Մեղրու և Սիսիանի նախկին վարչական շրջանների միավորման արդյունքում: Սյունիքի մարզկենտրոնը Կապան քաղաքն է (բնակչությունը 2009 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 45500 մարդ): Սյունիքը ցամաքային տարածքով Հանրապետության ամենամեծ մարզն է, մակերեսը կազմում է 4506 քառ.կմ՝ Հանրապետության տարածքի մոտ 15.1%-ը:

27. 2009 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզի բնակչությունը կազմել է 152900 մարդ, (Հանրապետության բնակչության 4.7%-ը), որից քաղաքային բնակչություն՝ 103700 մարդ (67.8%) գյուղական բնակչություն 49200 մարդ (32.2%): Քաղաքային բնակչության տեսակարար կշռով (67.8%) Սյունիքը Երևանից հետո Հանրապետությունում գրավում է 2-րդ տեղը: Բնակչության խտությունը կազմում է 34 մարդ/քառ.կմ:

28. Մարզն ունի 109 համայնք, որից 7-ը՝ քաղաքային, 102-ը՝ գյուղական: Վարչատարածքային բաժանմամբ սահմանված բնակավայրերի թիվը 135 է: Սահմանամերձ համայնքների թիվը՝ 65 (86 բնակավայր), լեռնային բնակավայրերի թիվը՝ 32, բարձր լեռնային բնակավայրերի թիվը՝ 12:

29. Մարզը հանդիսանում է Հանրապետության խոշոր վարչատարածքային միավորներից մեկը և զբաղեցնում է աշխարհաքաղաքական ու ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող դիրք, որն առանձնահատուկ է Հանրապետության 10 մարզերի շարքում: Հայաստանի Հանրապետության վարչական քարտեզի ֆոնի վրա մարզի տարածքը նեղ ելուստի տեսք ունի և սահմանակից է Վայոց Ձորի մարզին, Արցախին, Իրանին, Նախիջևանին, Ադրբեջանին: Սյունիքով են անցնում Արցախը Հայաստանին կապող կարևոր ավտոմայրուղին և Իրանի Իսլամական Հանրապետությունը ցամաքային անմիջական կապով Հայաստանին կապող միակ ճանապարհը: Սահմանի երկարությունը 472կմ է, որից՝ Իրանի Իսլամական Հանրապետության հետ՝ 42կմ, Ադրբեջանի Հանրապետության հետ՝ 382կմ, (110կմ՝ Նախիջևանի հետ):

30. Սյունիքը հնագույն ժամանակներից ի վեր մշտապես եղել է Հայոց պետության կազմում: Պատմական Սյունիքը Մեծ Հայքի իններորդ նահանգն էր, սահմանակցում էր Այրարատին, Վասպուրականին, Արցախին: Երկրամասն ունեցել է հերոսական անցյալ և Հայոց իրականության մեջ աչքի է ընկել իր ինքնատիպությամբ: Պատմությանը հայտնի է Սյունիքի առանձին թագավորությունը, Դավիթ Բեկի ինքնուրույն իշխանությունը, 1920 թվականի դեկտեմբերի 25-ին հռչակված «Ինքնավար Սյունիքը» և 1921 թվականի ապրիլի 26-ին ստեղծված ԼեռնաՀայաստանի պետությունը:

31. Սյունիքի մարզը զբաղեցնում է Չանգեզուր բնաշխարհի տարածքը, որը ներառում է Որոտան, Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանը և Չանգեզուրի՝ Մեծ Կովկասից հետո Անդրկովկասում ամենաբարձր լեռնաշղթայի, արևելյան լանջերը: Մարզի ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուղն է (3904մ), իսկ ամենացածր վայրը՝ Մեղրու կիրճը (Արաքսի հովիտ, 380մ): Տարածքի մակերևույթի միջին բարձրությունը կազմում է 2200մ, որը գերազանցում է միջին հանրապետական ցուցանիշը 350 մետրով: Չանգեզուրի լեռնաշղթայի Կապուտջուղ գագաթից բացի նշանավոր են նաև Սիսկատար (3827մ), Նահապետ (3510 մ), Երնջակ (3362մ), Շահապոնք (3204 մ), Սալվարդ (3167մ), Գողթանասար (3144 մ), Այրիսար (3125մ) լեռնագագաթները, Բարգուշատի լեռնաշղթայի գագաթներից՝ Արամազդ (3392մ), Երկաթասար (3227մ), Աճանան (Տափասար, 2393մ) լեռնագագաթները. Խուստուլի-Կատարի լեռնաշղթայի նշանավոր Խուստուլի լեռնագագաթը (3214մ): Սյունիքի

բարձրավանդակը՝ Մեծ Իշխանասարի (3552 մ) և Ծղուկի (3594 մ) հրաբխային լեռնազանգվածներով:

32. Սյունիքն օգտակար հանածոներով Հանրապետության ամենահարուստ մարզն է: Հանրահայտ են Քաջարանի, Կապանի, Ագարակի, Դաստակերտի, Լիճքի, Սվարանցի մոլիբդենի, պղնձի, ոսկու և հազվագյուտ այլ մետաղների հանքավայրերը: Զգալի են բազալտի, մարմարի, կրի, կավի պաշարները, կան թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, հիդրոէներգետիկ մեծ ռեսուրսներ, բերրի սևահողեր, հարուստ անտառներ և ալպյան մարգագետիններ:

33. Բնական հուշարձաններից հայտնի են Գորիսի և Խնձորեսկի «բուրգերն» ու քարայրերը, Շաքիի ջրվեժը (18մ)՝ Փոքր Կովկասի ամենաբարձր ջրվեժը, Որոտանի և Ողջիի կիրճերը, «Սատանի կամուրջը», Ծավի՝ աշխարհի ամենամեծ բնական սուսիների ռելիկտային պուրակը (60 հա), Շիկահողի արգելոցը, Սթնաձորի անտառը:

34. Պատմամշակութային հուշարձանների մեջ հայտնիներից են Ջորաց քարերի հնագույն աստղադիտարանը, Բաղաբերդի, Հալիձորի, Որոտնաբերդի ամրոցները, Տաթևի, Որոտնա, Բղենու վանքերը, Վահանավանքի և Երիցվանքի վանական համալիրները, Աղիտուկի դամբարանային հուշարձանը, Սիսիանի մեղիթի ժամանակաշրջանի դամբարանաբլուրը, Մեղրի քաղաքի փոքր թաղի եկեղեցին և քաղաքի պաշտպանական նշանակության աշտարակները:

35. Սյունիքի մարզը գտնվում է ակտիվ սեյսմիկ գոտում: Պահպանվել են տեղեկություններ 1309, 1319, 1622, 1658 և այլ թվականների ուժեղ երկրաշարժերի վերաբերյալ, որոնցից առավել հզոր ու աղետալին տեղի է ունեցել Որոտանի կիրճում՝ Մեծ Անապատ վանքի շրջանում:

36. Սյունիքի մարզում, ըստ բարձունքային գոտիականության, հերթափոխվում են Հանրապետության տարածքին բնորոշ կլիմայի գրեթե բոլոր տեսակները՝ չոր մերձարևադարձային, չափավոր տաք, բարեխառն, ցուրտ լեռնային և ձյունամերձ: Սյունիքում է գտնվում Հանրապետության ամենատաք վայրը՝ Մեղրու ցածրադիր գոտին:

37. Արևափայլքի տարեկան տևողությունը տատանվում է 2120 ժամից (Գորիս) մինչև 2700 ժամի (Մեղրի) սահմաններում: տարվա ամպամած օրերի միջին թիվը կազմում է 40 օր: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին 0.9 °C-ից (Մեղրի) - 9.8 °C է (Գորայք), հուլիս-օգոստոսին՝ 13.9-25.4°C: Օդի նվազագույն ջերմաստիճանը դիտվել է Գորայքում (-43°C), առավելագույնը՝ Մեղրիում (41°C):

38. Տեղումների տարեկան քանակը տատանվում է 161 մմ (Մեղրի) մինչև 826 մմ (Սիսիանի լեռնանցք): Տեղումների առավելագույն մասը դիտվում է մայիսին, նվազագույնը՝ օգոստոսին: Աշնանը դիտվում է առատ տեղումների երկրորդ շրջանը: Տեղումների բաշխումը կապված է ոչ միայն բարձրության, այլև՝ լեռնաշղթաների ուղղության, դիրքադրման և ռելիեֆի ձևերի հետ: Հատկապես զգալի է լեռնային արգելքների բացասական ազդեցությունը տեղումների քանակի վրա. որքան փակ է հովիտը, այնքան քիչ են տեղումները:

39. Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռող արդյունաբերության, էներգետիկայի և գյուղատնտեսության ճյուղերն են (Հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում 2008 թվականին կազմել են համապատասխանաբար՝ 14.9%, 18.1% և 9.1%):

40. Չնայած մարզի բնահումքային հարուստ պաշարների առկայությանը, Սյունիքը դեռևս մնում է Հայաստանի համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես թույլ յուրացված, սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական լուրջ հիմնախնդիրներ ունեցող տարածքներից մեկը:

41. Սյունիքի վերաբերյալ սոցիալ-տնտեսական բոլոր ցուցանիշները տրված են սույն ծրագրի համապատասխան ոլորտների վերլուծական հատվածներում:

### 3. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

42. Բնակչության բարեկեցության աճը և աղքատության դեմ ուղղված պայքարը մնում է ՀՀ կառավարության և երկրի քաղաքացիական հասարակության կարևորագույն և հրատապ խնդիրը, որն ամրագրված է ՀՀ կառավարության կողմից 2008 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 1207-Ն որոշմամբ ընդունված «Կայուն զարգացման ծրագրում», ինչպես նաև Կառավարության կողմից հաստատված միջին ժամկետ ծախսային ծրագրում:

43. ԿԶԾ-ի քաղաքականությունների փաթեթն ընդհանուր առմամբ ներառում է ամբողջ երկրի մասշտաբով նախանշված գերակա ուղղությունները, որոնք հիմնականում վերաբերում են կայուն տնտեսական աճի ապահովմանը, հանրային կառավարման բարեփոխումներին, ներառյալ կոռուպցիայի դեմ պայքարին, մարդկային զարգացման հիմնախնդիրներին, հանրության մասնակցության ու մոնիտորինգի մեխանիզմների ներդրմանը: Այն ռազմավարական ծրագիր է, որի մարտավարությունը, այսինքն իրականացվելիք միջոցառումների ուղղվածության որոշումը, պահանջում է ռազմավարական խնդիրների տեղայնացում՝ ըստ հանրապետության առանձին տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման և աղքատության դրսևորման առանձնահատկությունների:

44. ՀՀ Սյունիքի մարզի զարգացման ծրագիրը, հիմք ընդունելով ԿԶԾ-ի սկզբունքներն ու ռազմավարությունը, նպատակ է հետապնդում բացահայտել մարզում աղքատությունը պայմանավորող հիմնական գործոնները, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման խոչընդոտները և դրանց հիման վրա նախանշել աղքատության հաղթահարման ռազմավարությունն ու համապատասխան միջոցառումները:

45. ԿԶԾ-ի տեղայնացման հիմնախնդիրն առավել հրատապ է այն տարածաշրջանների համար, որոնց զարգացման միտումները զգալիորեն հետ են մնում հանրապետության միջին ցուցանիշներից՝ պայմանավորված լինելով տարածքի տնտեսական ներուժի սահմանափակություններով, ֆիզիկական և սոցիալական ենթակառուցվածքների թերզարգացած ցանցով, բնակչության անբարենպաստ սոցիալ-ժողովրդագրական կազմով, բնակլիմայական խիստ պայմաններով և այլն:

46. Թվարկված գործոններից զրեթե բոլորն առկա են ՀՀ Սյունիքի մարզում, որի հետևանքով մարզի աղքատության խնդիրներն ավելի սրված են, որտեղից հետևում է մարզի աղքատության հաղթահարման նպատակային ծրագրի մշակման և իրականացման անհրաժեշտությունը:

47. Աղքատության գնահատումը ՀՀ Սյունիքի մարզում պարզորոշ վկայում է այդ երևույթի մարզային յուրովի պատկերի մասին: Վերջինիս նկարագրումն ու վերլուծությունը կատարվել է՝ ելնելով ԱՀՌԾ-ում բերված աղքատության սահմանումից, համաձայն որի «աղքատությունը կենսաբանական, սոցիալական, հոգևոր-մշակութային նվազագույն պահանջմունքները բավարարելու անհնարինությունն է»:

48. Ելնելով ԱՀՌԾ-ում ընդունված աղքատության հասկացության սահմանումից, ՀՀ Սյունիքի մարզի աղքատության գնահատումը կատարվել է երեք հիմնական ուղղություններով՝ մարզի բնակչության կենսաբանական, սոցիալական և հոգևոր-մշակութային պահանջմունքների բավարարման իրավիճակի վերլուծության միջոցով:

49. Աղյուսակ 3.1-ի տվյալները վկայում են, որ չնայած աղքատության մակարդակը ՀՀ Սյունիքի մարզում 2007 թվականին 1998/99թթ.-ի համեմատ նվազել է, այնուամենայնիվ 2007թ.-ին Սյունիքի մարզը հինգերորդն է՝ Վայոց Ձորի մարզից, Երևանից, Տավուշի և Արագածոտնի մարզերից հետո: Մարզում աղքատության մակարդակը 2007թ. տվյալներով 1 տոկոսային կետով ցածր է աղքատության հանրապետական միջին ցուցանիշից, սակայն 4 տոկոսային կետով բարձր է Երևանի ցուցանիշից:

Աղյուսակ 3.1. Աղքատության մակարդակի միտումները ՀՀ մարզերում 1998/99; 2005-2007թթ թթ. (%-ով)

| Մարզեր                     | 1998/99թթ.            | 2005թ.                |                             | 2006թ.                |                             | 2007թ.                |                             |
|----------------------------|-----------------------|-----------------------|-----------------------------|-----------------------|-----------------------------|-----------------------|-----------------------------|
|                            | աղքատության մակարդակը | աղքատության մակարդակը | որից չբավորության մակարդակը | աղքատության մակարդակը | որից չբավորության մակարդակը | աղքատության մակարդակը | որից չբավորության մակարդակը |
| ք. Երևան                   | <b>58.4</b>           | <b>23.9</b>           | <b>3.6</b>                  | <b>21.0</b>           | <b>3.5</b>                  | <b>20.0</b>           | <b>3.2</b>                  |
| Արագածոտն                  | 60.5                  | 32.3                  | 3.1                         | 27.5                  | 2.6                         | 22.2                  | 3.0                         |
| Արարատ                     | 52.3                  | 30.9                  | 7.4                         | 27.0                  | 5.5                         | 25.5                  | 3.5                         |
| Արմավիր                    | 41.7                  | 31.6                  | 3.8                         | 30.8                  | 3.4                         | 30.7                  | 3.8                         |
| Գեղարքունիք                | 49.9                  | 36.8                  | 2.9                         | 29.8                  | 2.6                         | 29.6                  | 2.5                         |
| Լոռի                       | 62.6                  | 28.8                  | 5.8                         | 27.0                  | 5.5                         | 26.8                  | 3.6                         |
| Կոտայք                     | 61.7                  | 34.5                  | 8.7                         | 32.0                  | 8.1                         | 30.0                  | 6.1                         |
| Շիրակ                      | 75.8                  | 42.5                  | 4.3                         | 37.3                  | 3.7                         | 32.1                  | 6.0                         |
| <b>Սյունիք</b>             | <b>53.1</b>           | <b>28.9</b>           | <b>2.3</b>                  | <b>25.3</b>           | <b>2.1</b>                  | <b>24.0</b>           | <b>3.7</b>                  |
| Վայոց Ձոր                  | 34.7                  | <b>19.2</b>           | 1.8                         | 11.4                  | 1.3                         | 13.7                  | 2.3                         |
| Տավուշ                     | 29.3                  | 25.8                  | 3.8                         | 23.5                  | 3.3                         | 21.6                  | 3.3                         |
| <b>Հանրապետական միջինը</b> | <b>56.1</b>           | <b>29.8</b>           | <b>4.6</b>                  | <b>26.5</b>           | <b>4.1</b>                  | <b>25.0</b>           | <b>3.8</b>                  |

Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով» 2008թ. էջ 190, «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2008թ.

50. Աղքատության մակարդակի դրական և բացասական միտումները պայմանավորված են երկրի աղքատության, մարզի տնտեսական զարգացման և մարզի համայնքների զարգացման առանձնահատկություններից բխող գործոններով:

51. ՀՀ Սյունիքի մարզում աղքատության մակարդակը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնք կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի.

- 1) երկրի աղքատության ընդհանուր առանձնահատկություններից բխող գործոններ
- 2) մարզի տնտեսական զարգացման առանձնահատկություններից բխող գործոններ
- 3) մարզի համայնքների զարգացման առանձնահատկություններից բխող գործոններ:

52. Հանրապետության աղքատության առանձնահատկություններից ելնելով, մարզում գյուղական բնակչությունն առավել դանդաղ տեմպերով է հաղթահարում աղքատությունը, քան քաղաքայինը: Անհավասարության աստիճանը գյուղական բնակավայրերում նկատելիորեն բարձր է քաղաքային բնակավայրերի համեմատ, ինչն իր հերթին հանդես է գալիս որպես լուրջ աղքատաժին գործոն:

53. ՀՀ Սյունիքի մարզի բնակչության 67.8%-ը կենտրոնացած է քաղաքներում (տես՝ աղյուսակ 3.2): Ի տարբերություն Կապանի և Մեղրու տարածաշրջանների, որտեղ քաղաքաբնակները համապատասխանաբար կազմում են բնակչության 86.7%-ը և 78.7%-ը, (առկա հանքարդյունաբերության և դրանց արբանյակ ձեռնարկություններով պայմանավորված), Գորիսի և Սիսիանի տարածաշրջաններում այդ հարաբերակցությունը համարյա հավասար է և քաղաքաբնակներ-գյուղաբնակներ հարաբերակցությունը համապատասխանաբար կազմում է՝ 51.5% - 48.5%-ը և 50.4% - 49.6%-ը: Այս տարածաշրջաններում քիչ են արդյունաբերական ձեռնարկությունները, ազգաբնակչությունը զբաղվում է հիմնական գյուղատնտեսությամբ:



**Աղյուսակ 3.2. ՀՀ Սյունիքի մարզի մշտական բնակչությունը**

| Հ/Հ | Տարածաշրջան             | 2006թ.       | այդ թվում    |             | 2007թ.       | այդ թվում    |             | 2008թ.       | (հազ. մարդ)  |             |
|-----|-------------------------|--------------|--------------|-------------|--------------|--------------|-------------|--------------|--------------|-------------|
|     |                         |              | քաղաքային    | գյուղական   |              | քաղաքային    | գյուղական   |              | այդ թվում    |             |
|     |                         |              |              |             |              |              |             |              | քաղաքային    | գյուղական   |
|     | Կապան                   | 62.3         | 53.9         | 8.4         | 62.4         | 54.0         | 8.4         | 62.3         | 54.0         | 8.3         |
|     | Գորիս                   | 44.6         | 23.2         | 21.4        | 44.6         | 23.1         | 21.5        | 44.6         | 23.0         | 21.6        |
|     | Սիսիան                  | 33.8         | 7.0          | 16.8        | 33.6         | 17.0         | 16.6        | 33.7         | 17.0         | 16.7        |
|     | Մեղրի                   | 12.2         | 9.6          | 2.6         | 12.2         | 9.6          | 2.6         | 12.2         | 9.6          | 2.6         |
|     | <b>Ընդամենը մարզում</b> | <b>152.9</b> | <b>103.7</b> | <b>49.2</b> | <b>152.8</b> | <b>103.7</b> | <b>49.1</b> | <b>152.8</b> | <b>103.6</b> | <b>49.2</b> |
|     | Տեսակար կշիռը %-ով      | 100          | 67.8         | 32.2        | 100          | 67.9         | 31.1        | 100          | 67.8         | 32.2        |

Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով» 2008թ. էջ 18, «Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը» 2008թ., էջ 127

54. Հայաստանում աղքատությունը առավել տարածված է աղետի, սահմանամերձ, բարձր լեռնային և լեռնային գոտիներում: ՀՀ Սյունիքի մարզի 135 բնակավայրերից 105-ը սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրեր են և գտնվում են միմյանցից մեծ հեռավորությունների վրա, ուստի աղքատությունը և չքավորությունը ավելի սուր են արտահայտված և ընդգծված:

55. Համայնքների աղքատության վրա ազդում է նաև վերջիններիս չափը: Որքան փոքրաթիվ է համայնքի բնակչությունը, այնքան մեծ է աղքատության հակվածությունը ու գրեթե «անտեսանելի» համայնքային զարգացման հեռանկարները: ՀՀ Սյունիքի մարզի համայնքներից 71.6%-ը ունեն մինչև 500 բնակիչ, 13.8%-ը՝ 501-1000 բնակիչ, 14.6%-ը 1000 և ավելի բնակիչ: Այս տվյալները վկայում են մարզի համայնքների գրեթե 2/3-ի համար համայնքային զարգացման ծրագրերի իրագործման հարցում օբյեկտիվորեն առկա խոչընդոտների մասին:

56. Աղքատության բոլոր ուսումնասիրությունները միանշանակ եզրահանգում են, որ աղքատությունը պայմանավորված է նաև բնակչության անբարենպաստ սոցիալ-ժողովրդագրական կազմով՝ տարեցների, բազմազավակ ընտանիքների, հաշմանդամների և այլ խոցելի խմբերի բարձր ներկայացվածությամբ, որն այս կամ այն չափով կանխորոշում է բնակչության և համայնքների աղքատության նկատմամբ խոցելիությունը: ՄԱԶԾ-ի կողմից իրականացված հետազոտության շրջանակում «խոցելիությունը հավանականություն է, որ անհատը կամ անհատների խումբն անհրաժեշտ մոտիվացիա, կարողություն և միջոցներ չի ունենա հաղթահարելու ներքին և արտաքին գործոնների հնարավոր բացասական ազդեցությունը»:

57. Այդ տեսանկյունից չափազանց կակոր է դիտարկել բնակչության սոցիալ-ժողովրդագրական այն բնութագրիչները, որոնք մարդկանց կամ խմբերին դարձնում են խոցելի:

58. ՄԱԶԾ-ի շրջանակներում 2005թ-ին իրականացված «խոցելի բնակչությունը ՀՀ մարզերում» հետազոտության արդյունքները վկայում են, որ Սյունիքի մարզի սոցիալական խոցելիության համաթիվը չորրորդն է (37.5) հանրապետությունում՝ Տավուշից, Գեղարքունիքից և Կոտայքից հետո /Աղյուսակ 3.3/:

Աղյուսակ 3.3. Խոցելի խմբերի ներկայացվածությունը մարզի բնակչության թվում՝ տոկոսային հարաբերակցությամբ /2005թ./

|               | Խոցելի խմբերի ներկայացվածությունը ՀՀ Մարզերում % մարզի բնակչության թվում |                     |               |               |          |                        |              |               |                |
|---------------|--|---------------------|---------------|---------------|----------|------------------------|--------------|---------------|----------------|
|               | Հաշմանդամներ այդ թվում երեխաներ  | Ծնողազուրկ երեխաներ | Միայնակ ծերեր | Գործազուրկներ | Տարեցներ | Բազմազգական ընտանիքներ | Փախստականներ | Նպաստաշուկներ | Խոցելի համաթիվ |
| Սյունիքի մարզ | 5.5  | 5.2                 | 13.2          | 19.7          | 12.6     | 9.6                    | 9.0          | 14.5          | 37.5           |
| Երևան         | 4.4  | 2.1                 | 9.8           | 25.0          | 12.9     | 4.9                    | 4.6          | 9.2           | 31.7           |
| Ընդամենը ՀՀ   | 4.2  | 3.2                 | 10.1          | 24.2          | 12.2     | 12.3                   | 7.2          | 17.3          | 36.6           |

Աղբյուրը՝ ՄԱԶԾ 2005թ.

59. Մարզի բնակչության խոցելիության վճռորոշ գործոններից է համայնքների մեծ մասի սահմանամերձ լինելը: Ադրբեջանի Հանրապետության հետ հակամարտության հետևանքով գաղթած 9500 էթնիկ հայեր ապաստանել են Սյունիքի մարզում: Հետագայում ինտեգրման և արտագաղթի արդյունքում մարզում ներկայում փախստականի կարգավիճակ ունեն 625 անձիք, որոնք ներգրավվել են մարզի հասարակական և քաղաքական գործընթացներում:

60. Խոցելիության վրա ազդող գործոններից է նաև բնակչության անբարենպաստ կազմը: Տարեցների տեսակարար կշիռը մարզում 2008թ. կազմել է 11.4% (քաղաքային բնակչության մեջ այն կազմել է 9.9%, գյուղական բնակչության մեջ՝ 14.8%): Ընդ որում 2005-2008թթ. ընկած ժամանակաշրջանում, և հանրապետությունում, և ՀՀ Սյունիքի մարզում, մոտ 3%-ով նվազել է մինչև 19 տարեկանների թիվը, թե քաղաքային և թե գյուղական համայնքներում:

Աղյուսակ 3.4. Մշտական բնակչության բաշխումն ըստ տարիքային խմբերի (քաղաքային/գյուղական կտրվածքով 2005-2008թթ.)

|   | Տարածաշրջան   | 2005թ.           |                  |                  |                 | 2008թ.           |                 |                  |                 |         |
|---|---------------|------------------|------------------|------------------|-----------------|------------------|-----------------|------------------|-----------------|---------|
|   |               | տարիքային խմբերը |                  |                  |                 | տարիքային խմբերը |                 |                  |                 |         |
|   |               | մինչև 19տ.       | 20-64տ.          | 64-ից բարձր      | Ընդամենը        | մինչև 19տ.       | 20-64տ.         | 64-ից բարձր      | Ընդամենը        |         |
| 1 | Սյունիքի մարզ | քաղաքային        | 32368 / 31.2%/   | 61765 / 59.5%/   | 9640 / 9.3%/    | 103773           | 28530 / 27.5%/  | 64928 / 62.6%/   | 10234 / 9.9%/   | 103692  |
|   |               | գյուղական        | 17215 / 35.0%/   | 24653 / 50.1%/   | 7347 / 14.9%/   | 49215            | 16130 / 32.8%/  | 25744 / 52.4%/   | 7258 / 14.8%/   | 49132   |
|   |               | ընդամենը         | 49583 / 32.4%/   | 86418 / 56.5%/   | 16987 / 11.1%/  | 152988           | 44660 / 29.2%/  | 90672 / 59.3%/   | 17492 / 11.4%/  | 152824  |
| 2 | Ընդամենը ՀՀ   | քաղաքային        | 607845 / 29.5%/  | 1246332 / 60.4%/ | 208126 / 10.1%/ | 2062303          | 558081 / 26.9%/ | 1293783 / 62.5%/ | 218613 / 10.6%/ | 2070477 |
|   |               | գյուղական        | 406979 / 35.3%/  | 616981 / 53.5%/  | 129570 / 11.2%/ | 1153530          | 371630 / 32.1%/ | 658822 / 56.8%/  | 129157 / 11.1%/ | 1159609 |
|   |               | ընդամենը         | 1014824 / 31.6%/ | 1863313 / 57.9%/ | 337696 / 10.5%/ | 3215833          | 929711 / 28.8%/ | 1952605 / 60.5%/ | 347770 / 10.7%/ | 3230086 |

Աղբյուրը՝ «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու» 2006թ. էջ 190, ՀՀ ԱԿԾ 2008թ., էջ 35, «Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը» 2008թ., էջ 127

61. Դրան նպաստեց նաև Ադրբեջանի հետ հակամարտությունը, որի արդյունքում մարզի թե քաղաքային և թե գյուղական համայնքներից սոցիալ-տնտեսական ծանր պայմաններից ելնելով բազմաթիվ երիտասարդ և աշխատունակ տարիքի ընտանիքներ արտագաղթել են հանրապետությունից մարզում թողնելով իրենց ծեր ծնողներին: Այդ է պատճառը, որ գյուղական համայնքներում տարեցները, թոշակառուները և հաշմանդամները մեծ տոկոս են կազմում:

Աղյուսակ 3.5. Կենսաթոշակառուների թիվը ՀՀ Այունիքի մարզում

| Հ/Հ | Տարածաշրջան               | 2005թ.       | 2006թ.       | 2007թ.       | 2008թ.       |
|-----|---------------------------|--------------|--------------|--------------|--------------|
| 1   | <b>Այունիքի մարզ</b>      | <b>26696</b> | <b>26303</b> | <b>25916</b> | 25291        |
|     | <b>1000 բնակչի հաշվով</b> | <b>174.5</b> | <b>172.0</b> | <b>169.6</b> | <b>165.5</b> |
| 2   | Ընդամենը ՀՀ               | 533288       | 527496       | 522662       | 522060       |
|     | 1000 բնակչի հաշվով        | 165.7        | 163.8        | 162.0        | 161.6        |

Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով» 2008թ. էջ 98

62. Աղյուսակից երևում է, որ ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ ՀՀ Այունիքի մարզում կենսաթոշակառուների տեսակարար կշիռն ամբողջ բնակչության մեջ տարեցտարի նվազում է, 2008թ.-ին 2005թ. համեմատ նվազումը համապատասխանաբար կազմել է 0.4% և 0.9%: Ընդ որում ժողովրդագրության տեսակետից մարզում ամենացավոտ հարցերից է բնակչության «ծերացումը»: Մարզի բնակչության 16.6%-ը կենսաթոշակառուները են:

63. Երկկողմանի և միակողմանի ծնողազուրկ երեխաների բարձր ներկայացվածությունը՝ 5.2% (տես՝ աղյուսակ 3) հիմնականում պայմանավորված է դարաբաղյան հակամարտության և սահմանամերձ բախումների ընթացքում մարզի զոհված ազատամարտիկների մեծ թվով՝ 565 հոգի, այդ թվում՝ Կապանում 215, Գորիսում 226, Սիսիանում 92 և Մեղրիում 32: Նաև դրանով է պայմանավորված կին զլխավոր ունեցող տնային տնտեսությունների բարձր տեսակարար կշիռը մարզում՝ 30.5%, ըստ որում քաղաքային համայնքներում յուրաքանչյուր երրորդ ընտանիքի հիմնական նյութական հոգսը կրում է կինը:

64. Նպաստառուների թիվը 2008թ.-ի տվյալներով կազմում է մարզի բնակչության 3.4%-ը: Աղյուսակի տվյալները վկայում են, որ 2005-2008 թվականներին նպաստառուների թիվը ընդհանուր բնակչության թվի համեմատ նվազել է 1.2%-ով, որը պայմանավորված է բնակչության կենսապայմանների բարելավման և սոցիալական աջակցության համակարգում տեղի ունեցող փոփոխություններով: Նպաստառու ընտանիքների ներկայացվածությունը էապես ավելի մեծ է քաղաքային ընտանիքների շրջանում: Նպաստառու է քաղաքային տնային տնտեսությունների 7,3%-ը, գյուղական տնային տնտեսությունների՝ ընդամենը 5.9%-ը:

Աղյուսակ 3.6. Նպաստառու ընտանիքների թիվը ՀՀ Այունիքի մարզում

| N/N | Տարածաշրջան                              | 2005թ.        | 2006թ.        | 2007թ.        | 2008թ.        |
|-----|--|---------------|---------------|---------------|---------------|
| 1   | Այունիքի մարզ                            | <b>6981</b>   | <b>5949</b>   | <b>5700</b>   | <b>5228</b>   |
| 2   | ա. թ. աղքատության ընտանեկան նպաստ ստացող | 4738          | 5605          | 5243          | 4421          |
| 3   | միանվագ դրամական օգնություն ստացող       | 2243          | 344           | 457           | 807           |
| 4   | Ընդամենը ՀՀ                              | <b>146726</b> | <b>139670</b> | <b>136917</b> | <b>129414</b> |
| 5   | ա. թ. աղքատության ընտանեկան նպաստ ստացող | 115068        | 130406        | 123792        | 111918        |
| 6   | միանվագ դրամական օգնություն ստացող       | 31658         | 9264          | 13125         | 17496         |

Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով» 2008թ. էջ 99, «Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը» 2008թ., էջ 137

65. Ի տարբերություն քաղաքային տնային տնտեսությունների՝ գյուղական տնային տնտեսություններն ավելի բազմանդամ են: Ընտանիքի բազմանդամությունը նպաստում է աղքատության ռիսկի ավելացմանը: Բազմանդամ ընտանիքները, որոնք բաղկացած են մեծ թվով երեխաներից և ավելի քիչ կերակրողներից, ավելի աղքատ են, քան փոքր ընտանիքները: Երեք և ավելի երեխաներ ունեցող ընտանիքները կազմում են գյուղական տնային տնտեսությունների թվի 18.9%-ը, որը 0.5%-ով ավելի է հանրապետության միջին ցուցանիշից:

66. Ինչ վերաբերվում է միգրացային, ապա առկա տվյալները վկայում են (տես՝ Աղյուսակ 3.7), որ 2008թ.-ին մարզից մեկնել է բնակչության 0.57%-ը, որը գերազանցում է ՀՀ միջինը մոտ 0.1%-ով: Մեկնողների թվաքանակի աճման տեմպերը բարձր են, իսկ եկողների թիվը 2008թ.-ին 2006-ի նկատմամբ կրճատվել է 70-ով կամ 20%-ով: Միգրացիայի մնացորդը 2005-2008թթ. համար կազմել է համապատասխանաբար -371, -451, -543 և -607 մարդ:

Աղյուսակ 3.7. Բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշները 2005-2008թթ.

| Տարածաշրջանը              | Տարեթիվը | /Վստույն/ ընտանիքի միջին թիվը | Միջին վերջին թիվը | Միջին սահմանը | Բնակչության քանակը | Միգրացիա      |                 |          |
|---------------------------|----------|-------------------------------|-------------------|---------------|--------------------|---------------|-----------------|----------|
|                           |          |                               |                   |               |                    | Եկողների թիվը | Մեկնողների թիվը | Մնացորդը |
| ՀՀ Սյունիքի մարզ          | 2005թ.   | 153.0                         | 1609              | 1266          | 343                | 342           | 713             | -371     |
|                           | 2006թ.   | 153.0                         | 1643              | 1361          | 282                | 265           | 716             | -451     |
|                           | 2007թ.   | 152.9                         | 1749              | 1242          | 507                | 277           | 820             | -543     |
|                           | 2008թ.   | 152.8                         | 1759              | 1225          | 534                | 272           | 879             | -607     |
| Հայաստանի Հանրապետություն | 2005թ.   | 3215.0                        | 37499             | 26739         | 11120              | 10441         | 18135           | -7694    |
|                           | 2006թ.   | 3219.2                        | 37639             | 27202         | 10437              | 9126          | 16087           | -6961    |
|                           | 2007թ.   | 3222.9                        | 40105             | 26830         | 13275              | 9795          | 15935           | -6140    |
|                           | 2008թ.   | 3230.1                        | 41238             | 27442         | 13796              | 10367         | 15849           | -5482    |

Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով» 2008թ. էջ 20, «Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը» 2008թ., էջ 131

67. Սյունիքի մարզի աղքատության հաղթահարման այն գերակա խնդիրները, որոնց լուծումները գտնվում են ազգային մակարդակում և հետևաբար պահանջում են համընդհանուր պետական մոտեցում, առընչվում են.

- 1) գյուղի զարգացմանը
- 2) փոքր ու միջին համայնքների զարգացմանը
- 3) սահմանամերձ գոտիներին սոցիալ-տնտեսական աջակցությանը
- 4) խոցելի խմբերի սոցիալական օժանդակության պետական ծրագրերի մշակմանը, դրանց կատարելագործմանը և իրագործմանը

68. Տնտեսական ներուժի առանձնահատկություններով պայմանավորված աղքատության խնդիրները հիմնականում առընչվում են մարզի տնտեսական ավանդույթների, արտադրական կառուցվածքի, համայնքների տիպաբանության, աշխատանքի շուկայի, ներդրումների միջավայրի և այլ տնտեսական զարգացումը կանխորոշող գործոններին:

69. ՀՀ Սյունիքի մարզի տնտեսական ներուժին չափազանց մեծ վնաս հասցրեց նախկինում տասնյակ հազարավոր աշխատատեղեր ապահովող խոշոր ձեռնարկությունների քայքայումը՝ սեփականաշնորհման, հումքի և իրացման շուկաների բացակայության և բարոյաֆիզիկական մաշվածության պատճառներով: Բացի այդ մարզի տնտեսության թուլացմանը նպաստել են նաև 90-ական թվականների պատերազմական գործողությունները, հրետակոծությունները, սահմանամերձ համայնքներում ականապատված հողերի առկայությունը, հաճախակի դարձած բնական աղետները և այլ գործոններ:

70. Ներկայումս մարզի նախկին արդյունաբերական ձեռնարկությունների մեծ մասը, հատկապես վերամշակող ձեռնարկությունները չեն աշխատում կամ աշխատում են ոչ լրիվ հզորությամբ: Դա բացասական ազդեցություն է թողնում հատկապես նախկինում խոշոր արդյունաբերական կենտրոն հանդիսացող Կապանի և մյուս քաղաքային համայնքների կենսագործունեության, նրա բնակչության ապրելակերպի վրա:

71. ՀՀ Սյունիքի մարզն ունի բոլոր անհրաժեշտ նախադրյալները բազմաճյուղ տնտեսություն ստեղծելու համար: Դրանք նախ և առաջ բազմազան և հարուստ բնական ռեսուրսներն են՝ պղնձի, մոլիբդենի, երկաթի, ոսկու, արծաթի և այլ մետաղների ու բնական շինանյութերի հանքավայրերը, ջրաէներգետիկ (Որոտան, Ողջի, Մեղրիգետ) պաշարները, անտառային ռեսուրսները և բերրի սևահողերը: Ընդ որում, եթե մարզի հարավային մասում բնական նախադրյալները նպաստում են լեռնամետալուրգիական և մասամբ փայտամշակման արտադրության, ապա հյուսիսային մասում (Գորիսի և Սիսիանի տարածաշրջաններ)՝ ջրաէներգետիկայի և գյուղատնտեսության զարգացմանը: Մարզի տնտեսության զարգացման համար առկա են նաև կրթական բարձր ցենզ և անհրաժեշտ որոկավորում ունեցող աշխատանքային ռեսուրսները:

72. ՀՀ Սյունիքի մարզի տնտեսության առանցքային ճյուղն ավանդաբար եղել է արդյունաբերությունը: ՀՀ Սյունիքի մարզի արդյունաբերական ձեռնարկությունների ապրանքային արտադրանքի ծավալը 2008 թվականին ընթացիկ գներով կազմել է 112235.0 մլն. դրամ:

73. 2008 թվականին հանրապետությունում թողարկված արդյունաբերական արտադրանքի 14.9%-ը բաժին է ընկել ՀՀ Սյունիքի մարզի արդյունաբերական կազմակերպություններին: Հանրապետության համախառն արտադրանքի ծավալում ՀՀ Սյունիքի մարզի թե արդյունաբերական, և թե գյուղատնտեսական արտադրանքների ցուցանիշները 2006թ.-ից սկսած ունեն աստիճանական անկման միտում, սկսած 2006թ.-ից այն նվազել է 3.9%-ով (Աղյուսակ 3.8):

Աղյուսակ 3.8. Մարզի արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի բաժինը հանրապետության համախառն արտադրանքի ծավալներում, 2005-2008թթ.

| Մարզի տեսակարար կշիռը                                     | 2005թ.          |             | 2006թ.          |             | 2007թ.          |             | 2008թ.          |             |
|---|-----------------|-------------|-----------------|-------------|-----------------|-------------|-----------------|-------------|
|   | գումարը         | %           | գումարը         | %           | գումարը         | %           | գումարը         | %           |
| ՀՀ արդյունաբերական համախառն արտադրանքի ծավալը /մլն.դրամ/  | 651919.6        | 100         | 644862.5        | 100         | 716549.3        | 100         | 751251.3        | 100         |
| <b>ա. թ. Սյունիքի մարզ</b>                                | <b>120357.0</b> | <b>18.5</b> | <b>121270.0</b> | <b>18.8</b> | <b>123270.0</b> | <b>17.2</b> | <b>112235.0</b> | <b>14.9</b> |
| ՀՀ գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալը /մլն. դրամ/ | 493.0           | 100         | 555.9           | 100         | 633.9           | 100         | 637.3           | 100         |
| <b>ա. թ. Սյունիքի մարզ</b>                                | <b>46.8</b>     | <b>9.5</b>  | <b>53.4</b>     | <b>10</b>   | <b>57.7</b>     | <b>10.2</b> | <b>58.0</b>     | <b>9.1</b>  |

Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով» 2008թ. էջ 36, «Հայաստանի սոցիալ-տնտեսական» 2008թ., էջ 16

74. Մարզի արդյունաբերության ընդգծված առաջատար ճյուղը հանքագործականն է, որը ապահովել է մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի 86.0 %-ը (ՀՀ ծավալում՝ 91.6%), 7.7%-ը բաժին է ընկնում էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրությանն ու բաշխմանը (ՀՀ ծավալում՝ 6.3%), 6.3%-ը մշակող արդյունաբերությանը և այլ ճյուղերին (ՀՀ ծավալում՝ 1.3%):

75. Մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2008թ.-ին կազմել է 58.0մլրդ. դրամ, որը կազմում է ՀՀ ծավալի 9.1%-ը:

76. Մարզի 43.8 հազ. հա վարելահողերից 2008թ. գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող տնտեսությունների կողմից օգտագործվել է 37.7 հազ. հա /86.0 %/: Համայնքներում փաստացի չի օգտագործվել մոտ 6.1 հազ. հա վարելահող, որից 4.6 հազար հա-ը պետական և համայնքային սեփականության վարելահողեր են: Չօգտագործվող վարելահողերը հիմնականում գտնվում են բարձրադիր գոտում և ունեն մեծ թեքություններ:

77. 2008թ.-ի ընթացքում մարզի տարածաշրջաններում գյուղատնտեսությամբ զբաղվել են 13390 գյուղացիական և ֆերմերային տնտեսություններ, գյուղատնտեսական մթերքների (կաթ, միս, հացահատիկ, պտուղ) վերամշակմամբ՝ 52 կազմակերպություն:

78. Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը չեն մշակվում հիմնականում ոռոգման հնարավորությունների բացակայության, արոտազանգվածները սպասարկող ճանապարհների անմխիթար վիճակի, բնակավայրերից հեռու գտնվելու, նախկին ջրարբիացման համակարգերի անգործության, անհրաժեշտ տեխնիկայի պակասի, հողերի մասնատվածության, ականապատված կամ սահմանամերձ լինելու պատճառներով (մարզի 10 համայնքների վարչական տարածքներում դեռևս մնում է ականապատված 530.0 հա հողատարածք, որից 42 հա՝ մասնավորեցված):

79. Ուսումնասիրության արդյունքում մարզի գյուղատնտեսության ոլորտում առանձնացվել են հետևյալ հիմնախնդիրները.

- 1) բնական աղետները (երաշտ, կարկուտ) և համապատասխան ծառայությունների բացակայությունը
- 2) ոռոգման ցանցի և պայմանների անբավարարությունը
- 3) սերմացու, քիմիկատներ, պեստիցիդներ և դիզելային վառելիք գնելու անկարողությունը
- 4) գյուղատնտեսական մեխանիզացիայի պակասը
- 5) գյուղատնտեսական վարկերի անմատչելիությունը
- 6) ճանապարհների անբարեկարգ վիճակը
- 7) իրացման ցածր գները և տեղական շուկաների սահմանափակ ծավալները
- 8) վերամշակման արտադրության սահմանափակությունը
- 9) անասնաբուժական ծառայությունների անմատչելիությունը
- 10) տեխնիկական տեղեկատվության և տեխնոլոգիաների անհասանելիությունը
- 11) մթերման ենթակառուցվածքի անկատարությունը:

80. Մարզում տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը 2008 թվականին կազմել է 59.2 հազ. մարդ, որոնցից 51.8 հազ. մարդ զբաղված են եղել տնտեսության մեջ, իսկ 7.5 հազ. մարդ (միջինը ժամանակաշրջանի համար) չեն ունեցել աշխատանք և գրանցվել են «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության մարզի տարածքային կենտրոններում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

Աղյուսակ 3.9. Պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը և գործազրկության մակարդակը Սյունիքի մարզում

| N/N | Տարածաշրջան                     | 2005թ.      | 2006թ.      | 2007թ.      | 2008թ.      |
|-----|---------------------------------|-------------|-------------|-------------|-------------|
| 1   | Գործազուրկների թիվը /հազ. մարդ/ |             |             |             |             |
| 1.1 | <b>ՀՀ Սյունիքի մարզ</b>         | <b>10.9</b> | <b>9.8</b>  | <b>9.2</b>  | <b>7.5</b>  |
|     | <b>ա.թ. կանայք</b>              | <b>6.9</b>  | <b>6.4</b>  | <b>6.3</b>  | <b>4.9</b>  |
|     | տեսակարար կշիռը ընդամենի մեջ    | 63.3        | 65.3        | 68.5        | 65.3        |
| 1.2 | Ընդամենը ՀՀ-ում                 | 89.0        | 84.6        | 82.8        | 74.9        |
|     | ա.թ. կանայք                     | 63.0        | 60.7        | 59.9        | 56.1        |
|     | տեսակարար կշիռը ընդամենի մեջ    | 70.8        | 71.7        | 72.3        | 74.9        |
| 2   | Գործազրկության մակարդակը %-ով   |             |             |             |             |
| 2.1 | <b>ՀՀ Սյունիքի մարզ</b>         | <b>17.5</b> | <b>16.2</b> | <b>15.3</b> | <b>12.6</b> |
| 2.2 | Ընդամենը ՀՀ-ում                 | 8.2         | 7.5         | 7.0         | 6.3         |

Աղբյուրը՝ «Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում» 2003-2007թթ. էջ 44, «Հայաստանի սոցիալ-տնտեսական» 2008թ., էջ 78


81. 2008 թվականին մարզի տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը ՀՀ համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմել է 4.5 %:

82. 2008 թվականին պաշտոնական տվյալների համաձայն մարզում գործազրկության մակարդակը կազմել է 12.6% /աղյուսակ 3.9/: Կապանի տարածաշրջանում գործազուրկների թվաքանակը կազմում է 3.1 հազ. մարդ կամ մարզի գործազուրկների ընդհանուր թվի 41.3%-ը և տարածաշրջանի ամբողջ բնակչության շուրջ 4.9 %-ը, Գորիսի տարածաշրջանում՝ 2.7 հազ. մարդ կամ, համապատասխանաբար 36.0%-ը և 6.0%-ը, Սիսիանի տարածաշրջանում՝ 1.3 հազ. մարդ կամ 17.3%-ը և 3.8 %-ը, Մեղրու տարածաշրջանում 0.4 հազ. մարդ կամ 5.3 %-ը և 3.2%-ը: Հատկանշական է, որ գրանցված գործազուրկների զգալի մասը կանայք են, մոտ 65.3%: Ըստ տարածաշրջանների պատկերը հետևյալն է՝ Կապանում՝ 77.4%-ը, Գորիսում՝ 64.2%-Սիսիանում՝ 67.7 %-ը, Մեղրիում՝ 81.9 %-ը:

83. ՀՀ Սյունիքի մարզի գործազրկության ցուցանիշը 2.0 անգամ բարձր է հանրապետական միջին ցուցանիշից:

84. 2008 թվականին մարզում պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին թվաքանակը ՀՀ համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմել է 10.0 %-ը:

Գործազրկության պատկերն ըստ տարածաշրջանների ներկայացվում է ստորև բերված գրաֆիկում.



85. Չնայած պաշտոնապես գրանցված տվյալներով գործազրկության մակարդակը ՀՀ Սյունիքի մարզում 2005-2008թթ. 17.5%-ից նվազել է մինչև 12.6%-ը (տես՝ աղյուսակ 3.9), սակայն ուսումնասիրությունները վկայում են, որ մարզի փոքր և միջին քաղաքներում իրական գործազրկության մակարդակը ավելի քան կրկնակի անգամ բարձր է և համարվում է այդ քաղաքների ամենամտահոգիչ հիմնահարցը:

86. Գործազուրկների համար աշխատանքի հնարավորությունները ընդլայնելու, թեկուզ և ժամանակավոր զբաղվածություն ապահովելու համար ՀՀ կառավարությունը 2001թ.-ից իրականացնում է վարձատրվող հասարակական աշխատանքի ծրագրեր, որոնցում ընդգրկվող գործազուրկների թիվը տարեցտարի ավելանում է:

87. Խորհրդային ժամանակներից Հայաստանը ժառանգել է այնպիսի ենթակառուցվածք, որն իր ծավալներով մեծ է և պահանջում է պահպանման մեծ ծախսեր: Համայնքների փոքր բյուջեները և դրանց թերակատարումը թույլ չեն տալիս հոգալ այդ ենթակառուցվածքների վերանորոգման և պահպանման ծախսերը: Հետևաբար ավելի քան 15 տարի է, ինչ ենթակառուցվածքների վերանորոգման և պահպանման աշխատանքները կանոնավոր կերպով չեն իրականացվում:

88. ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում վերջին տարիներին որոշ ծրագրեր են իրականացվել ճանապարհաշինության, սոցիալական ենթակառուցվածքների, գազաֆիկացման և բնակարանաշինության բնագավառներում: Մարզային զարգացման ծրագրի շրջանակում ևս մարզում վերանորոգվել և բարեկարգվել են համայնքային ճանապարհներ, դպրոցներ, պոլիկլինիկաներ, հիվանդանոցներ, խմելու ջրի և ոռոգման համակարգեր:

89. Հետազոտությունները ցույց են տալիս, որ տնտեսական ենթակառուցվածքների բարելավումը չափազանց կարևոր է աղքատության հաղթահարման գործում, քանզի նպաստում է համամասնական եկամտի ստեղծմանը: Ծանապարհների վրա արվող ներդրումները երկու անգամ ավելի արդյունավետ են իրենց նպատակաուղղվածության և հատկապես գյուղական աղքատության նվազեցման առումով, քան միջամտության այլ ձևերը:

90. Մարզի համայնքների միջին հեռավորությունը մարզկենտրոնից 72կմ է, իսկ մարզկենտրոն Կապանը մայրաքաղաք Երևանից՝ 320կմ: Գրեթե անանցանելի համայնքային ճանապարհները, եթե ոչ հիմնական, ապա կարևոր պատճառ են հանդիսանում ապրանքաշրջանառության զգալիորեն ցածր մակարդակի համար:

91. Չնայած միջին ամսական աշխատավարձի ցուցանիշը ՀՀ Սյունիքի մարզում գրեթե 1.4 անգամ գերազանցում է հանրապետական միջինին (2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսների միջինը կազմել է 122559 դրամ) և 1.3 անգամ Երևանի միջինին, (թվային առումով այսպիսի դրական իրավիճակը պայմանավորված է երեք հանքարդյունաբերական ձեռնարկությունների, այն է՝ «Ջանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ, «Ազարակի ՊՄԿ» ՓԲԸ և «Դինո Գոլդ Սայնինգ Քամփին» ՓԲԸ, կողմից վճարվող բավականին բարձր աշխատավարձերով, որը սակայն, համաաշխարհային շուկայում գունավոր մետաղների գների անկման հետ կապված ունի անկման միտում (2008թ. նոյեմբեր ամսվա միջին ամսական աշխատավարձը մարզում կազմել է 99512 դրամ)), այնուամենայնիվ միջին հաշվով մեկ բնակչին ընկնող ապրանքաշրջանառության ծավալի և ծառայությունների ծավալի համեմատական ակտիվությունը ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ ՀՀ Սյունիքի մարզի ցուցանիշը ամենացածրերից մեկն է հանրապետությունում: Մանրածախ ապրանքաշրջանառության տեսակարար կշիռը երկրի ընդհանուր ծավալում 2008թ.-ին չի գերազանցում անգամ 1.0%-ը և միջին հաշվով մեկ բնակչին ընկնող առևտրի շրջանառությունը կազմել է 65748 դրամ, որը պակաս է հանրապետական միջինից մոտ 5 անգամ, իսկ Երևանի ցուցանիշից՝ մոտ 12 անգամ: Նույնը կարելի է նշել բնակչությանը մատուցված ծառայությունների վերաբերյալ, որը միջին մեկ բնակչի հաշվով կազմում է 32377 դրամ, պակաս լինելով հանրապետական միջինից մոտ 7 և Երևանի ցուցանիշից մոտ 19 անգամ:

92. Հաշվի առնելով մարզի համայնքների տարածքային ցրվածությունն ու մեծ հեռավորությունը մարզկենտրոնից, մարզի քաղաքներից և մայրաքաղաքից, ճանապարհների բարեկարգման և նոր՝ ավելի կարճ ճանապահների կառուցման խնդիրը դառնում է գերակա բնակչության և համայնքների տնտեսական ակտիվության խթանման և մեկուսացվածության վերացման հարցում:

93. Ըստ ՀՀ Սյունիքի մարզի համայնքապետերի սուբյեկտիվ գնահատականների առանձնացվել են որոշակի գործոններ, որոնց առկայությունը խոչընդոտում է համայնքի զարգացումը:



94. Խոչընդոտները նախ և առաջ վերաբերում են գյուղատնտեսական արդյունավետ արտադրության կազմակերպման դժվարություններին: Դա մի կողմից պայմանավորված է հողերի ցածր որակով, մշակման դժվարություններով, իսկ մյուս կողմից վարկային և ենթակառուցվածքային անբարենպաստ պայմաններով (ռոռզում, ճանապարհ): Համայնքների զարգացումը խոչընդոտող գործոնների շարքում ծանրակշիռ դեր ունեն մաս բնական աղետները: Որից հետո միայն համայնքապետերն առանձնացրել են սոցիալական բնույթի հիմնախնդիրներ, սոցիալական ծառայությունների անմատչելիության, հոգևոր մեկուսացվածության հետ կապված հարցեր:

95. Մարզի 109 համայնքներում նշվել են հետևյալ հիմնախնդիրները, որոնք ներառված են համայնքների զարգացման քառամյա ծրագրում (2009-2012թթ.) և հրատապ լուծում են պահանջում: Հիմնախնդիրները ներկայացված են ըստ առաջնահերթությունների.

- 1) ճանապարհների վերանորոգում
- 2) ռոռզման համակարգի կառուցում և վերանորոգում
- 3) խմելու ջրի համակարգի կառուցում և վերանորոգում
- 4) գործազրկության վերացում, աշխատատեղերի ստեղծում
- 5) գյուղատնտեսական տեխնիկայով ապահովում
- 6) գյուղատնտեսական արտադրանքի վերամշակող ձեռնարկությունների ստեղծում
- 7) համայնքների գազիֆիկացումը:

96. Համայնքի բնակչության բարեկեցության բարձրացման համար համայնքապետերը առաջարկել են կարճաժամկետ և երկարաժամկետ լուծումներ: Նախ և առաջ նրանք նշել են տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների վերականգնում, ինչպես նաև փոքր և միջին բիզնեսի զարգացում, աշխատատեղերի ստեղծում: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է ՀՀ Սուևհիքի մարզի քաղաքային համայնքների բարեկեցության ապահովման կարևորագույն գործոններն ըստ առաջնահերթության:

Աղյուսակ 3.10. ՀՀ Սյուևհիքի մարզի քաղաքային համայնքների բարեկեցությունն ապահովող անհրաժեշտ գործոնները՝ ըստ համայնքապետերի գնահատականների

| Բնակավայրը | Առաջին կարևորություն  | Երկրորդ կարևորություն   | Երրորդ կարևորություն                                   |
|------------|---|---|--|
| Կապան      | Գործազրկության կրճատում, փոքր և միջին բիզնեսի խթանում, մասնագետ աշխատուժի արտագաղթի կանխում | Համայնքային նշանակության ճանապարհների վերանորոգում, բնակարանային պայմանների բարելավում, շուրջօրյա ջրամատակարարման ապահովում | Տուրիզմի զարգացման նախադրյալների ստեղծում              |
| Գորիս      | Շուրջօրյա ջրամատակարարման ապահովում   | Գործազրկության կրճատում, փոքր և միջին բիզնեսի խթանում   | Տուրիստական ենթակառուցվածքների ստեղծում                |
| Սիսիան     | Փոքր և միջին բիզնեսի զարգացում  | Համայնքային նշանակության ճանապարհների վերանորոգում  | Բնակարանային պայմանների բարելավում                     |
| Քաջարան    | Գործազրկության կրճատում /կանանց համար աշխատատեղերի ստեղծում/                                | Շուրջօրյա ջրամատակարարման ապահովում, բնակարանային պայմանների բարելավում   | Առողջապահական համակարգի շենքային պայմանների բարելավում |

|        |  |  |  |
|--------|--|--|--|
| Մեղրի  | Գործազրկության կրճատում, փոքր և միջին բիզնեսի խթանում      | Շուրջօրյա ջրամատակարարման ապահովում, համայնքի գազիֆիկացում | Բնակարանային պայմանների բարելավում, ներհամայնքային ճանապարհների վերանորոգում |
| Ազարակ | Շուրջօրյա ջրամատակարարման ապահովում, համայնքի գազիֆիկացում | Գործազրկության կրճատում, փոքր և միջին բիզնեսի խթանում      | Ներհամայնքային ճանապարհների վերանորոգում                                     |

97. Շատ համայնքներ (հատկապես փոքր) սեփական բյուջեի շրջանակներում չեն կարողանում լուծել համայնքի հիմնախնդիրները: Այդ տեսանկյունից չափազանց կարևոր է միջհամայնքային միավորումների դերը, որոնք կարող են աջակցել համայնքներին համատեղ լուծելու այն խնդիրները, որոնք համայնքներն առանձին-առանձին դժվարանում են լուծել: Մինչև միջհամայնքային միավորումների ձևավորումն այդ ընդհանուր խնդիրների լուծմանն աջակցում են մարզի 4 տարածաշրջաններում գործող համայնքների միությունները: Վերջիններս գործում են հասարակական կազմակերպության կարգավիճակով և ակտիվորեն համագործակցում են համայնքապետարանների հետ՝ իրենց նպաստը բերելով համայնքների բյուջեների եկամուտների ավելացմանը:

98. ՀՀ Սյունիքի մարզի աղքատության հաղթահարման այն գերակա խնդիրները, որոնց լուծումներն անմիջականորեն կապված են համայնքների զարգացման հետ, առնչվում են.

- 1) մարզային, համայնքային, միջհամայնքային ճանապարհների բարեկարգմանը
- 2) փոքրաթիվ բնակչություն ունեցող համայնքների ներգրավմամբ միջհամայնքային միավորումների ձևավորմանը
- 3) սահմանամերձ և փախստականաբնակ համայնքների համար նպատակային ծրագրերի մշակմանն ու իրագործմանը
- 4) մարզի քաղաքների առաջանցիկ զարգացման քաղաքականությունների և համալիր ծրագրերի մշակմանն ու իրագործմանը
- 5) որոնց վերջնական նպատակը պետք է լինի մարզի գյուղական և քաղաքային համայնքների փոխլրացնող և ներդաշնակ զարգացումը:

99. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ որքան փոքր է համայնքը, այնքան սոցիալ-մշակութային ենթակառուցվածքները թույլ են (հատկապես գյուղական՝ քիչ բնակչություն ունեցող համայնքներում): Ընդ որում, եղածն էլ խորհրդային կարգերի ժառանգություն է (հատկապես մշակութային մասով), որը խիստ արդիականացման կարիք ունի:

100. 2008թ.-ին մարզում գործել են մարզային ենթակայության 118 հանրակրթական (որից մարզի գյուղական համայնքներում գործում են 62 միջնակարգ, 24 հիմնական, 2 տարրական դպրոցներ) և 3 հատուկ դպրոցներ:

101. Մարզի տարածքում պարտադիր հիմնական կրթությունից դուրս մնացած երեխաներ չկան:

102. ՀՀ Սյունիքի մարզում գործում է 47 նախադպրոցական ուսումնական հաստատություններ, որից 45-ը՝ համայնքային ենթակայության (այդ թվում 27-ը գյուղական համայնքներում), 1-ը՝ գերատեսչական («Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ): Նախադպրոցական ուսումնական հաստատություններ չկան մարզի 59 համայնքներում, որտեղ բացակայում են շենքային

պայմանները, իսկ 10-ում պահպանվել են շենքերը, սակայն մանկապարտեզները ֆինանսական սուղ պայմանների և սակավաթիվ երեխաների պատճառով չեն գործում:

103. 2007/2008 ուսումնական տարում մարզում գործել են 9 միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություն՝ 1713 ուսանողներով, 3 բարձրագույն պետական ուսումնական հաստատության մասնաճյուղեր՝ 1852 ուսանողներով և 4 բարձրագույն ոչ պետական ուսումնական հաստատություն՝ 475 ուսանողներով:

104. ՀՀ Սյունիքի մարզում 2008 թվականին գործել են մարզային ենթակայության 19 փակ բաժնետիրական ընկերություններ, այդ թվում՝ 6 բժշկական կենտրոն՝ քաղաքային համայնքներում, որոնց կողմից իրականացվում է ստացիոնար և ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություններ, առողջության առաջնային պահպանման 11 կենտրոն, 1 մարզային արյան փոխներարկման կայան և նյարդահոգեբուժական դիսպանսեր: Գյուղական համայնքներում գործում են 101 բուժական մակաբարձական կետեր, իսկ դեղատներ չկան:

105. Մարդկային աղքատության ցուցանիշների համակարգը բաղկացած է երեք հիմնական բաղադրիչներից.

- 1) կրթության մատչելիություն
- 2) առողջապահության մատչելիություն
- 3) արժանավայել կենսապայմանների մատչելիություն:

106. Թվարկված բաղադրիչների հիման վրա կառուցված մարդկային աղքատության մոդիֆիկացված համաթվի հաշվարկների (Աղյուսակ 3.11) մարդկային աղքատության տեսակետից ՀՀ Սյունիքի մարզը 2004 թվականին երկրորդն էր Երևանից հետո:

Աղյուսակ 3.11. Մարդկային աղքատության մոդիֆիկացված համաթվերը ՀՀ մարզերում ու դրանց դասակարգումն ըստ մարդկային աղքատության

| Մարզերի դասակարգումն ամենափոքր մարդկային աղքատության համաթվից ամենամեծը | ՄԱՄՀ         | Կրթական ծառայությունների անմատչելիություն | Առողջապահական ծառայությունների անմատչելիություն | Խմելու ջրի անվտանգ աղբյուրների ու մշտական կացարանի անհասանելիություն |
|---|--------------|---|---|--|
| 1 Երևան   | 0.325        | 0.096                                     | 0.225   | 0.005  |
| <b>2 Սյունիք</b>  | <b>0.361</b> | <b>0.106</b>                              | <b>0.220</b>                                    | <b>0.036</b>   |
| 3 Կոտայք  | 0.414        | 0.084                                     | 0.263   | 0.067  |
| 4 Վայոց Ձոր   | 0.438        | 0.136                                     | 0.256   | 0.047  |
| 5 Արմավիր   | 0.517        | 0.125                                     | 0.212   | 0.181  |
| 6 Շիրակ   | 0.520        | 0.092                                     | 0.256   | 0.172  |
| 7 Լոռի  | 0.575        | 0.176                                     | 0.248   | 0.151  |
| 8 Տավուշ  | 0.624        | 0.169                                     | 0.263   | 0.195  |
| 9 Արարատ  | 0.626        | 0.178                                     | 0.285   | 0.163  |
| 10 Գեղարքունիք  | 0.634        | 0.211                                     | 0.242   | 0.182  |
| 11 Արագածոտն  | 0.753        | 0.215                                     | 0.283   | 0.256  |

Աղբյուրը՝ «Հայաստանի սոցիալական միտումները» N5

107. Չնայած մարզի հանրակրթական համակարգի զարգացած ցանցին (տարրական, հիմնական, միջնակարգ, ավագ դպրոցներ, վարժարաններ, արհեստագործական դպրոցներ, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, ԲՈՒՀ-եր), որով պայմանավորված է մարզի բնակչության նկատելիորեն բարձր կրթամակարդակը,

կրթական ծառայությունների անմատչելիության ինտեգրացված ցուցանիշով (0.106) ՀՀ Սյունիքի մարզը զբաղեցնում է 4-րդ տեղը՝ Կոտայքից, Շիրակից և Երևանից հետո:

108. Չնայած վերջին տարիներին մարզում իրականացված դպրոցաշինական/կրթական ծրագրերին, մարզում դեռևս շատ են այն դպրոցները, որոնց գույքային ու շենքային պայմանները գտնվում են անմխիթար վիճակում: Դպրոցներում գրեթե բացակայում են լաբորատոր պարագաները: Գրադարաններում հաշվառված գրքերի մոտ 20%-ն օգտագործելի չէ, քանի որ չի բավարարում ներկայիս ուսուցողական ծրագրերի պահանջներին:

109. ՄԱԶԾ-ի կողմից մշակված «Աղքատների ձայնը» զեկույցում կրթական համակարգի շահառուները նշում են հետևյալ հիմնախնդիրները.

- 1) Դպրոցների շենքերի և ենթակառուցվածքների անբավարար կամ ոչ բարվոք վիճակը
- 2) Դպրոցների ոչ բարվոք միջավայրը
- 3) Հին կամ անբավարար կահույքը, սարքավորումները, գույքը և դիդակտիկ նյութերը
- 4) Գրադարանի անբավարարությունը
- 5) Լաբորատորիաների, համակարգչային սենյակների ոչ բավարար հագեցվածությունը կամ բացակայությունը
- 6) Մարզադահլիճի և արտասուսումնական ծրագրերի բացակայությունը կամ պայմանների անբավարարությունը
- 7) Մանկապարտեզների վիճակը
- 8) Աշակերտների առողջական խնդիրները
- 9) Սոցիալական կառույցների և ծնողական խորհուրդների անուշադիր վերաբերմունքը դպրոցի հանդեպ
- 10) Կրթական քաղաքականության բացասական ազդեցությունը
- 11) Այլ հանգամանքներ՝ դպրոցի կառավարման մոտեցումները, բյուջեն:

110. Առողջապահական ծառայությունների անմատչելիության ցուցանիշով ՀՀ Սյունիքի մարզը զբաղեցնում է 2-րդ տեղը:

111. Անցումային տարիներին ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ ՀՀ Սյունիքի մարզում կտրուկ նվազել էր բնակչության հաճախելիությունն ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներ: Վերջին տարիներին հաճախումների թիվն սկսել է աճել, իսկ 2006թ.-ից սկսած, երբ առաջնային բուժօգնությունը դարձավ անվճար, այդ թիվն ավելի է աճել: 2008թ. ընթացքում պոլիկլինիկաներում և ամբուլատորիաներում հիվանդների հաճախումների թիվը կազմել է 430223 (2005 թ-ին՝ 360867): Պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հիվանդանոցներում և դիսպանսերներում ստացիոնար բուժում է ստացել 8008 հիվանդ (2005թ-ին՝ 6922):

112. ՄԱԶԾ-ի 2007թ.-ի հետազոտության ընթացքում առանձնացվել են առողջապահական համակարգի հետևյալ հիմնախնդիրները.

- 1) Տեղական առողջապահական ծառայությունների և դեղամիջոցների սահմանափակ մատչելիությունը
- 2) Տեղական բուժկետերի ենթակառուցվածքների սահմանափակությունը և ընթացիկ պահպանման խնդիրները
- 3) Գյուղից դուրս գտնվող առողջապահական հիմնարկներ դիմելու դժվարությունները
- 4) Տրանսպորտային դժվարությունները և շտապ օգնության մեքենաների անբավարար քանակությունը

- 5) Առողջապահական ծառայություններից օգտվելու համար ֆինանսական միջոցների պակասը
- 6) Շտապ օգնության ծառայության հետ կապված խնդիրները
- 7) Դեղատների բացակայությունը
- 8) Զրի աղտոտվածությունը և հիվանդացությունը:

113. Արժանավայել կենսապայմանների անմատչելիության` խմելու ջրի անվտանգ աղբյուրների ու մշտական կացարանի անհասանելիության ցուցանիշով ՀՀ Սյունիքի մարզը զբաղեցնում է 2-րդ տեղը Երևանից հետո: Մարզում պետական բյուջեի և դոնորների միջոցներով իրականացվել են խմելու ջրամատակարարման բարելավման մի շարք ծրագրեր, որոնք դրական ազդեցություն են ունեցել ինչպես խմելու ջրի հասանելիության ապահովման, այնպես էլ որակի առումով: Այսպես ՏՀԻ հետազոտության տվյալներով գյուղական համայնքներում իրականացված ծրագրերի ազդեցությունը հետազոտված համայնքների 4%-ը գնահատել է գերազանց, 44%-ը լավ, 45%-ը բավարար, իսկ 7%-ի կարծիքով այդ աշխատանքները ոչ մի ազդեցություն չեն ունեցել համայնքի բնակչության բարեկեցության մակարդակի վրա: Այդ է պատճառը, որ մարզի համայնքների մեծ մասի 2009-2012թթ. քառամյա ծրագրերում ընդգրկված են խմելու ջրատարների կառուցման և վերանորոգման, խմելու ջրի ներհամայնքային ցանցի վերանորոգման ծրագրեր:

114. ՀՀ Սյունիքի մարզի բնակարանային ամենացավոտ հարցերից մեկն է քաղաքային և որոշ գյուղական համայնքների բազմաբնակարան շենքերի ամնխիթար, կիսավթարային և հակասանիտարական վիճակը: Բազմաբնակարան շենքերի գերակշռող մեծամասնությունը կառուցվել են 20-ից 50 տարի առաջ, և դրանց մեծ մասը ներկայումս ունի տանիքապատման, ջրամատակարարման ու ջրահեռացման խնդիրներ: Գյուղական համայնքների մեծ մասը գտնվելով սահմանամերձ գոտում, տուժել են Ադրբեջանի հետ հակամարտության ընթացքում հրետակոծություններից և գտնվում են կիսավեր, վթարային վիճակում:

115. 2004-2008թթ. ընթացքում ՄԱԿ-ի գերազույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի, Շվեյցարական զարգացման գործակալության և ՀՀ Սյունիքի մարզպետարանի համաֆինանսավորմամբ փախստական ընտանիքների համար գնվել և շահագործման են հանձնվել 98 բնակարաններ: Փախստականների և ներքին տեղահանվածների սոցիալական անապահովության աստիճանը իջեցնելու համար մարզում ներկայումս լուրջ աշխատանքներ են տարվում նոր սոցիալական տների կառուցման համար, որով կլուծվի 407 ընտանիքների բնակարանային հարցը, որոնք ընդգրկված չեն առաջնահերթության ծրագրերում:

116. ՀՀ Սյունիքի մարզի քաղաքային և գյուղական համայնքներում իրականացված աղքատության մասնակցային գնահատման արդյունքները վկայում են, որ ընտանիքների աղքատության վտանգը մեղմելու և աղքատ ընտանիքներին սատարելու ամենակարևոր ուղղությունը համայնքի անդամների սոցիալական ակտիվների վերականգնումն է համայնքներում փոխօգնության և սոցիալական զարգացման հիմնադրամների ձևավորման միջոցով:

117. ՀՀ Սյունիքի մարզի մարդկային աղքատության հաղթահարման գերակայություններն առնչվում են.

- 1) նախադպրոցական, նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության բարելավմանը
- 2) մոր և մանկան առողջության պահպանմանը
- 3) խմելու ջրի հասանելիության ապահովմանը
- 4) քաղաքային տնտեսության բարեկարգմանը

որոնց վերջնական նպատակը պետք է լինի մարզի բնակչության համար կրթական և առողջապահական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումն ու արժանավայել կենսապայմանների ապահովումը:

118. Հոգևոր-մշակութային պահանջումները բավարարման սահմանափակությունն աղքատության երևույթի թերևս ամենաքիչ ուսումնասիրված բաղադրիչն է: Սակայն որոշակի քանակական տվյալների վերլուծության միջոցով կարելի է պատկերացում կազմել մարզի բնակչության հոգևոր-մշակութային պահանջումները բավարարման հնարավորությունների մասին:

119. ՀՀ Սյունիքի մարզում գործում են 2 դրամատիկական թատրոն (Կապանում և Գորիսում), 6 թանգարան, 130 գրադարան, 15 երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ, 7 մշակութային կենտրոն, 110 մշակույթի տուն և ակումբ, 7 մարզադպրոց, 6 մարզադաշտ և այլ մարզական կառույցներ ու մշակութային օջախներ, «Խուստուկ», «Սոսի», «Լաստ» հեռուստաալիքները, հրատարակվում են մարզային, համայնքային «Սյունաց Երկիր», «Զանգեզուր», «Բան ու գործ», «Որոտան» և «Սիսիանի ձայն» թերթերը:

120. Մշակույթի և սպորտի բնագավառում դեռևս չլուծված են մնում գյուղական համայնքների մշակույթի տների, ակումբ-գրադարանների, մարզական կառույցների վերանորոգման և համապատասխան գույքով ապահովման հարցերը:

121. Վերջին տարիներին հաճախ են կազմակերպվում մարզամշակութային, երիտասարդական միջոցառումներ, համերգներ, ցուցահանդեսներ, մրցումներ, ինչպես նաև հանրապետական և միջազգային միջոցառումներ, որոնց մասնակցում են ՀՀ Սյունիքի մարզի ներկայացուցիչները:

122. ՀՀ Սյունիքի մարզի բնակչության աղքատության հաղթահարման տեսանկյունից հոգևոր-մշակութային պահանջումները բավարարման խնդրի լուծումը պահանջում է.

- 1) մարզի բնակչության հոգևոր-մշակութային պահանջումները որակական հետազոտությունների իրականացում
- 2) հոգևոր-մշակութային պահանջումները դասակարգում՝ ըստ բնակչության տարբեր խավերի համար գերակայությունների
- 3) որոշ համայնքների համար մեկուսացվածության վերացում՝ թերթերի հասանելիության ապահովման, հեռահաղորդակցության բարելավման միջոցով:

123. ՀՀ Սյունիքի մարզի աղքատության գնահատման վերլուծությունից բխող եզրահանգումների հիման վրա նախանշվում են մարզի տնտեսության հետևյալ գերակա ոլորտները, որոնց առաջանցիկ զարգացումը էապես կնպաստի եկամտային և մարդկային աղքատության հաղթահարմանը.

- 1) Մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացում
- 2) Գյուղատնտեսության զարգացում
- 3) Սոցիալական ոլորտի ծառայությունների մատչելիության և որակի բարձրացում
- 4) Մարզային ենթակառուցվածքների բարելավում
- 5) Մարզային զարգացման պլանավորման և իրականացման ինստիտուցիոնալ կառուցվածքի ամրապնդում և հետագա զարգացում
- 6) Բնապահպանական խնդիրների արդյունավետ լուծում:

**4. ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ**

**4.1. ՓՄՁ ոլորտի իրավիճակի վերլուծություն**

124. ՓՄՁ պետական աջակցության ուղղությամբ իրականացվող հետևողական քաղաքականության արդյունքում վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է ՓՄՁ ոլորտը բնութագրող ցուցանիշների դինամիկ աճ: 2008թ. ՓՄՁ տեսակարար կշիռը երկրի համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ) կազմել է 41.7% 2006թ. 41.0% դիմաց՝ կրկնակի գերազանցելով 1999 թվականի մակարդակը: Դրա հետ մեկտեղ, ավելացել է նաև ՓՄՁ ոլորտի մասնաբաժինը երկրի արտահանման ծավալում՝ կազմելով 17% 2007 թվականի 16.9%-ի և 2003 թվականի 14.3%-ի դիմաց:

125. Նշանակալի է ՓՄՁ սուբյեկտների մասնակցությունը նոր աշխատատեղերի ստեղծման գործում: 2008թ. ընթացքում ստեղծված ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը կազմել է ավելի քան 23 հազար, որի արդյունքում ստեղծվել է շուրջ 27.1 հազար նոր աշխատատեղ, որից 14.0 հազարը՝ ՀՀ մարզերում, իսկ 13.1 հազարը՝ Երևանում:

126. 2007 թվականին գրանցված ՓՄՁ սուբյեկտների մարզային բաշխվածքն ըստ անհատ ձեռնարկատերերի և տնտեսական գործունեության իրավունք ունեցող առևտրային իրավաբանական անձանց ներկայացված է Աղյուսակ 4.1-ում:

Աղյուսակ 4.1. Գրանցված ՓՄՁ սուբյեկտների մարզային բաշխվածքն ըստ անհատ ձեռնարկատերերի և տնտեսական գործունեության իրավունք ունեցող առևտրային իրավաբանական անձանց

| Մարզ                   | ՓՄՁ սուբյեկտներ |              |              |              |               |              |
|------------------------|-----------------|--------------|--------------|--------------|---------------|--------------|
|                        | ԱՁ              |              | ԻԱ           |              | Ընդամենը      |              |
|                        | քանակ           | %            | քանակ        | %            | քանակ         | %            |
| Երևան                  | 26149           | 41           | 3568         | 53           | 61847         | 48           |
| <b>Ընդամենը մարզեր</b> | <b>37640</b>    | <b>59</b>    | <b>31113</b> | <b>47</b>    | <b>68753</b>  | <b>52</b>    |
| Արագածոտն              | 2553            | 4            | 1858         | 3            | 4411          | 3            |
| Արարատ                 | 4669            | 7            | 3117         | 5            | 7786          | 6            |
| Արմավիր                | 5356            | 8            | 2929         | 4            | 8285          | 6            |
| Գեղարքունիք            | 2916            | 5            | 3760         | 6            | 6677          | 5            |
| Լոռի                   | 5111            | 8            | 4792         | 7            | 9903          | 8            |
| Կոտայք                 | 5387            | 8            | 5100         | 8            | 10487         | 8            |
| Շիրակ                  | 3503            | 6            | 3239         | 5            | 6773          | 5            |
| <b>Սյունիք</b>         | <b>3352</b>     | <b>5</b>     | <b>3270</b>  | <b>5</b>     | <b>6591</b>   | <b>5</b>     |
| Վայոց Ձոր              | 1593            | 3            | 897          | 1            | 2490          | 2            |
| Տավուշ                 | 3201            | 5            | 2150         | 3            | 5350          | 4            |
| <b>Ընդամենը ՀՀ</b>     | <b>63789</b>    | <b>100.0</b> | <b>66811</b> | <b>100.0</b> | <b>130600</b> | <b>100.0</b> |

Աղբյուրը՝ «Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում» տեղեկագիր

127. ՓՄՁ պետական քաղաքականության տնտեսական նպատակների անկյունաքարն է հանդիսանում ՀՀ մարզերի տնտեսական զարգացման անհամաձայնությունների հաղթահարումը՝ օգտագործելով յուրաքանչյուր տարածաշրջանի տնտեսական զարգացման առանձնահատկություններն ու ներուժը և խթանելով տնտեսվարող սուբյեկտների միջև ներմարզային և միջմարզային համագործակցության զարգացումը:

128. Վերջին տարիների ընթացքում ՀՀ Սյունիքի մարզի ՓՄՁ ոլորտում զգալի առաջընթաց է նկատվում: Միայն 2008 թվականի ընթացքում ՀՀ Սյունիքի մարզում գրանցվել է 1005 ՓՄՁ սուբյեկտ՝ ապահովելով շուրջ 1275 նոր աշխատատեղ: ՀՀ Սյունիքի մարզում 1000 բնակչի հաշվով գրանցված ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը 2008 թվականին կազմել է 43:

129. Մարզի զարգացման ծրագրով ՓՄՁ աջակցության միջոցառումները նախատեսված էր իրականացնել «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի (Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ) գործունեության շրջանակներում:

130. Ծրագրի շրջանակներում աշխատանքներ են իրականացվել ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի (ք. Սիսիան) և Կապանի (ք. Կապան) տարածաշրջաններում Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի ներկայացուցչություններ ստեղծելու ուղղությամբ:

131. Նշված ենթակառուցվածքների ստեղծումը և ամրապնդումը ծրագրի ռազմավարական նպատակների իրականացման կարևոր նախադրյալ հանդիսացավ, այն է ՓՄՁ-ներից ստացվող աջակցման հայտերի վերաբերյալ որոշումները ընդունվում են մարզում՝ ՓՄՁ զարգացման մարզային խորհրդի կողմից:

132. ՓՄՁ-ներին ցուցաբերված աջակցությունը իրականացվել է հետևյալ մեխանիզմներով:

Աղյուսակ 4.2. ՓՄՁ աջակցման մեխանիզմները

| Աջակցության ուղղություններ                         | Աջակցության մեխանիզմները ըստ ՓՄՁ սուբյեկտների   |  |
|--|---|--|
|  | Գործող ՓՄՁ-ներ  | Սկսնակ գործարարներ   |
| Ֆինանսական աջակցություն                            | Երաշխավորվում է վարկի հիմնական գումարի ոչ ավելի, քան 70%-ը, երաշխավորության առավելագույն չափը մինչև 10 մլն. դրամ:<br>Վարկային տոկոսի մասնակի սուբսիդավորում:<br>Սեփական կապիտալի ֆինանսավորում: | Մինչև 2 մլն. դրամ վարկի ստացման համար տրամադրվում է վարկային երաշխիք վարկի գումարի մինչև 130% չափով: |
| Տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական ծրագրեր | Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն,<br>Նեղ մասնագիտական խորհրդատվական աջակցություն,<br>Ուսուցողական դասընթացներ  | Դասընթացներ և անհատական խորհրդատվություն գործարար ծրագրի մշակման համար                               |
| Իրացման աջակցություն                               | Գովազդային վահանակների պատրաստում<br>Պիտակների տպագրություն<br>Ինտերնետային կայքի պատրաստում<br>Մասնակցություն ցուցահանդեսներին:  |  |

Աղբյուրը՝ ՓՄՁ ՀՀ Սյունիքի մարզային կենտրոն

133. 2008 թվականի ընթացքում ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում ՀՀ Սյունիքի մարզում տրամադրվել է 15.1 մլն ՀՀ դրամ գումարի երաշխավորություն 6 ՓՄՁ սուբյեկտի՝ ապահովելով 32.5 մլն ՀՀ դրամի վարկային փաթեթ: Վարկային երաշխավորությունները տրամադրվել են Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի գործընկեր Ակբա-Կրեդիտ Ազրիկուլ բանկի և Արդշինի մասնաճյուղի միջոցով:



134. Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ծրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել 27 սկսնակ գործարարի: Ծրագրի իրականացման արդյունքում առավել իրատեսական գործարար ծրագրեր ներկայացրած 9 սկսնակ գործարարի տրամադրվել է 8.5 մլն ՀՀ դրամի վարկ, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի երաշխավորությունը կազմել է 10.1 մլն ՀՀ դրամ:

135. 740 ՓՄՁ սուբյեկտներին խորհրդատվական աջակցություն է տրամադրվել օրենքներում կատարվող փոփոխությունների, արտաքին տնտեսական գործունեության իրականացման, հոսքագծերի և սարքավորումների ձեռքբերման, նորարարությունների և նոր տեխնոլոգիաների ներդրման, գործընկերների որոնման, ֆինանսական միջոցների ներգրավման և կառավարման, լիցենզավորման, ստանդարտացման, գործարար և ներդրումային ծրագրերի մշակման, հաշվապահական հաշվառման և այլ հարցերով:

136. ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված տեղեկատվական և խորհրդատվական աջակցության այն մասը, որը պահանջում է նեղ մասնագիտական հմտություններ, իրականացվել է մրցույթով ընտրված գործարար ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջոցով: 3 ՓՄՁ սուբյեկտ ստացել են նեղ մասնագիտական հմտություններ պահանջող խորհրդատվական աջակցություն, ֆինանսների կառավարման, հաշվապահական հաշվառման, հարկային և աշխատանքային օրենսդրության վերաբերյալ խորհրդատվություն:

137. 104 ՓՄՁ սուբյեկտ ուսուցողական աջակցություն են ստացել, մասնակցելով «Ֆինանսական հաշվետվությունների կազմում», «ՀՀ հարկային օրենսդրության պարզաբանումներ», «ՀՀ աշխատանքային օրենսդրության պարզաբանումներ» թեմաներով դասընթացներին:

138. Շուկաներ առաջնդմանն աջակցության ծրագրի շրջանակներում մարզից 12 ՓՄՁ սուբյեկտներ ստացել են գովազդային վահանակների պատրաստման, պիտակների տպագրման, ինտերնետային կայքի պատրաստման, ցուցահանդեսին մասնակցության և այլ աջակցություն:

139. Այսպիսով, ՄՁԾ ՓՄՁ աջակցության բաղադրիչը ամբողջությամբ իրագործվում է և մեկ տարում ծրագիրը ներառել է ընդհանուր առմամբ 898 շահառուներ:

#### 4.2. Ծրագրի արդյունքները և հետագա խնդիրները

140. Ծրագրի իրականացման ժամանակահատվածում մարզի 898 շահառուների՝ գործող ՓՄՁ սուբյեկտների և սկսնակ գործարարների բաշխվածությունը ըստ աջակցման ուղղությունների հետևյալն է (տես Աղյուսակ 4.3.):

Աղյուսակ. 4.3 Գործող ՓՄՁ սուբյեկտների և սկսնակ գործարարների բաշխվածությունն ըստ աջակցման ուղղությունների

| ՓՄՁ սուբյեկտներ<br>Աջակցման գործիքներ                    | Ընդամենը<br>աջակցություն<br>ստացած<br>սուբյեկտներ | Գործող ՓՄՁ-<br>ներ | %           | Սկսնակ<br>գործարարն<br>եր | %           |
|--|---|--------------------|-------------|---------------------------|-------------|
| Ֆինանսական աջակցություն                                  | 15  | 6                  | 40          | 9                         | 60          |
| Տեղեկատվական,<br>խորհրդատվական և<br>ուսուցողական ծրագրեր | 871   | 619                | 71          | 252                       |             |
| Շուկաների առաջնդման<br>աջակցություն                      | 12  | 12                 | 100         | 0                         | 0           |
| <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>  | <b>898</b>  | <b>637</b>         | <b>70.9</b> | <b>261</b>                | <b>29.1</b> |

Աղբյուրը՝ ՓՄՁ ՀՀ Սյունիքի մարզային կենտրոն

141. Աջակցություն ստացածների տարածքային բաշխվածության մեջ առայժմ գերակշռում են մարզկենտրոնում և քաղաքային համայնքներում գործող ՓՄՁ-ները: Ծրագրի սկզբնական փուլում այս հանգամանքը թերևս հասկանալի է, սակայն հետագայում պետք է տարածաշրջանների ավելի համամասնական ընգրկում ապահովել: Դա միաժամանակ հնարավորություն կստեղծի ծրագրի աջակցման մեխանիզմները ավելի հասանելի դարձնել գյուղական համայնքների համար, որտեղ գործող ՓՄՁ-ների քանակը դեռևս չնչին է: Անհրաժեշտ է հետևողականորեն մեծացնել գյուղական համայնքներից շահառուների տեսակարար կշիռը ՓՄՁ աջակցության հաջորդ տարիների պլաններում:

142. Ծրագրի շահառուների շրջանակները ընդլայնելու գործում կարևոր դեր ունեն կատարելու տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց մասնակցությունը ՓՄՁ աջակցման ծրագրերի պլանավորման և իրագործման գործընթացներում նախատեսված է, սակայն դեռևս թույլ է դրսևորվում:

#### 4.3. Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրները

143. ՄՁ ՓՄՁ աջակցման ծրագիրը զգալիորեն բարելավեց վարկային ռեսուրսների հասանելիությունը մարզի գործող և սկսնակ այն ՓՄՁ-ների համար, որոնք գրավային ռեսուրսների անբավարարության պատճառով չէին կարողանում օգտվել վարկավորման առկա հնարավորություններից:

144. Ծրագրով իրականացված նախաձեռնությունները աջակցելով հանդերձ շահառու ՓՄՁ-ների գործունեության բարելավմանը դեռևս բավարար չեն էականորեն նպաստելու համար մարզի մասնավոր հատվածի կայուն և մրցունակ զարգացմանը:

Մարզի համայնքներում մասնավոր հատվածը ձևավորված է հիմնականում.

- 1) Առևտրի ոլորտում՝ մանրածախ առևտրի կետեր և խանութներ
- 2) Ծառայությունների ոլորտում՝ կենցաղային ծառայություններ, արտադրության ոլորտում՝ տեղական գյուղմթերքների վերամշակում և տեղական հումքից շինանյութերի արտադրություն
- 3) Շինարարության ոլորտում՝ փոքրածավալ շինարարություն և վերանորոգման աշխատանքներ:

145. Մարզում ձեռնարկատիրության հետագա զարգացման հնարավորությունները համայնքապետերը համարում են.

- 1) բնակչության ձեռներեցությունը՝ համայնքում բարձրագույն և մասնագիտական կրթություն ունեցող անձանց սեփական գործ սկսելու ցանկությունը
- 2) տեղական գյուղմթերքների հումքային բազայի հիման վրա վերամշակման և իրացման արդյունավետ կազմակերպումը
- 3) զբոսաշրջության զարգացումը՝ հաշվի առնելով համայնքների մի մասի բարենպաստ աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները
- 4) համայնքում ներդրումներ կատարելու տեղացի արտագնա ձեռներեցների պատրաստակամությունը:

146. Համայնքների ղեկավարները ցանկանում են մասնակցել համայնքի մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի մշակմանը: Նման ծրագրերի մշակման և իրականացման համար համայնքապետերը աջակցություն են ակնկալում դոնոր կազմակերպություններից, ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամից, ինչպես նաև օտարերկրյա և տեղացի մասնավոր ներդրողներից:

147. Վերլուծությունը ցուցահանում է, որ մասնավոր ներդրումների ներհոսքը սահմանափակող հիմնական գործոնները հետևյալն են.

- 1) Համայնքապետերը կարևորելով մասնավոր ներդրումների ներգրավման

անհրաժեշտությունը, դեռևս չունեն հստակ պատկերացում ներդրումների խրախուսման իրենց դերի վերաբերյալ

- 2) Մասնավոր ներդրումների համար տեղական ռեսուրսների, մասնավորապես հողի և արտադրական տարածքների հատկացման հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը
- 3) Գործարար նախաձեռնությունների իրականացման համար անհրաժեշտ որակյալ աշխատուժի և մասնագետների պակասը:

#### 4.4. Մասնավոր հատվածի զարգացման 2010-2013թթ. առաջնահերթությունները

148. Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի տնտեսության հետագա զարգացման համար կարևոր է, շարունակելով առանձին ՓՄՁ-ների մակարդակով ցուցաբերվող աջակցությունը, անցում կատարել առանձին ոլորտների և տարածաշրջանների մակարդակով մասնավոր հատվածի զարգացման հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը.

1) ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում: Ծրագրերի մշակման առաջին փուլում պետք է հստակեցվեն գործարարության զարգացման այն ռեսուրսները, որոնք տարածաշրջանի համայնքները պատրաստ են տրամադրել մասնավոր ներդրումները խրախուսելու համար:

2) Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգերի ընդունում: Մասնավոր ներդրումների ներհոսքին նպաստող մեկ այլ կարևոր գործոն է մարզի համար գերակա ոլորտների զարգացման հայեցակարգերի ընդունումը: Հայտնի է, որ մարզի բոլոր տարածաշրջանների համար գերակա ոլորտներ են գյուղմթերքների վերամշակումը և իրացումը, ինչպես նաև զբոսաշրջությունը և հարակից ծառայությունները: Սակայն, որպեսզի ներդրումները արդարացված լինեն և նվազի նրանց ռիսկայնությունը անհրաժեշտ է հստակեցնել այդ ապրանքների և ծառայությունների պահանջարկի ծավալները և իրացման շուկաները:

3) Մասնավոր ներդրումների խթանման միջոցառումների կազմակերպում: Տարածաշրջաններում մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի, ինչպես նաև մարզում գերակա ոլորտների զարգացման հայեցակարգերի հենքի վրա կծնավորվեն մասնավոր ներդրումների ներգրավման առաջարկներ, ինչը էապես կբարելավի գործարար միջավայրը և հատկապես մասնավոր ներդրումների մրցակցային պայմանները: Հետազոտությունները վկայում են, որ ներդրումներ կատարելու ցանկություն և մտադրություններ ունեն ինչպես տեղացի արտագնա, այնպես էլ այլ արտաքին ներդրողներ, սակայն այդ գործընթացները հաճախ դանդաղում և չեն իրագործվում տեղերում պատշաճ շահագրգռվածության և համագործակցության բացակայության պայմաններում: Այս առումով, մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է կազմել տարածաշրջանային և մարզային ներդրումային առաջարկների փաթեթներ և պարբերաբար կազմակերպել իրազեկման միջոցառումներ տեղացի արտագնա և այլ արտաքին ներդրողների համար:

149. ՀՀ Սյունիքի մարզում ներդրումային ծրագրի համար 2008թ.-ին առաջարկ ներկայացրած կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է աղյուսակի տեսքով.

Աղյուսակ 4.4. ՀՀ Սյունիքի մարզում ներդրումային ծրագրի համար 2008թ.-ին առաջարկ ներկայացրած կազմակերպությունների ցանկ

| Հ/Հ | Կազմակերպության անվանումը               | Ոլորտը                                    | Հասցեն                    |
|-----|---|---|---------------------------|
| 1.  | «Լեռ էքս» ՍՊԸ                           | Լեռնահանքային արդյունաբերություն          |                           |
| 2.  | «Սեղրու պահածոների գործարան» ԲԲԸ        | Պահածոների արտադրություն                  | ք. Սեղրի, Գործարանային 26 |
| 3.  | «Պաստակերտի բուժտեխնիկայի գործարան» ԲԲԸ | Բժշկական իրերի արտադրություն              | ք. Սիսիան, Շիրակի փ.      |
| 4.  | «Վի էյջ Ստոուն» ՍՊԸ                     | Քարի արտադրություն                        | ք. Սիսիան, Շիրակի 5       |
| 5.  | «Էլեն և Անի» ՍՊԸ                        | Բազալտե քարի արդյունահանում և վերամշակում | գ. Շաքե                   |
| 6.  | «ԱԲՂԱ» ՍՊԸ                              | Բուսական թելերի արտադրություն             | ք. Գորիս, Սաթյան 78       |
| 7.  | «Արմեն և Սարմեն» ՍՊԸ                    | Կաթնամթերքի արտադրություն                 | գ. Սյունիք                |
| 8.  | «Արսեն և Ներսես» ՍՊԸ                    | Հանքային ջրերի գործարան                   | Շամբ բնակավայր            |
| 9.  | «Շամբ բիզնես» ՍՊԸ                       | Պահածոների գործարան                       | Շամբ բնակավայր            |


Աղբյուրը՝ ՓՄՁ ՀՀ Սյունիքի մարզային կենտրոն

Աղյուսակ 4.4-ում նշված կազմակերպությունների կողմից առաջիկայում նախատեսվում է լրացուցիչ 1000-1200 նոր աշխատատեղերի ստեղծում:

150. Այստեղ որոշիչ է մարզպետարանի, մարզային խորհրդի, ինչպես նաև ՓՄՁ ԶՄԽ-ի դերը, ընդ որում՝ ինչպես տարածաշրջանային ծրագրերի մշակման, այնպես էլ տարեկան աշխատանքային պլանների շրջանակներում մասնավոր ներդրողներին խրախուսելու գործում:

151. ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման միջոցառումների իրագործման փուլային սխեման ներկայացված է Գծապատկեր 4.1-ում:

Գծապատկեր 4.1. ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման միջոցառումների իրագործման փուլային սխեմա



**4.5. Մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացման ծրագրի տրամաբանական հենքը**

Աղյուսակ 4.5. ՀՀ Սյունիքի մարզում մասնավոր հատվածի ՓՄՁ զարգացման ծրագրի տրամաբանական հենքը

| Ռազմավարական նպատակներ և առաջնահերթ ծրագրեր  | Ցուցանիշներ  | Ռիսկեր/Նախադրյալներ  |
|--|--|--|
| <p>Ռազմավարական նպատակ 1. Մշակել ՓՄՁ աջակցության և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրեր՝ ներգրավելով այդ գործընթացներում ՏԻՄ և գործարար համայնքի ներկայացուցիչներին</p>  | <p>ՓՄՁ և մասնավոր հատվածի զարգացումը պլանավորվում և կառավարվում է տարածաշրջանի մակարդակով:</p>   | <p>ՏԻՄ ղեկավարների աջակցությունը և մասնակցությունը ծրագրերի մշակման գործընթացում</p>                             |
| <p>Ծրագիր 1. ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում</p> <p>Առաջնահերթ միջոցառումներ.</p> <p>1) Ծրագրերի մշակման խորհրդատվական աջակցում<br/>2)Տարածաշրջանային և համայնքային ծրագրերի ընդունում</p>  | <p>-խորհրդատվական ծառայությունների մատուցման մրցույթները կազմակերպված և ֆինանսավորված են<br/>-ՏԻՄ և մասնավոր հատվածի ներկայացուցիչները ներգրավված են ծրագրերի մշակման գործընթացում<br/>-Հստակեցված են գործարար ծրագրերի իրագործման համար տեղական ռեսուրսների օգտագործման հնարավորությունները</p>   | <p>Մրցույթների կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների անբավարարությունը</p>                           |
| <p>Ռազմավարական նպատակ 2. Աջակցել գերակա ճյուղերի, մասնավորապես զբոսաշրջության, գյուղմթերքների վերամշակման և իրացման ձեռնարկությունների մրցունակության բարձրացմանը:</p>  | <p>Գերակա ոլորտների ձեռնարկությունների եկամուտների աճ:<br/>Գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալների աճ:<br/>Հյուրընկալության և հարակից ծառայությունների որակի բարելավում:<br/>Զբոսաշրջիկների և այցելուների թվաքանակի աճ:</p>  | <p>Գյուղմթերքների իրացման և զբոսաշրջության շուկայում մրցակցային միջավայրի անբարենպաստ պայմանները մարզի համար</p> |
| <p>Ծրագիր 2. Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգերի ընդունում:</p> <p>Առաջնահերթ միջոցառումներ.</p> <p>1)Զբոսաշրջության և գյուղմթերքների շուկաների հետազոտում<br/>2)Գյուղմթերքների վերամշակման և իրացման մարզային հայեցակարգի մշակում<br/>3)Մարզում զբոսաշրջային կենտրոնների ձևավորման հայեցակարգի մշակում<br/>4)Գերակա ոլորտներում գործող</p> | <p>-Տեղական ապրանքների և ծառայությունների իրացման շուկաները և պահանջարկի ծավալները հստակեցված են<br/>-Գյուղմթերքների վերամշակման և իրացման համակարգի զարգացման միջոցառումների պլանը ընդունված է<br/>-Զբոսաշրջային կենտրոնների զարգացման միջոցառումների պլանը ընդունված է<br/>-Աշխատուժի պահանջարկը ըստ մասնագիտությունների և տարածաշրջանների գնահատված է<br/>-ՓՄՁ աջակցման տարեկան ֆինանսական պլաններում</p> | <p>Շուկաների հետազոտման գործընթացում որակյալ</p>   |

|   |  |  |
|---|--|--|
| <p>ձեռնարկությունների աշխատուժի պահանջարկի ուսումնասիրում<br/>5) Գերակա ոլորտներում մասնագետների և կառավարիչների վերապատրաստման կոորդինացում</p>  | <p>նախատեսված են գումարներ գերակա ոլորտների մասնագետների և կառավարիչների վերապատրաստման համար</p>  | <p>մասնագիտական կադրերի ներգրավում:<br/>Մարզի գերակա ոլորտների զարգացման միջոցառումների պլանը համահունչ է ճյուղային նախարարությունների քաղաքականությանը:<br/>Օտարերկրյա և միջազգային կազմակերպությունները պատրաստ են համաֆինանսավորել վերապատրաստման ծրագրերը:</p> |
| <p>Ռազմավարական նպատակ 3. Նպաստել տեղացի արտագնա, ինչպես նաև այլ արտաքին ներդրողների ներգրավմանը մարզում մասնավոր հատվածի զարգացման ներդրումային ծրագրերում</p>   | <p>Տարածաշրջաններում և առանձին համայնքներում մասնավոր ներդրումների ծավալների աճ</p>  | <p>Գործարարության զարգացման տեղական ռեսուրսների և ենթակառուցվածքների անբավարար վիճակը</p>  |
| <p>Ծրագիր 3.<br/>Մասնավոր ներդրումների խթանման միջոցառումների կազմակերպում:<br/><br/>Առաջնահերթ միջոցառումներ.<br/>1) Ներդրումային առաջարկների վերաբերյալ տեղեկատվական նյութերի մշակում<br/>2) Ներդրումային հնարավորությունների ներկայացման միջոցառումների կազմակերպում</p> | <p>-Տարածաշրջանային և/կամ ոլորտային ներդրումային առաջարկների վերաբերյալ տեղեկատվական նյութերը հրապարակված են<br/>-Տեղացի արտագնա և այլ արտաքին ներդրողների իրազեկման նպատակային միջոցառումները իրագործված են</p> | <p>Ներդրումային առաջարկները և դրանց իրագործման պայմանները համապատասխանում են պոտենցիալ ներդրողների ակնկալիքներին:</p>  |

## 5. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

### 5.1 Կրթություն

#### 5.1.1 Կրթության ոլորտի իրավիճակի վերլուծություն

152. Պետական ու ազգային կարևորագույն խնդիր է համարվում կրթության համակարգի պահպանումը, զարգացումը և միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը:

153. Ներկայումս Հայաստանում կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն զարգացման, ինչպես նաև մարդկային կապիտալի պահպանման ու վերարտադրության նախապայմաններից մեկը: Հավասարապես մատչելի որակյալ կրթության ապահովման և կրթության ոլորտի արդյունավետության բարձրացման նպատակով երկրում իրականացվում են բարեփոխումների ծրագրեր՝ կրթական բոլոր մակարդակներում: Կրթության ոլորտի բարեփոխումները սկսվել են իրականացվել Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո՝ սոցիալ-տնտեսական և հասարակական նոր հարաբերությունների պայմաններում, երբ կարևորվեց հասարակական և տնտեսական զարգացման համաշխարհային միտումներին մեր ինտեգրվելը, կրթության՝ որպես հիմնարար արժեքները փոխանցող և ազգային հարատևումն ապահովող համակարգի անհրաժեշտությունը: Կրթական համակարգի առջև ծառայած խնդիրները տարաբնույթ են ու պայմանավորված կյանքի հրամայականով, իսկ լուծումները՝ օրակարգային, ելնելով կրթության արագընթաց գլոբալացման և երկրի մրցունակության ապահովման անհրաժեշտությունից: Ուստի այս ոլորտի զարգացումը ներկայումս երկրի զարգացման առաջնային գերակայություններից է: Ոլորտի զարգացման քաղաքականությունը պետք է համահունչ լինի ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի «Կրթություն՝ հանուն կայուն զարգացման» ռազմավարությանը և ուղղված լինի այն բանին, որ բարեփոխումների արդյունքները նշանակալի ազդեցություն ունենան երկրում տնտեսական աճի, աղքատության կրճատման, անհավասարության մեղման, էկոլոգիական անվտանգության ապահովման և մարդկային զարգացման գործընթացների վրա ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում:

154. Սյունիքի մարզի կրթության զարգացման տեսլականն անհրաժեշտ է դիտարկել երկրի ընդհանուր զարգացման, ազգային և պետական անվտանգության ապահովման հետևյալ հիմնական թիրախների հաղթահարման համատեքստում:

- 1) կայուն տնտեսական աճի ապահովում
- 2) միջազգային և տարածաշրջանային համագործակցություն
- 3) անկախ պետականության ամրապնդում և քաղաքացիական հասարակության զարգացում
- 4) բարեկեցության ապահովում և աղքատության հաղթահարում
- 5) հայապահպանություն:

#### Նախադպրոցական կրթություն

155. Նախադպրոցական կրթությունը Հայաստանի Հանրապետությունում շարունակական կրթության համակարգի սկզբնական, բաղկացուցիչ մասն է: Ըստ նախադպրոցական կրթության հայեցակարգի և ռազմավարության՝ պետք է ապահովվի բազմաֆունկցիոնալ նախադպրոցական կրթական հաստատությունների գործարկումը



տարբերակված ծրագրերով (այլընտրանքային ծառայություններով), ինչպես նաև խթանվի տարաբնույթ նախադպրոցական կրթական ծառայությունների ներդրումը քաղաքային և գյուղական համայնքներում: Նախադպրոցական կրթության որակը բարելավելու նպատակով կառավարությունը կապահովի նաև նախադպրոցական կրթության չափորոշիչների մշակումն ու ներդրումը:

156. Ոլորտում գործունեության առաջնային ուղղություններն են եղել օրենսդրական դաշտի և կառավարման համակարգի կատարելագործումը, կադրերի մասնագիտական կարողությունների զարգացումը, նյութատեխնիկական և ուսումնանյութական հիմքի բարելավումը, ծառայությունների մատչելիության և ընդգրկվածության մեծացումը:

157. Ինչպես ցույց է տալիս վիճակագրությունը, Սյունիքի մարզում նախադպրոցական ուսումնական հաստատությունների, հետևաբար նաև երեխաների թիվը մանկապարտեզներում նվազում էր անկախության առաջին տարիներին: Հետագա տարիներին, թեև հանրապետության տնտեսական վիճակը կայունացման միտում ուներ, այնուամենայնիվ նախադպրոցական հաստատությունների թիվը կրկին շարունակում էր նվազել: Էներգետիկ ճգնաժամը, ջեռուցման այլընտրանքային միջոցներ (փայտ, կերոսին և այլն) ձեռք բերելու դժվարությունները, իսկ հետո նաև ֆինանսական ռեսուրսների սղությունը մանկապարտեզների և հաճախող երեխաների թվի նվազման պատճառ դարձան: Բացի այդ մանկապարտեզների փակման և երեխաների թվի նվազման վրա իր ազդեցությունն ունեցավ նաև Արցախյան հակամարտությունը, հատկապես սահմանամերձ բնակավայրերում: Սյունիքի մարզում 2003թ. մինչև 2008թ. ընկած ժամանակահատվածում զգալիորեն պակասել են նախադպրոցական հաստատությունները՝ 60-ից նվազելով մինչև 47-ի: Վերջին տարիների վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ դրանց թիվը կայունացման, նույնիսկ՝ աճի միտում ունի (տես՝ Աղյուսակ 5.1):

Աղյուսակ 5.1. Նախադպրոցական հաստատությունների գործունեությունը

|                           | Նախադպրոցական հիմնարկների քանակը |      |      |      |      |      | Հաճախող երեխաների թիվը |       |       |       |       |      |
|---------------------------|----------------------------------|------|------|------|------|------|------------------------|-------|-------|-------|-------|------|
|                           | 2003                             | 2004 | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2003                   | 2004  | 2005  | 2006  | 2007  | 2008 |
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ | 682                              | 637  | 623  | 623  | 617  |      | 46141                  | 45470 | 47791 | 47308 | 49777 |      |
| Ք. ԵՐԵՎԱՆ                 | 187                              | 180  | 175  | 172  | 172  |      | 20915                  | 21006 | 21530 | 21371 | 22173 |      |
| ԱՐԱԳԱԾՈՏՆ                 | 24                               | 32   | 25   | 23   | 17   |      | 895                    | 903   | 782   | 1471  | 802   |      |
| ԱՐԱՐԱՏ                    | 74                               | 59   | 65   | 72   | 66   |      | 3001                   | 3359  | 3679  | 3725  | 3904  |      |
| ԱՐՄԱՎԻՐ                   | 79                               | 58   | 52   | 49   | 53   |      | 3089                   | 3082  | 3312  | 3369  | 3754  |      |
| ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ               | 43                               | 43   | 44   | 45   | 45   |      | 2314                   | 2469  | 2593  | 2404  | 2461  |      |
| ԼՈՌԻ                      | 53                               | 52   | 54   | 56   | 53   |      | 3522                   | 2915  | 3179  | 3283  | 3221  |      |
| ԿՈՏԱՅՔ                    | 52                               | 52   | 50   | 50   | 50   |      | 2940                   | 2614  | 3326  | 2529  | 3839  |      |
| ՇԻՐԱԿ                     | 50                               | 46   | 45   | 45   | 46   |      | 3337                   | 3168  | 3378  | 3271  | 3516  |      |
| ՍՅՈՒՆԻՔ                   | 60                               | 55   | 52   | 50   | 55   | 47   | 3565                   | 3399  | 3303  | 3137  | 3467  | 3413 |
| ՎԱՅՈՑ ՉՈՐ                 | 17                               | 17   | 17   | 17   | 17   |      | 714                    | 684   | 669   | 778   | 628   |      |
| ՏԱՎՈՒՇ                    | 43                               | 43   | 44   | 44   | 43   |      | 1849                   | 1871  | 2040  | 1970  | 2012  |      |

Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2003-2005, 2008 ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության տվյալներ

158. Նախադպրոցական համակարգում նկատվում է աղքատ և ոչ աղքատ խավերի ընդգրկվածության զգալի անհավասարություն, մինչդեռ հիմնական կրթությունում տարբեր խավերի ընդգրկվածությունը բավական բարձր է ու համասեռ: Անհավասարությունն առավել սրվում է մասնագիտական ծրագրերի մակարդակում: Մարզում գործում է 47 նախադպրոցական ուսումնական հաստատություն, որից 45-ը՝ համայնքային ենթակայության, 1-ը՝ գերատեսչական («Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ): Մանկապարտեզներում գործում են 149 խմբեր՝ 3413 երեխաներով, մանկավարժների թիվը կազմում է 402: Նախադպրոցական ուսումնական հաստատություններ չկան մարզի 59 համայնքներում, որտեղ բացակայում են շենքային պայմանները, իսկ 10-ում պահպանվել են շենքերը, սակայն մանկապարտեզները ֆինանսական սուղ պայմանների և սակավաթիվ երեխաների պատճառով չեն գործում: Դրանց հիմնական մասը գործում է քաղաքային համայնքներում, որտեղ մանկապարտեզների գործարկման համար առկա են համեմատաբար բարվոք պայմաններ: Փաստորեն, նախադպրոցական կրթությունը քաղաքային կյանքը բնութագրող չափորոշիչ է դառնում և գյուղի երեխաները զրկվում են այդ կրթության հնարավորությունից:

159. Մարզի 3-6 տարեկան երեխաների ճնշող մեծամասնությունն ընդգրկված չէ նախադպրոցական համակարգում: Ընդ որում, անմատչելիությունը որպես չընդգրկվածության պատճառ առավել սուր է արտահայտված գյուղական բնակչության շրջանում: Նախադպրոցական կրթության անմատչելիության տեսակների մեջ գյուղական բնակավայրերում հատկապես կարևորվում է նախադպրոցական հաստատության բացակայությունը, իսկ քաղաքային բնակավայրերում՝ նյութական անմատչելիությունը, համայնքի բյուջեի սղությունը, որի արդյունքում կրճատվում են խմբերի թիվը:

160. Մանկապարտեզների առջև այսօր ծառայած են մի շարք խնդիրներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեն: Մասնավորապես.

- 1) Կապիտալ վերանորոգում: Նախադպրոցական հաստատությունների գերակշռող մեծամասնության շենքային պայմանները գտնվում են ոչ բարվոք վիճակում
- 2) Անբավարար ջեռուցում: Կենտրոնական ջեռուցման համակարգը գրեթե չի գործում և մանկապարտեզները հիմնականում ջեռուցվում են էլեկտրական սարքերի և վառելափայտի միջոցով, ինչը մեծ տարածքի պայմաններում այդքան էլ արդյունավետ չէ
- 3) Սնունդ: Չնայած, որ նախադպրոցական հաստատությունների գերակշռող մասում (հատկապես համայնքային ենթակայության), որոնք աշխատում են 8-ժամյա ռեժիմով, երեխաների համար կազմակերպվում է սննդի մատուցում, այնուամենայնիվ սննդի տեսականին մնում է գրեթե միատարր և անհրաժեշտություն է առաջանում մանկական սննդակարգում առաջնայնություն տալ կալորիականությանը և սննդարարության նորմերի բարձրացմանը
- 4) Գույք: Մանկապարտեզների օգտագործվող գույքը թե բարոյապես և թե ֆիզիկապես մաշված է: Գրեթե բոլոր նախադպրոցական հաստատություններն ունեն փափուկ և կոշտ գույքի, ուսուցողական դիդակտիկ պարագաների, խաղալիքների, խմբասենյակների և դահլիճների կահավորման անհրաժեշտություն
- 5) Մասնագիտական կադրեր: Եթե հանրակրթության բնագավառում վերջին տարիներին իրականացվում են մանկավարժների վերապատրաստման ակտիվ միջոցառումներ, ապա նախադպրոցական ոլորտում կադրերի վերապատրաստման խնդիրը չափազանց արդիական է: Չնայած, որ ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի Կապանի և Գորիսի մասնաճյուղերի միջոցով իրականացվում են վերապատրաստման որոշ միջոցառումներ, այնուամենայնիվ

դրանք սահմանափակ բնույթ են կրում: Բացի այդ կարևոր է նաև համարժեք մասնագիտությամբ մասնագետ կադրերի ապահովման խնդիրը:

**Հանրակրթություն, այդ թվում՝ հատուկ կրթություն և արտադպրոցական դաստիարակություն**

161. Միջնակարգ կրթությունը հանդիսանում է կրթության հիմնական օղակը: Հանրակրթության ոլորտի բարեփոխումների ներկա փուլի հիմնական խնդիրը կրթության որակի ապահովումն է: Այս նպատակով վերջին տարիներին սկիզբ է դրվել բազմաթիվ նախաձեռնությունների, որոնք ներառում են կրթության որակը պայմանավորող գրեթե բոլոր գործոնները՝ մարդկային ռեսուրսները, ծրագրամեթոդական ապահովումը, նորմատիվ-իրավական դաշտը, ինստիտուցիոնալ համակարգը: Բարեփոխումների առանցքային նախաձեռնություններից մեկն անցումն է 12-ամյա հանրակրթական համակարգին, որի իրականացումը սկսվել է 2006թ-ին, և նախատեսվում է ավարտել 2012 թվականին: Այս գործընթացի շրջանակներում 2009-2010 ուսումնական տարվանից նախատեսվում է եռամյա ավագ դպրոցի ծրագրի ներդրումը և առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ստեղծումը: Ծրագիրն ուղղված է հանրակրթության երրորդ աստիճանում՝ ավագ դպրոցում, կրթության որակի և արդյունավետության բարձրացմանը և արդիականացմանը: Ծրագրի ընդունումը կարևորվում է այն հիմնավորմամբ, որ ավագ դպրոցը դիտվում է որպես «նախաձեռնագիտական» կրթություն ապահովող հիմնական օղակ: Զնայած Հանրապետությունում գոտիավորվել են նախատեսված ավագ դպրոցների 23 կրթական գոտիներ, այնուամենայնիվ Սյունիքի մարզի մի շարք մասնագետների կարծիքով մարզում առաջիկա տարիների ընթացքում ավագ դպրոցների ներդրման պրակտիկական համարվում է աննպատակահարմար՝ կախված մարզի բնակավայրերի միջև եղած հեռավորության, ճանապարհների որակի, քաղաքային բնակավայրերում առկա դպրոցների շենքերի՝ մյուս թաղամասերի նկատմամբ ոչ հարմար տեղադիրքի, ինչպես նաև տնտեսական և սոցիալական դժվարությունների հետ:

162. Բարելավվել է նաև հատկացվող պետական ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը՝ ի հաշիվ դպրոցների օպտիմալացման և ուսուցիչների շաբաթական ծանրաբեռնվածության բարձրացման:

163. 2008թ Սյունիքի մարզի կրթության ոլորտի բյուջետային ծախսերը 2005թ համեմատ աճել են գրեթե 44 %-ով:

**Աղյուսակ 5.2.** 2005-2008թթ. կրթության ոլորտին ՀՀ պետական բյուջեից հատկացումների դինամիկան

| Հ/Հ | Կրթության ոլորտ                | հազ. դրամ |       |           |       |           |       |           |       |
|-----|--------------------------------|-----------|-------|-----------|-------|-----------|-------|-----------|-------|
|     |                                | 2005թ.    | %     | 2006թ.    | %     | 2007թ.    | %     | 2008թ.    | %     |
| 1   | Հանրակրթություն                | 2016188.9 | 137.5 | 2349631.4 | 116.5 | 2692807.4 | 114.6 | 3105356.4 | 115.3 |
| 2   | Հատուկ կրթություն              | 328181.1  | 133.5 | 393584.1  | 119.9 | 375347.1  | 1.19  | 265682.2  | 70.8  |
| 3   | Արտադպրոցական դաստիարակություն | 12468.6   | 229.1 | 13913.6   | 111.6 | 17130.2   | 1.15  | 21467.6   | 125.3 |
| 4   | Ընդամենը                       | 2356838.5 | 137.2 | 2757129.1 | 117.0 | 3085284.7 | 111.9 | 3392506.2 | 109.9 |

Աղբյուրը՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության տվյալներ

164. Սյունիքի մարզում 2008թ.-ին մեկ աշակերտին ընկնող տարեկան միջին գումարը կազմել է 177469.0 դրամ, որը գրեթե 1.7 անգամ ավելին է 2005թ. մեկ սովորողին ընկնող գումարի չափից: Մարզի դպրոցական շենքերը և շինությունները, հատկապես հեռավոր համայնքներում, գտնվում են ՀՀ կառավարության և մարզպետարանի ուշադրության կենտրոնում և յուրաքանչյուր տարի ներդրումների ծավալն ավելացվում է:

165. ՀՀ պետական բյուջեի հաշվին 2008թ Սյունիքի մարզի 1-ին դասարաններին հատկացվել է 71135.8 դրամի գույք, /աշակերտական սեղան-նստարաններ, հանդերձապահարաններ, գրատախտակներ, ինչպես նաև ուսուցչական սեղան-աթոռներ, գրապահարաններ, պահարաններ և կախիչներ, խաղալիքներ, շվեդական պատ/, որի համար 2007թ.-ին հատկացվել էր ընդամենը 25179.0 դրամ:

166. Ներկայումս Սյունիքի մարզում գործում են 121 հանրակրթական ուսումնական հաստատություններ, այդ թվում 3 հատուկ դպրոց: 2008-2009թթ. ուսումնական տարում մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորում է 17375 աշակերտ, որն անցած ուսումնական տարվա /2007-2008թթ./ համեմատ պակաս է 1010 աշակերտով: Դասարանների թիվը նույն ժամանակահատվածում պակասել է 46-ով՝ կազմելով 1154: Նման իրավիճակը պայմանավորված է հիմնականում արտագաղթով, ինչպես նաև ՄԾԾ-ին համաձայն թերհամալրված դասարանների միավորմամբ:

167. Վերջին տարիների ընթացքում նկատվում է առաջին դասարան ընդունվողների թվի աճ, ծնելիության մակարդակի որոշակի բարձրացման պատճառով: Այսպես, եթե 2007-2008 ուսումնական տարում մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների առաջին դասարան էին հաճախում 1390 երեխա, ապա 2008-2009 ուսումնական տարում այդ թիվը հասավ 1504-ի, ինչը 114 երեխայով ավել է:

168. Ինչ վերաբերում է ուսուցիչ-աշակերտ թվաքանակի հարաբերակցությանը, ապա Սյունիքում 2004-2007թթ. այդ թիվը 8.6-ից հասել է 8.3-ի, ինչը գրեթե անփոփոխ է, իսկ 2007-2008 ուսումնական տարում ուսուցիչ-աշակերտ թվաքանակի հարաբերակցությունը կազմել է 7.6/Աղյուսակ 5.3/:

Աղյուսակ 5.3. Ուսուցիչ-աշակերտ թվաքանակի հարաբերակցությունը ՀՀ մարզերում

| Մարզ            | 2004-2005 ուս.տարի |              |                   | 2005-2006 ուս.տարի |              |                   |
|-----------------|--------------------|--------------|-------------------|--------------------|--------------|-------------------|
|                 | Աշակերտներ         | Ուսուցիչներ  | Հարաբերակցություն | Աշակերտներ         | Ուսուցիչներ  | Հարաբերակցություն |
| Երևան           | 139539             | 10948        | 12.7              | 135283             | 11193        | 12.1              |
| Արագածոտն       | 23848              | 2569         | 9.3               | 25356              | 2838         | 8.9               |
| Արարատ          | 44651              | 5693         | 7.8               | 43831              | 3272         | 13.4              |
| Արմավիր         | 44707              | 3431         | 13.0              | 45025              | 3565         | 12.6              |
| Գեղարքունիք     | 42265              | 3894         | 10.9              | 41539              | 3833         | 10.8              |
| Լոռի            | 43952              | 3693         | 11.9              | 42614              | 3776         | 11.3              |
| Կոտայք          | 42760              | 3106         | 13.8              | 41398              | 3313         | 12.5              |
| Շիրակ           | 48355              | 4654         | 10.4              | 46909              | 4549         | 10.3              |
| <b>Սյունիք</b>  | <b>21831</b>       | <b>2538</b>  | <b>8.6</b>        | <b>20896</b>       | <b>2530</b>  | <b>8.3</b>        |
| Տավուշ          | 19068              | 1794         | 10.6              | 18684              | 1940         | 9.6               |
| Վայոց Ձոր       | 10208              | 941          | 10.8              | 9781               | 912          | 10.7              |
| <b>Ընդամենը</b> | <b>481184</b>      | <b>43261</b> | <b>11.1</b>       | <b>471316</b>      | <b>41721</b> | <b>11.3</b>       |

Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2001-2005, 2006

169. Իր ընդգրկվածությամբ հանրակրթական ոլորտն ունի ամենամեծ շահառուների խումբը և, ըստ էության, կրթական այս մակարդակում ծառայությունները գրեթե հավասարաչափ մատչելի են բնակչության բոլոր խմբերի համար: Այսպես, զուտ ընդգրկվածությունը տարրական դպրոցում Սյունիքի մարզում 2009թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 100%:

170. Այնուամենայնիվ, մարզի ազգաբնակչության սակավ ապահովվածության պատճառով կրթական ծառայությունների մատչելիությունը տարբեր սոցիալական շերտեր ներկայացնող ընտանիքների համար դեռևս համարվում է չլուծված խնդիր:

171. Մարզում պարտուսից դուրս մնացած աշակերտներ չկան:

### Հանրակրթական դպրոցների շինարարություն և հիմնանորոգում

172. Մարզի 29 համայնքներում /Կապանի N 4, Կապանի N 12, Քաջարանի N 6, Շրվենանցի, Վարդավանքի, Տավրուսի, Դիցմայրիի, Աղվանիի, Նորաշենիկի, Բարգուշատի, Գորիսի N 1 հատուկ, Շուռնուխի, Բարձրավանի, Որոտանի, Տանձատափի, Մեղրիի N 2, Կարճևանի, Սիսիանի N 5, Սիսիանի N 1 հատուկ, Շամբի, Սալվարդի, Շենաթաղի, Հացավանի, Թասիկի, Բնունիսի, Բալաքի, Արևիսի, Լժենի և Գետաթաղի/, հանրակրթական ուսուցումը կատարվում է հարմարեցված շենքերում, ակունքներում, իսկ փախստականաբնակ գյուղերում՝ լքված խարխուլ տներում, հին գրասենյակների շենքերում, որոնք տասնյակ տարիներ չեն նորոգվել: Չունեն սանհանգույցներ, սպորտ դահլիճներ կամ հրապարակներ, ասբեղիթաքարերի ջարդվածության պատճառով անձրևաջրերը լցվում են շենքը և վնասում այն: Ուսուցման ընթացքը կազմակերպելու համար բացակայում են տարրական պայմաններ: Կապան քաղաքի Բեխ և Բաղաբուրջ քաղամասերում, որոնք նախկինում հանդիսացել են առանձին գյուղական բնակավայրեր և քաղաքից գտնվում են որոշակի հեռավորության վրա, դպրոցներ չեն գործում՝ շենքային պայմաններ չլինելու պատճառով: Նշված քաղամասերի երեխաների ուսուցման կազմակերպումը քաղաքի այլ դպրոցներում կապված է լուրջ դժվարությունների հետ: 2006 թվականին սկսվել է Խոզնավար, Լիճք, Վարդանիձոր և Նոնաձոր գյուղերի դպրոցների նոր շենքերի կառուցումը, ընդ որում Լիճք, Վարդանիձոր և Նոնաձորի գյուղերի դպրոցների շինարարությունն իրականացվում էր բարեգործական կազմակերպությունների միջոցներով: 2007 թվականին ավարտվել է Լիճք, Վարդանիձոր և Նոնաձոր գյուղերի դպրոցների նոր շենքերի կառուցումը: ՀՀ 2007 թվականի պետական բյուջեով հատկացված միջոցների հաշվին սկսվել են Եղեգ և Արավուս գյուղերի դպրոցական շենքերի կառուցման աշխատանքները, շարունակվել Խոզնավար գյուղի դպրոցական շենքի շինարարությունը: Մարզի դպրոցական շենքերը և շինությունները, հատկապես սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային հեռավոր համայնքներում գտնվում են ՀՀ կառավարության և մարզպետարանի ուշադրության կենտրոնում և յուրաքանչյուր տարի ներդրումների ծավալներն ավելացվում է: Այդ նպատակով ՀՀ կառավարությունը 2008թ պետբյուջեով Սյունիքի մարզի 15 դպրոցների հիմնանորոգման համար հատկացրել և իրականացրել է 885 մլն. դրամի շինվերանորոգման աշխատանքներ /385 մլն դրամ Սյունիքի մարզպետարանին՝ 9 դպրոցների և 470 մլն դրամ քաղաքաշինության նախարարությանը՝ 6 դպրոցների հիմնանորոգման համար/: ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով շարունակվել է Եղեգ և Արավուս գյուղերի դպրոցական շենքերի կառուցումը, ավարտվել Խոզնավար գյուղի դպրոցի շինարարությունը: ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված է շարունակել և ավարտել Եղեգ և Արավուս գյուղերի դպրոցական շենքերի կառուցումը:

Մարզում 60 դպրոցներ հիմնանորոգման առաջնահերթ խիստ կարիք ունեն: 19 դպրոցներ վնասվել են ռմբակոծությունների և ռազմական գործողությունների հետևանքով: ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով շարունակվել է 2007 թվականին սկսված 9 դպրոցների հիմնանորոգման աշխատանքները: 2009 թվականին նախատեսվում է հիմնանորոգել 6 դպրոց: Այդ տարիներին մարզում 1 մլրդ. 571 մլն. դրամի շրջանակներում կառուցվել է 6 նոր դպրոց, մեկ դպրոցի շինարարությունը ընթացքի մեջ է: 1 մլրդ. 95 մլն. դրամի շրջանակներում հիմնանորոգվել ու վերանորոգվել են 24 դպրոց:

173. Մարզում դպրոցների կառուցման և հիմնանորոգման գուրծում զգալի աջակցություն են ցուցաբերում «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն, Հայաստանի վերականգնող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը, Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամը, «Հովարդ Կարագյոզյան» հիմնադրամը, «Օթևան» երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը, «Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպությունը: 2006 թվականին Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից 84,8 մլն. դրամ է հատկացվել Լիճք, Վարդանիձոր և Նռնաձոր գյուղերում նոր դպրոցների կառուցման համար: Հայաստանի վերականգնող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից հատկացված 101,3 մլն. դրամով ջեռուցվել են մարզի 5 գյուղերի դպրոցներ: 2007 թվականին «Հովարդ Կարագյոզյան» հիմնադրամի կողմից 22,0 մլն. դրամով ջեռուցվել է Սիսիանի հատուկ գիշերօթիկ դպրոցը: 2008 թվականին ««Օթևան» երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից հատկացված 33,4 մլն. դրամով սկսվել է փախստականաբնակ Իշխանասար գյուղի նոր դպրոցի կառուցումը: 2006-2008 թվականներին մի շարք դպրոցների նորոգման նպատակով «Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից հատկացվել է 19,1 մլն. դրամ: Մարզպետի անմիջական նախաձեռնությամբ Լժեն գյուղում գնվել է երկհարկանի կահավորված բնակարան և տրվել գյուղի դպրոցին:

174. Այնուամենայնիվ, ՀՀ պետական բյուջեով նախատեսվող միջոցները բավարար չեն դպրոցների հիմնանորոգման աշխատանքներն անհրաժեշտ ծավալով կատարելու համար:

175. Մարզի հանրակրթության ոլորտում միայն 2005-2007թթ. իրականացվել են մի շարք ծրագրեր (շենքերի վերանորոգման, գույքի թարմացման, ուսուցիչների, տնօրենների վերապատրաստման ծրագրեր), որոնք անշուշտ դրական ազդեցություն են ունեցել հանրակրթական ծառայությունների որակի վրա:

176. Մարզում «Հայ կրթական հիմնարկություն» ամերիկյան կազմակերպության կողմից (ֆինանսավորվում է հայ բարերարների կողմից) նախատեսվել է 2009թ ընթացքում իրականացնել մինչև 10 դպրոցական շենքերի վերանորոգման ծրագրեր:

177. Չնայած, իրականացվող միջոցառումներին, ներկայումս կրթական հաստատություններում համարյա թե բացակայում են ժամանակակից լաբորատոր սարքավորումներն ու նյութերը, դպրոցների մեծ մասը դեռևս աշակերտական, ուսուցողական սեղան-նստարանների, գրատախտակների, փափուկ գույքի խիստ կարիք ունեն, հրատապ է նաև լոկալ ջեռուցում ունենալու խնդիրը:

178. Մարզի դպրոցական գրադարանային ֆոնդում գույքագրված գեղարվեստական և մեթոդամանկավարժական գրականության գրեթե կեսը հնամաշ է, իսկ 20%-ը օգտագործման պիտանի չէ՝ կապված հանրակրթական ծրագրերի փոփոխման հետ:

179. Ակնհայտ է, որ կրթական գործընթացի որակը կախված է ոչ միայն համապատասխան նյութատեխնիկական բազայի առկայությունից, այլև ուսուցչական անձնակազմի գիտելիքների մակարդակից: Այսօր մարզի համար արդիական խնդիր է

ուսուցիչների գիտելիքների և հմտությունների համապատասխանեցումը ժամանակակից պայմաններին: Այս առումով կարևորվում է նրանց մասնագիտական և մանկավարժական վերապատրաստումը, ինչը վերջին տարիներին ակտիվ ընթացքի մեջ է:

180. Մարզի՝ տարածաշրջանների հանրակրթական դպրոցների տնօրենների, ուսումնական և դաստիարակության գծով փոխտնօրենների և ուսուցիչների մասնագիտական, մեթոդական զարգացման աջակցության նպատակով կազմակերպվել են վերապատրաստումներ, թեմատիկ սեմինարներ և խորհրդատվություններ: Ուսուցիչների վերապատրաստումները կազմակերպվել են ՀՀ ԿԳՆ ԿԱԻ -ի հաստատված 20, 30 և 60-ժամյա դասընթացների ծրագրերով, ՀՀ ԿԳՆ և ԾԻԳ-ի «Կրթության որակ և համապատասխանություն», IREX Հայաստանյան գրասենյակի, ԱՄՆ դեսպանատան «Անգլերենի ուսուցիչների վերապատրաստում», «Ներառական կրթություն», «Հայաստան ծառատունկ ծրագիր» կազմակերպության բնապահպանական և «Հայաստանի պատանեկան նվաճումներ» ՀԿ-ի կրթական ծրագրերի շրջանակներում:

181. Բովանդակային բարեփոխումների տարբեր փուլերում փոխվել է նաև վերապատրաստումների և սեմինարների հիմնական նպատակը: Սկզբում դրանք ուղղված էին դասարանական մթնոլորտում դրական փոփոխությունների խթանմանը՝ նպատակ ունենալով անցում կատարելու ուսուցչակենտրոն մեթոդներից դեպի աշակերտակենտրոն մեթոդների կիրառմանը: Բարեփոխումների ներդրման ու իրականացման ընթացքում վերապատրաստումները նպատակ ունեին ուսուցիչներին ծանոթացել 12-ամյա ուսուցման կրթակարգին, պետական և առարկայական չափորոշիչներին, առարկաների ծրագրերում տեղի ունեցած փոփոխություններին, ինչպես նաև դասավանդման ժամանակակից մեթոդներին և հնարներին: Դասընթացներն անց են կացվել փոխներգործուն մեթոդներով, որոնք հնարավորություն են ընձեռել ուսուցիչներին ձեռք բերելու պետական և առարկայական չափորոշիչները գործարկելու հմտություններ, ծրագրային նյութի դասավանդման ճկունություն, կիրառելու ուսուցանվող նյութի բովանդակության և նպատակներին համապատասխան մեթոդներ և այլն: Վերապատրաստումներն անց են կացվում կարիքի գնահատման արդյունքներով:

182. Ընդհանուր առմամբ 2007թ. վերապատրաստման դասընթացներ են անցել թվով 1826 ուսուցիչներ: Այդ թիվը 2008թ.-ին կազմել է 1864:

183. Արդիական է նաև դպրոցի կառավարման խնդիրը: Չնայած դպրոցի կառավարման ապակենտրոնացման քաղաքականությանը, շատ դպրոցներում կառավարման խորհուրդները ձևական բնույթ են կրում: Խորհուրդների անդամները մեծամասամբ տեղյակ չեն այդ կառույցի կանոնադրական և գործառնական խնդիրներին, դպրոցը դեռ չի կայացել որպես ինքնուրույն և ինքնակառավարվող կրթական օղակ: Այսպես, դպրոցի կառավարման գործում աշակերտների, ծնողների մասնակցությունը դեռևս ցածր է կամ ձևական: Համայնքը, տեղական իշխանությունները չեն շտապում աջակցություն ցուցաբերել դպրոցին, համարելով, որ դա պետության խնդիրն է: Դպրոցական խորհուրդը ներկայիս դպրոցի ամենախոցելի կետն է:

184. Մարզի 119 դպրոցներ ապահովված են համակարգիչներով /98.3.%, 59 դպրոց միացված է Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցին /ՀԴԻՑ/: Բոլոր դպրոցներն ընդգրկված են «Համակարգիչների շրջանառու համակարգի» մեջ: Մարզի հինգ դպրոցներում ներդրվել է պիլոտային համակարգ:

185. «Project Harmony» կազմակերպության օժանդակությամբ մարզի բոլոր տարածաշրջանների 23 դպրոցներում գործում էին ինտերնետային կապով ապահովված համակարգչային սենյակներ, որոնք մատչելի են նաև բնակչության լայն

շերտերի համար: 2007թ. հունիսից ՀՀ կառավարության և «Project Harmony»-ի միջև առկա հուշագրի համաձայն «Դպրոցների փոխկապակցում» ծրագրի ֆինանսավորումն իրականացնում է ԿԳ նախարարությունը՝ կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի /ԿՏԱԿ/ միջոցով: Այսօր այդ թիվը հասել է 88-ի: ԿՏԱԿ-ի կողմից ստեղծվել է շարժական համակարգչային ինտերնետ կայան /ՇՀԻԿ/, որը հագեցած է ժամանակակից անհրաժեշտ տեխնոլոգիաներով. նախատեսում և նպատակ ունի 2009թ սկսած և առաջիկա տարիների ընթացքում մարզի հեռավոր գյուղական դպրոցների աշակերտությանը ծանոթացնել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին և իրականացնել նախնական համակարգչային գիտելիքների ուսուցում: Նվիրատվության կարգով նույն կազմակերպությունը նախատեսում է 2009թ դպրոցներին տրամադրել կրթական էլեկտրոնային առարկայական դասագրքեր /սկավառակներ/, որի միջոցով կբարձրանա ուսումնական պրոցեսի որակը և արդյունավետությունը:

186. Դասագրքերի շրջանառու հիմնադրամի կողմից յուրաքանչյուր տարի մարզ է տեղափոխվում շուրջ 58 հազար կտոր դասագիրք: Բոլոր տարիներին դասագրքերի վարձավճարները չեն իջել 96%-ից: Անապահով ընտանիքների երեխաները և տարրական դասարանների աշակերտները ապահովված են անվճար դասագրքերով: Դպրոցներին իրավունք է վերապահված աշակերտների թվի 8%-ի շրջանակում սոցիալապես անապահով աշակերտներին ապահովել անվճար դասագրքերով: Վարձակալական դասագրքերի վարձավճարների հավաքագրման ցուցանիշներով Սյունիքը վերջին տարիներին գտնվում է առաջին եռյակում:

187. Արտադպրոցական կրթության ոլորտում պետության ռազմավարությունն ուղղված է համակարգի արդիականացմանը և զարգացման նախադրյալների ստեղծմանը: Մասնավորապես, գործունեության առաջնային ուղղություններն են օրենսդրական դաշտի և կառավարման համակարգի կատարելագործումը, կադրերի մասնագիտական կարողությունների զարգացումը, նյութատեխնիկական և ուսումնանյութական հիմքի բարելավումը, ծառայությունների մատչելիության և ընդգրկվածության մեծացումը: Մարզում 109 համայնքներից 7-ում գործում է 23 արտադպրոցական հաստատություն, որտեղ սովորում է 3184 երեխա, որից 1541-ը մանկապատանեկան մարզադպրոցներում և 3 սպորտ դպրոցներում, 1640 երեխա արվեստի երաժշտական և գեղարվեստի դպրոցներում, որից 186-ը պետաֆինանսավորված: Արտադպրոցական հաստատությունները ևս ունեն մի շարք խնդիրներ, որոնք հիմնականում ներառում են.

- 1) շենքային պայմանները
- 2) նյութատեխնիկական բազան
- 3) ոչ ավանդական արհեստագործական խմբակների բացակայությունը, աշակերտի ընտրության սահմանափակությունը
- 4) համայնքների բյուջեների սղությունը:

188. Ուսումնական գործընթացի շարունակությունը հանդիսացող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների անբավարար ֆինանսավորումը, լրացուցիչ կրթություն իրականացնող կառույցների հիմնականում վճարովի հիմունքով գործառույթը հանգեցրել են արտադպրոցական կրթության մատչելիության կտրուկ նվազման, մատուցվող ծառայությունների կրճատման:

189. Արտադպրոցական կրթության որոշ ուղղություններ գտնվում են կառավարության ուշադրության կենտրոնում: Այսպես, ազգային երգարվեստի զարգացման նպատակով՝ ՀՀ կառավարությունը մարզպետարանի միջոցով երաժշտական և արվեստի դպրոցներին 2009 թվականին հատկացնելու է 18.0 մլն դրամ ազգային նվագարանների ուսուցման համար:



190. Մարզում կազմակերպվում են մարզամշակութային, գեղարվեստական և առարկայական միջոցառումներ և օլիմպիադաներ, ինչպես նաև առարկայական ֆիզկուլտուրայի և շախմատի օլիմպիադաներ, սակայն հեռավոր համայնքների աշակերտները դժվարանում են մասնակցել: ՀՀ շախմատի ֆեդերացիայի միջոցով մարզի 40 գյուղական դպրոցներին հատկացվել է 157 հատ շախմատի խաղատախտակ և խաղաքարեր՝ ինտելեկտուալ խաղի մասսայականությունը մարզում խթանելու համար:

191. Հատուկ ընդհանուր կրթության բնագավառում պետական ռազմավարությունն ուղղված է՝ մի կողմից հատուկ հաստատություններում երեխաների կրթության և խնամքի որակի բարելավմանը, մյուս կողմից՝ այլընտրանքային ծառայությունների ձևավորմանը, ինչը հնարավորություն կտա աստիճանաբար բեռնաթափել հատուկ դպրոցները:

192. Մարզում գործում է 3 հատուկ դպրոց, որտեղ ուսուցանվում են որբ, թույլ տեսողությամբ, մտավոր զարգացման շեղումներ ունեցող երեխաներ: Հանրակրթական դպրոցներում չկան պայմաններ և հնարավորություններ հատուկ ուսուցման կարիք ունեցող երեխաներին ներառելու համար, որն էլ լուրջ խնդիր է մարզում՝ աշխարհագրական տարածվածության պատճառով:

### Մասնագիտական կրթություն

193. Ներկայումս Սյունիքի մարզում գործում են տարբեր գերատեսչություններին ենթարկվող հետևյալ միջին-մասնագիտական հաստատությունները.

- 1) Կապանի պետական ճարտարագիտական քոլեջ
- 2) Կապանի պետական բժշկական քոլեջ
- 3) Կապանի արվեստի պետական քոլեջ
- 4) Հայաստանում Եվրոպական քոլեջ հիմնադրամ, Կապանի մասնաճյուղ
- 5) Քաջարանի արհեստագործական ուսումնարան
- 6) Գորիսի պետական մանկավարժական քոլեջ
- 7) Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջ
- 8) Սիսիանի պետական տնտեսագիտական քոլեջ
- 9) Սիսիանի հումանիտար քոլեջ
- 10) Սիսիանի հումանիտար քոլեջ
- 11) Մեղրիի պետական քոլեջ:

194. Նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթության ոլորտում գործունեության հիմնական նպատակներն են եղել որակյալ մասնագետների պատրաստումն ու նրանց մրցունակության բարձրացումն աշխատաշուկայում, կրթական ծրագրերի համապատասխանեցումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, կրթության բովանդակության միջազգային չափանիշներին համադրելիության և ուսումնական գործընթացի թափանցիկության, ինչպես նաև մատչելիության և հավասարության ապահովումը:

195. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2004 թվականին հավանության է արժանացել «Նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ռազմավարությունը», որով սահմանվել է այս համակարգի հիմնական նպատակներն ու խնդիրները և դրանց լուծման ուղիները:

196. Վերջին տարիներին իրավիճակն այս բնագավառում էլ ավելի վատթարացավ հետևյալ պատճառներով: Մի կողմից, անընդհատ և սրընթաց նվազում էր մասնագիտական-տեխնիկական կրթության պետական պատվերը և կրթական հաստատությունները պետք է մտածեին ինքնաֆինանսավորմամբ զարգանալու մասին:

Սյուս կողմից, այդ հաստատություններն օբյեկտիվորեն ունեն անբավարար պայմաններ՝ ուսումնանյութական բազայի հագեցվածության, մանկավարժական անձնակազմի, պրակտիկաների կազմակերպման առումով: Այսօր այդ կրթական հաստատություններն իրենց առկա տեսքով գրեթե մրցունակ չեն կրթական ծառայությունների շուկայում, ինչպես և դրանց շրջանավարտները մրցունակ չեն աշխատանքային շուկայում:

197. Սյունիքի մարզում գործում են վեց բարձրագույն ուսումնական հաստատություններ: Գորիսի պետական համալսարանը, որը ստեղծվել է 2006թ-ին, ունի ճարտարագիտական, պատմաիրավագիտական, մանկավարժական-բնագիտական, մանկավարժական-հումանիտար չորս ֆակուլտետներ՝ տասը մասնագիտություններով: Առկա է ութ մասնագիտությունների գծով հեռակա ուսուցման բաժանմունք: Հինգ մասնագիտությունների գծով գործում է մագիստրատուրա: Ներկայումս համալսարանում ուսանում է ավելի քան 1900 ուսանող: Պրոֆեսորադասախոսական համակազմում ընդգրկված է 107 դասախոս, որից 9-ը՝ գիտությունների դոկտոր պրոֆեսոր, 34-ը՝ գիտությունների թեկնածու: Համալսարանն ունի հանրակացարան: Բոլոնիայի գործընթացի համաձայն 2007 թ-ից բուհում ներդրվել է ուսուցման կրեդիտային համակարգը /առաջին և երկրորդ կուրսեր/: Համալսարանի համար լուրջ հիմնահարց է համարվում 3-րդ ուսումնական մասնաշենքի /կազմակերպված է երկու հերթափոխով ուսուցում/ ,նոր մարզադահլիճ ունենալու խնդիրը: Նախատեսվում է բացելու նոր՝ դեղագործական քիմիա բաժինը:

198. Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Կապանի մասնաճյուղը ստեղծվել է 1996թ: Ունի 2 դեպարտամենտ՝ ընդհանուր պատրաստականության և մասնագիտական պատրաստականության: Համալսարանում ուսանում է 453 ուսանող, որից 420-ը՝ առկա, 33-ը՝ հեռակա ուսուցման: Պրոֆեսորադասախոսական համակազմում ընդգրկված է 49 դասախոս, որից 8-ը՝ գիտությունների թեկնածու, 1-ը՝ բանասիրության դոկտոր: Ուսումնական գործընթացում կիրառվում է ինտերակտիվ գրատախտակների, նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների արդիական հեռուստուցում և հեռուստակապ, որը հնարավորություն է տալիս ուսումնահետազոտական աշխատանքները համատեղել: Համալսարանն ունի երկկողմանի արագագործությամբ ինտերնետային կապ՝ անսահմանափակ թրաֆիկով:

199. Հայաստանի պետական ագրարային համալսարանի Սիսիանի մասնաճյուղը հիմնադրվել է 2005թ: Ունի 7 բաժին՝ ագրարային արտադրության էկոնոմիկա և կառավարում, ագրոպարենային համակարգի հաշվապահական հաշվառում և աուդիտ, հողաշինարարության և հողային կադաստրի, կաթի, կաթնամթերքի տեխնոլոգիա, ագրոնոմիա և անասնաբուժական-սանիտարական փորձաքննության անասնաբուժություն:

200. Գործում է առկա ուսուցման հենակետային քոլեջը, միջին մասնագիտական 2 մասնագիտությունների գծով՝ մենեջմենթ և հողաշինարարություն: Ուսանողների թիվը կազմում է 300, դասախոսներինը՝ 50, որից 2-ը՝ գիտությունների թեկնածու: Կարևոր հիմնախնդիր է համարվում դասախոսական համակազմի որակավորման բարձրացումը և բարձր կուրսերի պրակտիկաների կազմակերպումը:

201. Ռուս-Հայկական ժամանակակից հումանիտար ակադեմիայի Կապանի մասնաճյուղը հիմնադրվել է 1998թ: Ունի երեք ֆակուլտետ՝ իրավագիտություն, տնտեսագիտություն և մենեջմենթ: Գործում է առկա, հեռակա և հեռահար ուսուցման համակարգը: Ուսանողների թիվը կազմում է 150, դասախոսներինը՝ 20, որից 2-ը՝ գիտությունների թեկնածու: Լուրջ խնդիր է համարվում լրկալ ջեռուցման հարցը:

202. Երևանի գյուղատնտեսական համալսարանի Կապանի մասնաճյուղը ստեղծվել է 1996թ: Առկա և հեռակա համակարգով գործում է երեք ֆակուլտետ՝ տնտեսագիտություն, իրավագիտություն և ընդհանուր տեխնոլոգիա: Ուսանողների թիվը

կազմում է 305, որից 220-ը՝ հեռակա, դասախոսներինը՝ 17, որից 1-ը՝ գիտությունների թեկնածու:

203. ՀՀ Գորիսի «Սյունիք» ինստիտուտ ԱԿ ստեղծվել է 1992թ: Գործում է երկու ֆակուլտետ՝ իրավագիտություն և տնտեսագիտություն:

### 5.1.2 Կրթության ոլորտի ռազմավարությունը

Սյունիքի մարզում կրթության զարգացման գերակայությունները

204. Ապահովելով կրթության համակարգի արդեն իսկ արձանագրված ձեռքբերումների աստիճանական զարգացումն ու ընդլայնումը, կրթության զարգացումներն առավել նպատակային և արդյունավետ դարձնելու համար, հետագա զարգացումներն անրաժեշտ է իրականացնել ստորև ներկայացվող գերակա ուղղություններով.

- 1) ապահովել նախադպրոցական կադրերի արդյունավետ մասնակցությունը վերապատրաստման, կատարելագործման և ատեստավորման ծրագրերին
- 2) բարելավել նախադպրոցական ծառայությունների մատուցման նյութատեխնիկական և ուսումնանյութական հիմքերը
- 3) մեծացնել երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական ծառայություններում և ապահովել մատչելիությունը հատկապես սոցիալապես անապահով ընտանիքների համար
- 4) բարձրացնել հանրակրթական հաստատությունների համակարգչային ապահովվածությունը
- 5) դպրոցների ինտերնետային կապի ընդլայնում
- 6) բարելավել հանրակրթական հաստատություններում համակարգչային գրագիտության դասավանդման որակը
- 7) ընդլայնել ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներն՝ որպես ուսուցման և դասավանդման կիրառում
- 8) ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ մասնակցել «Կրթության օրենսգրքի» մշակմանը՝ կրթության ոլորտը կարգավորող օրենքները համապատասխանացնելու և օրենսդրական դաշտը պարզեցնելու նպատակով
- 9) անհրաժեշտ է մշակել լավագույն ուսուցիչների հայտնաբերման արդյունքահեն չափանիշներ, հրապարակայնացնել մանկավարժների լավագույն փորձը և նվաճումները
- 10) անհրաժեշտ է հստակեցնել կրթական հաստատությունների տեսակներն ու տարածքային բաշխվածության սկզբունքները, ապահովելով դրանց առավել արդյունավետ համապատասխանությունը մարզային սացիալ-տնտեսական զարգացման կարիքների և հասարակության կրթական պահանջունքներին
- 11) պետական բյուջեի հաշվին ապահովել արտակարգ ընդունակություններ դրսևորած աշակերտների /խմբերի/ մասնակցությունը միջազգային ստուգատեսներին և մրցույթներին
- 12) մշակել և ներդնել արտադասարանական և արտադպրոցական դաստիարակության համակարգի զարգացման հայեցակարգ՝ աշակերտների կրթական, գեղագիտական, տեխնիկական, մարզական, ռազմական նախասիրությունների բավարարումը արդյունավետ դարձնելու նպատակով
- 13) 2009 թվականի ընթացքում նախատեսվում է «Վերիշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքային բազայի հիման վրա ստեղծել ռազմամարզական վարժարան

- 14) 2009թ. նախատեսվում է մարզի 93 միջնակարգ դպրոցների ուսումնական զենքի պահպանման սենյակների հիմնանորոգման աշխատանքների իրականացում 24.889 մլն դրամ ընդհանուր գումարի չափով
- 15) Մինչև 2013թ. առաջնահերթ համարել պատանի տեխնիկների կայանի ստեղծումը քաղաքային համայնքներում
- 16) համարել առաջնահերթ մարզի քաղաքային համայնքներում շախմատի և լողի դպրոցների, քաղաքային հրաձգարանների բացումը
- 17) ներդնել աշակերտների ստեղծագործական հետազոտական և նորարարական աշխատանքների խրախուսման մեխանիզմներ, ուղղված ինչպես աշակերտներին, այնպես էլ նրանց մանկավարժներին և դպրոցներին
- 18) ընդլայնել ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանցը
- 19) վերանայել և հստակեցնել հատուկ դպրոցների տիպերը, դրանց ենթակայության և տարածքային բաշխվածության չափանիշները
- 20) ներառական դպրոցների ցանցի ընդլայնմանը զուգընթաց կրճատել մարզում առկա հատուկ դպրոցների թիվը
- 21) ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ մասնակցել «Կրթության օրենսգրքի» մշակմանը՝ կրթության ոլորտը կարգավորող օրենքները համապատասխանացնելու և օրենսդրական դաշտը պարզեցնելու նպատակով
- 22) Քննարկել դպրոցական խորհրդի անդամի կրթական ցենզին վերաբերող դրույթը, պարտադիր չափորոշիչ համարելով նաև միջնակարգ ընդհանուր կրթությունը, քանզի շատ հեռավոր գյուղերում այդ հանգամանքը խոչընդոտում է դպրոցական խորհուրդների ձևավորմանը:

205. Մարզպետարանի կողմից կատարված կարիքի գնահատման արդյունքների համաձայն, այսօր մարզի դպրոցների համար պահանջվում է.

- 1) 11330 աշակերտական սեղան-նստարան (տարրական դասարանների համար՝ 2795, միջին և բարձր դասարանների համար՝ 8335),
- 2) 1100 ուսուցչական սեղան, աթոռ
- 3) 806 գրատախտակ
- 4) 1100 գրապահարան:

206. Կրթության ոլորտի ռազմավարությունների ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել 2010-2013թթ. տարիների ՀՀ պետական բյուջեներով ([Հավելված 5.1](#)):

## 5.2 Մշակույթ, սպորտ և երիտասարդություն

207. Սյունիքի մարզում մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բնագավառների հիմնախնդիրները կապված են հիմնականում գրադարանների, թանգարանների, թատրոնների, պատմամշակութային հուշարձանների և ոչ նյութական մշակութային արժեքների, արվեստի ճյուղերի պահպանման և զարգացման, երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների, սպորտային կառույցների հետ: Ոլորտը հիմնականում ապահովված է մասնագետ կադրերով, սակայն առկա է կադրերի վերապատրաստման խնդիրը:

208. Մշակույթի ոլորտում ՀՀ Սյունիքի մարզում ՀՀ Կառավարության կողմից իրականացվող համապետական ծրագրերը պայմանավորված են «ՀՀ Կառավարության 2008-2012 թթ. գործունեության միջոցառումների ծրագրով», որի «4.4.4. Մշակույթ» բաժնի 5-րդ՝ «Մշակույթի համաչափ զարգացում» կետում ՀՀ մարզերում մշակույթի զարգացման ապահովումը դիտարկվում է գործունեության հիմնական ուղղություն:

209. Մարզերում մշակույթի զարգացման խնդիրները ներառված են նաև մի շարք այլ ծրագրերում, մասնավորապես՝ ՀՀ Կառավարության 2007 թ. ապրիլի 5-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում մշակույթի զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 589 որոշմամբ հաստատված ծրագրում, ՀՀ Կառավարության 2007 թ. մայիսի 3-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, դրա կենսունակության պաշտպանության հայեցակարգից բխող միջոցառումների մասին» N 17 արձանագրային որոշմամբ ընդունված ժամանակացույցի միջոցառումներում:

210. Տարածքային համաչափ զարգացումը նպատակ ունի իրականացնել միասնական մշակութային քաղաքականություն՝ համամասնորեն զարգացնելու ազգային մշակույթն ու օգտագործելու ստեղծագործական ներուժը երկրի ողջ տարածքում, ինչպես նաև ազգաբնակչության համար մշակութային գործունեություն իրականացնելու և մշակութային ծառայություններից օգտվելու մատչելիության ապահովումը:

211. Վերոնշյալ ծրագրերից բխող ՀՀ Սյունիքի մարզում գործողությունների հիմնական խնդիրներն են՝

- 1) միջնարգային մշակութային համագործակցության զարգացում և միասնական մշակութային դաշտի ձևավորում
- 2) մշակութային կյանքին բնակչության մասնակցության պայմանների, մշակութային գործունեություն իրականացնելու և մշակութային ծառայություններից օգտվելու մատչելիության ապահովում, արդյունքում՝ մշակույթի ոլորտի շահառուների թվի ավելացում
- 3) մշակութային կազմակերպությունների համաչափ բաշխվածության բարելավում (օպտիմալացում)՝ մշակութային կազմակերպությունների բնականոն գործունեության ապահովում՝ նյութատեխնիկական պայմանների բարելավման, շենքերի հիմնամորոգման ծրագրերի կազման և իրականացման միջոցով
- 4) մշակույթի ոլորտի կադրերի պատրաստման, վերապատրաստման և վերաորակավորման ծրագրերի իրականացում, մարզում մշակութային միջավայրի զարգացման միջոցով մշակույթի ոլորտի մասնագետների՝ մարզերից դեպի մայրաքաղաք և արտերկիր տեղի ունեցող արտահոսքի նվազեցում
- 5) մշակութային զբոսաշրջության զարգացում՝ պատմամշակութային հուշարձանների օգտագործման, մշակութային զբոսաշրջության նոր երթուղիների և ազգային արհեստագործական կենտրոնների ստեղծման միջոցով:

212. 2008թ. մարզում գործել են 2 դրամատիկական թատրոն, 6 թանգարան, 130 գրադարան, 15 արվեստի, գեղարվեստի և երաժշտական դպրոց, 7 մշակույթի կենտրոն, 110 մշակույթի տուն և ակումբ, 7 մարզադպրոց, 6 մարզադաշտ և այլ մշակութային ու մարզական կառույցներ:

### 5.2.1. Մշակույթ

213. **Գրադարաններ:** Մարզում գործող 130 գրադարաններից 30-ը քաղաքային համայնքների ենթակայության են, 99-ը գյուղական, 1-ը՝ Սյունիքի մարզային գրադարանը, ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության: Մարզում ընդհանուր գրադարանային ֆոնդը կազմում է շուրջ 1270660 կտոր գրականություն:

214. Մարզի գրադարանների խնդիրները հիմնականում կապված են տարածքների կարգավիճակի, վերանորոգման, գույքի ձեռքբերման, գրքային ֆոնդերի համալրման, նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման հետ:

215. Գրադարանների շենքային պայմաններն մեծամասամբ անբավարար են, ինչը խիստ վտանգում է գրքային ֆոնդի պահպանությունը, լիակատար օգտագործումը:

216. ՀՀ Սյունիքի մարզում գրադարանների հիմնախնդիրներից է նաև նոր գույքի ձեռքբերումը, ժամանակակից տեխնիկական միջոցներով ապահովումը:

217. Հիմնախնդիրների լուծման առաջնային քայլեր են համարվում գրադարանների շենքերի և շինությունների վերանորոգումը, նոր գույքով և գրականությամբ համալրումը:

218. «Գրադարանների շենքերի հիմնանորոգում» ծրագրի շրջանակներում 2008 թ. իրականացվել է մարզային գրադարանի շենքի վերանորոգում, որի համար 2008 թ. պետական բյուջեից հատկացվել է 40000.0, իսկ 2009 թ.՝ նախատեսվել է 7237.3 հազ. դրամ: Սյունիքի մարզային գրադարանի հիմնանորոգումը համարվում է առաջնային, քանի որ այն հանդիսանում է Սյունիքի գրադարանային ցանցի կենտրոնը:

219. 2010-2013 թթ. առաջնային է համարվում մարզի խոշոր բնակավայրերի՝ Կապանի, Գորիսի, Մեղրիի, Ագարակի և Սիսանի գրադարանների վերանորոգումը, նոր գույքով համալրումը:

220. Կենտրոնացված կարգով գրադարանների համար սարքերի, սարքավորումների ձեռքբերման գծով պետական բյուջեից ըստ տարիների նախատեսված գումարների հաշվին 2008թ. շարունակվել է համակարգիչների և համակարգչային սարքերի ձեռքբերումը: Ծրագրի շրջանակներում շարունակվելու է պետական բյուջեից ֆինանսական միջոցների հատկացումը:

221. Մարզի գրադարաններն ունեն հարուստ գրադարանային ֆոնդ, սակայն գրականության հիմնական մասը հնամաշ է, ինչպես նաև մարզում մեծ կարիք կա մասնագիտական գրականության:

222. ՀՀ Սյունիքի մարզում պետական բյուջեի հատկացումների շրջանակներում, համայնքային գրադարանների հավաքածուները ժամանակակից գրականությամբ համալրելու, տեսականին նորացնելու նպատակով, «Շարժական գրադարան» (բիբլիոբուսի) միջոցով Սյունիքի մարզային, Մեղրիի, Ագարակի, Քաջարանի, Սիսիանի, Գորիսի քաղաքային համայնքային գրադարաններին և Գորիսի համալսարանի գրադարանին տրամադրվել է 998 միավոր գրականություն: «Ռուսական գրքի կենտրոնի», Հանրապետական գիտատեխնիկական գրադարանի միջոցով Շիկահողի, Քաջարանի, Լեռնաձորի, Դովրուսի, Շրվենանցի, Կաղնուտի գյուղական գրադարաններին տրամադրվել է 402 միավոր գրականություն: Համայնքային գրադարաններին ընդհանուր առմամբ տրվել է 1269 միավոր: 2008 թ. ընթացքում իրականացվել է մարզի համայնքային գրադարանների հետ համագործակցության շրջանակներում Հայաստանի ազգային գրադարանի կողմից մասնագիտական խորհրդատվություններ են տրամադրվել և գրադարանների գործունեության զարգացմանն ուղղված սեմինարներ են կազմակերպվել Կապանի, Մեղրիի, Սիսիանի, Գորիսի տարածաշրջանների գրադարաններում:

223. Մարզում գրադարանային ծառայությունների բարելավումը դիտարկվում է նաև գրադարաններում ժամանակակից տեղեկատվական միջոցների ներդրմամբ, ինտերնետային ցանցին միացմամբ: Գրադարանային ծառայությունների բարելավմանն ուղղվածություններից է նաև ընդհանուր գրադարանային ցանցի ստեղծումը, որի կենտրոնը Սյունիքի մարզային գրադարանն է: Ընդհանուր գրադարանային ցանցում, ըստ առաջնայնության, կընդգրկվեն քաղաքային, այնուհետ գյուղական գրադարանները, որոնք նույնպես կիրականացնեն էլեկտրոնային սպասարկում:

224. ՀՀ Սյունիքի մարզում գրադարանային ծառայությունների որակի բարձրացման և մատչելիության ապահովման համար գրադարանում կընդլայնվի նաև էլեկտրոնային հրապարակումների միջոցով էլեկտրոնային տեղեկատվության տրամադրումը մարզի բնակչությանը:

225. Նոր գրադարանային ծառայությունների մատուցման ասպարեզում մարզային գրադարանում շարունակվելու են հատուկ խմբերի՝ կույր և թույլ տեսողությամբ անձանց սպասարկումը «Արև» համակարգի միջոցով: «Արև» համակարգի ներդրումը նախատեսվում է նաև համայնքային գրադարաններում, ինչը հնարավորություն կտա

ապահովել տեղեկության հասանելիությունը և մատչելիությունը հատուկ կարիքներ ունեցող անձանց համար, նրանց ինտեգրել հասարակությանը:

226. Մարզի գրադարանների հիմնախնդիրների լուծման նպատակով 2010-2013 թթ. նախատեսվում է մշակել համալիր ծրագիր, ուր կներառվեն գրադարանների վերանորոգման, գրքային հավաքածուների համալրման, նոր տեխնիկական միջոցների ներդրման հարցերը:

227. **Թանգարաններ:** ՀՀ Սյունիքի մարզում գործում է 5 թանգարան, այդ թվում՝ ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությամբ գործում են Ն. Ադոնցի անվ. Սիսիանի պատմության թանգարանը, Ա. Բակունցի տուն-թանգարանը (Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանի մասնաճյուղ), Սիսիանի պատկերասրահը (Հայաստանի ազգային պատկերասրահի մասնաճյուղ):

228. ՀՀ Սյունիքի մարզպետարանի ենթակայությամբ գործում է Կապանի երկրագիտական թանգարանը, իսկ համայնքային ենթակայությամբ՝ Գորիսի երկրագիտական թանգարանը:

229. Մարզի թանգարանների խնդիրները հիմնականում կապված են տարածքների կարգավիճակի, վերանորոգման, անվտանգության համակարգերի ներդրման, գույքի ձեռքբերման, ֆոնդերի համալրման և նոր ցուցադրությունների կազմակերպման հետ:

2010-2013 թթ. թանգարանների հիմնական խնդիրներն են.

1) Հայաստանի ազգային պատկերասրահի մասնաճյուղ Սիսիանի պատկերասրահ՝ շենքի վերանորոգում, ջեռուցման, անվտանգության համակարգերի տեղադրում, գույքով կահավորում

2) Ն. Ադոնցի անվ. Սիսիանի պատմության թանգարան՝ հակահրդեհային և ձայնային ահազանգի համակարգերի տեղադրում, օդափոխման և ջեռուցման համակարգերի ներդնումը

3) Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանի մասնաճյուղ Ա. Բակունցի տուն-թանգարան՝ շենքի վերանորոգում

4) Կապանի երկրագիտական թանգարան՝ նոր մասնաշենքերը հրատապ վերանորոգում և նոր ցուցադրության կազմակերպում

5) Գորիսի երկրագիտական թանգարան՝ շենքի վերանորոգում, անվտանգության ազդանշանային համակարգի ներդնում, սրահների և ֆոնդապահոցների համար օդորակիչների և անհրաժեշտ սարքավորումներ ձեռքբերում:

6) Վերանորոգումից և նյութատեխնիկական բազայի համալրումից հետո հիմնական խնդիրներից է նաև թանգարանային հավաքածուների համալրումը և նոր ցուցադրությունների կազմակերպումը: Նկատի ունենալով Սյունիքի մարզի տարածաշրջաններում մշակութային կազմակերպությունների հավասարաչափ բաշխման անհրաժեշտությունը, նախատեսվում է Հայաստանի ազգային պատկերասրահի մասնաճյուղ՝ Սիսիանի պատկերասրահը պրոֆիլացնել (եզակիացնել):

230. Թանգարանների աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու համար նախատեսվում է թանգարաններին կից ստեղծել ազգագրական և արհեստագործական կենտրոններ:

2010-2013 թթ. առաջարկվում է.

1) Կապանի երկրագիտական թանգարանում ստեղծել ժողովրդական արհեստագործության կենտրոն

2) Գորիսի տարածաշրջանի Խնձորեսկ գյուղը և Հին Գորիսը դարձնել պատմամշակութային թանգարան բաց երկնքի տակ

3) Սիսիանի պատմության թանգարանում հիմնել կարպետագործության կենտրոն:

Մարզի հուշարձանների հանրահռչակման, հասարակությանը ներկայացման, դպրոցներում պատմամշակութային հուշաձանների վերաբերյալ դասաժամերի

դասավանդման նպատակով՝ «Հուշարձանների պահպանության մշակույթ» ծրագրի մշակում և իրականացում:

231. **Պատմամշակութային հուշարձանների պահպանում:** Հայաստանի Հանրապետությունում ՀՀ Սյունիքի մարզը պատմամշակութային բարձրարժեք հուշարձաններով հարուստ տարածաշրջաններից է, որտեղ առկա է 2812 պատմամշակութային հուշարձան՝ 977 պահպանական միավորով, այդ թվում՝ միջնադարյան Հայաստանի նշանավոր Տաթևի վանքը, Վահանավանքը, Որոտնավանքը, Բաղաց քարի վանքը, Հալիձոր ամրոցը, Գորիս քաղաքի և Խնձորեսկ գյուղի հին քարանձավային համալիրները և այլն: Մարզը հարուստ է հին քարեդարյան, բրոնզեդարյան և միջնադարյան արժեքավոր հնագիտական հուշարձաններով, որոնց պեղման արդյունքներով բացահայտվում են տարածքի պատմության, մշակույթի, տնտեսության և կենցաղին վերաբերող արժեքավոր տեղեկություններ: Առավել արժեքավոր հուշարձաններից է «Ձորաց քարեր» (Քարահունջ) մեգոլիթյան հուշարձանը:

232. ՀՀ Սյունիքի մարզում վերջին տարիներին պետական բյուջեի հատկացումների հաշվին վերականգնողական աշխատանքներ են իրականացվել Որոտնավանքի, Վահանավանքի վանքային և Հալիձոր բերդի համալիրներում: Այժմ շարունակվում են Հալիձորի բերդի և Վահանավանքի բարեկարգման աշխատանքները: Ներկա խնդիրներից է անավարտ մնացած Որոտնավանքի սրահի ծածկասալերի վերականգնման և տարածքի բարեկարգման աշխատանքները:

233. Պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրման, հաշվառման, պեղումների, պահպանության, վերականգնման և օգտագործման գործընթացների համակարգումը կարիք ունի պետության կողմից ֆինանսական աջակցության: Այդ նպատակով պետական աջակցությունը տարեց տարի ընդլայնվում է՝ սակայն այն հեռու է բավարար լինելուց:

#### **Ներկայումս վերականգնման կարիք ունեն մարզի հետևյալ հուշարձանները.**

- 1) Արծվանիկ համայնքի Երիցավանքը.
- 2) Մեղրի համայնքի Սբ Հովհաննես եկեղեցին.
- 3) Շենաթաղի Սբ Աստվածածին եկեղեցին.
- 4) Գետաթաղի Սբ Աստվածածին եկեղեցին.
- 5) Դարպասի «Արզունամի» կամուրջը:

234. Մարզի հուշարձանների վերականգնման և բարեկանգնման աշխատանքների հետ մեկտեղ իրականացվել են նաև հուշարձանների և հնագիտական վայրերի պեղումներ: 2006-2008 թթ. պեղումներ են իրականացվել մարզի 3 հուշարձաններում՝ Եղվարդի Սբ Աստվածածին եկեղեցու տարածքում, Շաղաթի հնագիտական վայրում և Անգեղակոթ գյուղի Ներքին Գողթձոր հնավայրում:

235. Պատմամշակութային հուշարձանների պահպանման ոլորտում մարզում հիմնական խնդիրն է վերականգնված հուշարձանների օգտագործումը զբոսարջության բնագավառում:

Վերոնշյալ նպատակով նախատեսվում է.

- 1) Մշակել Գորիս քաղաքի և «Խնձորեսկ» հին գյուղատեղիի քարանձավային համալիրների, ինչպես նաև Գորիսի տարածաշրջանի մի շարք հին գյուղատեղիների, լքված բնակելի տների վերականգնման և օգտագործման ծրագրեր՝ վերածելով դրանք արհեստագործական թաղամասերի, ինչը կնպաստի տարածաշրջանի զբոսաշրջության և տնտեսության զարգացմանը, բնակչության համար աշխատատեղերի ստեղծմանը, զբոսաշրջության երթուղիներում ներգրավմանը



- 2) Սիսիանի տարածաշրջանի «Զորաց քար» բնակատեղիին տալ պետական պատմամշակութային արգելոցի կարգավիճակ: Արգելոցի հիմնադրմամբ կունենանք արդյունավետ և նպատակային գործունեության մի համակարգ, որը կնպաստի հուշարձանախմբի պահպանմանը և նպատակային օգտագործմանը, կկանոնակարգվի դրա հետագա պահպանության, ուսումնասիրման, օգտագործման, մշակութային զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների նախագծման աշխատանքները, հուշարձանամերձ տարածքների կառուցապատման, օգտագործման պայմանակարգը /ռեժիմը/:

2010-2013թթ. կշարունակվեն պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրման, հաշվառման, պեղումների, պահպանության, վերականգնման և օգտագործման աշխատանքները:

**236. Ոչ նյութական մշակութային ժառանգություն:** Մարզերում ոչ նյութական մշակութային ժառանգության խնդիրները ներառված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի «4.4.4. Մշակույթ» բաժնի «1.11.» և «1.12.» կետերում, ինչպես նաև ՀՀ կառավարության 2007 թ. մայիսի 3-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, դրա կենսունակության պաշտպանության հայեցակարգից բխող միջոցառումների մասին» N 17 արձանագրային որոշմամբ ընդունված ժամանակացույցի միջոցառումներում:

Այդ միջոցառումների հիմնական խնդիրներն են.

- 1) ավանդական ժողովրդական արհեստագործական ծրագրերի մշակումը և իրականացումը
- 2) ազգագրական երգի ու պարի համույթներին աջակցելը
- 3) ազգային, ավանդական տոների, ծեսերի և ծիսակատարությունների վերականգնումը և իրականացումը
- 4) ազգային լեզվի և բարբառների պահպանման և զարգացման տարբեր միջոցառումների իրականացումը
- 5) ազգագրական և արհեստագործական կենտրոնների ստեղծումը:

237. Վերոնշյալ խնդիրների իրականացման ուղղությամբ հիմնական քայլերն են համարվում վերանորոգված և համապատասխան նյութատեխնիկական միջոցներով համալրված մշակույթի տներում արհեստագործական կենտրոնների հիմնումը, առկա ազգագրական երգի ու պարի համույթներին անհրաժեշտ տարազով երաժշտական գործիքներով և տեխնիկայով պետական աջակցության ցուցաբերումը, նոր ազգագրական համույթների ստեղծումը, որի համար 2009 թ. ընթացքում կիրականացվի առկա վիճակի ուսումնասիրումը, կկատարվի կարիքների գնահատում և կկազմվի համալիր ծրագիր:

**238. Արվեստ (թատերարվեստ, երաժշտարվեստ, պարարվեստ, կերպարվեստ):** Այս բնագավառի հիմնական խնդիրներն են թատերարվեստի, երաժշտարվեստի, պարարվեստի, կերպարվեստի պահպանումը, զարգացումը և տարածումը, թատերահամերգային կազմակերպությունների գործունեության ապահովումը, ժողովրդական ստեղծագործությանը աջակցության ցուցաբերումը, հասարակության ստեղծագործական ներուժի օգտագործման, վերարտադրման և զարգացման համար պայմանների ստեղծումը և խթանումը, տարածքային /ՀՀ մարզեր/ մշակութային համագործակցությունը և մշակութային կյանքի զարգացումը:

239. Առաջնային լուծման կարիք ունեն մշակույթի տների, կենտրոնների շենքային պայմանների ապահովումը՝ վերանորոգումը, բեմերի կահավորումը, լուսաձայնային

տեխնիկայի, ջեռուցման և օդափոխման համակարգերի ներդնումը (որի բացակայության հետևանքով տարվա որոշ ամիսներին մշակութային կազմակերպությունները չեն գործում), ինչը հնարավորություն կտա ապահովել թատերական, համերգային և հյուրախաղային միջոցառումների իրականացումը:

Վերոնշյալ խնդիրների իրականացման ուղղությամբ նախատեսվում է.

**240. Թատերարվեստի ոլորտում** ՀՀ Սյունքի մարզում գործող 2 թատրոնների հիմնախնդիրների լուծում, մասնավորապես.

- 1) Գորիսի Վ. Վաղարշյանի անվ. պետական դրամատիկական թատրոնի շենքի վերանորոգում, ջեռուցման համակարգի ներդնում, նոր բեմական հագուստի, վարագույրների, փորձասենյակների և գրիմանոցների գույքի ձեռքբերում: Թատրոնի կողմից առաջնային խնդիր է համարվում նաև փոքր դահլիճի (100 տեղ) գործարկումը, ինչպես նաև պետական աջակցությամբ հյուրախաղային գործունեության ընդլայնումը (Երևան, ՀՀ մարզեր)
- 2) Կապանի Ալ. Շիրվանզադեի անվ. պետական դրամատիկական թատրոնի ջեռուցման խնդիրը (նախկինում ջեռուցումը իրականացվում էր կաթսայատան միջոցով, որը արդյունավետ չէր), օդափոխման համակարգի արդիականացումը, թատրոնի դեկորացիաների և ռեկվեզիտների պահպանման համար օժանդակ և պահեստային սենյակների խնդիրը:

241. 2010-2013 թթ երաժշտարվեստի և պարարվեստի բնագավառում երաժշտական և պարային համույթների բնականոն գործունեության ապահովման նպատակով հիմնական խնդիրներն են դիտարկվում՝ վերականգնված մշակութային տների և կենտրոնների դահլիճների կահավորումը, ջեռուցման համակարգերի ներդնումը, լուսաձայնային տեխնիկայով հագեցումը, երաժշտական գործիքների ձեռքբերումը:

242. Մարզում արվեստի զարգացման նպատակով նախատեսվում է պետական աջակցության տրամադրում մարզում և համայնքներում առկա երաժշտական և պարային համույթներին, թատերական խմբերին, կիրառական արվեստի վարպետներին՝ դրամաշնորհային ծրագրերի իրականացման միջոցով»:

243. Թատրոնների, մշակութային կենտրոնների և տների բնականոն գործունեության ապահովման նպատակով նախատեսվում է 2010-2013 թթ. իրականացնել համալիր ծրագիր, որի արդյունքում կլուծվեն վերոնշյալ հաստատությունների խնդիրները կապված նոր գույքի սարքավորումների, նյութատեխնիկական բազայի ձեռքբերման հետ:

244. **Գեղարվեստական կրթություն:** Մարզում գործում են 7 երաժշտական, 6 արվեստի և 2 գեղարվեստի դպրոցներ: Դպրոցները հիմնականում ապահովված են ուսումնական տարածքներով:

245. Գեղարվեստական կրթության խնդիրները կառավարության ուշադրության կենտրոնում են: 2008թ. ՀՀ Սյունիքի մարզի 11 երաժշտական և արվեստի դպրոցների 144 սովորողներ ազգային նվագարանների ուսուցման գծով ստացել են ուսման վարձավճարների փոխհատուցում /10860.4 հազար դրամ/: 2009թ. նախատեսվում է ուսման վարձավճարների փոխհատուցում /19490.6 հազ.դրամ/ տրամադրել 12 արվեստի և երաժշտական դպրոցների ազգային, փողային և լարային նվագարանների բաժինների 161 սովորողների: Մարզի Կապան, Քաջարան, Մեղրի, Սիսիան և Գորիս քաղաքներում մեթոդական աջակցության շրջանակներում իրականացվել են «վարպետության դասեր», որին մասնակցել են բոլոր դպրոցների սաները և դասատուները: Դասերին մասնակցել է 120 սովորող և 70 դասատու: 2008թ. «Երաժշտական, գեղարվեստի և արվեստի դպրոցների համար նոր գրականության մշակում և հրատարակում» ծրագրով հրատարակված 204 անուն գիրք անվճար տրամադրվել է մարզի բոլոր դպրոցներին: Մարզի 30 սովորողներ ներառվել են ՀՀ մշակույթի նախարարությունում ստեղծված «ՀՀ շնորհալի երեխաների

տեղեկատվական բանկում: Վերոնշյալ ծրագրերը շարունակական են և կիրականացվեն նաև 2010-2013 թթ.

246. Գեղարվեստական կրթական համակարգում հիմնական խնդիրները կապված են դպրոցների շենքերի վերանորոգման, ջեռուցման համակարգերի ներդրման, նոր գույքի և երաժշտական գործիքների ձեռքբերման և վերանորոգման, դահլիճների կահավորման, նոր ուսումնամեթոդական գրականության ձեռքբերման հետ:

247. Գեղարվեստական կրթության բնագավառում մարզի 102 գյուղական համայնքներից միայն խնձորեսկում է գործում երաժշտական դպրոց: Անհրաժեշտություն կա սահմանամերձ Տեղ գյուղում նույնպես բացել երաժշտական դպրոց (որի համար նոր վերականգնված մշակույթի տանը առկա է անհրաժեշտ շենքային պայմաններ և մասնագետներ):

248. 2009 թ. նախատեսվում է մշակել «ՀՀ Սյունիքի մարզի գեղարվեստական կրթական հաստատությունների զարգացման համալիր ծրագիր», որի իրագործման ընթացքում փուլային տարբերակով լուծում կստանան վերոնշյալ խնդիրները:

249. **Մշակութային կյանքի կազմակերպում և մշակութային միջոցառումներ:** Մշակութային կյանքի զարգացմանն է նպատակաուղղված ՀՀ մարզերում հանրապետական փառատոների և միջոցառումների կազմակերպումը: Մշակութային միջոցառումների կազմակերպման ուղղությամբ պետական աջակցությամբ իրականացվում են մի շարք ծրագրեր, որի նպատակն է աշխուժացնել մարզային մշակութային կյանքը, խթանել մշակութային փոխանակումները մայրաքաղաքի և մարզերի մշակութային կազմակերպությունների միջև, նպաստել փորձի փոխանակմանը, բնակչությանը ծանոթացնել արվեստի նոր ձեռքբերումներին:

250. Պետական աջակցություն մարզային մշակութային միջոցառումներին» ծրագրով իրականացվում է «Մշակութային մարզ» մշակութային հաղորդակցություն՝ մայրաքաղաքմարզեր» ենթածրագիրը, որի շրջանակներում կազմակերպվում են Երևանի թատերական և համերգային կազմակերպությունների հյուրախաղերը մարզերում: Վերոնշյալ ծրագրի շրջանակներում 2008 թ. ՀՀ Սյունիքի մարզի Կապան, Գորիս, Քաջարան, Սյունիք, Ծավ, Խնածախ, Խնձորեսկ, Տաթև, Վերիշեն, Հալիձոր, Քարահունջ բնակավայրերում հանդես են եկել Հայաստանի պետական կամերային նվագախմբի երգչախումբը, Հայաստանի հնագույն երաժշտության «Տաղարան» համույթը, «Միեր Մկրտչյան» արտիստական թատրոնը, Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը: Նույն ծրագրի շրջանակներում միջմարզային մշակութային փոխանակումների զարգացման նպատակով Կապանում և Գորիսում կազմակերպվել է Գյումրու Վ. Աճենյանի անվան պետական դրամատիկական թատրոնի ներկայացումները:

251. Հայաստանի ազգային կինոկենտրոնի կողմից մարզի Կապան, Գորիս, Սյունիք, Ծավ, Խնածախ, Խնձորեսկ, Տաթև, Վերիշեն, Հալիձոր, Քարահունջ բնակավայրերում կազմակերպվեց Հայկական ֆիլմերի հետահայաց ցուցադրություն:

252. 2008 թ. Կապանում կազմակերպվել է «Մենք ենք, մեր մարզերը» համայնքային թատրոնների հանրապետական փառատոնը:

253. Մարզերում մշակութային կյանքի աշխուժացման, ինչպես նաև մայրաքաղաքից դեպի մարզեր մշակութային կյանքի ապակենտրոնացման նպատակով մի շարք մշակութային միջոցառումներ ՀՀ մշակույթի նախարարության կողմից կազմակերպվում են ՀՀ մարզերում: Մասնավորապես՝ «Տիկնիկային թատերախմբերի հանրապետական փառատոնը» առաջին անգամ կազմակերպվեց Երևանում 2005 թ., 2006 թ.՝ Գեղարքունիքի մարզում, 2007 թ.՝ Տավուշի մարզում, 2008 թ.՝ Լոռու մարզում, 2009 թվականին կանցկացվի ՀՀ Սյունիքի մարզում (Գորիս):

254. 2010-2013 թթ. ՀՀ Սյունիք մարզում վերոնշյալ ծրագրերը կշարունակվեն իրականացվել:

255. **Մշակութային օբյեկտների հիմնանորոգում:** ՀՀ Սյունիքի մարզում գործում է 7 մշակութային կենտրոն և 100 մշակութային տուն և ակումբ:

256. Խոշոր մշակութային կենտրոններն են՝ Կապանի մարզային մշակութային կենտրոնը, Կապանի քաղաքապետարանի մշակութային կենտրոնը, Սիսիանի մշակութային կենտրոնը, Գորիսի Գուսան Աշոտի անվ. մշակութային կենտրոնը, Մեղրու մշակութային կենտրոնը, Ագարակի «Ծմակ» մարզամշակութային կենտրոնը, Քաջարանի մշակութային պալատը:

257. Մարզի 23 բնակավայրեր ընդգրկված են մշակութային տներ ունեցող սահմանամերձ բնակավայրերի ցանկում: Համայնքային մշակութային տներում և ակումբներում մեծամասամբ տեղակայված են նաև գրադարանները:

258. Մինչև 2008 թ. լրիվ կամ մասնակի հիմնանորոգվել են մարզի 8 մշակութային օբյեկտներ:

259. Մարզում մշակութային տները հիմնականում ոչ բարվոք վիճակում են, ունեն հիմնանորոգման, գույքի համալրման, գործարկման խնդիրներ: Մշակութային մի շարք օջախներ վնասվել են ռմբակոծությունների և ռազմական գործողությունների հետևանքով, որոնք վերջին տարիների ընթացքում չեն վերանորոգվել և հիմնանորոգման /շենքապահպան աշխատանքների իրականացման/ խիստ կարիք ունեն:

260. Մարզում 23 սահմանամերձ բնակավայրերից միայն 8 մշակութային տուն է ընդգրկված սահմանամերձ բնակավայրերի մշակութային տների վերանորոգման ծրագրում:

261. 2010-2013 թթ. մշակութային օբյեկտների վերանորոգման ընթացքում առաջնային են համարվում խոշոր բնակավայրերի և սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի մշակութային օբյեկտների վերանորոգումը:

262. 2010-2013 թվականներին նախատեսվում է 1852500.0 հազ. դրամ հատկացնել մշակութային օջախների հիմնանորոգման և կառուցման համարը ([Հավելված 5.2](#)):

## 5.2.2. Երիտասարդության հարցեր

263. Մարզում սպորտային և մարզամշակութային միջոցառումների համատեքստում կարևորվում է երիտասարդական քաղաքականության զարգացումը և նրա արդյունավետության բարձրացումը: Պետության քաղաքականությունն այս ոլորտում սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, հոգևոր-մշակութային, կազմակերպական պայմանների ու երաշխիքների ապահովումն է՝ երիտասարդների սոցիալական կայացման, առողջ ապրելակերպի, նրանց ստեղծագործ ներուժը հասարակության շահերին առավել լիարժեք ծառայեցնելու համար:

264. Այս ուղղությամբ կարևորագույն միջոցառումներից մեկը ՀՀ Սյունիքի մարզում երիտասարդական կենտրոնի ստեղծումն էր: Այն նպատակ է հետապնդում Հայաստանի Հանրապետությունում պետական երիտասարդական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը մասնակից դարձնել առավել մեծ թվով երիտասարդական կազմակերպությունների: Կենտրոնի միջոցով անհրաժեշտ է նպաստել մարզային երիտասարդական կառույցների, ինչպես նաև երիտասարդական քաղաքականության սուբյեկտների խնդիրների մասին եղած տեղեկատվության հավաքմանը, համակարգման և հրապարակման կազմակերպմանը: Երիտասարդական կազմակերպությունների անմիջական մասնակցությամբ աջակցել երիտասարդության շահերն ու իրավունքները ամրագրող օրենսդրական դաշտի ստեղծմանը:

265. Այսպիսով՝ Սյունիքի մարզում մշակութային, սպորտի և երիտասարդության հարցերի բնագավառներում զարգացման հիմնական գերակայություններն են.

- 1) Մարզի մշակութային ու սպորտային կյանքի զարգացում՝ պետական աջակցության ընդլայնմամբ
- 2) Ոլորտի կադրերի պատրաստում, վերապատրաստում և վերաորակավորում: Նյութական և ոչ նյութական մշակութային արժեքների հավաքածուների համալրում, պահպանություն ու հասարակության ուշադրության ներկայացում
- 3) Մշակութային ու սպորտային կազմակերպությունների շենքերի ու շինությունների հիմնանորոգում
- 4) Պատմական հուշարձանների պահպանություն, ամրակայում, նորոգում, վերականգնում, բարեկարգում և օգտագործում
- 5) Սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, հոգևոր-մշակութային, սպորտային միջոցառումների կազմակերպական պայմանների ու երաշխիքների ապահովում երիտասարդների սոցիալական կայացման, նրանց ստեղծագործ ներուժն ի շահ հասարակությանը առավել լիարժեք օգտագործելու համար:

266. Մշակույթի ոլորտում առկա հիմնախնդիրները լուծելու համար 2009 թ. անհրաժեշտ է մշակել և 2010-2013թթ. իրականացնել հետևյալ նպատակային միջոցառումները՝

- 1) Գրադարանների զարգացման համալիր ծրագրի մշակում և հաստատում
- 2) Վերականգնված մշակույթի տների, կենտրոնների նյութատեխնիկական բազայի, նոր գույքով, սարքերով և սարքավորումներով համալրման համալիր ծրագրի մշակում և հաստատում
- 3) Մշակույթի ոլորտի կադրերի վերապատրաստման և վերաորակավորման ծրագրի մշակում և հաստատում
- 4) Գեղարվեստական կրթական հաստատությունների զարգացման համալիր ծրագրի մշակում և հաստատում:

### 5.2.3. Սպորտ

267. ՀՀ Սյունիքի մարզում գործող 13 մարզադպրոցներն ու մարզակառույցները և 11 մարզադաշտերը տասնյակ տարիներ չեն նորոգվել, գտնվում են խիստ անբարվոք վիճակում, ինչը խոչնդոտ է հանդիսանում սպորտի զարգացմանն ու մասսայականացմանը բնակչության շրջանում: Սպորտի զարգացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով անհրաժեշտ է 2010-2013 թվականներին 594300.0 հազ. դրամի հիմնանորոգման և կառուցման աշխատանքներ կատարել մարզական կառույցներում ([Հավելված 5.2](#)):

### 5.3 Առողջապահություն


#### 5.3.1 Առողջապահության ոլորտի իրավիճակի վերլուծություն

268. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը կարևորելով առողջապահության ոլորտի դերը, հիմնական նպատակների շրջանակներում առանձնացնում է առողջապահական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը: ԿԶԾ-ի շրջանակներում գերակա է համարվել առաջնային բուժօգնության ոլորտը, իսկ ծրագրային մակարդակով՝ հատուկ կարևորվել են մոր և մանկան առողջության պահպանումը, ինչպես նաև վարակիչ հիվանդությունների կանխարգելման խնդիրները: Դրված նպատակների ապահովման հարցում մեծ դեր է վերագրվել առողջապահության ոլորտում պետական ծախսերի ավելացմանը, դրանց ներդրության վերաբաշխմանը՝ ի օգուտ առաջնային բուժօգնության օղակի, ինչպես նաև համակարգի կառավարման բարեփոխումների արդյունքում ակնկալվող արդյունավետության բարձրացմանը:

269. Հայաստանը, բնակչության առողջական վիճակը բնութագրող ցուցանիշների առումով համանման եկամտի մակարդակ ունեցող երկրների համեմատ, հիմնականում գտնվում է ավելի լավ վիճակում: Այդուհանդերձ, զարգացած երկրների հետ համեմատականները վկայում են, որ շատ դեպքերում խզումը նշանակալի է, մասնավորապես այնպիսի ցուցանիշների գծով, ինչպիսիք են մանկական և մայրական մահացությունը: Սյունիքի մարզում ոլորտի պատկերը հետևյալն է.

270. ՀՀ Սյունիքի մարզի ազգաբնակչության թվաքանակը և սեռատարիքային կառուցվածքը ներկայացված է [Հավելված 5.3.-ում](#):

Գծապատկեր 5.1. ՀՀ Սյունիքի մարզի ազգաբնակչության սեռատարիքային կառուցվածքի դինամիկան՝ ըստ տարածաշրջանների



Աղյուսակ 5.4. ՀՀ Սյունիքի մարզի արական սեռի ազգաբնակչության տեսակարար կշիռը՝ ըստ տարածաշրջանների.

| Տարածաշրջան | 2006թ. |        | 2007թ. |        | 2008թ. |        |
|-------------|--------|--------|--------|--------|--------|--------|
|             | արակ   | ընդ    | արակ   | ընդ    | արակ   | ընդ    |
| Կապան       | 30023  | 61324  | 31417  | 61535  | 31482  | 61495  |
| Գորիս       | 21530  | 45491  | 21598  | 45258  | 21598  | 45858  |
| Սիսիան      | 15797  | 35128  | 16480  | 34145  | 16487  | 34152  |
| Մեղրի       | 5767   | 11930  | 6143   | 11919  | 6143   | 11919  |
| Ընդամենը    | 73117  | 153881 | 75638  | 152857 | 75710  | 152824 |

Աղբյուրը՝ ՀՀ առողջապահության նախարարության ՊԱԳ-ի տվյալներ:

271. Սեռատարիքային վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզում սեռատարիքային փոխհարաբերությունները համաչափ են:

Աղյուսակ 5.5. ՀՀ Սյունիքի մարզի ազգաբնակչության բաշխումը (քաղաքային/գյուղական կտրվածքով 2006-2008թթ.)

| Ազգաբնակչությունը | 2006թ. | 2007թ. | 2008թ. |
|-------------------|--------|--------|--------|
| քաղաքային         | 103772 | 103695 | 103692 |
| գյուղական         | 49249  | 49162  | 49132  |
| ընդամենը          | 152021 | 152857 | 152824 |

Աղբյուրը՝ ՀՀ առողջապահության նախարարության ՊԱԳ-ի տվյալներ:

272. Բժշկադեմոգրաֆիկ ցուցանիշների վերլուծությամբ պարզ է դառնում, որ մարզում ազգաբնակչության գերակշիռ մասը բնակվում է քաղաքներում, սակայն Գորիսի և Սիսիանի տարածաշրջաններում գյուղական և քաղաքային ազգաբնակչության թիվը գրեթե չի տարբերվում իրարից և այս հանգամանքը անհրաժեշտ է հաշվի առնել գյուղական ազգաբնակչության բժշկական սպասարկման բարելավման համար, հատկապես վերոնշյալ տարածաշրջաններում:

273. Տարիքային ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մարզի քաղաքային ազգաբնակչությունը գտնվում է ծերացման անցման վաղ փուլում, գյուղական ազգաբնակչությունը համարվում է ծերացած, իսկ մարզի բնակչությունը ընդհանուր առմամբ /համաձայն է. Ռոսսեթի/ համարվում է գտնվող ժողովրդագրական ծերացման անցման ուշ փուլում: Բնակչության ծերացման պայմաններում մեծանում են բնակչության խրոնիկական հիվանդություններով հիվանդացության և մահացության ցուցանիշները, փոխվում է այդ ցուցանիշների տարիքասեռային կառուցվածքը: Ավելանում է նաև սոցիալական օգնության կարիք ունեցողների քանակը, փոփոխվում է աշխատունակ և կենսաթոշակային տարիքի բնակչության բնականոն հարաբերակցությունը, որը պայմանավորում է պետական սոցիալական բեռի մեծացումը և բերում է տնտեսական անբարենպաստ հետևանքների:

274. ՀՀ Սյունիքի մարզի ծնունդների և մահերի ցուցանիշները ներկայացված է [Հավելված 5.4.-ում](#):

### ՀՀ Սյունիքի մարզի բնական շարժի գուցանիշներ

275. 2008թ-ին մայրական մահացության դեպք չի գրանցվել: Ծնելիության ցուցանիշը կազմում է 11.5 /2006թ-ին- 10.8, 2007թ-ին 11.8/, մահացության ցուցանիշը 7.8 / 2006թ-ին- 8.7, 2007թ-ին 7.9/, բնական աճը՝ 3.7 /2006թ-ին՝2.0, 2007թ-ին 3.5/:

276. ՀՀ Սյունիքի մարզի մահացության համեմատական ցուցանիշը ցույց է տալիս, որ 2006թ. այն կազմել է 8.7, 2007թ.-7.9, իսկ 2008թ-ին-7.8 պրոմիլե:

Աղյուսակ 5.6. ՀՀ Սյունիքի մարզի մանկական և պերինատալ մահացության համեմատական ցուցանիշները

| Տարածաշրջան      | 2006թ.                |                        | 2007թ.                |                        | 2008թ.                |                        |
|------------------|-----------------------|------------------------|-----------------------|------------------------|-----------------------|------------------------|
|                  | մանկական մահացություն | պերինատալ մահացություն | մանկական մահացություն | պերինատալ մահացություն | մանկական մահացություն | պերինատալ մահացություն |
| ՀՀ Սյունիքի մարզ | 10.9                  | 15.2                   | 12.7                  | 15.8                   | 8.1                   | 13.1                   |
| Կապան            | 6.8                   | 16.6                   | 11.7                  | 19.8                   | 19.1                  | 21.6                   |
| Գորիս            | 16.1                  | 14                     | 11.1                  | 7.1                    | -                     | 5.1                    |
| Սիսիան           | 11.1                  | 11.1                   | 13.8                  | 11.1                   | 2.8                   | 5.6                    |
| Մեղրի            | 8.7                   | 25.2                   | 24.0                  | 40.0                   | 6.2                   | 25                     |

Աղբյուրը՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն:

277. Մահացությունն առավելապես բարձր է երեխայի կյանքի առաջին տարում:

278. Մանկական մահացության ցուցանիշի վերլուծությունը ցույց է տալիս, որ ինչպես մանկական, այնպես էլ պերինատալ մահացության ցուցանիշը 2008թ նվազել է, դրական դինամիկան առավելապես արտահայտված է Գորիսի և Սիսիանի տարածաշրջաններում, որտեղ ակտիվ գործունեություն է ծավալել մոր և մանկական առողջության պահպանման բնագավառում ՆՈՎԱ ծրագիրը: Սակայն Մեղրիի և Կապանի տարածաշրջաններում կտրուկ բարձր է մարզային ցուցանիշի համեմատ պերինատալ մահացությունը: Այս հանգամանքը պահանջում է անհրաժեշտ բարեփոխումների իրականացում բժշկական կենտրոնների մոր և մանկան ծառայություններում /կադրային, տեխնիկական/:

279. Մայրական մահացության ցուցանիշը, իր համեմատաբար ոչ այնքան բարձր մակարդակով, նկատելի ազդեցություն չի գործում ժողովրդագրական ընդհանուր իրավիճակի վրա, սակայն ամբողջությամբ արտացոլում է մոր և մանկան պահպանության համակարգի վիճակը: Մայրական մահացության երկու դեպք տեղի է ունեցել 2006թ., իսկ 2007 և 2008թթ. մայրական մահացության դեպքեր ՀՀ Սյունիքի մարզում չեն գրանցվել:

Մարզի ազգաբնակչության հիվանդագության վիճակագրություն.

280. Հիվանդագությունը բնակչության առողջությունը բնութագրող կարևորագույն չափանիշներից է, որը ուսումնասիրվում է ըստ դիմելիության, ըստ բժշկական կանխարգելիչ զննումների, ըստ մահվան պատճառների:

1) ըստ դիմելիության ՀՀ Սյունիքի մարզի ազգաբնակչության կարևոր ոչ վարակիչ հիվանդություններով հիվանդագության ցուցանիշները հետևյալն են՝

Աղյուսակ 5.7. Ըստ դիմելիության ՀՀ Սյունիքի մարզի ազգաբնակչության կարևոր ոչ վարակիչ հիվանդություններով հիվանդագության ցուցանիշները

| Հիվանդագություն | 2006թ. |         | 2007թ. |         | 2008թ. |         |
|-----------------|--------|---------|--------|---------|--------|---------|
|                 | քանակ  | պրոմիլե | քանակ  | պրոմիլե | քանակ  | պրոմիլե |
| սիրտ-անոթային   | 4549   | 29.6    | 4124   | 27.0    | 4352   | 28.5    |



|               |      |      |      |      |      |      |
|---------------|------|------|------|------|------|------|
| օճկոլոգիական  | 1139 | 7.4  | 1109 | 7.2  | 1955 | 12.8 |
| էնդոկրին      | 3826 | 24.7 | 3656 | 23.9 | 3727 | 24.4 |
| հոգեկան հիվ.  | 2001 | 13   | 2244 | 14.7 | 2263 | 14.8 |
| տուբերկուլյոզ | 649  | 4.2  | 626  | 4.2  | 259  | 1.6  |
| մաշկավեներաբ. | 789  | 4.3  | 988  | 6.4  | 993  | 6.5  |

Աղբյուրը՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն:

281. Հիվանդացության ցուցանիշները ցույց են տալիս ազգաբնակչության մոտ ուռուցքային հիվանդությունների կտրուկ աճ, որը պայմանավորված է նաև հիվանդությունների ակտիվ հայտնաբերմամբ և դրա հետ միասին տուբերկուլյոզով հիվանդացության ցուցանիշի նվազում, որը պայմանավորված է տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ներդրման արդյունավետ իրականացման հետ:

282. Վարակիչ հիվանդություններով հիվանդացությունը նույնպես մեծ նշանակություն ունի ազգաբնակչության հիվանդացության վերլուծության համար, հատկապես նրա տարածքային տարածվածությունը՝

Աղյուսակ 5.8. Վարակիչ հիվանդություններով հիվանդացության տարածքային տարածվածությունը ՀՀ Սյունիքի մարզում՝ ըստ տարածաշրջանների

|        | 2006թ. |         | 2007թ. |         | 2008թ. |         |
|--------|--------|---------|--------|---------|--------|---------|
|        | քանակ  | պրոմիլե | քանակ  | պրոմիլե | քանակ  | պրոմիլե |
| Կապան  | 273    | 4.4     | 239    | 3.9     | 114    | 1.8     |
| Գորիս  | 394    | 8.6     | 567    | 12.5    | 641    | 13.9    |
| Սիսիան | 192    | 5.5     | 209    | 6.1     | 204    | 5.9     |
| Մեղրի  | 81     | 6.8     | 124    | 10.4    | 141    | 11.8    |

Աղբյուրը՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն:

283. Վարակիչ հիվանդություններով հիվանդացության դինամիկան ցույց է տալիս, որ Գորիսի և Մեղրիի տարածաշրջաններում նկատվում է ինֆեկցիոն հիվանդացության աճի միտում:

2) Հիվանդացությունը՝ ըստ մահվան պատճառների.

284. Հիվանդացության ցուցանիշի վերլուծության համար կարևոր նշանակություն ունի մահացության ցուցանիշը, որի չափանիշները մեծամասամբ կախված են բնակչության սեռատարիքային առանձնահատկություններից: Մահացության բնորոշիչ ցուցանիշներից ավելի լիարժեքը դա բնակչության առանձին սեռատարիքային խմբերում մահացության ցուցանիշն է:

Մահացության համեմատական ցուցանիշները ըստ սեռատարիքային առանձնահատկությունների

285. Մահացության նվազման միտում արձանագրվել է ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց մեծահասակ տարիքային խմբերում: Դրա հետ միասին 2006թ-ի համեմատ նկատվում է մահացության ցուցանիշների որոշակի աճի միտում կանանց աշխատունակ տարիքային խմբում:

286. Մահացության պատճառների կառուցվածքային ուսումնասիրությունները ցույց են տվել հետևյալը.

287. 2006թ-ի համեմատ 2008թ-ին աճել են օնկոլոգիական և սուր սիրտ-անոթային հիվանդությունների հետևանքով մահացության ցուցանիշները, որոնք կազմում են համապատասխանաբար 1.7% և 12.2% և միաժամանակ նվազել են մահացության ցուցանիշները վնասվածքներից, խրոնիկական սիրտ-անոթային և այլ հիվանդություններից՝ համապատասխանաբար կազմելով 0.4 %, 11.6% և 2.3%:

288. Օնկոլոգիական հիվանդությունների պատճառով մահացության համեմատական ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այն աճել է աշխատունակ տարիքային խմբի կանանց մոտ և կազմել է 0.4%: Անհրաժեշտ է նշել այն հանգամանքը, որ այդ ցուցանիշի աճը պայմանավորված է հիմնականում կրծքագեղձի և սեռական օրգանների չարորակ նորագոյացումներով ախտահարմամբ, որի տեսակարար կշիռը 2006թ. կազմել է 41%, իսկ 2008թ.՝ 44 %:

289. Տվյալ հանգամանքը մեծ հավանականությամբ պայմանավորված է այս պաթոլոգիայի ուշացած ախտորոշմամբ, չնայած նրան, որ նման տեղակայության նորագոյացություններն ավելի հեշտ են ախտորոշվում վաղ շրջանում և համապատասխան մասնագիտացված բուժման դեպքում կարելի է հասնել կայուն ռեմիսիայի:

290. Բայց միայն վերոհիշյալ պատճառով չէ պայմանավորված այս աճը, այն կապված է նաև բնակչության ծանր սոցիալական կացության հետ, քանի որ անգամ վաղ շրջանում ախտորոշված դեպքերում հիվանդներից ոչ բոլորն են հնարավորություն ունենում ժամանակին մեկնել նեղ մասնագիտական բուժում ստանալու նպատակով մասնագիտացված կենտրոններ և այն էլ մի քանի անգամ տարվա ընթացքում, քանզի տվյալ պարագայում բուժումը ունի պարբերական և շարունակական բնույթ:


291. Սուր սիրտ-անոթային պաթոլոգիայի պատճառով մահացության համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ 2006թ. նկատմամբ մահացության աճը կազմել է 12.2 %:

Սուր սիրտ-անոթային պաթոլոգիայի պատճառով մահացության աճը ըստ սեռատարիքային խմբերի

292. Անհրաժեշտ է շեշտադրել այն հանգամանքը, որ աճել է մահացությունը կանանց աշխատունակ տարիքային խմբում, գրեթե կրկնակի անգամ, որը կազմել է 0.7%: Այս հանգամանքը կարելի է բացատրել նաև ծխախոտ օգտագործող կանանց թվի աճով:

293. Համեմատական կարգով մահացության աճ տեղի է ունեցել նաև տղամարդկանց աշխատունակ և մեծահասակ տարիքային խմբերում, որը կազմել է համապատասխանաբար 0.22% և 2.4%:

Գծապատկեր 5.2. 2008թ-ին սուր սիրտ-անոթային պաթոլոգիայի հետևանքով մահացածների հոսպիթալիզացիայի ցուցանիշները ՀՀ Սյունիքի մարզում



294. Սուր սիրտ-անոթային պատթուղոգիայի հետևանքով մահացածների հոսպիթալիզացիայի ցուցանիշների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 2008թ. աշխատունակ տարիքային խմբի 43 մահացածներից միայն 10-ն /23 տոկոս/ են դիմել շտապ բժշկական օգնության և վերջինիս ուղեգրմամբ տեղափոխվել հիվանդանոց: Անհրաժեշտ է նշել նաև այն հանգամանքը, որ նրանցից ոչ ոք, առհասարակ, չէր դիմել բժշկական օգնություն ստանալու նպատակով առողջության պահպանման առաջնային օղակ:

295. Համեմատական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նվազել են վնասվածքների, խրոնիկական սիրտ-անոթային և այլ հիվանդությունների պատճառով մահացության ցուցանիշները, որոնք կազմել են համապատասխանաբար 0.4%, 11.6% և 2.3%:

296. Խրոնիկական սիրտ-անոթային պատթուղոգիայի հետևանքով մահացության համեմատական ցուցանիշի նվազումը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ վերջին տարիներին ստեղծվել է բարենպաստ պայմաններ այս պատթուղոգիայով տառապող հիվանդների անվճար դեղորայքային սպասարկման գործում:

297. Անհրաժեշտ է նշել նաև, որ այլ հիվանդությունների խմբում նույնպես մահացության համեմատական ցուցանիշի նվազման միտում է նկատվում: Ի տարբերություն 2006թ., 2008թ-ին աճել է հեպատիտ-ցիռոզ ախտորոշմամբ մահացածների տեսակարար կշիռի թիվը աշխատունակ տղամարդկանց խմբում: Այս երևույթը կարելի է բացատրել սեռավարակային ճանապարհով տարածվող հեպատիտ “B” և “C” հիվանդությունների ոչ ճիշտ ախտորոշմամբ:

298. Եվ այսպես՝ 2008թ. ի հայտ է եկել մարզի բնակչության ընդհանուր մահացության ցուցանիշի նվազեցման միտում 2006թ-ի համեմատ:

299. Սակայն, դրա հետ միասին մահացության կառուցվածքային համեմատական ուսումնասիրությունները ցույց են տվել նաև օնկոլոգիական և սուր սիրտ-անոթային հիվանդությունների պատճառով մահացության տեսակարար կշռի աճ և այն էլ աշխատունակ տարիքային խմբերում: Այս ցուցանիշների նվազեցման նպատակով անհրաժեշտ է հիվանդանոցային նեղ մասնագիտական օգնության գծով ստեղծել մարզային նշանակության էնդովասկուլյար կարդիոլոգիական կենտրոն, ինչպես նաև օնկոլոգիական հիվանդների պարբերական բուժօգնության և երկարատև անկողնային խնամք տանելու համար դիսպանսերային ստորաբաժանում: Միաժամանակ անհրաժեշտ է բարելավել և մատչելի դարձնել շտապ բժշկական օգնության ծառայությունը մարզի ամբողջ տարածքում, հատկապես գյուղական բնակչության համար:

Մարզի ազգաբնակչության հաշմանդամության վիճակագրությունը

300. Առաջնակի հաշմանդամության ցուցանիշները հատկապես կարևոր են ՀՀ Սյունիքի մարզի ազգաբնակչության համար, քանի որ մարզում գործում են լեռնաարդյունաբերական երեք հսկաներ, ունենալով բազմապատճառ ազդեցություն առողջության, մարդկանց կենցաղի, հիգիենայի և բնության վրա:

Աղյուսակ 5.9. Առաջնակի հաշմանդամության ցուցանիշները ՀՀ Սյունիքի մարզում

|        | 2006թ. |         | 2007թ. |         | 2008թ. |         |
|--------|--------|---------|--------|---------|--------|---------|
|        | քանակ  | պրոմիլե | քանակ  | պրոմիլե | քանակ  | պրոմիլե |
| Կապան  | 399    | 6.5     | 363    | 5.9     | 317    | 5.1     |
| Գորիս  | 162    | 3.6     | 584    | 12.9    | 406    | 8.8     |
| Սիսիան | 117    | 3.3     | 111    | 3.2     | 122    | 3.5     |
| Մեղրի  | 49     | 4.1     | 25     | 2.0     | 109    | 9.1     |

Աղբյուրը՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն:

301. Չնայած այն հանգամանքի, որ Կապանի տարածաշրջանում գործում են երկու արդյունաբերական հսկաներ, այնուամենայնիվ նկատվում է առաջնակի հաշմանդամության դինամիկայի նվազում: Առաջնակի հաշմանդամության անհանձնատած 2006թ-ի արձանագրվել է Գորիսի և Սիսիանի տարածաշրջաններում:

**Առողջապահական համակարգի գործունեության հիմնական ցուցանիշները**

302. Շուկայական պայմաններում բուժհիմնարկների (հագեցած մեծաքանակ և ուռճացված հզորություններով) պահպանումը բյուջետային ֆինանսավորմամբ անարդյունավետ է և անհնար: Համակարգի ֆինանսական ծախսերի օպտիմալացման և ինքնաֆինանսավորման բաղադրիչի զարգացման նպատակով, սկիզբ դրվեց առողջապահության համակարգի կառուցվածքային բարեփոխումներին:

303. Ներկայումս ՀՀ Սյունիքի մարզպետարանի ենթակայության ներքո գործում են 19 առողջապահական փակ բաժնետիրական ընկերություններ /ՓԲԸ/, այդ թվում՝

- 1) **հիվանդանոցներ – 1** / Ագարակ-25 մահճակալ/
- 2) **բժշկական կենտրոններ – 5** հիվանդանոցային/ Կապան- 105 մահճակալ, Գորիս-110 մահճակալ, Սիսիան-50 մահճակալ, Մեղրի-20 մահճակալ, Քաջարան-20 մահճակալ/ և արտահիվանդանոցային /Կապանի ազգաբն. թիվը-47432, Քաջարանի-9081, Գորիսի 25378, Սիսիանի-20427, Մեղրիի-6743, Ագարակի-5176 / ծառայություններով:
- 3) **մարզային դիսպանսերներ – 1** /նյարդահոգեբուժական-80 մահճակալ/
- 4) **առողջության կենտրոններ – 2** /Տաթև-1969 , Դարբաս -3998/
- 5) **գյուղական բժշկական ամբուլատորիաներ – 2** /Վերիշեն-3842, Անգեղակոթ-3718/
- 6) **առողջության առաջնային պահպանման կենտրոններ – 7** /Նորաշենիկ-3199, Արծվանիկ-1783, Գորայք-2088, Բռնակոթ-3921, Շինուհայր-4633, Տեղ-4663, Խնձորեսկ -4773/
- 7) **մարզային արյան փոխներարկման կայան – 1**

304. Ընդհանուր մահճակալային ֆոնդը կազմում է 410 մահճակալ, սպասարկվող ազգաբնակչությունը - 152824 մարդ, որոնցից 72229 /47.3%/ մարդ բնակվում են գյուղերում:

305. Հարկ է նշել, որ բուժհաստատությունների միավորման և օգտագործվող ռեսուրսների օպտիմալացման արդյունքում զգալիորեն բարելավեց նրանց ֆինանսական վիճակը: Սակայն վերոհիշյալ ինստիտուցիոնալ բնույթի փոփոխությունները բավարար չեն համակարգի լիարժեք վերագործարկման համար:

306. Պոլիկլինիկաներին, առողջության կենտրոններին և գյուղական բժշկական ամբուլատորիաներին կից, գյուղական համայնքներում գործում են 101 բուժ.կետեր:

Աղյուսակ 5.10. ՀՀ Սյունիքի մարզի առողջապահական հիմնարկներում աշխատողների բաշխվածությունը

|  | 2006 թ. | 2007թ. | 2008թ |
|--|---------|--------|-------|
| Առողջապահական հիմնարկներում աշխատում են    | 1402    | 1382   | 1390  |
| բժիշկների թիվը                             | 304     | 296    | 278   |
| համատեղությամբ                             | 42      | 33     | 15    |
| 10 հազ. բնակչի սպասարկող բժիշկների թիվը    | 20      | 19     | 18    |
| 10 հազ. բնակչի սպասարկող բուժքույրերի թիվը | 48      | 48     | 49    |
| Կրտսեր բուժանձնակազմ                       | 736     | 728    | 743   |
| այլ գործունեության անձնակազմ               | 362     | 358    | 369   |

Աղբյուրը՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն:

Աղյուսակ 5.11. Ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության գործունեությունը ՀՀ Սյունիքի մարզում

|  | 2006 թ. | 2007թ. | 2008թ. |
|--|---------|--------|--------|
| Հաճախումների քանակը                              | 428197  | 439962 | 430223 |
| վճարովի հիմունքներով հաճախումների քանակը         | 11112   | 3105   | 2909   |
| դիսպանսեր հսկողության տակ գտնվող հիվանդների թիվը | 22875   | 21749  | 21802  |

Աղբյուրը՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն:

307. Հաճախումների դինամիկան 2008թ. պոլիկլինիկական ծառայության գծով ցույց է տալիս, որ այն 2007թ. համեմատ նվազել է և կազմել 97% /2007-103%/: Այս հանգամանքը բացատրվում է այն պատճառով, որ 2008թ. եղել է հետօպտիմալացման տարի, որի ընթացքում վերակազմակերպվել է հիմնականում առողջության առաջնային օղակը:

308. Տարվա մեջ բնակչության մեկ շնչին ընկնող հաճախումների միջին թիվը գրեթե փոփոխության չի ենթարկվել կազմելով 2006թ.-2.7, իսկ 2007թ. և 2008թ.-2.8:

309. Կատարած տեղամասային հաճախումների տեսակարար կշիռը ներկայացվում է ստորև.

Աղյուսակ 5.12. Տեղամասային հաճախումների տեսակարար կշիռը ՀՀ Սյունիքի մարզում

|                                    | 2006 թ. | 2007թ. | 2008թ. |
|------------------------------------|---------|--------|--------|
| տեղամասային հաճախումների դինամիկան | 43.2%   | 47.8%  | 51.2%  |

Աղբյուրը՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն:

Աղյուսակ 5.13. Գյուղական բնակչությանը ցուցաբերվող բուժկանխարգելիչ օգնության ծավալները ՀՀ Սյունիքի մարզում

|  | 2006 թ. | 2007թ. | 2008թ. |
|--|---------|--------|--------|
| Գյուղական բնակչությանը ցուցաբերվող բուժկանխարգելիչ օգնության ծավալների դինամիկան | 26.2%   | 28.2%  | 37.9%  |

Աղբյուրը՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն:

310. Գյուղական ազգաբնակչությանը ցուցաբերված ամբուլատոր ծառայության 2008թ. աճը պայմանավորված է նույնպես օպտիմալացման գործընթացի հետ, որի ընթացքում ստեղծվել են նոր առողջության առաջնային պահպանման կենտրոններ և որպես արդյունք ամբուլատոր ծառայությունը գյուղական ազգաբնակչության համար դարձել է ավելի մատչելի: Սակայն գյուղական ազգաբնակչության ամբուլատոր սպասարկման մատչելիության ցուցանիշը դեռ ցածր է, քանի որ մարզի գյուղերում և քաղաքներում բնակվողների թիվը գրեթե չի տարբերվում իրարից, հետևաբար

բուժապասարկման ցուցանիշները՝ ըստ բնակեցման վայրի նույնպես չպետք է տարբերվեն իրարից:

311. Պրոֆ. պատվաստումներում ընդգրկված երեխաների թիվը 2008թ. աճել է և կազմել է 27195, որը կազմում է ընդգրկվածության 87%-ը:

312. Առաջնակի բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողով /ԲՍՓՀ/ ուղեգրված հիվանդների թիվը 2008թ. կազմել է 954 մարդ:

313. Ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծրագրի շրջանակներում 2008թ. 6 և 12 տարեկան 3690 երեխաներին ցուցաբերվել է մասնագիտացված ստոմատոլոգիական ծառայություններ: Ձննվածներից բուժման կարիք ունեցող 2350 երեխաներից սանացիայի ենթարկվել են 881 երեխա:

314. Բնակչության բուժկանխարգելիչ օգնություն ցուցաբերող հաստատությունների շարքում հիվանդանոցները միշտ զբաղեցրել են իրենց ուրույն տեղը: Հիվանդանոցային բուժօգնությամբ բնակչության ապահովվածության գնահատման արժեքավոր ցուցանիշն է բնակչության ընդգրկումը ստացիոնար օգնությամբ: Օպտիմալացման արդյունքում որոշ ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություններ միավորվեցին հիվանդանոցներին, ուժեղացավ հիվանդանոց-պոլիկլինիկա կապը և որպես արդյունք բնակչության ընդգրկումը ստացիոնար օգնությամբ ցուցանիշի աճի միտում նկատվեց /Աղյուսակ 5.14/:


Աղյուսակ 5.14. Հիվանդանոցային ծառայության գործունեությունը ՀՀ Սյունիքի մարզում


պրոմիլե

|   | 2006 թ. | 2007թ. | 2008թ. |
|---|---------|--------|--------|
| Բնակչության ընդգրկումը ստացիոնար օգնությամբ | 4.7     | 4.8    | 5.0    |

Աղբյուրը՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն:

Գծապատկեր 5.3. Հիվանդանոցային ծառայության գործունեությունը ՀՀ Սյունիքի մարզում





315. Գծապատկերը ցույց է տալիս, որ վճարովի հիմունքներով հոսպիտալիզացիայի ենթարկված հիվանդների թիվը նշված տարիներին գրեթե չի ենթարկվել դինամիկ փոփոխությունների, ինչը խոսում է այն մասին, որ անհրաժեշտ է ընդլայնել հիվանդանոցային ծառայությունների տեսականին, որը կհանդիսանա լուրջ խթան լրացուցիչ /արտաբյուջետային/ ֆինանսական միջոցների ներգրավման գործընթացում:

316. Կատարված վիրահատությունների թիվը 2006թ կազմել են 1468, 2007թ` 1626, 2008թ` 2023, որից անհետաձգելի վիրահատություններ` 2006թ.` 809, 2007թ.` 883, 2008թ.` 1231, պլանային վիրահատություններ` 2006թ.` 659, 2007թ.` 743, 2008թ.` 792:

317. Վիրաբուժական ակտիվության զգալի աճը, որը տեղի ունեցավ 2008թ., պայմանավորված է նույնպես օպտիալացման արդյունքում ներմարզային բուժհաստատությունների միջև հորիզոնական կապերի ամրապնդմամբ: Սակայն որակական առումով պլանային և անհետաձգելի վիրահատությունների հարաբերակցությունը մնում է անփոփոխ, ինչը պահանջում է ընդլայնել ծառայությունների տեսականին ի օգուտ պլանայինի` սրանով իսկ ապահովելով լրացուցիչ արտաբյուջետային հոսքեր:

### Ֆինանսական հոսքեր

318. Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջապահական համակարգի ֆինանսավորման հաստատված ծավալը 2008թ. կազմել է 1287.2 մլն. դրամ (2007թ.-ին 1119.1 մլն.դրամ), ընդունված կատարողականը կազմել է 1287.2 մլն դրամ (2007թ.-ին 1096.8 մլն.դրամ), այդ թվում հիվանդանոցային բուժօգնության գծով` 513.1 մլն.դրամ, ամբուլատոր-պոլիկլինիկական բուժ.օգնության գծով` 774.1 մլն. դրամ:

319. Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջապահական համակարգի ֆինանսավորումը իրականացվել է 100 % -ով:

320. 2008թ-ին վճարովի հիմունքներով ծառայություններից մուտքագրվել է 138.6 մլն. դրամ (2007թ-ին 146.0 մլն դրամ):

321. 2008թ. ընթացքում աշխատավարձի պարտք չի գոյացվել:

322. Մարզային ենթակայության բուժհաստատությունները 2008թ-ին հագեցվել են 150.7 մլն.դրամի նոր բուժսարքավորումներով, գործիքներով և պարագաներով (2007թ.-ին 218 մլն.դրամ): ՀՀ առողջապահության նախարարության կողմից մարզի

բուժհաստատություններին տրամադրվել են 130.6 մլն. դրամ ընդհանուր գումարի բուժսարքավորումներ: Բարեգործական, միջազգային կազմակերպությունների և ՀՀ ԱՆ ԾԻԳ-ի կողմից բուժհաստատություններին տրամադրվել է 13.6 մլն. դրամ ընդհանուր գումարի բուժսարքավորումներ և պարագաներ: Սեփական միջոցների հաշվին ձեռք են բերվել 12.7 մլն. դրամի բուժսարքավորումներ և պարագաներ:

323. Մարզպետարանի կողմից կազմակերպվել է անվճար և արտոնյալ պայմաններով դեղամիջոցներ ստանալու իրավունք ունեցող անձանց դեղերով ապահովման գործընթացը: Այդ նպատակով ՀՀ առողջապահության նախարարությունից կենտրոնացված կարգով ստացվել է 59.7 մլն. դրամ գումարի դեղորայք: Մարզի ամբուլատոր-պոլիկլինիկական, դիսպանսերային բուժօգնություն իրականացնող բուժհաստատությունների միջոցով անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղորայք ձեռքբերելու իրավունք ունեցող անձանց հատկացվել է 48.6 մլն. դրամ գումարի դեղորայք: Մարդասիրական օգնությամբ ստացվել է 10.1 մլն. դրամի դեղորայք:

Աղյուսակ 5.15. ՀՀ Սյունիքի մարզի բուժհաստատություններում իրականացված շինարարական - վերանորոգման աշխատանքների ծավալները

|   | մլն. դրամ |        |        |
|---|-----------|--------|--------|
|   | 2006թ.    | 2007թ. | 2008թ. |
| Պետական պատվեր  | 971.4     | 1119.1 | 1287.2 |
| Վճարովի ծառայություն  | 48.5      | 146.0  | 138.6  |
| Բուժ. սարքավորումներով, գործիքներով և պարագաներով հագեցվածություն | 178.1     | 218.0  | 150.7  |
| Դեղորայքի ձեռքբերում ԱՆ   | 23.8      | 49.5   | 59.7   |
| Դեղորայք – մարդասիրական օգնությամբ                                | 13.3      | 8.1    | 10.1   |
| Վերանորոգումներ   | 57.9      | 53.3   | 5.8    |

Աղբյուրը՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն:

### **Իրականացված աշխատանքները**

324. Առողջապահական բնագավառում պետական քաղաքականության իրականացման գործընթաց

- 1) Ի կատարումն ՀՀ առողջապահության նախարարի 2006թ. սեպտեմբերի 22 «Ֆիզիկական դաստիարակության համալիր ծրագրի համաձայն հանրակրթական հաստատությունների բոլոր աշակերտներին ուսումնական տարվա սկզբին բժշկական զննման ենթարկելու և արդյունքում հիմնական, նախապատրաստական և հատուկ խմբերի բաժանման չափորոշիչը հաստատելու մասին» N1075-Ն հրամանի մարզում գտնվող բոլոր հանրակրթական հաստատություններում զննման է ենթարկվել աշակերտները: Դպրոցականների ամենամյա ընթացիկ բուժկանխարգելիչ ստուգումների արդյունքում հետազոտվել են 16836 աշակերտներ, հիմնական խմբի մեջ են ընդգրկվել 16121-ը - 95.8%, նախապատրաստական խմբի մեջ 551 –ը - 3.3%, հատուկ խմբի մեջ 164 - 0.9%
- 2) Համաձայն ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված պետության կողմից անվճար բուժօգնության չափորոշիչի մարզի 15 տարեկան 1607 աղջիկներից ֆիզիկական զարգացման և սեռական հասունացման գնահատման նպատակով կանխարգելիչ զննման են ենթարկվել 759-ը /ընդգրկվածությունը կազմում է 47.2 %/: Չննվածներից 46-ը /2.8% / աղջիկների մոտ բացահայտվել են շեղումներ և նրանք ենթարկվել են նեղ մասնագիտական



- խորհրդատվության և լաբորատոր գործիքային ախտորոշիչ հետազոտությունների
- 3) Կազմակերպվել է կրծքագեղձի քաղցկեղի վաղ հայտնաբերման նպատակով մարզի երեք տարածաշրջանում սկրինինգ, ընդգրկելով գյուղական ազգաբնակչության, ինչպես նաև քաղաքային համայնքների կրթօջախներում աշխատող 30-65 տարեկան 2189 կանանց, որի արդյունքում մայրաքաղաքից ժամանած նեղ մասնագետների կողմից հետազոտման ենթարկվեցին 219 կին, հայտնաբերվեցին՝ 8 քաղցկեղի դեպք /6-ը վաղ շրջանում/, 151-ը նախաքաղցկեղային և ֆոնային հիվանդություններ: ՀՀ մարզային կազմակերպության աջակցությամբ 3 կին ուղեգրվեցին Երևան նեղ մասնագիտական բուժում ստանալու նպատակով
  - 4) Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 30.05.2008թ. N761-ի հրամանի մարզում ավարտվել է հղիության ընթացքի և ծննդաբերության հետ կապված բժշկական օգնության և սպասարկման անվճար իրականացման և «Ծննդօգնության պետական հավաստագրերի» ներդնման գործընթացը
  - 5) Սկսվել է մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտի, երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտի, նորածնի փոխանակման քարտի և հետծննդային պատրոնաժի թերթիկի նոր ձևերի ներդրումը
  - 6) ՀՀ ԱՆ առողջապահության ազգային ինստիտուտի կողմից կազմակերպվել են արտագնա կատարելագործման դասընթացներ Սյունիքի մարզի միջին բուժանձնակազմի համար, 2006թ. – 32 լաբորանտների համար, 2008թ. – 222 միջին բուժաշխատողների համար:

Միջազգային կազմակերպությունների գործունեությունը

325. ՀՀ Սյունիքի մարզում գործող բարեգործական և միջազգային կազմակերպությունների գործունեությունը էական արդյունք է տվել առողջապահության բնագավառում, մասնավորապես՝

- 1) «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրանը ՀԱՆ-ի և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Առաջնային և Ակնաբուժական Ծառայությունների Դաշինք» ծրագրի շրջանակներում 2008թ. օգոստոսի 7-ից մինչև սեպտեմբերի 5-ը համագործակցելով Ս.Մալայանի անվան Ակնաբուժական կենտրոնի և Քանաքեռ-Զեյթունի բժշկական կենտրոնի ակնաբուժական բաժանմունքի հետ, հետազոտել է 2202 բնակիչ, տրամադրել 791 ակնոց: Բոլոր ակնոցների շրջանակներն ու ապակիները տրամադրել է Հայկական Միջազգային Օֆթալմիկ Միությունը /ՐՍՕՄ/: ՀԱՆ-ի շարժական հիվանդանոցում «Լույս հայի աչքերին» ծրագրի շրջանակներում կատարվել է ընդամենը 133 վիրահատություն /որոնցից 83-ը կատարախտի դեպքեր են/, արհեստական ոսպնյակ է դրվել 117 վիրահատության ժամանակ: Կատարվել է նաև 35 լազերային բուժում: Ընհանուր հաշվով մարզում 3 հիվանդին արվել է երկու աչքի վիրահատություն, 28 հիվանդին արվել է, և վիրահատություն, և լազերային բուժում, իսկ 35 հիվանդ ստացել է երկու աչքի լազերային բուժում: 15 հիվանդ, որոնց հնարավոր չէր վիրահատել աչքի շարժական հիվանդանոցում տրվել է ուղեգիր՝ անվճար հետազոտման և վիրահատության համար
- 2) Ինունականխարգելման ազգային ծրագրի շրջանակներում մարզում պատվաստվել են 1 տարեկանից մինչև 5 տարեկան /շուրջ 98%/ երեխաներ՝ անկախ պատվաստումային կարգավիճակից

- 3) Եվրոպական ուռուլոգների ասոցիացիայի կողմից եվրոպական երկրների հանրության համար կազմակերպված միջոցառմանը միանալու նպատակով 2008 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև սեպտեմբերի 25-ը մարզում անց է կացվել «Տղամարդու առողջության» բաց դռների օր՝ իրականացնելով բժիշկ – ուռուլոգի խորհրդատվություն
- 4) IRD միջազգային կազմակերպությունը կնքել է պայմանագրեր մարզի բժշկական կենտրոններին անհրաժեշտ դեղորայքով ապահովելու համար
- 5) Մոր և մանկան առողջության պահպանման ծրագրի շրջանակներում իր ակտիվ և արդյունավետ գործունեությունն է ծավալել ՆՕՎԱ ծրագիրը, որի շրջանակներում Սիսիանի տարածաշրջանում վերանորոգվել են 11 ԲՄԿ-ներ, Սիսիանի բժշկական կենտրոնի ծննդատունը: Բազմաթիվ դասընթացներ են անցկացվել մոր և մանկան առողջության պահպանման գործին առընչվող բոլոր մասնագետների համար
- 6) «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպության կողմից իրականացվող առաջնային բժշկական օգնության ծրագիրը մարզի հեռավոր համայնքներում տրամադրում է ախտորոշիչ, բուժական և կանխարգելիչ ծառայություններ:
- 7) «Ապավեն համայնքներին» ԲՀԿ-ի կողմից շարունակվում է մարզի 53 գյուղական համայնքներում «Համայնքների առողջության առաջնային պահպանում» ծրագրի իրականացումը
- 8) «ԱԿՈՒՐԱ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2008-2013 թթ. ընթացքում իրականացվելու է «Եպիլեպսիայով հիվանդ երեխաների արտագնա զննում, գործիքային հետազոտություն, խորհրդատվություն և բուժման օպտիմալացում» ծրագիր:

326. Ընտանեկան բժշկության համակարգի ներդրումը մեծապես նպաստեց գյուղական համայնքների բուժսպասարկման մատչելիության բարձրացմանը: Մարզում ընտանեկան բժշկության կայացման համար, ըստ բնակչության թվի, անհրաժեշտ է ունենալ առնվազն 75 ընտանեկան բժիշկ: 46 բժիշկներ և 75 բուժքույրեր արդեն վերապատրաստվել են: Վերապատրաստման ընթացքում են 12 բժիշկ և 12 բուժքույր:

327. «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացված «Առողջապահության ֆինանսավորման և առողջության առաջնային պահպանման զարգացման» ծրագրով 1998-2003թթ ընթացքում կառուցվել են Գեղի, Վերիշեն, Գորայք, Աշոտավան, Շիկահող, Նորաշենիկ, Լեհվազ, Շվանիձոր, Լիճք, Կարճևան համայնքների ամբուլատորիաները, Սիսիանի պոլիկլինիկայի, Գորիսի Ավանգարդ, Վանքիտափ և Կապանի Բաղաբերդ, Լեռնագործներ, Ձորք ու Շինարարներ թաղամասերի ընտանեկան բժշկի գրասենյակները, որոնք հագեցվել են բուժսարքավորումներով և կահույքով: Շիկահողի, Նորաշենիկի, Գեղիի, Գորայքի, Վերիշենի ամբուլատորիաներին հատկացվել են բուժօգնության մեքենաներ: Այդպիսի մեքենաներ ստացել են նաև Սիսիանի, Կապանի, Գորիսի, Մեղրու ու Ագարակի պոլիկլինիկաները: Կապանի և Գորիսի պոլիկլինիկաներին հատկացվել է ախտորոշիչ սարքավորումների հավաքածու: Սիսիանի, Գորիսի, Կապանի և Մեղրու հիգիենիկ հակահամաճարակային կայանների բակտերիոլոգիական լաբորատորիաներին հատկացվել են լաբորատոր սարքավորումներ: Կապանի ՀՀԿ-ին հատկացվել է շարժական լաբորատորիա բուժօգնության մեքենա իր սարքավորումներով:

328. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Առողջապահության համակարգի արդիականացում» վարկային ծրագրով կատարվել են վերանորոգման աշխատանքներ Կապան քաղաքի Բաղաբերդ թաղամասի ԸԲ գրասենյակում և Կապանի պետական քոլեջում, որոնք ընտրվել են որպես կրթական կենտրոններ: Սյունիքի մարզի կրթական կենտրոնները հագեցվել են ուսումնական կահույքով, բժշկական

սարքավորումներով, բժշկական պարագաներով, գրասենյակային սարքավորումներով և հնտությունների բարելավման լաբորատորիաներով: Սյունիքի մարզի Դարբասի, Տաթևի առողջության կենտրոնները, Շինուհայրի, Խնձորեսկի, Արծվանիկի, Բռնակոթի, Տեղի առողջության առաջնային պահպանման կենտրոնները և Անգեղակոթի ամբուլատորիան հազեցվել են բժշկական սրաքավորումներով, բժշկական կահույքով և բժշկական պարագաներով: Սյունիքի առողջության կենտրոններին և առանձին իրավական կարգավիճակ ունեցող ամբուլատորիաներին տրամադրել է համակարգչային սրաքավորումների 6 հավաքածու: Ընդհանուր առմամբ վարկային ծրագրերով Սյունիքի մարզում առ այսօր կատարվել է 1.234.615 ԱՄՆ դոլարի չափով ներդրում:

329. 2009 թվականի ընթացքում վարկային ծրագրի շրջանակներում նախատեսվում է կառուցել առողջության առաջնային պահպանման կենտրոն Տեղ համայնքում և վերանորոգել Տաթևի առողջության կենտրոնը՝ իրականացնելով ընդհանուր առմամբ շուրջ 220.000 ԱՄՆ դոլարի ներդրումներ:

330. 2009 թվականին նախատեսվում է նաև հիմնանորոգել Գորիսի բժշկական կենտրոնի հիվանդանոցի մասնաշենքը, ինչպես նաև հիվանդանոցին կից կառուցել նոր եռահարկ շինություն՝ ընդունարանի ծառայությունների, ծնարանային և վիրահատական բլոկերի տեղակայման նպատակով: Շինարարական աշխատանքներին ուղղված ներդրումները կկազմեն շուրջ 1.913.000 ԱՄՆ դոլար: Աշխատանքների ընթացքում հիվանդանոցային ծառայությունները կտեղափոխվեն Գորիսի բժշկական կենտրոնի պոլիկլինիկայի շենք:

331. Հիմնանորոգման աշխատանքներից բացի կիրականացվի նաև բժշկական կենտրոնի հազեցում բժշկական սարքավորումներով և կահույքով՝ իրականացնելով շուրջ 571.000 ԱՄՆ դոլարին համարժեք ներդրումներ:

332. Գորիս քաղաքում 2009 թվականին կսկսվի ինվազիվ սրտաբանական կենտրոնի շենքի շինարարությունը /413 մլն դրամ/, որը կֆինանսավորվի դոնոր կազմակերպությունների կողմից:

333. Միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ իրականացվել են բազմաթիվ կրթական ծրագրեր, այդ թվում

- 1) 2008թ-ի հունիսից ՏԱԾ-ի կենտրոնական գրասենյակում Գլոբալ հիմնադրամի կողմից «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային համաձայնագրով կազմակերպվել է կրթական դասընթացներ բժիշկների և բուժականանկաբարձական կետերում աշխատող բուժքույրերի համար: Ծրագիրը շարունակական է, մարզի 55 բուժքույրեր արդեն իսկ անցել են տվյալ դասընթացները
- 2) ՀՀ Կառավարության 2007 թվականի մարտի 1-ի N398-Ն որոշմամբ հաստատված ՀՀ-ում ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրի շրջանակներում ՄԻԱՎ-ի նկատմամբ կամավոր խորհրդատվություն և հետազոտություն իրականացնող մասնագետները 2008թ.. հոկտեմբերի 07-08-ը և 09-10-ը անցել են «Նախա և հետքեստային խորհրդատվության դերը ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի կանխարգելման գործում» թեմայով սեմինար-վարժանքներ՝ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի /ԿՀԿ/ մասնագետների կողմից: Սեմինար-վարժանքներին մասնակցել են մարզի բուժհաստատություններում աշխատող 20-ական մասնագետներ /թերապևտներ, ընտանեկան բժիշկներ, ֆթիզիատորներ, մաշկավեներաբաններ, մանկաբարձ-գինեկոլոգներ, մանկաբույժներ/: Սեմինար-վարժանքներ են անցնել կացվել Կապանում և Գորիսում

- 3) 2008 թվականին Ջինիշյան Հիշատակի Հիմնադրամը մարզում շարունակում է «ՀՀ մարզերում վերականգնողական բուժման կայունության ապահովում – 2 փուլ» առողջապահական ծրագիրը
- 4) «Առողջապահական կենտրոն» համազգային նախագծի կողմից մարզում կազմակերպվեց սեմինար՝ «Ոսկրածուծի դոնորների Հայկական ռեեստրի և ցողունային բջիջների փոխպատվաստում» թեմայով
- 5) 2008 թվականին իրականացվել է առողջության առաջնային պահպանման ոլորտում բուժօգնության որակի ապահովման համակարգի ներդրում: Ծրագրի շրջանակներում ԱԱՊԲ ծրագիրը սույն թվականի նոյեմբերի 18-ից 21-ը ՀՀ առողջապահության նախարարության համաձայնությամբ անց է կացրել «Բուժօգնության որակի ապահովումը Հայաստանի Հանրապետության առողջության առաջնային պահպանման ոլորտում» ուսուցման դասընթացը
- 6) ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության Հայաստանյան առաքելությունը, Կրթության զարգացման ակադեմիան ԱԱՊԲ ծրագրի շրջանակներում մարզի բուժական անկախ բարձրակարգ կետերի բուժքույրերի համար դեկտեմբեր ամսում իրականացրեց մեկօրյա տևողությամբ արյան ճնշման չափման դասընթացներ:

334. Տարիների ընթացքում մարզի առողջապահական համակարգի առջև կուտակվել են նաև այլ կարևոր խնդիրներ, որոնց լուծումից է այսօր կախված ինչպես առաջնային, այնպես էլ հիվանդանոցային բուժսպասարկման որակի և մատչելիության բարձրացումը:

Ստորև ներկայացվում են այդ **խնդիրները**:

- 1) Բժիշկ մասնագետների անհրաժեշտություն.

335. Օպտիմալացման հետևանքով ՀՀ Սյունիքի մարզի առողջապահության համակարգի բուժանձնակազմի թվաքանակը, թե ամբուլատոր-պոլիկլինիկական և թե հիվանդանոցային համակարգում, կրճատվել է: Այնուամենայնիվ, այսօր մարզի բուժօգնության ոլորտում նոր մասնագետների պակաս: Հիմնականում այսօր բուժօգնության ոլորտում, հատկապես առաջնային օղակում, կարիք է զգացվում ընդհանուր պրակտիկայի և վերարտադրողական առողջության բնագավառի մասնագետների (թերապևտի, մանկաբույժի, գինեկոլոգի): Հիվանդանոցային համակարգում զգացվում է վիրահատող բժշկական կադրերի բացակայություն /վիրաբուժ, մանկաբարձ-գինեկոլոգ, անեսթեզիոլոգ ([Հավելված 5.5](#), [Հավելված 5.7](#)): Վերոնշյալ թափուր պաշտոնները համալրելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարի 2008թ. մայիսի 6-ի թիվ 610-Ա հրամանով /համաձայնեցված ՀՀ ֆինանսների նախարարի 2008թ. մայիսի 29-ի թիվ 413-Ա հրամանով/ հաստատված 2008թվականից գործող հրատապ պահանջարկ ներկայացնող բժիշկ մասնագետների ՀՀ մարզեր ժամանակավոր ուղեգրման գործընթացին համապատասխան ՀՀ ԱՆ-ն պարբերաբար նեղ մասնագետների ժամանակավոր ուղեգրումներ է կազմակերպում ՀՀ Սյունիքի մարզ:

- 2) Տեղամասային բժիշկների գիտելիքների և մասնագիտական հմտությունների մակարդակի շարունակական բարձրացում

336. Ընտանեկան բժշկության համակարգի դանդաղ ներդրումը առավել բացասաբար է ազդում գյուղական համայնքների վրա, քանի որ գյուղերի բնակչությունն է ստիպված

լինում հասնել շրջանային պոլիկլինիկա կամ հիվանդանոց, եթե տեղում չի ստանում բավարար բուժօգնություն:

337. Մարզում ընտանեկան բժշկության վերջնական կայացման համար, ըստ բնակչության թվի, անհրաժեշտ է ունենալ ևս 65 ընտանեկան բժիշկ: Հետևաբար, այսօր խիստ անհրաժեշտ է վերապատրաստել մարզի ամբուլատոր համակարգում աշխատող տեղամասային թերապևտներին և մանկաբույժներին:

### 3) Անբավարար նյութատեխնիկական բազա

338. Մարզի ավելի քան 35 գյուղական համայնքների բուժկա-մանկաբարձական կետեր կարիք ունեն մասնակի կամ հիմնական նորոգման:

339. Կապիտալ նորոգման, վերակառուցման և լոկալ ջեռուցման կաթսայատների կարիք ունեն մարզի բոլոր տարածաշրջանների բժշկական կենտրոնների մասնաշենքերը:

340. Շտապ օգնության համակարգը անհրաժեշտ է համալրել ժամանակակից բուժ.սարքավորումներով և կապի միջոցներով հագեցված սանիտարական տրանսպորտով:

341. Գյուղական ամբուլատորիաներում տրանսպորտային միջոցների բցակայությունը /4 ամբուլատորիաների մեքենաներն են շահագործվում, դրանք էլ 10-12 տարվա վաղեմություն ունեցող մեքենաներ են/ հնարավորություն չեն տալիս ամբուլատորիայի բժշկին պատշաճ իրականացնելու իր գործառույթները:

342. Բոլոր բժշկական կենտրոնները, ԱԱՊԿ-ները կարիք ունեն բժշկական սարքավորումներով հագեցման, համապատասխան պետական պատվերի շրջանակներում իրենց վերապահված ծավալների իրականացման համար:

343. Մարզում պրոֆեսիոնալ /մասնագիտական/ հիվանդությունների կանխարգելման նպատակով անհրաժեշտ է բարձրացնել լեռնահանքային համալիրի 3 խոշոր կազմակերպություններում վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցությանը ենթարկվող աշխատողների պարտադիր պարբերական բժշկական զննության արդյունավետությունը:

### 5.3.2 Առողջապահության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը

344. ՀՀ կառավարության կողմից հաստատված առողջապահության ոլորտում ԿԶԾ-ի կատարման հանրապետական միջոցառումներն անմիջական ազդեցություն կունենան Սյունիքի մարզի վրա: Մասնավորապես, կարևորվում են ընտանեկան բժշկության զարգացման, համակարգի ֆինանսավորման մեխանիզմների բարելավման, գյուղական բնակչության բուժօգնության բարելավման, հիվանդանոցային համակարգում պետական միջոցների արդյունավետ օգտագործման, մոր և մանկան առողջության պահպանման, վերարտադրողական առողջության բարելավման, ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի, բրուցելյոզի, տարափոխիկ հիվանդությունների կանխարգելման ուղղություններն ու նրանց համապատասխան նշակված միջոցառումները: Այդ միջոցառումները տարածաշրջանային մակարդակով լրացնելու և հետևաբար, ուժեղացնելու համար նպատակահարմար է նշակել առողջապահության համակարգի զարգացման միջոցառումներ՝ ուշադրություն դարձնելով մարզային յուրահատկություններին:

345. Հաշվի առնելով մարզի առողջապահության ոլորտի ներկա իրավիճակը, մարզում բնակչության առողջական վիճակի բարելավման համար զարգացման գերակա նպատակ է համարվում բուժօժանայությունների որակի և մատչելիության բարձրացումը: Սույն նպատակի իրագործման ռազմավարությունը ներառում է առողջության առաջնային պահպանման մակարդակի բարելավում, առաջնային և երկրորդային

մասնագիտական բուժօգնություն ցուցաբերող հաստատությունների նյութատեխնիկական բազայի բարելավում, կադրերի մասնագիտացում և շարունակական վերապատրաստում, շտապ օգնության ծառայության ուժեղացում, ախտաբանաանատոմիական ծառայության բարեփոխում:

346. Անհրաժեշտ է նշել, որ ոչ պակաս դեր ունի առողջապահական համակարգի մատուցվող ծառայությունների որակի բարձրացման մեջ նաև համակարգի կառավարման բարելավմանն ուղղված բարեփոխումները, այն է՝ առողջապահական մեներջման մակարդակի բարձրացում, բժշկական ծառայությունների մատչելիության բարձրացում /պայթար ոչ պաշտոնական վարձավճարների դեմ, հեռավոր շրջանների բուժսպասարկման մատչելիության բարձրացում/, բուժանձնակազմի սպասարկման մակարդակի բարձրացում /անձնակազմի աշխատավարձի բարձրացում, կադրային և տեխնիկական ռեսուրսների ճիշտ վերադասավորում/:

347. Առողջապահության բնագավառի կարևոր խնդիրներից է մարզի երբեմնի առողջարանների վերագործարկումը կամ նոր առողջարանների հիմնումը: Այս առումով կարևորվում է հատկապես Տաթևի առողջարարական համալիրի և նրա շրջակայքի պատմամշակութային օբյեկտների հիմնանորոգումը (Սատանի կամուրջ և այլն), որը նախատեսվում է իրագործել ծրագրավորվող տարիների ընթացքում: համալիրի հիմնանորոգումը կունենա և առողջապահական և մշակութային և զբոսաշրջային նշանակություն (պահանջվող գումարը՝ շուրջ 2 մլրդ դրամ):

348. Այս ամենը կնպաստի հասնել բժշկական արդյունավետության բարձր մակարդակի: Ինչ վերաբերվում է սոցիալական արդյունավետությանը, հատկապես հերիատրիկ ծառայությունների գծով, ապա այս բնագավառում անհրաժեշտ է ձեռնարկել լուրջ միջոցառումներ թե ծառայությունների ներդրման և թե ֆինանսական աղբյուրների ներգրավման գործընթացում, քանի որ խնդիրը կրում է միջգերատեսչական բնույթ: Առողջապահության ոլորտի զարգացման միջոցառումների ծրագիրը և նրա իրագործման համար պահանջվող ֆինանսական ռեսուրսների գնահատումը, ներկայացված է [Հավելված 5.6](#)-ում, առողջապահական հաստատություններին անհրաժեշտ սարքավորումների պահանջը՝ [Հավելված 5.8](#)-ում, ֆինանսավորումը՝ [Հավելված 5.9](#)-ում:

## 5.4 Սոցիալական պաշտպանություն

### 5.4.1. Սոցիալական պաշտպանության ոլորտի իրավիճակի վերլուծություն

349. Ազատական տնտեսակարգին անցնելու շրջանում Հայաստանում տեղի ունեցած տնտեսական, քաղաքական և սոցիալական վերափոխումները ավելի խորը ազդեցություն են թողել ՀՀ Սյունիքի մարզի վրա, հաշվի առնելով մարզի առանձնահատկությունները ( աշխարհագրական դիրքը, բնակչության թվաքանակը, ժողովրդագրությունը, ուրբանիզացիան, զբաղվածությունը և այլն): Վերոհիշյալ պայմաններից ելնելով ՀՀ Սյունիքի մարզի բնակչության կազմում արդեն իսկ մեծ թիվ պետք է կազմեն ռիսկային խմբերը:

350. Աղքատության տարածքային ցուցանիշների հետազոտությունների տվյալներով ամենածանր վիճակում գտնվում են հատկապես փոքր և միջին քաղաքները: Երևույթի բացատրությունը բավական պարզ է, չօգտվելով հողի սեփականաշնորհումից և կորցնելով պետական խոշոր ձեռնարկությունների դուստր մասնաճյուղերում իրենց աշխատատեղերը, փոքր քաղաքների բնակչությունը հայտնվեց ամենածայրահեղ աղքատության վիճակում: Այս առումով առանձնանում է ՀՀ Սյունիքի մարզը, որովհետև մարզի բնակչության 65,7տոկոսը կենտրոնացված է 7 քաղաքային համայնքներում:

Աշխարհագրական դիրքի առումով հիմնախնդիրները դրսևորվում են առավել ընդգրկված սրությամբ, քանի որ այն հանրապետության ամենահեռավոր մարզն է:

351. Կատարված բոլոր հետազոտությունների տվյալներով աղքատության հակվածության ամենաբարձր մակարդակը արձանագրվում է աղետի, լեռնային և սահմանամերձ գոտիներում, ինչպես նաև փոքր գյուղական համայնքներում: Աղքատության կրճատումը այս վայրերում ավելի դանդաղ է ընթանում, քան հանրապետության այլ բնակավայրերում: Փաստորեն, որքան փոքր է համայնքը, այնքան մեծ է այնտեղ ռիսկային բնակչության տեսակարար կշիռը և որքան մեծ է փոքր համայնքների տեսակարար կշիռը մարզի համայնքների ընդհանուր թվում, այնքան բարձր է ռիսկային բնակչության միջին մակարդակը մարզում:

352. ՀՀ Սյունիքի մարզի 135 բնակավայրերից 105-ը սահմանամերձ են, լեռնային և բարձր լեռնային:

353. Պատահական չէ, որ խոցելի սոցիալական կազմ ունեցող տ/տ-ներում ապրող գյուղական բնակչության տեսակարար կշիռն ամենախոցելին ՀՀ Սյունիքի մարզն է ու Գեղարքունիքի մարզը (տես աղյուսակ 5.16.):

Աղյուսակ 5.16. ՀՀ սոցիալական հնարավորություններից զրկվածության բաղադրիչի խոցելիության համաթիվը (V) ՀՀ մարզերում

|                                    | երեք և ավելի երեխա(0-15 տարեկան) պարունակող տ/տ-ների անդամներ,% | Միայնակ կամ միքանի ծերերից(65 և ավելի տարեկան) կազմված տ/տ-ների անդամներ% | Աշխատանքային տարիքի տղամարդ չունեցող /տ-ների անդամներ% | խոցելի սոցիալական կազմ ունեցող տ/տ-ներում ապրող գյուղական բնակչության տեսակարար կշիռը % |
|------------------------------------|---|---|--|---|
|                                    | V1  | V2  | V3   | V=1/3x(V1+ V2+ V3)  |
| Արագածոտն                          | 23.5  | 8.2   | 16.8   | 16.2  |
| Կոտայք                             | 27.0  | 5.0   | 10.0   | 14.0  |
| Գեղարքունիք                        | 27.9  | 8.1   | 17.4   | 17.8  |
| Տավուշ                             | 10.1  | 13.9  | 23.5   | 15.8  |
| Լոռի                               | 13.6  | 10.9  | 23.8   | 16.1  |
| Շիրակ                              | 10.8  | 10.3  | 21.7   | 14.3  |
| Արարատ                             | 13.7  | 7.8   | 19.4   | 13.6  |
| Արմավիր                            | 17.6  | 8.8   | 18.9   | 15.1  |
| Սյունիք                            | 18.9  | 18.2  | 30.5   | 22.5  |
| Վայոց ձոր                          | 18.0  | 7.4   | 14.9   | 13.4  |
| Ընդամենը ՀՀ գյուղական բնակչություն | 18.4  | 9.2   | 18.8   | 15.5  |

Աղբյուրը՝ Հայաստանի սոցիալական միտումները: Գյուղական աղքատությունը ՀՀ մարզերում: Տեղեկատվական-վերլուծական պարբերական: ՄԱԿԶԾ – համար 6, էջ 7

354. Հնարավորություններից զրկվածության համաթիվը (ՀԶՀ) խոցելիության ենթաբաղադրիչի հաշվարկները վկայում են, որ այս տեսանկյունից ամենախոցելին Սյունիքի ու Գեղարքունիքի գյուղական բնակչությունն են: Ըստ որում, եթե Գեղարքունիքում դրա պատճառը բազմազավակ ընտանիքների մեծ տեսակարար կշիռն է, ապա Սյունիքում՝ բնակչության ծերացումը:

355. Ներկա պայմաններում անհրաժեշտ է, որպեսզի «ՀՀ սահմանամերձ տարածաշրջանների զարգացման համալիր ծրագրում» արտացոլված կարևորագույն հիմնախնդիրները և միջոցառումների իրագործումը ետին պլան չմղվի, կրի շարունակական կատարելագործման բնույթ և հաշվի առնվի նաև տարածքային առանձնահատկությունները:

356. Մարզը առանձնանում է նաև սոցիալական պաշտպանվածության առավել կարիք ունեցող՝ այսպես կոչված բնակչության **խոցելի խմբերի** բազմազանությամբ: Դրանք են.

- 1) Գործազուրկներն ու ցածր աշխատավարձով աշխատողները
- 2) Փախստականները ու ժամանակավոր կացարաններում բնակվողները
- 3) Թոշակառուներն ու հաշմանդամները (հատկապես միայնակ)
- 4) Բազմանդամ, հատկապես բազմազավակ ընտանիքների անդամները:

### **Զբաղվածության ոլորտի իրավիճակի վերլուծություն**

357. Հայաստանում աշխատանքի շուկայի ձևավորման վրա ազդող գործոններն են՝

358. Աշխատանքի շուկան՝ դա առաջարկի և պահանջարկի հասարակական հարաբերությունների համակարգն է, որի միջոցով կարգավորվում են գործատուների և վարձու աշխատողների հարաբերությունները, այդ թվում, աշխատանքի գինը և աշխատանքային պայմանները, աշխատուժի և աշխատատեղերի թվաքանակի հարաբերությունը: Աշխատանքի շուկայի ձևավորման վրա Սյունիքում ազդեցություն են գործել այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ վատթարացող ժողովրդագրական իրավիճակը, պատերազմի, շրջափակման հետևանքով բնակչության միգրացիան, այդ թվում, փախստականների ներգաղթը և, այնուհետև, Հայաստանից բնակչության արտագաղթը, տնտեսության կառուցվածքային փոփոխությունները, ինչպես նաև զանգվածային սեփականաշնորհումը, որոնք հանգեցրին զբաղվածության ճյուղային կառուցվածքի թվացյալ արդիականացման, որի արդյունքում, մի կողմից, ավելացավ զբաղվածությունը ծառայությունների մատուցման ոլորտում, իսկ մյուս կողմից, աշխատուժը վերաբաշխվեց արդյունաբերության և շինարարության ոլորտներից դեպի գյուղատնտեսություն: Սեփականաշնորհված ձեռնարկությունների ցածր տեխնոլոգիական վերազինման պայմաններում դրանց զգալի մասը անգործության մատնվեց՝ առաջացնելով աշխատանքի թաքնված շուկա: Շուկայական նոր պայմաններին համապատասխանող աշխատանքային օրենսդրության բացակայությունը, մասնավորապես, գործատուների, գործազուրկների և հիմնականում, մասնավոր հատվածում զբաղվածների իրավական հարաբերությունները կարգավորված չեն, ներառյալ աշտանքի պաշտպանության, աշխատավարձի և այլ հարցեր:

Զբաղվածության (աշխատաշուկայի) քաղաքականության նպատակները և խնդիրները

359. Աշխատաշուկայի ինչպես ակտիվ, այնպես էլ պասիվ քաղաքականության նպատակը գործազուրկների սոցիալական ապահովությունն է: Եթե պասիվ քաղաքականությունն ենթադրում է գործազրկության նպաստների հատկացում, ապա ակտիվ քաղաքականության միջոցով փորձ է կատարվում հավասարակշռել աշխատաշուկայի առաջարկը և պահանջարկը: Շուկայական տնտեսության պայմաններում աշխատաշուկայի քաղաքականությունը սոցիալական քաղաքականության կարևոր մաս է կազմում: Հայաստանում կապիտալի պակասի և ներդրումների ցածր մակարդակի արդյունք հանդիսացող գործազրկության պայմաններում տարբեր ոլորտների միասնական քաղաքականության իրականացմամբ է պայմանավորված զբաղվածության հիմնախնդիրների լուծման արդյունավետության բարձրացումը և գործազրկության նվազեցումը:

360. ՀՀ Սյունիքի մարզի աշխատաշուկան վերլուծելու նպատակով զբաղվածության մարզային կենտրոնը Շվեդիայի միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում համագործակցել է Շվեդիայի և Լիտվայի զբաղվածության ոլորտի կառույցների հետ՝ տեղայնացնելով նրանց առաջավոր փորձը:



Համաշխարհային բանկի և Շվեդիայի միջազգային զարգացման գործակալության կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում նախատեսվում է շարունակական ուսուցման համակարգի ներդրում և համակարգի մասնագետների վերապատրաստումներ՝ իրականացվող բոլոր գործառնությունների ուղղությամբ: Այդ ծրագրի շրջանակներում խնդիր է դրված հաղթահարել տարածքային կենտրոնների միջև առկա զարգացման տարբերությունները:

361. Զբաղվածության մարզային կենտրոնի հիմնական խնդիրը զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի իրականացումն է, որոնք ուղղված են բնակչության լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծմանը:

#### Գործազրկության նպաստի վճարումը

362. Գործազրկության նպաստ նշանակվում է այն անձանց, ովքեր ունեն.

- 1) գործազուրկի կարգավիճակ
- 2) առնվազն մեկ տարվա ապահովագրական ստաժ:

363. Գործազրկության նպաստի վճարման նվազագույն տևողությունը 6 ամիս է, իսկ առավելագույնը՝ 12 ամիս:

364. Գործազրկության նպաստի չափը սահմանվում է նվազագույն ամսական աշխատավարձի 60 տոկոսի չափով:

#### Մասնագիտական ուսուցում

365. Մասնագիտական ուսուցման նպատակն է աջակցել աշխատանք փնտրողին աշխատաշուկայի պահանջներին համապատասխան նոր կարողություններ և հմտություններ ձեռք բերելու միջոցով հարմար աշխատանքի տեղավորման, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հարցերում:

366. Մասնագիտական ուսուցման ծրագրերում կարող են ընդգրկվել զբաղվածության կենտրոններում հաշվառված հետևյալ անձինք.

- 1) գործազուրկները
- 2) հաշմանդամները
- 3) երկարամյա ծառայության և արտոնյալ պայմաններով կենսաթաշակառուները:

367. Մասնագիտական ուսուցումը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության կողմից և ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, ինչպես նաև միջազգային և այլ կազմակերպությունների միջոցների հաշվին:

368. Գործազուրկ և հաշմանդամ մասնակիցներին ուսուցման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում վճարվում է կրթաթոշակ:

Աշխատաշուկայում աննրգունակ խմբերին աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին

369. Աշխատավարձի փոխհատուցումը գործատուին տրվում է աշխատաշուկայում աննրգունակ անձանց աշխատանքի տեղավորմանն աջակցելու նպատակով:

370. Աշխատանքի տեղավորված յուրաքանչյուր աննրգունակ անձի համար գործատուին տրվում է փոխհատուցում՝ գործատուի կողմից սահմանված

աշխատավարձի 50%-ի չափով, բայց ոչ ավելի, քան նվազագույն ամսական աշխատավարձի չափը:

371. Փոխհատուցման ծրագրում ընդգրկված աննրցունակ 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամների աշխատավարձերի փոխհատուցումը տրամադրվում է 2 տարի ժամկետով, իսկ աննրցունակ այլ անձանց՝ 1 տարի ժամկետով:

Այլ վայր աշխատանքի գործուղման կապակցությամբ գործազուրկների նյութական ծախսերի հատուցում

371. Այլ վայր ժամանակավոր կամ մշտական բնակության մեկնող գործազուրկին և նրա հետ մեկնող ընտանիքի անդամներին հատուցվում են՝

- 1) իր և իր ընտանիքի անդամների
- 2) տեղափոխման տրանսպորտային ծախսերը
- 3) իր և իր ընտանիքի անդամների անհրաժեշտ գույքի տեղափոխման տրանսպորտային ծախսերը՝ 30-50 կմ ճանապարհի համար՝ 10000 դրամ, 50 կմ-ից ավելի յուրաքանչյուր 50 կմ-ի համար՝ 8000 դրամ, բայց ոչ ավելի, քան 50000 դրամ
- 4) 30 կիլոմետրից ավելի հեռավորությամբ այլ վայր աշխատանքի մեկնելու դեպքում՝ իր և իր ընտանիքի անդամների օրապահիկը
- 5) Այլ վայր աշխատանքի գործուղվող գործազուրկին տրվում է՝ մեկ տարվա ընթացքում 4 անգամ մշտական բնակավայր այցելելու համար տրանսպորտային ծախս միկրոավտոբուսային երթուղի լինելու դեպքում՝ միկրոավտոբուսային երթուղիների համար սահմանված սակագնի չափով, իսկ միկրոավտոբուսային և ավտոբուսային երթուղիներ լինելու դեպքում՝ ավտոբուսային երթուղիների համար սահմանված սակագնի չափով և ամսական գումար՝ բնակարանային վարձի և կոմունալ ծախսերի համար՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված ամսական աշխատավարձի չափով:

Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար ֆինանսական աջակցության տրամադրումը

372. Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար, անձին անհատ ձեռնարկատեր կամ առևտրային կազմակերպություն գրանցելու համար տրվում են ֆինանսական միջոցներ՝

- 1) պետական տուրքի վճարման նպատակով անհատ ձեռնարկատեր գրանցվելու համար՝ բազային տուրքի եռապատիկի չափով, իսկ առևտրային կազմակերպություն գրանցվելու համար՝ բազային տուրքի 12-ապատիկի չափով
- 2) ֆիրմային անվանումը գրանցելու նպատակով պետական տուրքի վճարման համար՝ բազային տուրքի 6-ապատիկի չափով
- 3) կնիք ձեռք բերելու համար՝ կնիք պատրաստող պետական մասնագիտացված կազմակերպության կողմից սահմանված գների սանդղակի նվազագույն գնի չափով:

Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպումը

373. Մասնագիտական որակավորում չպահանջող, սոցիալական օգտակար ուղվածություն ունեցող, համընդհանուր մատչելի ժամանակավոր աշխատանքներ են որոնցում կարող են ընդգրկվել:

- 1) գործազուրկները
- 2) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընդգրկված ընտանիքների աշխատանք փնտրող անձինք
- 3) աշխատանք փնտրող այլ անձինք:

374. Վարձատրվող հասարակական աշխատանքների տևողությունը մինչև 3 ամիս է:  
 375. Վարձատրության օրական չափը կազմում է նվազագույն աշխատավարձի 8%-ը:  
 376. Համաշխարհային տնտեսական ճգնաժամը ազդեց ոչ միայն ավանդաբար ռիսկային համարվող խմբերի, այլև աշխատունակ զանգվածի վրա, մասնավորապես արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների վրա:  
 377. Գործազուրկների և աշխատանք փնտրողների հարաբերակցությունը հետևյալն է.

Աղյուսակ 5.17. Աշխատանք փնտրողներ, աշխատանք փնտրող չգրառվածներ և գործազուրկներ

| Ցուցանիշներ                 | 2006թ.<br>դեկտեմբերի 31-ի<br>դրությամբ | 2007թ.<br>դեկտեմբերի 31-ի<br>դրությամբ | 2008թ.<br>դեկտեմբերի 31-ի<br>դրությամբ |
|-----------------------------|--|--|--|
| Աշխատանք փնտրողներ          | 11388                                  | 10490                                  | 9072                                   |
| Աշխատանք փնտրող<br>չգրառված | 10031                                  | 8495                                   | 7294                                   |
| Գործազուրկներ               | 9829                                   | 8341                                   | 6912                                   |
| Գ/մակարդակը                 | 15.1%                                  | 13.1%                                  | 12.5%                                  |

Աղբյուրը՝ Զբաղվածության պետական ծառայություն գործակալություն Կապանի չգրառվածության մարզային կենտրոն

378. Աշխատանք փնտրողների թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ նվազել է 1418–ով, աշխատանք փնտրող չգրառված քաղաքացիների թիվը նվազել է 1201–ով, գործազուրկների թիվը նվազել է 1429–ով, իսկ գործազրկության մակարդակը 0.6%–ով, որը բացատրվում է օրենսդրական դաշտի փոփոխությամբ:

Աղյուսակ 5.18. Գործազրկության կառուցվածքը

|   | Ցուցանիշներ                                 | 2006թ.<br>դեկտեմբերի 31-ի<br>դրությամբ | 2007թ.<br>դեկտեմբերի 31-ի<br>դրությամբ | 2008թ.<br>դեկտեմբերի 31-ի<br>դրությամբ |
|---|---|--|--|--|
|   | <b>Ըստ կրթական ցենզի</b>                    | <b>9829</b>                            | <b>8341</b>                            | <b>6912</b>                            |
| 1 | հետբուհական                                 |  | 0                                      | 0                                      |
| 2 | Բարձրագույն                                 | 896                                    | 652                                    | 650                                    |
| 3 | թերի բարձրագույն                            |  | 57                                     | 29                                     |
| 4 | միջին մասնագիտական                          | 2938                                   | 2084                                   | 1775                                   |
| 5 | նախնական մասնագիտական<br>(արհեստակցործական) | 325                                    | 1323                                   | 971                                    |
| 6 | Ընդ. միջնակարգ                              | 5670                                   | 3795                                   | 3096                                   |
| 7 | հատուկ ընդհանուր                            |  | 0                                      | 0                                      |
| 8 | հիմնական ընդհանուր                          |  | 429                                    | 388                                    |
| 9 | տարրական                                    |  | 1                                      | 3                                      |
|   | <b>Ըստ տարիքի</b>                           | <b>9829</b>                            | <b>8341</b>                            | <b>6912</b>                            |

|   |                                      |             |             |             |
|---|--------------------------------------|-------------|-------------|-------------|
| 1 | 16-18                                | 10          | 13          | 12          |
| 2 | 19-24                                | 116         | 418         | 494         |
| 3 | 25-30                                | 1091        | 851         | 926         |
| 4 | 31-50                                | 7316        | 6411        | 4857        |
| 5 | 51-ից բարձր                          | 1296        | 648         | 623         |
|   | <b>ըստ գործազրկության տևողության</b> | <b>9829</b> | <b>8341</b> | <b>6912</b> |
| 1 | մինչև 1 ամիս                         | 0           | 31          | 65          |
| 2 | 1-3 ամիս                             | 147         | 178         | 200         |
| 3 | 3-6 ամիս                             | 367         | 232         | 275         |
| 4 | 7-12 ամիս                            | 700         | 829         | 786         |
| 5 | 1-3 տարի                             | 8615        | 3404        | 2421        |
| 6 | 3տարի և ավելի                        |             | 3667        | 3165        |

Աղբյուրը՝ Զբաղվածության պետական ծառայություն գործակալություն Կապանի զբաղվածության մարզային կենտրոն

379. Աղյուսակ 5.18-ի տվյալների վերլուծությունը վկայում է, որ մարզում.

- 1) Ըստ կրթական ցենզի մեծամասնություն է կազմում միջին մասնագիտական կրթությունը
- 2) Ըստ տարիքայինի մեծ է միջին տարիքի գործազուրկների մասնաբաժինը, որտեղ կանանց թիվը կազմում է գործազրկության 60-65%-ը
- 3) Ըստ գործազրկության տևողության գերակշռող մասը կազմում է երեք տարուց ավելի գործազուրկի կարգավիճակում գտնվողները

380. Ակնառու տնտեսական հետևանքներից բացի, գործազրկությունն ունի մի շարք սոցիալական հետևանքներ, հատկապես եթե խոսքը գնում է երկարատև գործազրկության մասին: Այսպես օրինակ

- 1) Մեկից ավելի տարով աշխատանքային գործունեության դադարեցումը հանգեցնում է մասնագիտական հմտությունների կորստի
- 2) Եկամուտների, գոյության միջոցների բացակայությունը հասարակության մեջ սոցիալական դիրքի նվազման, ցածր ինքնագնահատականի ձևավորման, մեկուսացման և բարոյազրկման պատճառ է դառնում
- 3) Աշխատանք փնտրելու անհաջող փորձերը սթրեսների, վարքագծի շեղումների և շեղվող վարքի տարբեր ձևերի դրսևորման պատճառ են դառնում:

381. Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, երեք գործազուրկներից երկուսը ենթակա են աղքատության ռիսկի: Հետևաբար գործազուրկների մրցակցությունը բարձրացնելու նպատակով՝ վերջին տարիներին ավելացել են նաև մասնագիտական ուսուցման ծրագրերի քանակը: Քանի որ, 2006թ-ի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով, գործազրկության կարգավիճակ ստացան նաև ապահովագրական ստաժ չունեցողները, նրանց համար ևս իրականացվում են նոր մասնագիտական ուսուցման ծրագրեր:

Աղյուսակ 5.19. Աշխատանքի տեղավորվածների կառուցվածքը ՀՀ Սյունիքի մարզում

|   | Աշխատանքի տեղավորվածներ       | 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|-------------------------------|----------------------------------|----------------------------------|----------------------------------|
|   | <b>Ըստ կրթության ընդամենը</b> | <b>529</b>                       | <b>712</b>                       | <b>546</b>                       |
| 1 | բարձրագույն                   | 67                               | 68                               | 62                               |
| 2 | Մ/մասնագիտական                | 176                              | 234                              | 201                              |


|    |   |            |            |            |
|----|---|------------|------------|------------|
| 3  | Ընդ. միջնակարգ                                | 258        | 391        | 263        |
| 4  | Թ/ միջնակարգ                                  | 28         | 19         | 20         |
|    | <b>Ըստ տարիքի ընդամենը</b>                    | <b>529</b> | <b>712</b> | <b>546</b> |
| 1  | 18-22   | 4          | 37         | 43         |
| 2  | 23-30   | 70         | 156        | 118        |
| 3  | 31-50   | 370        | 383        | 260        |
| 4  | 51-ից բարձր                                   | 85         | 136        | 125        |
|    | <b>Ըստ գործազրկության տևողության ընդամենը</b> | <b>488</b> | <b>691</b> | <b>527</b> |
| 1  | մինչև 3 ամիս                                  | 10         | 17         | 28         |
| 2  | 3-6 ամիս                                      | 31         | 21         | 44         |
| 3  | 6-12 ամիս                                     | 24         | 71         | 52         |
| 4  | մեկ տարուց ավելի                              | 423        | 582        | 403        |
|    | <b>Ըստ մասնագիտությունների</b>                | <b>529</b> | <b>712</b> | <b>546</b> |
| 1  | Ինժեներ                                       | 6          | 9          | 5          |
| 2  | Հաշվապահ                                      | 6          | 16         | 14         |
| 3  | Գյուղատնտես                                   | 0          | 6          | 2          |
| 4  | Տեխնիկ  | 31         | 32         | 38         |
| 5  | Տնտեսագետ                                     | 5          | 6          | 10         |
| 6  | Անասնաբուժ                                    | 8          | 4          | 1          |
| 7  | Մանկավարժ                                     | 27         | 29         | 11         |
| 8  | Մաթեմատիկոս                                   | 19         | 0          | 5          |
| 9  | Հինարար                                       | 123        | 34         | 28         |
| 10 | Բանվորական այլ մասնագիտություններ             | 304        | 576        | 432        |
|    | <b>Ըստ տնտեսության ճյուղերի ընդամենը</b>      | <b>529</b> | <b>712</b> | <b>546</b> |
| 1  | Արդյունաբերություն                            | 88         | 162        | 97         |
| 2  | Տրանսպորտ և կապ                               | 24         | 71         | 36         |
| 3  | Շինարարություն                                | 42         | 95         | 33         |
| 4  | բնակ. կոմ. տնտես.                             | 36         | 11         | 56         |
| 5  | Առողջ. և սպորտ                                | 12         | 11         | 18         |
| 6  | Կրթութ. մշակ. և արվես.                        | 53         | 60         | 45         |
| 7  | վարկավորում և պետապ                           | 0          | 11         | 56         |
| 8  | կառավարման մարմին.                            | 6          | 33         | 45         |
| 9  | Առևտուր և հանրային սն.                        | 85         | 142        | 112        |
| 10 | Այլ ճյուղեր                                   | 163        | 116        | 48         |

Աղբյուրը՝ Ձբաղվածության պետական ծառայություն գործակալություն Կապանի զբաղվածության մարզային կենտրոն


382. Ձբաղվածության ակտիվ քաղաքականությունը նպատակ է հետապնդում նվազեցնել աշխատանքի շուկայում առաջացած պահանջարկի և առաջարկի

կառուցվածքային անհամապատասխանությունը՝ հիմնականում աշխատանք փնտրողների զբաղվածության ավելացման հաշվին:


Գծապատկեր 5.4




Գծապատկեր 5.5



Գծապատկեր 5.6




Գծապատկեր 5.7




Գծապատկեր 5.8

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ




Գծապատկեր 5.9

Գործազրկության նպաստ ստացողների համեմատական ցուցանիշները Սյունիքի մարզում ըստ տարիների



Գծապատկեր 5.10.





383. Ինչպես երևում է աղյուսակներից, գործազուրկների թիվը նախորդ տարիների համեմատ աստիճանաբար կրճատվել է: Սակայն ներկա տնտեսական ճգնաժամի պայմաններում իրավիճակը կարող է կտրուկ վատանալ:

384. Վերլուծելով 2009թ-ի 1-ին եռամսյակի ընթացքում ՀՀ Սյունիքի մարզի աշխատաշուկայի փոփոխությունները, նկատում ենք լեռնահանքային կազմակերպությունների արտադրական ծավալների կրճատման միտում: Նրանց կողմից իջեցվող պատվերների աստիճանական նվազեցման պատճառով, անընդհատ կրճատվում են աշխատատեղերը, որի արդյունքում բազմաթիվ աշխատողներ գտնվում են հարկադիր պարապուրդի մեջ, իսկ որոշ մասն էլ ազատվում են աշխատանքից: Մասնակի դադարեցնելով իրենց գործունեությունը վերոհիշյալ կազմակերպությունները բարձրացնելու են տարածաշրջանի աշխատաշուկայի լարվածությանը:

385. Տեղեկատվական առկա բազան թույլ չի տալիս մոնիտորինգի ենթարկել ուսուցման համակարգը, աշխատանքի շուկան և նրանց միջև գոյություն ունեցող կապերը, կանխատեսել աշխատանքի շուկայի կողմից պահանջվող հմտությունները և հետևաբար ուսուցման կարիքները:

386. Անցումային տարիներին համեմատական փոփոխությունների է ենթարկվել մասնակցությունը աշխատանքային շուկայում: Գրանցվել է տնտեսական ակտիվության ցածր, իսկ գործազրկության բարձր մակարդակ: Քանի որ գործազուրկներին տրվող սոցիալական երաշխիքները բավականին սահմանափակ են, մեծ թվով անձինք գտնում են զբաղվածության, գործազրկության և անգործության անցումային կարգավիճակում, և անգամ դժվար է հստակորեն որոշել անձի իրավական կարգավիճակը:

387. Աշխատանքի պայմանները զգալի ազդեցություն ունեն աշխատուժի առաջարկի և ընդհանրապես աշխատանքի շուկայի ճկունության վրա, և հիմնականում վերաբերվում են աշխատաժամանակի ու աշխատանքի վարձատրության օրենսդրորեն սահմանվող նորմերին:

388. ՀՀ Սյունիքի մարզում գործազրկության բարձր մակարդակը զուգորդվում է նրա երկարատևությամբ: Գործազուրկներից շատերը չունեն որակավորում, կամ ունեն կրթության ցածր մակարդակ: Նրանք կարող են առնչվել զբաղվածության բազմաթիվ խոչընդոտների, այդ թվում ինացական և առողջապահական խոչընդոտների, որոնք

ազդում են նրանց աշխատունակության վրա: Երկարատև գործազրկության դեմ պայքարելու նպատակով մի շարք երկրների փորձը ցույց է տալիս, որ բավականին արդյունավետ է այնպիսի քաղաքականության իրականացումը, որը կհամադրի ուսուցման հնարավորությունները ակտիվ խորհրդատվությամբ և աշխատողների վերաբերյալ տեղեկատվությամբ: Սակայն անցումային որոշ երկրների փորձը ցույց է տալիս, որ նման միջոցառումները հաճախ անբավարար են: Երկարատև գործազուրկներին պետք է տրամադրվի ժամանակավոր զբաղվածություն, վերապատրաստում և աշխատանքի տեղավորման աջակցություն:

389. Երկարատև գործազրկության վիճակում հայտնվելուց խուսափելու և աշխատունակությունը պահպանելու նպատակով, հատկապես երիտասարդ գործազուրկներին պետք է տրամադրվեն աշխատանքի որոնման արդյունավետ աջակցություն, կամ զբաղվածության ակտիվ միջոցառումներ՝ գործազրկության առաջին 6 ամիսների ընթացքում, մինչդեռ մեծահասակ գործազուրկները պետք է օգտվեն նշված ծառայություններից գործազրկության առաջին 12 ամիսների ընթացքում:


390. Վառ միջամտություններից է աշխատանք փնտրողների հետազոտությունը՝ նրանց խոցելիության աստիճանը, երկարատև գործազրկության նկատմամբ պարզելու համար:

391. Մարզում մասնագիտական ուսուցումը համապատասխանեցվում է տարածքի կարիքներին և աշխատանքի շուկային:

392. Մասնագիտական ուսուցման ծրագրերը կենտրոնացվում են տարածքի տնտեսության գլխավոր ճյուղերի ուղղությամբ և իրականացվում են բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:

393. Աշխատանքի շուկաները տեղական պահանջարկի հետ կապված մեծ փոփոխություններ են կրում և տեղական մասնագետներին կրթության հաստատությունները պետք է ավելի լավ պատկերացումներ կազմեն տեղի տնտեսության միտումների վերաբերյալ, հիմնվելով մշակված տարածքային զարգացման պլանների վրա:


Գծապատկեր 5.11.



394. Չնայած գործազրկության բարձր մակարդակին աշխատուժի աշխարհագրական շարժունակությունը բավական փոքր է: Մարդիկ նախընտրում են չտեղափոխվել և շարունակում են ապրել իրենց նախկին բնակության վայրում: Տնային տնտեսություններից շատերը արմատներ են ձգել իրենց համայնքում, օրինակ մշակած հողակտոր կամ խորհրդային ժամանակներում կառուցած ամառանոց կամ իրենց ծնողների սեփականությունը հանդիսացող որևէ անշարժ գույք:

395. Տեղում աշխատանքի հնարավորությունների բացակայությունը շատերի համար դեռևս հիմք չէ միգրացիայի դիմելու համար: Զբաղվածության, տարածքային կամ այլ քաղաքականություն մշակելիս հաշվի են առնվում նման սովորույթներն ու ապրելակերպը:

Գծապատկեր 5.12.



396. Գործազուրկ երիտասարդների և բարձրագույն ու միջնակարգ մասնագիտական հաստատությունների ուսանողների հետազոտությունները հավաստում են, որ երիտասարդների գործազրկությունը լուրջ խնդիր է ՀՀ Սյունիքի մարզում: Հատկապես մտահոգիչ է երիտասարդների գործազրկության երկար տևողությունը: Իրավիճակն ավելի է բարդանում աշխատանք փնտրող երիտասարդների մասնագիտական ցածր կրթության մակարդակի և հմտությունների մակարդակի բարձրացման, նրանց ցանկության կամ հնարավորության բացակայության բերումով: Տեղեկատվական առկա բազան թույլ չի տալիս մոնիտորինգի ենթարկել ուսուցման համակարգը, աշխատանքի շուկան և նրանց մինչև գոյություն ունեցող կապերը, կանխատեսել աշխատանքի շուկայի կողմից պահանջվող հմտությունները և հետևաբար ուսուցման կարիքները:

397. Այդուհանդերձ մասնագիտական կրթությունը և ուսուցումը ոչ միշտ են զբաղվածության երաշխիք հանդիսանում: Զբաղվածության քաղաքականության այլ միջոցառումներին զուգահեռ, անհրաժեշտ է ուսուցումը համապատասխանեցնել աշխատանքի շուկայի պահանջներին: Մասնագիտական կրթությունը և ուսուցումը պետք է ներդաշնակեցվի տնտեսության նոր պահանջներին համապատասխանեցնելու միջոցառումների ընդհանուր շրջանակների հետ: Դեռևս հստակ դիրքորոշում չի ձևավորվել առ այն, թե ուսուցման ինչպիսի կարիքներ պետք է բավարարեն կամ

ինչպիսի հմտություններ պետք է ձեռք բերվեն, որպեսզի պատշաճ կերպով հասցեագրվեն տնտեսության կարիքները և առավելագույնի հասցվեն մասնագիտական հաստատությունների շրջանավարտներին և գործազուրկների հնարավորությունները աշխատանք գտնելու ուղղությամբ:

### Սյունիքի մարզի զբաղվածության մարզային և տարածքային կենտրոնները

- 1) ԿԱՊԱՆԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ  
ք. Կապան, Լեռնագործների 4 հեռ ֆաքս. (0285)24933, 22827
- 2) ՍԻՍԻԱՆԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ  
ք.Սիսիան , Սիսակյան 37 հեռ. (02830) 22663
- 3) ԳՈՐԻՍԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ  
ք. Գորիս, Մաշտոցի 3 (0284)21166, 26175
- 4) ՄԵՂՐՈՒ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ  
ք. Մեղրի Զ. Անդրանիկի 2 հեռ. (0286)42861

398. Փախստականներ: Ինչպես արձանագրված է ԱՀՌԾ-ում, փախստականների և տեղացիների խոցելի խմբերի շրջանում կատարված հատուկ հետազոտությունը փաստել է, որ աղքատության առնավազն երեք տիպերի գծով փախստականներին բնութագրող ցուցանիշները զգալիորեն ավելի վատթար են, քան տեղացիներինը: Այսպես, մարդկային աղքատության համաթիվը՝ 1.7 անգամ, ծայրահեղ աղքատության ցուցանիշը՝ 1.4 անգամ և սուբյեկտիվ ինքնագագացողության ցուցանիշը՝ 1.2 անգամ զիջում է տեղացիների նույնանման ցուցանիշներին:

399. Բռնագաղթին հաջորդող տարիներին մարզում բնակվում էին շուրջ 9500 փախստականներ: Հետագայում ինտեգրման և արտագաղթի արդյունքում մարզում ներկայում փախստականի կարգավիճակ ունեն 625 անձիք:

400. Մարզպետարանը լուրջ աշխատանքներ է իրականացրել մարզի ժամանակավոր կացարաններում /հանրակացարան, հյուրանոց և ադմինիստրատիվ շենքեր/ բնակվող փախստականների բնակարանների հարցերը լուծելու ուղղությամբ:

401. 2004-2008թթ. ընթացքում ՄԱԿ-ի գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի միջոցներով փախստական ընտանիքների համար գնվել է 30 բնակարան, որից 24-ը Կապանի, 3-Մեղրու, 2-ը Սիսիանի և 1-ը Գորիսի տարածաշրջաններում:

402. Գորիս քաղաքում շահագործման է հանձնվել ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի, Շվեյցարական զարգացման գործակալության և ՀՀ Սյունիքի մարզպետարանի համաֆինանսավորմամբ շենքը, որի արդյունքում բնակարանով ապահովվել են Գորիս քաղաքի ժամանակավոր կացարաններում բնակվող 40 փախստական ընտանիքներ: Պետական բյուջեի միջոցների հաշվին 35փախստական ընտանիքների հատկացվել է բնակարանների գնման վկայագրեր:

403. Հայաստանում շվեյցարական զարգացման և համագործակցության գրասենյակի ֆինանսավորմամբ Գորիս քաղաքում սոցիալական տների կառուցման արդյունքում լուծվել է ևս 24 փախստական ընտանիքների բնակարանային խնդիրը:

404. Փախստականների և ներքին տեղահանվածների սոցիալական անապահովության աստիճանը իջեցնելու համար մարզում ներկայումս լուրջ աշխատանքներ են տարվում նոր սոցիալական տների կառուցման աշխատանքներ իրականացնելու համար, որով կլուծվի 407 ընտանիքների բնակարանային հարցը, որոնք ընդգրկված չեն առաջնահերթության ծրագրերում:

405. **Թոշակառուներ:** Թոշակները Հայաստանում շատ ցածր են և ԱՊՀ երկրների շարքում այս ցուցանիշը ամենացածրերից է: Կենսաթոշակառուների, հատկապես կենսաթոշակառուներից բաղկացած տնային տնտեսությունների թիվը մեծ է ինչպես մարզի գյուղական՝ այնպես էլ քաղաքային համայնքներում և պատահական չէ, որ մարզի ամենացավոտ ժողովրդագրական խնդիրը բնակչության «ծերացումն» է, երբ մարզի առկա բնակչության 19 տոկոսից ավելին կենսաթոշակառուներ են: Ինչպես Հայաստանի Հանրապետության մյուս մարզերում, այնպես էլ Սյունիքի մարզում կենսաթոշակառուների թիվը տարեցտարի նվազում է ( Աղյուսակ 5.13):

Աղյուսակ 5.13. Կենսաթոշակառուների թիվը ՀՀ Սյունիքի մարզում

| h/h |                 | 2006թ.       | 2007 թ.      | 2008թ.       |
|-----|-----------------|--------------|--------------|--------------|
| 1   | Կապան           | 10960        | 10440        | 10119        |
| 2   | Գորիս           | 7930         | 7929         | 7714         |
| 3   | Սիսիան          | 5625         | 5586         | 5437         |
| 4   | Մեղրի           | 2223         | 2194         | 2021         |
|     | <b>Ընդամենը</b> | <b>26738</b> | <b>26149</b> | <b>25291</b> |

Աղբյուրը՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն:

406. Թոշակառուների ընդհանուր թվաքանակի կրճատումը, որը կշարունակվի նաև ապագայում, պայմանավորված է, կենսաթոշակային տարիքի փուլ առ փուլ բարձրացմամբ՝ տարին 6 ամսով, որի ազդեցությունը կզգացվի մինչև 2011թ., երբ կանայք կհասնեն 63 տարվա կենսաթոշակային տարիքի:

407. Չնայած կենսաթոշակառուների թիվը տարեցտարի նվազում է, սակայն դեռևս ցածր կենսաթոշակների պայմաններում, բնականաբար, պահպանվում է վերջիններիս աղքատության ռիսկային վտանգը:

408. Ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած Կայուն զարգացման ծրագրի (ԿԶԾ) կանխատեսվում է, որ կենսաթոշակառուների քանակի կրճատման միտումը հնարավորություն կտա պահպանել կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունությունը և հիմնական կենսաթոշակը հասցնել՝

- 1) առնվազն աղքատության գծին՝ սկսած 2015 թվականից
- 2) առնվազն նվազագույն սպառողական զամբյուղի 100 տոկոսին՝ սկսած 2018 թվականից:

409. Կենսաթոշակային համակարգի բարեփոխումները ընթանալու են ինչպես ներկայիս բաշխողական համակարգի բարեփոխումների, այնպես և նոր կուտակային համակարգի ներդրման ճանապարհով:

410. «Առաքելություն Հայաստան» հասարակական բարեգործական կազմակերպության ֆինանսավորմամբ մարզում գործում է 3 բարեգործական ճաշարան, որտեղ 605 հոգի օրական մեկ անգամ ստանում են տաք սնունդ: Արժվանիկ գյուղում գտնվող տարեցների սպասարկման կենտրոնում խնամվում են 10 ծեր շահառուներ: Նախատեսվում է դոնոր կազմակերպությունների օժանդակությամբ մինչև 2011թ. շահառուների թիվը հասցնել 40-ի:

411. Տարեցներին մատուցվող ծառայությունների բնագավառում ծառայությունների տրամադրումը ուղղված է տարեցների սոցիալական սպասարկման և խնամքի ծառայությունների տրամադրմանը: Վերջին տարիներին այս բնագավառում պետության կողմից իրականացվող քաղաքականությունն ուղղված է տարեցների, և հատկապես միայնակ և հաշմանդամ տարեցների կյանքի պայմանների բարելավմանը: Բնագավառում դեռևս առկա են լուծման կարիք ունեցող բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնցից են՝

- 1) տարեցների սոցիալական պաշտպանության բնագավառի օրենսդրության կատարելագործումը (ռազմավարական ծրագրի մշակում)
- 2) տարեցների սոցիալական սպասարկման և խնամքի ծառայությունների բարելավումը:

412. **Հաշմանդամներ:** ՀՀ Սյունիքի մարզում մեծ թիվ են կազմում նաև հաշմանդամները: Բնակչության առկա թվի համատեքստում հաշմանդամների թվով մարզը զիջում է միայն ՀՀ Շիրակի մարզին: Եթե ՀՀ Շիրակի մարզի դեպքում այն պարզ բացատրություն ունի (երկրաշարժ), ապա մեր դեպքում երևույթը խորհելու տեղիք է տալիս և հավանաբար մեծամասամբ կապված է հանքարդյունաբերության հետ:

413. Ստորև ներկայացվում է Սյունիքի մարզի հաշմանդամների վիճակագրությունը ըստ տարածաշրջանների (Աղյուսակ 5.14.)

Աղյուսակ 5.14. ՀՀ Սյունիքի մարզի հաշմանդամների վիճակագրությունը՝ ըստ տարածաշրջանների

|   | Տարածաշրջան | 2006թ.  |         |         | 2007թ.  |         |         | 2008թ.  |         |         |
|---|-------------|---------|---------|---------|---------|---------|---------|---------|---------|---------|
|   |             | 1 խումբ | 2 խումբ | 3 խումբ | 1 խումբ | 2 խումբ | 3 խումբ | 1 խումբ | 2 խումբ | 3 խումբ |
| 1 | Կապան       | 235     | 1308    | 620     | 259     | 1764    | 632     | 290     | 1840    | 770     |
| 2 | Գորիս       | 150     | 1021    | 435     | 155     | 1054    | 461     | 121     | 1131    | 569     |
| 3 | Սիսիան      | 71      | 647     | 310     | 91      | 708     | 394     | 92      | 839     | 462     |
| 4 | Մեղրի       | 34      | 238     | 95      | 40      | 247     | 109     | 39      | 276     | 146     |
| 5 | Մարզ        | 490     | 3214    | 1460    | 545     | 3773    | 1596    | 542     | 4086    | 1947    |

Աղբյուրը՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն:

414. Ինչպես վկայում են տվյալները, վերջին տարիներին մարզում զգալի ավելացել է հաշմանդամների թիվը: Ընդ որում, ավելացումը նկատվում է հաշմանդամների բոլոր խմբերում:

415. Մարզում մեծ թիվ են կազմում նաև 1988-1994թթ ՀՀ սահմանների պաշտպանության և Արցախյան պատերազմի ժամանակ հաշմանդամ դարձած ազատամարտիկները և հաշմանդամ դարձած զինծառայողները: (Աղյուսակ 5.15)

Աղյուսակ 5.15. ՀՀ սահմանների պաշտպանության և Արցախյան պատերազմի ժամանակ հաշմանդամ դարձած ազատամարտիկները և հաշմանդամ դարձած զինծառայողները ՀՀ Սյունիքի մարզում

| Սոց. խումբ  | Կապան | Գորիս | Սիսիան | Մեղրի | Մարզ |
|---|-------|-------|--------|-------|------|
| 1988-1994թթ ՀՀ սահմանների պաշտպանության և Արցախյան պատերազմի ժամանակ զոհված զինծառայողներ և ՀՀ զինված ուժերում ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված, մահացած զինծառայողներ | 215   | 226   | 92     | 32    | 565  |
| 1988-1994թթ ՀՀ սահմանների պաշտպանության և Արցախյան պատերազմի ժամանակ հաշմանդամ դարձած ազատամարտիկներ և հաշմանդամ դարձած զինծառայողներ   | 292   | 185   | 86     | 15    | 578  |
| Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցներ  | 109   | 82    | 69     | 11    | 271  |

Աղբյուրը՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն:

416. Լուծվել է Կապան քաղաքի զոհված զինծառայողների 155 ընտանիքի ներտնային գազիֆիկացման և գազի վառարանների տրամադրման հարցերը: Նշված ծրագրերը իրագործվել են «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ – ի հատկացված միջոցներով (մոտ 16.2 մլն դրամ):

417. Հաշմանդամներին մատուցվող ծառայությունների բնագավառում ծառայությունների տրամադրումը ուղղված է հաշմանդամների վերականգնման և պրոթեզաօրթոպեդիկ օգնության ու ծառայությունների մատուցման կազմակերպման բարելավմանը, որը կնպաստի հասարակության մեջ նրանց ինտեգրմանը: Վերականգնման արդյունքում նրանք հնարավորություն ունեն աշխատելու՝ մասամբ հոգալու իրենց, ինչպես նաև՝ իրենց ընտանիքի սոցիալական խնդիրները, որն այսօր մեր երկրի սոցիալական քաղաքականության և աղքատության հաղթահարման ծրագրի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի և «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015 թթ. ռազմավարության» պահանջներից է:

Աղյուսակ 5.16. ՀՀ Սյունիքի մարզում վերականգնողական օգնություն ստացած հաշմանդամների թիվը՝ ըստ տարածաշրջանների

|        |                 | 2006թ | 2007թ | 2008թ |
|--------|-----------------|-------|-------|-------|
| Կապան  | Ձեռնափայտ       | 8     | 16    | 68    |
|        | Հենակ           | 20    | 45    | 29    |
|        | Պրոթեզի կոշիկ   | 5     | 42    | 40    |
|        | Չայնաստեղծ սարք |       | 1     |       |
|        | Օրթեզի կոշիկ    | 2     | 3     | 2     |
|        | Ոտքի պրոթեզ     | 1     | 3     | 11    |
|        | Լսողական սարք   | 25    | 40    | 29    |
|        | Սայլակ          | 1     | 2     | 6     |
| Գորիս  | Պրոթեզի կոշիկ   | 16    | 8     | 2     |
|        | Ձեռնափայտ       | 6     | 5     | 7     |
|        | Հենակ           | 10    | 2     | 2     |
|        | Լսողական սարք   | 19    | 27    | 14    |
|        | Սեղմիրան        |       |       | 1     |
|        | Օրթեզ           |       |       | 2     |
|        | Օրթեզի կոշիկ    | 1     | 8     | 2     |
|        | Սայլակ          |       | 3     | 2     |
|        | Ոտքի պրոթեզ     | 2     | 5     | 4     |
|        |                 |       |       |       |
|        | Չայնաստեղծ սարք | 1     | 4     | 1     |
| Սիսիան | Լսողական սարք   | 12    | 14    | 4     |
|        | Չայնաստեղծ սարք |       |       |       |
|        | Օրթեզի կոշիկ    | 1     | 2     | 4     |
|        | Սեղմիրան        |       |       | 9     |
|        | Սայլակ          |       |       | 2     |
|        | Ոտքի պրոթեզ     | 1     | 2     |       |
|        | Պրոթեզի կոշիկ   | 10    | 26    | 36    |
|        | Ձեռնափայտ       | 5     | 13    | 10    |
| Հենակ  | 10              | 16    | 10    |       |

|       |               |   |   |    |
|-------|---------------|---|---|----|
| Մեղրի | Օրթեզ         |   | 8 | 17 |
|       | Սեղմիրան      |   | 9 | 15 |
|       | Պրոթեզի կոշիկ | 7 | 4 | 5  |
|       | Չեռնափայտ     | 2 | 3 | 3  |
|       | Յենակ         | 5 | 3 | 3  |
|       | Լսողական սարք | 3 |   | 2  |

Աղբյուրը՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն:

418. Նշված պարագաները հաշմանդամները ստացել են տեղում, առանց Երևան մեկնելու:

419. Առաջնորդվելով ՀՀ վարչապետի 2008թ փետրվարի 25-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողով ստեղծելու, ազգային հանձնաժողովի աշխատակարգն ու անհատական կազմը հաստատելու մասին» N98-Ն որոշման 4-րդ կետի պահանջներով ՀՀ Սյունիքի մարզպետի 2008թ մարտի 27-ի N27«Ա» որոշմամբ ստեղծվել է հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով մարզային հանձնաժողով: Մարզային հանձնաժողովի կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ներկայացվել հաշմանդամների սոցիալական պաշտպանության վերաբերյալ ծրագրային առաջարկներ տարեկան ծրագրերում ընդգրկելու նպատակով:

420. Այնուամենայնիվ, ներկայիս սոցիալական պաշտպանության համակարգը դեռևս չի կարողանում լիարժեք բավարարել հաշմանդամների յուրահատուկ պահանջները, որի պատճառով հաշմանդամներին հասարակության մեջ ինտեգրման գործընթացը դանդաղ է ընթանում:

#### Սոցիալական պաշտպանության համակարգի տարրերը

421. Սոցիալական պաշտպանության պետական համակարգի գործառույթները Հայաստանում պետականորեն կարգավորվում են սոցիալական պաշտպանության համակարգի խոցելի բնակչությանն ուղղված հետևյալ ծրագրերի միջոցով.

- 1) պետական սոցիալական աջակցության ծրագրեր, ներառյալ՝ ընտանեկան նպաստները, երեխայի ծնվելու հետ կապված միանվագ նպաստները, երեխային խնամելու նպաստները, ինչպես նաև այլ դրամական և ոչ դրամական սոցիալական ծառայությունները
- 2) սոցիալական ապահովության ծրագրեր հաշմանդամների, վետերանների և երեխաների համար, մասնավորապես՝ հաշմանդամների վերականգնման ծրագրեր՝ ելնելով հաշմանդամների վերականգնողական անհատական ծրագրերի տվյալներից, հաշմանդամների, վետերանների և երեխաների տնային պայմաններում և համապատասխան հիմնարկներում սպասարկելու սոցիալական ծրագրեր
- 3) պետական սոցիալական ապահովագրության ծրագրեր, որոնք բաղկացած են տարիքային և հաշմանդամության կենսաթոշակներից, ինչպես նաև ժամանակավոր անաշխատականության և հղիության հետ կապված նպաստներից
- 4) զբաղվածության ծրագրեր՝ ներառյալ գործազրկության նպաստները, գործազուրկների վերապատրաստման, աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին, ինչպես նաև հասարակական աշխատանքների ծրագրերը
- 5) բնակչության առանձին նպատակային խմբերի համար արտոնությունների համակարգ:



422. Պետական նպաստների տրամադրման բնագավառը կանոնակարգվում է «Պետական նպաստների մասին», «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև օրենքների կիրառությունն ապահովող ՀՀ կառավարության մի շարք որոշումներով: Ելնելով ԿԶԾ-ի ընդհանուր գերակայություններից, սոցիալական աջակցության բնագավառի առաջնահերթությունները լինելու են.

- 1) ընտանեկան նպաստի համակարգը
- 2) մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի ծրագիր
- 3) երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստի ծրագիր:

423. Ընտանեկան նպաստի համակարգը գործում է 1999 թվականից և կոչված է աջակցելու աղքատ ընտանիքներին: Իրականացվող ծրագիրն այս տարիների ընթացքում ենթարկվել է փոփոխությունների, ինչպես ընտանիքների անապահովության գնահատման, ընտանեկան նպաստի չափի որոշման բանաձևերի փոփոխությունների, այնպես էլ համակարգի վարչարարության բարելավման առումով:

424. Սոցիալական օգնության պետական ծրագրերից ամենամեծը աղքատության ընտանեկան նպաստի ծրագիրն է: Ընտանեկան նպաստի համակարգում սկսել է կիրառվել տարբերակված մոտեցում կարիքավորության աստիճանի հիման վրա: Փաստորեն, որքան աղքատ է ընտանիքը, այդքան բարձր է աղքատության ընտանեկան նպաստի չափը: Վերջին տարիներին ընտանեկան նպաստների հաշվարկման բանաձևում կատարվեց փոփոխություն՝ հավելվում նախատեսելով նպաստառու ընտանիքների մինչև 18 տարեկան անդամների համար: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ բազմազավակ ընտանիքները հանդիսանում են ամենախոցելի խմբերից մեկը: Սյունիքի մարզում այդ ծրագրի շահառուների թիվը վերջին տարիներին դանդաղորեն նվազում է (Աղյուսակ 5.17):

Աղյուսակ 5.17. ՀՀ Սյունիքի մարզի ընտանեկան նպաստառուների թվաքանակը 2006--2008թթ.

| Տարածաշրջան      | 2006թ. | 2007թ. | 2008թ. |
|------------------|--------|--------|--------|
| Կապան            | 1967   | 1737   | 1330   |
| Գորիս            | 2246   | 2223   | 1930   |
| Միսիան           | 939    | 923    | 785    |
| Մեղրի            | 399    | 358    | 297    |
| Ընդամենը մարզում | 5551   | 5241   | 4342   |

Աղբյուրը՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն:

425. Նվազումը պայմանավորված է ընտանեկան նպաստի հասցեականության բարձրացման, կենսաթոշակների չափի բարձրացմամբ, որի արդյունքում մարզի աղքատ ընտանիքների որոշակի զանգված դուրս է մնացել համակարգից: Սյունս կողմից կրճատված ընտանիքների քանակը հնարավորություն է տվել այդ կրճատումների հաշվին էականորեն բարձրացնել նպաստների չափերը:

426. Մարզի բնակչությունը հիմնականում քաղաքային է: Նպաստառու ընտանիքների ներկայացվածությունը էապես ավելի մեծ է քաղաքային ընտանիքների շրջանում՝ նպաստառու է քաղաքային տնային տնտեսությունների 7,3%-ը, մինչդեռ գյուղական տնային տնտեսությունների՝ ընդամենը 5.9%-ը: Ընտանեկան նպաստների և այլ սոցիալական օգնության ծրագրերի իրականացման պատասխանատուները

սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններն են: Վերջին տարիներին ՀՀ ԱՍՀՆ-ի և ՀԲ-ի համագործակցության շրջանակներում սոցիալական հետազոտությունների Ազգային ինստիտուտում իրականացվում են սոցիալական աշխատողների վերապատրաստման դասընթացներ: Մարզից այդ դասընթացներին մասնակցել է 24 մասնագետ, որից 4-ը մարզպետարանի, իսկ 20-ը՝ ՍԾՏԳ-ների աշխատակիցներ:

#### 5.4.2 ՀՀ Սյունիքի մարզի սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը

427. Տվյալ ոլորտում մարզի զարգացման գերակա նպատակն է համարվում սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը: Այն կարող է իրագործվել սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկման բարձրացման, սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության միջոցառումների ընդլայնման, այդ կապակցության սոցիալական ծառայություններ մատուցող պետական և ոչ պետական կառույցների համագործակցության, սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստման, սոցիալական ծառայության գործակալությունների նյութատեխնիկական բազայի բարելավման, ինչպես նաև սոցիալական ծառայությունների համակարգի կառավարման բարելավման միջոցով:

428. Այս առումով մարզի համար սոցիալական պաշտպանության բնագավառում կարևորվում է սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության ծառայությունների ընդլայնումը: Այդպիսի ծառայություններից են.

- 1) Հաշմանդամների տվյալների տեղեկատվական բանկի և հանրապետական ցանցի ստեղծումը
- 2) Հաշմանդամների համար շրջակա միջավայրի մատչելիության ապահովումը.
- 3) Միայնակ տարեցների և հաշմանդամների տնային սպասարկման համակարգի ընդլայնումը և նոր տեխնոլոգիաների ներդրումը
- 4) Խնամատար ինստիտուտի ներդրման աշխատանքների շարունակության ապահովում
- 5) փախստականներին հասարակությանը ինտեգրվելու ծրագրերի իրագործումը,
- 6) Մարզի սոցիալական ծառայության գործակալությունների նյութատեխնիկական պայմանների բարելավումը
- 7) ՀԿ-ների, ՏԻՄ-երի, ՍԾՏԳ-ների միջև տեղեկատվության փոխանակման, մարզի մակարդակով իրականացվող սոցիալական ծրագրերի համակարգման մեխանիզմների մշակումը և ներդրումը
- 8) Սոցիալական ծառայությունների բնագավառի մասնագետների շարունակական վերապատրաստումը:

429. Ներկա տնտեսական ճգնաժամի պայմաններում առավել կարևոր խնդիր պետք է համարվի սոցիալական ոլորտի ծրագրերի ուշադրության կենտրոնում պահելը, քանի որ կարող է կտրուկ ավելանալ խոցելի խմբերի աղքատության մակարդակը: Սոցիալական պաշտպանության ոլորտի ֆինանսավորումը ներկայացված է [Հավելված 5.10-ում](#):

## 5.5 Երեխաների իրավունքների պաշտպանություն

430. Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառում պետական քաղաքականությունն իրականացվում է «Երեխայի իրավունքների մասին», «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 18-ի N1745 որոշմամբ հաստատված «Հայաստանի հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թվականների ազգային ծրագրի» համաձայն: Ծրագրի շրջանակներում սոցիալ-հոգեբանական, բժշկական, իրավական, խնամքի և դաստիարակության ծառայություններ են մատուցվում խնամքի գիշերօթիկ հաստատությունում և ընտանիքներում խնամվող առանց ծնողական խնամքի մնացած, կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված, խնամքի և դաստիարակության անբարենպաստ պայմաններում գտնվող երեխաներին:

431. Այսօր սոցիալական քաղաքականության երեխայի հիմնահարցերի լուծման հիմնական ուղղվածություններն են.

- 1) երեխաների խնամքի և պաշտպանության միասնական համակարգի ստեղծում
- 2) երեխայի խնամքի և պաշտպանության հաստատություններում երեխաների թվի նվազեցում և այդ հաստատություններում երեխաների մուտքի կանխարգելում
- 3) երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների բարելավում
- 4) առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հիմնախնդիրներ
- 5) հաշմանդամ երեխաների հիմնախնդիրներ
- 6) պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների երեխաների հիմնախնդիրներ
- 7) մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների հիմնախնդիրներ
- 8) աղքատ ընտանիքներում երեխաների պաշտպանության հիմնախնդիրներ:

432. Այս գործառնություններն իրականացվում են մարզպետարանի աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի միջոցով:

433. Կապանում կա երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն, որն ունի մոտ 110 սան:

434. Մարզի այս ոլորտի աշխատանքներին մեծ աջակցություն են ցուցաբերում «Վորլդ Վիժն» ՄԲԿ Հայաստանյան մասնաճյուղի Կապանի և Սիսիանի զարգացման կենտրոնները:

435. UNICEF-ի ֆինանսավորմամբ Գորիս համայնքում բացվել է երեխաների խնամքի ցերեկային կենտրոն, որտեղ տարբեր տեսակի ծառայություններից օգտվում են 100 երեխաներ:

436. Անհրաժեշտություն է առաջացել մարզի մյուս տարածաշրջաններում ևս ունենալ երեխաների աջակցության և խնամքի ցերեկային կենտրոններ, որոնք ավելի արդյունավետ կդարձնեն երեխաների պաշտպանության մարզային համակարգը:

437. Կարևորվում է նաև երեխային մատուցվող ծառայությունների ապակենտրոնացման և համայնքների ներգրավված սկզբունքը՝ խնամքի ցերեկային կենտրոնների ստեղծման միջոցով, քանի որ մարզում քիչ չեն սոցիալական տարբեր հիմնախնդիրներ ունեցող երեխաները:

438. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը կարևորելով առողջապահության ոլորտի դերը, հիմնական նպատակների շրջանակներում առանձնացնում է առողջապահական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը: ԿԶԾ-ի շրջանակներում գերակա է համարվել առաջնային բուժօգնության ոլորտը, իսկ ծրագրային մակարդակով՝ հատուկ կարևորվել են մոր և մանկան առողջության պահպանումը, ինչպես նաև վարակիչ հիվանդությունների

կանխարգելման խնդիրները: Դրված նպատակների ապահովման հարցում մեծ դեր է վերագրվել առողջապահության ոլորտում պետական ծախսերի ավելացմանը, պետական ծախսերի ներդրության վերաբաշխմանը՝ ի օգուտ առաջնային բուժօգնության օղակի, ինչպես նաև համակարգի կառավարման բարեփոխումների արդյունքում ակնկալվող արդյունավետության բարձրացմանը:

439. Հայաստանը, բնակչության առողջական վիճակը բնութագրող ցուցանիշների առումով համանման եկամտի մակարդակ ունեցող երկրների համեմատ, հիմնականում գտնվում է ավելի լավ վիճակում: Այդուհանդերձ, զարգացած երկրների հետ համեմատականները վկայում են, որ շատ դեպքերում խզումը նշանակալի է, մասնավորապես այնպիսի ցուցանիշների գծով, ինչպիսիք են մանկական և մայրական մահացությունը (Աղյուսակ 5.18):

Աղյուսակ 5.18. ՀՀ Սյունիքի մարզի միակողմանի և երկկողմանի ծնողագուրկ, հաշմանդամ, մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ երեխաների մասին թվային տվյալները ըստ տարածաշրջանների (2008թ.)

| Տարածաշրջան | Միակողմանի<br>ծնողագուրկ<br>երեխաների թիվը | Երկկողմանի<br>ծնողագուրկ<br>երեխաների | Հաշմանդամ<br>երեխաներ | Մուրացիկ,<br>թափառաշրջիկ,<br>իրավախախտ |
|-------------|--|---------------------------------------|-----------------------|--|
| Կապան       | 375  | 17                                    | 202                   | 7                                      |
| Գորիս       | 355  | 9                                     | 182                   | 2                                      |
| Սիսիան      | 177  | 14                                    | 122                   | 1                                      |
| Մեղրի       | 26   | 3                                     | 27                    | -                                      |
| Ընդամենը    | 933  | 43                                    | 534                   | 10                                     |

Աղբյուրը՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի երեխաների իրավունքների պաշտպանության բաժին

## 6. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

### 6.1 . ՀՀ Սյունիքի մարզում արդյունաբերության և էներգետիկայի իրավիճակն ու ներկա ցուցանիշները

440. ՀՀ Սյունիքի մարզը պատմականորեն եղել է արդյունաբերական տեսանկյունից Հայաստանի ամենազարգացած մարզերից մեկը:

441. Ի լրումն հանքարդյունաբերությանը, Սյունիքում զարգացած էր նաև արդյունաբերության այլ ճյուղեր և ձեռնարկություններ՝ էլեկտրատեխնիկական, մեքենաշինության, թեթև և սննդի արդյունաբերության, շինանյութերի և փայտամշակման ձեռնարկություններ:

442. Մարզում համեմատաբար զարգացած տնտեսության մյուս ոլորտներն էին շինարարությունը, կահույքի արտադրությունը, էլեկտրաէներգետիկան և մեխանիկական գործարանները: Մարզում տեղական բնական շինանյութերի առկայությունը և քաղաքաշինության ու ճանապարհաշինության հարաճուն պահանջները նպաստել էին Կապանում երկաթետոնե կոնստրուկցիաների խոշոր արտադրության կազմակերպմանը, Մեղրիում խճաքարերի արտադրության կոմբինատի կառուցմանը, Գորիսում և Սիսիանում շինանյութերի կոմբինատների կառուցմանը: Կապանի կահույքի գործարանը մարզի քաղաքներին և այլ բնակավայրերին մատակարարում էր փայտամշակման տարբեր արտադրատեսակներ:

443. ՀՀ Սյունիքի մարզը, ինչպես ողջ Հայաստանի Հանրապետությունը, նախկին Խորհրդային Միության փլուզումից հետո սկսել է մի շարք պրոբլեմների ու խոչընդոտների հանդիպել սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր ոլորտներում: Սյունիքի մարզը յուրահատուկ խնդիրներ ունի, որոնք բաժանված են օբյեկտիվ և սուբյեկտիվ խնդիրների և խոչընդոտների:

444. ՀՀ Սյունիքի մարզը Ադրբեջանի հետ ռազմական բախումների ժամանակ ամենից ավելի տուժած տարածաշրջաններից է: 1992թ.-ից սկսած մինչև 1994թ. կեսերը մարզի ամենախոշոր համայնքները, այդ թվում նաև Կապան և Գորիս քաղաքները գտնվում էին Ադրբեջանի հրետանու և օդային ռմբակոծության ներքո: Ռազմական բախումը բավականին մեծ բացասական ազդեցություն է գործել մարզի տնտեսության և ընդհանուր սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա:

445. Նախ՝ շարունակ ռմբակոծությունների արդյունքում ավերվել են բազմաթիվ բնակելի շենքեր և սոցիալական ու արդյունաբերական ենթակառուցյուններ: Մարզի վերակառուցման համար պահանջվում էին կառավարության, ՓՄՁ-երի և բնակչության լայնածավալ ներդրումներ:

446. Երկրորդը՝ ռազմական բախումների հետևանքով Սյունիքի մարզի սահմանամերձ որոշ տարածքներ ականապատվել են: Չնայած, որ ներկայումս թեկուզ դանդաղ, բայց տեղի է ունենում տարածքների ականազերծում, սակայն միայն այս փաստն արդեն կարևոր սահմանափակում է հանդիսանում այդ 1500 հեկտար հողատարածությունում գյուղատնտեսությունը զարգացնելու համար:

447. Երրորդ, ռազմական բախումները թիրախել են խաղաղ բնակչությանը, ինչը հանգեցրել է մարզից բնակչության լայնածավալ արտահոսքի: Վերջինս լրացուցիչ պրոբլեմներ է առաջացրել, ինչպիսիք են ներքին շուկայի փոքր չափերը, գյուղատնտեսական ծրագրերի համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսների պակասը և այլն:

448. ՀՀ Սյունիքի մարզի տնտեսական ներուժին չափազանց մեծ վնաս հասցրեց նախկինում տասնյակ հազարավոր աշխատատեղեր ապահովող խոշոր ձեռնարկությունների քայքայումը՝ սեփականաշնորհման, հումքի և իրացման

շուկաների բացակայության և բարոյաֆիզիկական մաշվածության պատճառներով: Մարզի տասնյակ էլեկտրատեխնիկական, մեքենաշինական, թեթև և սննդի արդյունաբերական ձեռնարկությունները փակվեցին կամ էլ աշխատում էին փոքր հզորությամբ:

449. Ներկայումս Հայաստանում լայնածավալ ապրանքների և ծառայությունների տեղական սպառման էական աճ է նկատվում: Բավականին մեծ տեղական շուկայի առկայությունը արդյունաբերության աճի և մասնավորապես ՓՄՁ զարգացման հիմնական գործոններից մեկն է: Այնուամենայնիվ, չնայած վերոնշյալ էական աճին, երկրում սպառման մեծ մասը կենտրոնացած է Երևանում: Արդյունքում, երկրում առկա են հարաբերականորեն մեծ շուկայի չափերը, սակայն ապրանքների և ծառայությունների պահանջարկը մարզերում և մասնավորապես ՀՀ Սյունիքի մարզում չափազանց ցածր է: Այս տեսանկյունից Սյունիքը Հայաստանի մյուս մարզերի համեմատությամբ ամենավատ դիրքում է գտնվում, քանի որ այն գտնվում է Երևանից՝ սպառողական ամենամեծ շուկայից բավականին մեծ հեռավորության վրա: Ավելին, քանի որ մայրուղիները գտնվում են լեռնային մասերում, ապա Սյունիքից Երևան հասնելու համար պահանջվող ժամանակահատվածը չի համապատասխանում հեռավորությանը: Այդ իսկ պատճառով հիմնական սպառման շուկայի հասանելիությունը բավականին թույլ է և լուրջ թերություններ է ստեղծում մարզի արդյունաբերության և մասնավորապես ՓՄՁ-երի համար:

450. Ստորև ներկայացվում է ՀՀ Սյունիքի մարզի մակրոտնտեսական ցուցանիշները վերջին երեք տարիներին և արդյունաբերական արտադրանքի ծավալների տեսակարար կշիռը ՀՀ արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում:

Աղյուսակ 6.1. ՀՀ Սյունիքի մարզի մակրոտնտեսական ցուցանիշները և մասնաբաժինը ՀՀ արդյունաբերական արտադրանքի ծավալում

/ընթացիկ գներով/

| N/N   | Տնտեսական ցուցանիշներ   | 2006թ.           |   | 2007թ.           |   | 2008թ.           |   |
|-------|---|------------------|---|------------------|---|------------------|---|
|       |   | ՀՀ Սյունիքի մարզ | Մասը հանրապետության արտադրության ծավալի մեջ /%/ | ՀՀ Սյունիքի մարզ | Մասը հանրապետության արտադրության ծավալի մեջ /%/ | ՀՀ Սյունիքի մարզ | Մասը հանրապետության արտադրության ծավալի մեջ /%/ |
| 1     | Արդյունաբերական արտադրանքի ծավալը /մլն. դրամ/   | 121269.4         | 18.8  | 123269.9         | 17.2  | 112235.0         | 14.9  |
| 2     | Էլ.էներգիայի, գազի, ջրի արտադրություն և բախշում /մլն. դրամ/   | 12140.6          | 10.8  | 11090.6          | 8.9   | 9169.6           | 6.7   |
| 3     | Արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը՝ առանց էլ.էներգիայի, գազի, ջրի արտադրության և բախշման /մլն. դրամ/ այդ թվում | 109128.8         | 20.5  | 112179.3         | 19.0  | 103065.4         | 16.8  |
| 3.1   | Հանքագործական արդյունաբերություն  | 104082.6         | 91.7  | 105705.2         | 92.8  | 96565.0          | 91.6  |
| 3.2   | Մշակող արդյունաբերություն՝ որից   | 5046.2           | 1.2   | 6474.1           | 1.4   | 6500.5           | 1.2   |
| 3.2.1 | սննդամթերք, ներառյալ խմիչքներ   | 3104.0           | 1.6   | 3641.8           | 1.7   | 4173.2           | 1.7   |
| 3.2.2 | մանածագործական արտադրություն  | 111.5            | 4.0   | 133.2            | 6.3   | 126.0            | 6.5   |


|       |  |          |      |          |      |          |      |
|-------|--|----------|------|----------|------|----------|------|
| 3.2.3 | հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում         | 10.7     | 0.5  | 87,8     | 3.3  | 62.6     | 1.9  |
| 3.2.4 | բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն  | 40.4     | 2.8  | 38,5     | 2.6  | 7.8      | 0.7  |
| 3.2.5 | քիմիական արդյունաբերություն                              | 27.6     | 0.2  | 36,7     | 0.2  | 28.5     | 0.2  |
| 3.2.6 | այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն | 823.3    | 2.6  | 1147,8   | 2.8  | 835.2    | 1.7  |
| 3.2.7 | պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն           | 193.4    | 1.9  | 488,5    | 3.3  | 515.1    | 2.7  |
| 3.2.8 | մեքենաների և սարքավորանքի արտադրություն                  | 458.9    | 6.6  | 514.8    | 6.4  | 448.5    | 6.7  |
| 3.2.9 | գործունեության այլ տեսակներ                              | 276.4    | 0.2  | 385.0    | 0.2  | 303.6    | 0.2  |
| 4     | Էլեկտրաէներգիայի արտադրությունը, /մլն.կվտ.ժ./ ընդամենը   | 1053.6   | 17.7 | 1052.1   | 17.9 | 969.6    | 15.8 |
| 4.1   | ա.թ. հիդրոէլեկտաէներգիայի արտադրությունը                 | 1053.6   | 57.8 | 1052.1   | 56.7 | 969.6    | 53.3 |
| 5     | Գյուղատնտեսության համախառն արտադրանքը, /մլրդ. դրամ/      | 53.4     | 9.6  | 57.7     | 9.1  | 58.0     | 9.1  |
| 6     | Պատրաստի արտադրանքի իրացումը ընթացիկ գներով /մլն. դրամ/  | 124725.9 | 19.0 | 120723.3 | 16.8 | 108448.2 | 14.6 |

Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով» 2007թ., 2008թ., «Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը» 2008թ., էջ 11

451. ՀՀ Սյունիքի մարզի արդյունաբերական ձեռնարկությունների ապրանքային արտադրանքի ծավալը 2008 թվականին (ընթացիկ տարվա գներով) կազմել է 112235.0 մլն. դրամ, նախորդ տարվա համեմատ նվազել է 11.5%-ով, որը միջազգային շուկայում գունավոր մետաղների գների անկման արդյունք է (համադրելի գներով այն կազմել է 112333.9 հազ. դրամ կամ նախորդ տարվա համեմատ 1.6%-ով ավել): Իրացվել է 108448.2 մլն. դրամի արտադրանք, այդ թվում ԱՊՀ երկրներում 117.3 մլն. դրամի, այլ երկրներում՝ 35781.4 մլն. դրամի արտադրանք:

452. Մարզի արդյունաբերության 2008 թվականի համախառն արտադրանքի կառուցվածքն ունի հետևյալ պատկերը.

Գծապատկեր 6.1



453. 2008 թվականին հանրապետությունում թողարկված արդյունաբերական արտադրանքի 14.9%-ը բաժին է ընկնում ՀՀ Սյունիքի մարզի արդյունաբերական կազմակերպություններին (տես՝ աղյուսակ 1), զբաղեցնելով երկրորդ տեղը Երևանից հետո:

454. Առանձնակի նշանակություն ունի նաև հիդրոէներգետիկ ոլորտը: Էլեկտրաէներգիայի արտադրությունը կազմում է մարզի արդյունաբերական համախառն արտադրանքի մոտ 7.7%-ը:

455. Մշակող արդյունաբերության ծավալը տարեցտարի ավելացել է և 2008 թ.-ին 2006թ.-ի համեմատ աճը կազմել է 28.8%, հիմնականում ի հաշիվ սննդամթերքի արտադրության (աճ՝ 34.4%) և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրության (աճ՝ 166.3%): Ընդ որում մշակող արդյունաբերության ընդհանուր ծավալում սննդամթերքի և խմիչքների արտադրությունը կազմում է 64.2%, իսկ մետաղե արտադրատեսակների արտադրությունը՝ 7.9%: Սննդամթերքի և խմիչքների արտադրության ենթաոլորտում ամենամեծ տեղը զբաղեցնում են հացի արտադրությունը 71.0%-ով և կաթի վերամշակում ու կաթնամթերքի արտադրությունը՝ 22.2%-ով:

456. 2008 թվականին մարզի արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ տարածաշրջանների ունի հետևյալ պատկերը.

Աղյուսակ 6.2.33 Սյունիքի մարզի արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ տարածաշրջանների

|   | Տարածաշրջաններ                | Թողարկված արտադրանքի ծավալը<br>/ընթացիկ գներով/ մլն. դրամ |          |          |
|---|-------------------------------|---|----------|----------|
|   |                               | 2006թ.  | 2007թ.   | 2008թ.   |
|   | Ընդամենը Սյունիքի մարզ, ա. թ. | 121269.4  | 123269.9 | 112235.0 |
| 1 | Կապան                         | 89033.6   | 90916.6  | 80873.3  |
| 2 | Գորիս                         | 9814.8  | 8307.8   | 2281.1   |
| 3 | Սիսիան                        | 342.6   | 432.0    | 432.2    |
| 4 | Մեղրի                         | 17135.7   | 17796.0  | 18613.9  |

Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի սոցիալ-տնտեսական վիճակը» 2006թ., 2007թ., 2008թ., ՀՀ ԱԿԾ

457. Հատկանշական է, որ մարզի արդյունաբերական կազմակերպությունների ընդհանուր քանակում գերակշռել են գերփոքր (39.5%) և փոքր (45.7%) կազմակերպությունները, որոնք թողարկել են արդյունաբերական արտադրանքի 2.0%-ը, այն դեպքում, երբ 8.6% կազմող խոշոր կազմակերպություններին բաժին է ընկել արդյունաբերական արտադրանքի ամբողջ ծավալի 96.9%-ը:

458. Չնայած արդյունաբերական արտադրանքի ծավալը վերջին տարիներին անշեղորեն աճում է, սակայն սոցիալական վիճակը մնում է լարված, քանի որ արդյունաբերության մեջ զբաղվածների մոտ 3/4-ը աշխատում է լեռնահանքային ճյուղում, և այս ճյուղի ձեռնարկությունների հնարավորությունները նոր աշխատատեղերի ստեղծման առումով սահմանափակ են: Դա հնարավոր է միայն մարզային արդյունաբերական համալիրի ձևավորման, վերամշակող արդյունաբերության տարբեր ճյուղերի զարգացման, մարզի ներսում ներճյուղային ու միջճյուղային արտադրական կապերի ստեղծման դեպքում: Ընդ որում, կարևոր խնդիր է արդյունաբերության ճյուղային կառուցվածքի բարեփոխումը՝ հնարավորին չափով այն համապատասխանեցնելով մարզի աշխարհագրական դիրքի, բնական ու աշխատանքային ռեսուրսների առանձնահատկություններին:

459. Լեռնահանքային արդյունաբերության տեսակարար կշիռը բարձրացավ 1990-ական թվականներին: Այդ ժամանակ մեծ հզորությամբ սկսեցին աշխատել նախ Քաջարանի, իսկ այնուհետև նաև Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատները, որոնք միասին ապահովում էին 4000-ից ավել աշխատատեղ:

460. Ինչպես ներկայացվեց, մարզի ողջ արդյունաբերությունը մեծապես կախված է հանքարդյունաբերության ոլորտից և մասնավորապես «Չանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ից և ավելի քիչ «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ-ից ու «Դինո Գոլդ Սայնինգ Քամփնի» ՓԲԸ-ից: Եթե



այս ձեռնարկությունները հաշվի չառնվեն, ապա Սյունիքը կհամարվի ամենավատթար սոցիալ-տնտեսական պայմաններում գտնվող մարզերից մեկը Հայաստանում:

461. Ի լրումն ներկայացված Աղյուսակ 6.1.-ի մակրոտնտեսական ցուցանիշների, մարզում շահագործվող ստորև ներկայացված լավագույն տասն ձեռնարկությունները կրկին ապացուցում են մեծ կախվածությունը հանքարդյունաբերությունից.

- 1) «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ (հանքարդյունաբերություն)
- 2) «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ (հանքարդյունաբերություն)
- 3) «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ (հանքարդյունաբերություն)
- 4) «Որոտանի ՀԷԿ-երի համակարգ» ՓԲԸ (էլեկտրաէներգիա)
- 5) «Կապանի մեքենաշինական գործարան» ԲԲԸ (առաջատար դիրքը լավագույն տասնյակում պայմանավորված է մեծ ծավալներով մեքենաների վերանորոգմամբ, որոնք տրամադրվում են ՁՊՄԿ-ի կողմից)
- 6) «Սիսիանի ՇԻԿ» ԲԲԸ (քարերի արդյունահանում և մշակում)
- 7) «Զանգեզուր Տեքստիլ» ՓԲԸ (առաջատար դիրքը լավագույն տասնյակում պայմանավորված է ՁՊՄԿ-ին մեծ ծավալներով տեքստիլ ապրանքների, մասնավորապես պարկերի, աշխատանքային համազգեստի մատակարարմամբ)
- 8) Սիսիան «Գրանդ Մարկուս» ՍՊԸ (տրավերտիների մշակում)
- 9) «Մեղրու պահածոների գործարան» ԲԲԸ (սննդամթերքի մշակում)
- 10) «Վայբլ» ՍՊԸ (կրաքարի արտադրություն)

462. Արդյունքում, ինչպես ներկայացված է վերոնշյալ ցանկում ՀՀ Սյունիքի մարզում գործող լավագույն տասն ձեռնարկություններից վեցն ուղղակիորեն առնչվում են նշված հանքարդյունաբերության և էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտներին: Ավելին, մնացած չորս ձեռնարկություններից երեքը ներգրավված են տարբեր տեսակի շինարարական քարերի արդյունահանման և վերամշակման մեջ: Առաջատար հանքարդյունաբերության կոմբինատների առկայությունը մարզում ակնհայտ առավելություն է Սյունիքի համար և մարզի արդյունաբերական և ընդհանուր սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական գործոնն է: Այնուամենայնիվ, արդյունաբերության այլ ճյուղերի և ենթակառուցվածքի հսկայական կախվածությունը հանքարդյունաբերությունից վտանգ է սպառնում մարզի տնտեսական զարգացմանը, քանի որ պոտենցիալ վարընթաց դինամիկան այդ ոլորտում կամ բացասական իրավիճակը մետաղների միջազգային շուկաներում հանգեցնում են նաև արդյունաբերության այլ ոլորտներում բացասական տենդենցների:

463. Ոլորտում մարզի առկա հիմնախնդիրները պայմանավորված են հիմնականում հետևյալ գործոններով.

- 1) մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությունը
- 2) տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությունը
- 3) աշխատատեղերի անբավարար թիվը /գործազրկությունը մոտ 2 անգամ բարձր է հանրապետական միջին ցուցանիշից/
- 4) պատերազմական գործողությունների հետևանքով կրած զգալի վնասները
- 5) վերը նշված և առանձին գործոններով պայմանավորված՝ կապիտալ ներդրումների դեռևս ոչ բավարար մակարդակը և այլն:

464. ՀՀ Սյունիքի մարզն ունի անհրաժեշտ բոլոր նախապայմանները մարզում առկա հիմնախնդիրները լուծելու, սոցիալ-տնտեսական վիճակը լրջորեն բարելավելու, բազմաճյուղ տնտեսություն ստեղծելու և զարգացնելու համար:

465. Չնայած ՀՀ Սյունիքի մարզում արդյունաբերական արտադրանքի ծավալը տարեցտարի աճում է, սակայն մարզում սոցիալական վիճակը մնում է լարված, քանի որ արդյունաբերության մեջ զբաղվածների 70%-ից ավելին աշխատում են լեռնահանքային ճյուղում և այս կազմակերպությունների հնարավորությունները նոր աշխատատեղեր ստեղծելու առումով սահմանափակ են, իսկ մշակող արդյունաբերության և մնացած ոլորտներում զբաղված են մոտ 2300 մարդ:

466. Նշված խնդիրների լուծմանը մեծապես կնպաստեն երկարաժամկետ ներդրումները և վարկավորման ծրագրերի իրականացումը մարզի տարածքում:

467. ՀՀ Սյունիքի մարզում 2010-2013 թվականներին նախատեսվում է ստեղծել նոր ձեռնարկություններ՝ մարզի հիդրոէներգետիկ պոտենցիալի օգտագործմամբ, փոքր ՀԷԿ-եր կառուցելով և շահագործելով, ինչպես նաև տեղական հումքի վերամշակման, սննդի արտադրության և մարզի թեթև արդյունաբերության (առկա պոտենցիալի օգտագործմամբ) ձեռնարկությունները վերաբացելով:

468. «Սոնա Տեքս» ԲԲԸ-ն Կապանում Հայաստանի ամենաառաջատար և լավագույն սարքավորումներով հագեցած ձեռնարկությունն էր: 1980-ական թթ. վերջերին և 1990-ական թթ. սկզբներին նախքան ՆԽՄ փլուզումը ընկերությունը ձեռք բերեց և տեղակայեց Շվեյցարական «Dubiet» գործող մեքենաները, որոնք հնարավորություն էին տալիս ընկերությանը արտադրել մեծաքանակ բարձրորակ վերջնական արտադրանք: Կապանի կենտրոնում գտնվող այս ձեռնարկությունն ուներ ավելի քան 1000 աշխատակից (հիմնականում աշխատում էին կանայք) և ողջ ՆԽՄ-ին հագուստեղեն էր մատակարարում: Ընկերության ղեկավարությունը մի շարք ջանքեր է գործադրել իրացումը զարգացնելու ուղղությամբ: Մասնավորապես, ընկերությունը կապեր է հաստատել տարբեր գործակալների հետ և մի շարք արտահանման ծրագրեր է իրականացրել դեպի Հյուսիսային Ամերիկա և Եվրոպա: Ի լրումն, «Սոնա Տեքս» ԲԲԸ-ն ստացել է մոտ 500,0 հազ. ԱՄՆ դոլար վարկ Լինսի հիմնադրամի վարկային միջոցներից, որը նույնպես ուղղվել է արտահանման վաճառքի զարգացմանը: Այնուամենայնիվ, չնայած որոշակի ջանքերին և բարձրորակ տեխնոլոգիաների առկայությանը ընկերությունը ներկայումս շահագործում է արտադրական հզորությունների չնչին մասը:

469. 2010 թվականին սեփականատերերի կողմից նախատեսվում է կատարել 200.0 մլն. դրամ ներդրում, «Սոնա Տեքս» ԲԲԸ-ի վերագործարկում, որը կստեղծի մինչև 300 նոր աշխատատեղ:

470. «Գորիսի Գամմա» ԲԲԸ-ն հավանաբար ոլորտը ներկայացնող ամենահաջող ձեռնարկությունն է Սյունիքի մարզում: Ընկերությունը մասնագիտացած է էլեկտրական գործիքների, մեքենաների, ճշգրիտ մեքենաշինության նյութերի և օպտիկական նյութերի նախագծման և արտադրության մեջ: Ընկերության արտադրանքի ավելի քան 75% արտահանվում էր հիմնականում Ռուսաստան և Կանադա: Այս ընկերությունում խնդիր է հանդիսանում այն հանգամանքը, որ վերջին մի քանի տարիներին արտադրության ծավալը աստիճանաբար նվազել է: Ընկերությունն ունի ISO 9001 որակի սերտիֆիկատ և կանոնավոր կերպով մասնակցում է համապատասխան տեղական և միջազգային միջոցառումներին, ինչպիսիք են CEBIT 2003-ը Գերմանիայում: Չնայած ընկերության սարքավորումները հիմնականում բաղկացած են 80-ական թթ.-ին տեղակայված Խորհրդային արտադրության տեխնոլոգիաներից, այնուամենայնիվ դրանք լավ են պահպանվել և դեռևս ի վիճակի են հարաբերականորեն մրցունակ ապրանքներ արտադրել: Ընկերությունում ներդրված և թողարկվող կոլեկտորային շարժիչների բազայի վրա կարող է թողարկել կենցաղային էլեկտրասարքավորումներ, ինչպիսիք են ջրի և յուղի պոմպերը, էլեկտրական կտրող և հղկող գործիքներ: Առաջիկայում նախատեսվում է թողարկվող արտադրանքի ծավալի 10-12% աճ:

471. «Լեռ-էքս» ՍՊԸ-ն հիմնադրվել է 1999 թվականին, զբաղվել է էլեկտրաէներգիայի արտադրությամբ, իրականացրել է երկրաբանական-հետախուզական աշխատանքներ: 7500.0 մլն. դրամ լրացուցիչ ներդրումից հետո 2010 թվականին կընդլայնվի «Լեռ-էքս» ՍՊԸ-ին պատկանող Հանքասարի պղնձամոլիբդենային կոմբինատը, տարեկան 150-250 հազ. տոննա պղինձ-մոլիբդենային հանքաքար արտադրողականությամբ: Ստորգետնյա հանքուղին պատրաստված է և պիտանի է շահագործման, ապահովված է էլեկտրասնուցումը, կառուցված են ավտոճանապարհները և աշխատանքային հրարապարակները: Ֆաբրիկայի համար նախատեսվող տարածքի հողային աշխատանքները ավարտված են ձեռք են բերվել որոշակի սարքավորումներ և մեխանիզմներ: Պայմանագրեր են կնքված նախագծային ինստիտուտների հետ և ներկայումս իրականացվում են նախագծային աշխատանքներ: Կստեղծվեն մինչև 550 նոր աշխատատեղեր, որը կնպաստի Գեղիի ենթաշրջանի փախստականաբնակ գյուղական բնակավայրերի արտագաղթի նվազմանը:

472. «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ի հենքի վրա 2010-2011 թվականներին նախատեսվում է պղնձի խտանյութի հիդրոմետալուրգիական եղանակով վերամշակման գործարանի շահագործում Բաջարանում՝ մոտ 500 նոր աշխատատեղով:

473. «Վի Էյջ Սթոուն» ՍՊ ընկերությունը (նախկին «Սիսիան-Գրանիտ» ՍՊԸ) հիմնադրվել է 2000 թվականին Սիսիանում և զբաղվում էր բնական քարերի (գրանիտ, գաբրոդիորիտ, տրավերտին և մարմար) արդյունահանմամբ և մշակմամբ: Գործարանը հագեցած է ժամանակակից սարքավորումներով և մեքենաներով: Նպատակ ունի առաջիկա 2-3 տարիների ընթացքում աշխատատեղերի քանակը հասցնել ավելի քան 400-ի և քարերի արդյունահանման և մշակման արտադրության ծավալներով լինել առաջատարների շարքում: Ներկայումս շահագործվում է երկու հանքավայր, ևս երկու հանքավայրի շահագործումը կավարտվի 2009թ.-ին և Սիսիանի տարածաշրջանի չորս գյուղական համայնքներում (Շաքի, Շենաթաղ, Բռնակոթ և Արևիս) կստեղծվեն 70-80 նոր աշխատատեղեր: 2009թ. նախատեսվում է նաև ստեղծել քարերի ձևավոր մշակման արտադրամաս (աստիճաններ, լուսամուտագոգեր, վանդակաճաղեր, սյուներ, սյունակալներ, քիվեր և այլն): Սարքավորումները պատվիրված են իտալական առաջատար գործարաններից մեկում: 2009թ.-ն կավարտվի նաև ժամանակակից, էկոլոգիապես մաքուր ջրամաքրման համակարգի շինարարական և շինմոնտաժային աշխատանքները: Այն հնարավորություն է տալիս կազմակերպել անթափոն արտադրություն(քարի փոշուց կստատան արհեստական սալիկներ) և կապահովի 200-230 աշխատատեղ: Գործարանի արտադրանքի մոտ 75-80 %-ը նախատեսվում է արտահանել, իսկ 20-25%-ը իրացնել ներքին շուկայում:

474. Մրգերի և բանջարեղենի մշակումը Մեղրու տարածաշրջանում մեծ հնարավորություն է տալիս Սյունիքի մարզում ունենալ ոչ միայն ամենաառաջատար պահածոների գործարան, այլ նաև աճեցնել բազմատեսակ մրգեր և արտահանել պատրաստի արտադրատեսակներ: «Մեղրու պահածոների գործարան» ԲԲԸ-ում 2010 թվականից սեփականատերերի կողմից նախատեսվում է կատարել 150.0 մլն. դրամ ներդրում, ապահովելով արտադրանքի ծավալների աճ՝ տարեկան 20%-չափով (նաև ի հաշիվ նոր արտադրատեսականու՝ նռան հյութի տարեկան մինչև 100.0 հազ. լիտր արտադրանքի թողարկման)՝ ստեղծելով նոր աշխատատեղեր:

475. Սիսիանի տարածաշրջանի Դարբաս համայնքի Շամբ բնակավայրում 2009թ.-ին կգործարկվի «Արսեն և Ներսես» ՍՊԸ-ի հանքային ջրերի գործարանը և «Շամբ բիզնես» ՍՊԸ-ի պահածոների գործարանը: Սեփականատերերի կողմից կատարված 1300.0 մլն. դրամ ներդրումների հաշվին վերանորոգվել է գործարանի շենքը, ձեռք են բերվել նորագույն սարքավորումներ, կստեղծվեն 80-100 նոր աշխատատեղեր:

Սեփականատերը պայմանավորվածություն ունի տարածաշրջանի գյուղացիական տնտեսությունների հետ բանջարեղենի և մրգերի բերքի ընդունման համար:

476. 2010թ.-ին նախատեսվում է ավարտել Քարաշենի ցեմենտի գործարանի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը:

477. Վերջին երկու տարիների ընթացքում ՀՀ Սյունիքի մարզում որոնողագնահատողական աշխատանքների համար երկրաբանական ուսումնասիրության հատուկ լիցենզիա են ստացել թվով 21 ընկերություններ, իսկ երկրաբանական հետազոտությունների համար՝ 38 ընկերություններ ([Հավելված 6.1](#)):

478. 2008-2009թթ. ընթացքում ՀՀ Սյունիքի մարզում հանքարդյունահանման նպատակով կնքվել են թվով 5 ընդերքաօգտագործման լիցենզային պայմանագրեր հետևյալ կազմակերպությունների հետ.

- 1) «Ավիատրանս» ՓԲԸ, Արծվանիկի հրաբխային խարամի հանքավայր, Կապանի տարածաշրջան
- 2) «Լեռ-Էքս» ՍՊԸ, Հանքասարի պղինձ-մոլիբդենային հանքավայր, Կապանի տարածաշրջան
- 3) «Սոս-Սաքո» ՍՊԸ, Ալվանքի մոնցոնիտի հանքավայր, Մեղրիի տարածաշրջան
- 4) «Գլոբալ Գոլդ Հանքավան» ՍՊԸ, Մարջանի ոսկի-բազմամետաղային հանքավայր, Սիսիանի տարածաշրջան
- 5) «Վի Էյջ Սթուն» ՍՊԸ, Շենաթաղի գաբբրոների հանքավայր, Սիսիանի տարածաշրջան:

## 6.2. Հիդրոէլեկտրաէներգիայի արտադրություն

479. ՀՀ Սյունիքի մարզում հանքարդյունաբերության զարգացման հետ միասին ծնունդ առան և զարգացան նաև արդյունաբերության այլ ճյուղեր և ձեռնարկություններ: Հանքարդյունաբերությանը և տնտեսության մյուս ճյուղերին մատակարարելու համար անհրաժեշտ էր տարածաշրջանում ունենալ էներգետիկ կայուն բազա:

480. Տնտեսության տարբեր ճյուղերի, հատկապես լեռնահանքային արդյունաբերության հետագա զարգացումը նոր պահանջներ էր առաջադրում մարզի տարածքում նոր էներգետիկ հզորությունների ստեղծման համար: Սկսվեց մարզի հիդրոէներգետիկ պաշարների ինտենսիվ յուրացումը: Մասնավորապես Որոտան գետի վրա կառուցվեց հիդրոէլեկտրայանների համակարգ՝ 405 հազ. կՎտ.ժ հզորությամբ: Որոտանի համակարգի առաջնեկը՝ Տաթևի ՀԷԿ-ն է 157.0հազ. կՎտ.ժ հզորությամբ, որը տարեկան արտադրում էր մոտ 670մլն. կՎտ.ժ էլեկտրաէներգիա: Որոտան գետի վրա կառուցվեցին նաև Շամբի ՀԷԿ-ը՝ 171 հազ. կՎտ.ժ հզորությամբ, 350մլն.կՎտ.ժամ տարեկան արտադրությամբ և Սպանդարյանի ՀԷԿ-ը՝ 76 հազ. կՎտ.ժ հզորությամբ և 157մլն.կՎտ.ժ տարեկան արտադրությամբ: Համեմատաբար փոքր հզորությամբ ՀԷԿ-եր կառուցվեցին Մեղրիգետ և Ողջի գետերի վրա:

481. Ի լրումն Որոտանի ՀԷԿ-երի ներկայումս մի քանի փոքր ՀԷԿ-եր նույնպես գործում են Սյունիքում: Վերջին տարիներին ՀՀ կառավարությունը մի քանի միջազգային կազմակերպությունների, մասնավորապես Համաշխարհային Բանկի, ԵՄ, ԱՄՆ ՄՁԳ-ի և ԶՎԵԲ-ի հետ համագործակցությամբ մի շարք աշխատանքներ է նախաձեռնել, որոնք խթանում են վերականգնվող էլեկտրաէներգիայի արտադրության աղբյուրները և մասնավորապես փոքր և միջին հիդրոէլեկտրակայանների զարգացումն ամբողջ երկրում:

482. Ներկայումս (2008թ.) Հայաստանում ընդհանուր արտադրվող էլեկտրաէներգիայի 40%-ը արտադրվում է Մեծամորի ատոմակայանում, գրեթե 30 %-ը Հրազդանի և

Երևանի ջերմաէլեկտրակայանում և մնացած 30 %-ը խոշոր և փոքր ՀԷԿ-երում: Էլեկտրաէներգետիկական համարկարգի 2009 թվականի սակագները սահմանվել են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի 27 փետրվարի № 67Ա և 2008 թվականի նոյեմբերի 21-ի N 638-Ն որոշումներով:

483. ՀՀ Սյունիքի մարզը բավականին հարուստ է ջրային ռեսուրսներով: Սյունիքի գետերը հիմնականում կարճ են, արագահոս և սակավաջուր: Դրանք պատկանում են Արաքսի ջրավազանին:

484. Սյունիքի խոշոր գետերն են Որոտանը, Ողջին և Մեղրիգետը:

485. Որոտան գետը սկիզբ է առնում Սյունիքի բարձրավանդակից և ունի 178 կմ երկարություն, որից 119կմ-ն անցնում է Հայաստանի տարածքով: Զրավազանը 5650կմ<sup>2</sup> է և այն թափվում է Արաքս գետը: Այն լեռնային գետ է և հոսում է խորը կիրճով, 1կմ գետի հոսքի մակարդակի ցածրացումը կազմում է միջինը 16մ, տարեկան միջին սպառումը (Որոտան բնակելի մասի մոտ) 21.5մ<sup>3</sup>/վայրկյան է, տարեկան հոսքը 680 մլն մ<sup>3</sup> է (առավելագույն հոսքը ՀՀ տարածքում 350մ<sup>3</sup>/ վայրկյան է, նվազագույն հոսքը՝ 11մ<sup>3</sup>/վայրկյան): Գետը տարբեր ձևերով է սնվում (50% ստորգետնյա ջրեր են): Այն կայուն չէ, վարարում է գարնանը և ամռան սկզբում: Հիմնական վտակներն են Սիսիան, Արագիլջուր, Շաքի՝ համանուն գեղատեսիլ ջրվեժով, Լեռնաշեն, Շամբ, Վաղատնի, Վարարակ (Գորիս) և այլն: Սպանդարյան, Անգեղակոթ, Տոլորս և Շամբ ջրամբարները, ինչպես նաև Սպանդարյան, Շամբ և Որոտան ՀԷԿ-երը կառուցված են Որոտան գետի վրա: Սպանդարյանի և Որոտանի ոռոգման համակարգերը նույնպես սնվում են Որոտանից:

486. Ողջի գետը սկիզբ է առնում Զանգեզուրի լեռնաշղթայի Կապուտջուղ գագաթից: Այն ունի 82կմ երկարություն, ջրավազանը 1175կմ<sup>2</sup> է (569կմ<sup>2</sup> ՀՀ տարածքում), տարեկան միջին սպառումը 9.6մ<sup>3</sup>/վայրկյան է, տարեկան հոսքը 302.4 մլն մ<sup>3</sup> է: Սնունը խառն է, գետը վարարում է ապրիլ-հունիս ամիսներին: Հիմնական վտակներն են՝ Քաջարան, Գեղի, Վաչագան, Նորաշենիկ, Գեղանուշ: Ողջի և Կապան ՀԷԿ-երը տեղակայված են Ողջի գետի վրա: Կապան և Քաջարան քաղաքները գտնվում են Ողջի գետի ափին:

487. Մեղրիգետը Արաքսի ձախ վտակն է: Այն սկիզբ է առնում Զանգեզուրի լեռնաշղթայի Կապույտ լճից: Այն ունի 36կմ երկարություն, ջրավազանը 274կմ<sup>2</sup> է: Սնվում է ձնհալից, անձրևներից, ստորգետնյա ջրերից, միջին սպառումը 3.34մ<sup>3</sup>/վայրկյան է, տարեկան հոսքը 102 մլն մ<sup>3</sup>, վարարում է գարնանը: Մեղրիգետի աջ ափին գտնվում է Մեղրի քաղաքը:

488. Կան ավելի քան 30 փոքր լճեր, այդ թվում նաև Սև և Ալ լճերը Գորիսում, Գագանա, Ծաղկաքար, Կապուտան լճերը Կապանում և Կապույտ լիճը Մեղրիում: Դրանք հիմնականում ամբարտակային են և գտնվում են սառցադաշտերից գոյացած հովիտներում, որտեղ կուտակվում են ձնհալի և գարնանային ջրերը:

489. Ներկայումս, ինչպես ներկայացվեց սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծությունում, էլեկտրաէներգիայի ոլորտը և մասնավորապես հիդրոէլեկտրաէներգիայի արտադրությունը երկրորդ ամենախոշոր տնտեսության ճյուղն է Սյունիքում, որի տեսակարար կշիռը համախառն արտադրանքի ծավալում 2008թ.-ին կազմել է 7.7%:

Աղյուսակ 6.3.ՀՀ Սյունիքի մարզում արտադրված էլեկտրաէներգիան 2006-2008թթ.

| N/N | Արտադրված էլեկտրաէներգիան | 2006թ. | 2007թ. | 2008թ. |
|-----|---------------------------|--------|--------|--------|
| 1   | ՀՀ Սյունիքի մարզում       | 1053.6 | 1052.1 | 969.6  |

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

|   |                                     |        |        |        |
|---|-------------------------------------|--------|--------|--------|
| 2 | Ընդամենը ՀՀ-ում, այդ թվում          | 5940.8 | 5897.4 | 6114.3 |
| 3 | Հիդրոէլեկտատներգիայի արտադր.        | 1822.7 | 1855.4 | 1820.6 |
| 4 | Մասը ՀՀ ընդհանուր ծավալում          | 17.7   | 17.9   | 15.8   |
| 5 | Մասը ՀՀ հիդրոէլ. էներգիայի ծավալում | 57.8   | 56.7   | 53.3   |

/մլն. կվտ.ժ/

Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի սոցիալ-տնտեսական վիճակը» 2006թ., 2007թ., 2008թ., ՀՀ ԱՎԾ

490. 2008 թ.-ին մարզում արտադրվել է 969.6 մլն. կվտ.ժամ էլեկտրաէներգիա, որը 2006 թվականի համեմատ կազմել է 92.0%, 2007 թվականի համեմատ 92.2% (տես՝ աղյուսակ 3): ՀՀ Սյունիքի մարզում արտադրված էլեկտրաէներգիայի ծավալը կազմում է հանրապետությունում թողարկված էլեկտրաէներգիայի շուրջ 15.8%-ը, հիդրոէլեկտրակայաններում ստացվածի՝ շուրջ 53.3 %-ը: Մարզում արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում «Որոտանի ՀԷԿ-երի համակարգ» ՓԲԸ-ին:

491. Հիդրոէներգիայի արտադրության խթանումը կարող է բավականին զգալի և արագ ազդեցություն ունենալ տարածաշրջանի տնտեսության վրա:

492. Արաքս գետի վրա նախատեսվում է կառուցել Մեղրիի ՀԷԿ-ը (մոտ 140 ՄՎտ հզորությամբ և շուրջ 800 մլն.կվտ.ժ էլ.էներգիայի տարեկան արտադրությամբ): Հիդրոէլեկտրակայանի կառուցման ծրագիրը իրականացվում է Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) հետ համատեղ: Ծրագրի ընդհանուր ֆինանսավորումը կկազմի 208.9 մլն եվրո ([Հավելված 15.2](#)):

493. Նախատեսվում է կառուցել Իրան-Հայաստան 400կՎ երրորդ էլեկտրահաղորդման օղային գիծը, Իրան-Հայաստան 12 դյույմ տրամագծով նավթամթերքների տեղափոխման խողովակաշարը: Այս աշխատանքների հիմնական մասը կիրականացվի Սյունիքի մարզի տարածքում:

494. ՀՀ կառավարությունը դոնորների աջակցությամբ նախաձեռնել է Հայաստանում փոքր ՀԷԿ-երի զարգացման ծրագիրը և այդ տեսանկյունից Սյունիքը Հայաստանի ամենախոստումնալից մարզերից է, որտեղ կարելի է զարգացնել հիդրոէլեկտրաէներգիայի արտադրությունը:

495. ՀՀ կառավարության 2009 թվականի հունվարի 22-ի նիստի թիվ 3 արձանագրային որոշման մեջ հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետությունում, այդ թվում նաև ՀՀ Սյունիքի մարզում փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացման սխեման, որը ներկայացվում է ստորև:

Աղյուսակ 6.4. ՀՀ Սյունիքի մարզում փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացման սխեմա

| ՀՀ Սյունիքի մարզի տարածքում ճշտված և նորացված ՓՀԷԿ-ների ջրաէներգետիկական ցուցանիշները |                     |                     |                      |                               |                          |                         |  |                                |   |
|---|---------------------|---------------------|----------------------|-------------------------------|--------------------------|-------------------------|--|--------------------------------|---|
| N/N   | ՓՀԷԿ-ի անվանումը    | Վերին բյեֆի միջը, մ | Ներքին բյեֆի միջը, մ | Դերիվացիայի երկարությունը, մ. | Դերիվացիայի տրամագիծը մ. | Հաշվարկային ճնշումը, մ. | Հաշվարկային ելքը, մ <sup>3</sup> /վայրկ. | Դրված քային հզորությունը, կվտ. | Էլեկտրաէներգիայի տարեկան արտադրանքը, մլն/կվտ.ժ. |
| 1   | 2                   | 3                   | 4                    | 5                             | 6                        | 7                       | 8  | 9                              | 10  |
| Որոտան գետի ավազան  |                     |                     |                      |                               |                          |                         |  |                                |   |
| 1   | Որոտան ՓՀԷԿ-1*      | 2208.0              | 2150.0               | 9000.0                        | 1.62                     | 117.8                   | 6.0                                      | 5860                           | 25.0  |
| 2   | Զրախացածոր ՓՀԷԿ     | 1615.0              | 1500.0               | 2800.0                        | 0.72                     | 102.9                   | 0.7                                      | 576                            | 1.91  |
| Սիսիան գետի ավազան  |                     |                     |                      |                               |                          |                         |  |                                |   |
| 3   | Արևիս ՓՀԷԿ*         | 1870.0              | 1730.0               | 6200.0                        | 1.22                     | 120.9                   | 2.5                                      | 2420                           | 11.50   |
| 4   | Արևիս ՓՀԷԿ-1 (վտակ) | 1960.0              | 1895.0               | 1200.0                        | 0.82                     | 59.7                    | 1.0                                      | 476                            | 1.38  |
| 5   | Արևիս ՓՀԷԿ-2 (վտակ) | 2050.0              | 1902.0               | 2500.0                        | 0.82                     | 138.8                   | 0.9                                      | 999                            | 2.89  |

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

| Ողջի գետի ավազան               |  |        |        |        |      |       |      |              |               |
|--------------------------------|--|--------|--------|--------|------|-------|------|--------------|---------------|
| 6                              | Կաթնառատ ՓՅԷԿ  | 1750.0 | 1505.0 | 2000.0 | 0.53 | 219.3 | 0.4  | 702          | 2.42          |
| 7                              | Ավսարլու ՓՅԷԿ  | 1750.0 | 1545.0 | 2150.0 | 0.63 | 185.3 | 0.7  | 1038         | 3.68          |
| 8                              | Մուսայան ՓՅԷԿ  | 1535.0 | 1345.0 | 3400.0 | 0.82 | 169.8 | 1.2  | 1630         | 6.25          |
| 9                              | Կիրս ՓՅԷԿ  | 1667.6 | 1576.7 | 2000.0 | 1.02 | 79.7  | 2.0  | 1276         | 4.64          |
| 10                             | Կարաբաշ ՓՅԷԿ   | 1520.0 | 1340.0 | 1200.0 | 0.53 | 165.4 | 0.5  | 662          | 2.34          |
| 11                             | Գիրատախ ՓՅԷԿ   | 1450.0 | 1280.0 | 1750.0 | 0.63 | 158.2 | 0.6  | 759          | 2.71          |
| 12                             | Վաչագան ՓՅԷԿ   | 975.0  | 845.0  | 2500.0 | 0.72 | 118.2 | 0.8  | 709          | 2.52          |
| 13                             | Գեղի ջրամբարին կից մերձպատվարային ՓՅԷԿ*                          | 1402.0 | 1332.5 | 401.0  | 1.22 | 65.0  | 3.0  | 1560         | 9.79          |
| 14                             | Գեղի-2 ՓՅԷԿ*   | 1325.0 | 1260.0 | 3000.0 | 1.42 | 51.2  | 4.5  | 1840         | 9.13          |
| 15                             | Ողջի ՅԷԿ-1(Ջրախոր ՅԷԿ-1)   | 1240.3 | 1140.0 | 600.0  | 1.62 | 97.8  | 6.0  | 4690         | 15.8          |
| Ծավ գետի վազան                 |  |        |        |        |      |       |      |              |               |
| 16                             | Շիշկերտ ՓՅԷԿ-1   | 1575.0 | 1415.0 | 2100.0 | 0.72 | 143.8 | 0.90 | 1045         | 4.20          |
| 17                             | Շիշկերտ ՓՅԷԿ-2   | 1400.0 | 1220.0 | 2300.0 | 0.72 | 162.3 | 0.90 | 2424         | 9.63          |
|                                | Մազրա ՓՅԷԿ   | 1400.0 | 1220.0 | 1050.0 | 0.72 | 172.6 | 0.90 |              |               |
| 18                             | Բետնաձոր ՓՅԷԿ  | 875.0  | 750.0  | 1700.0 | 0.53 | 110.9 | 0.40 | 355          | 1.53          |
| Մեղրիգետի ավազան               |  |        |        |        |      |       |      |              |               |
| 19                             | Լիճք ՓՅԷԿ-1  | 1705.0 | 1610.0 | 1200.0 | 0.92 | 88.4  | 1.50 | 1061         | 3.12          |
| 20                             | Լիճք ՓՅԷԿ-2  | 1605.0 | 1465.0 | 1950.0 | 1.02 | 129.1 | 2.00 | 2066         | 5.52          |
| 21                             | Տաշտուն ՓՅԷԿ՝ ձախ վտակ   | 1790.0 | 1680.0 | 1350.0 | 0.63 | 105.9 | 0.60 | 508          | 1.56          |
| 22                             | Տաշտուն ՓՅԷԿ-1՝ Տաշտուն գետի վրա*                                | 2050.0 | 1723.0 | 4750.0 | 0.72 | 307.4 | 0.70 | 1720         | 5.97          |
| 23                             | Վարդանիձոր ՓՅԷԿ՝ Մեղրի գետի վրա*                                 | 1125.0 | 940.0  | 4100.0 | 1.42 | 175.8 | 3.20 | 4500         | 15.40         |
| 24                             | Լեհվազ ՓՅԷԿ  | 935.0  | 865.0  | 1625.0 | 1.22 | 61.1  | 3.20 | 1564         | 7.01          |
| 25                             | Վանք ՓՅԷԿ (Կալեր)  | 1700   | 1570   | 2900   | 0.73 | 119.8 | 0.80 | 767          | 2.26          |
| 26                             | Կարճևան ՓՅԷԿ՝ Ագարակի ՊՄԿ-ի արդյուն. ջրամատակարարման ջրագծի վրա* | 1294.0 | 950.0  | 2000.0 | 0.53 | 324.2 | 0.45 | 1170         | 8.90          |
| <b>Ընդամենը՝ Սյունիքի մարզ</b> |  |        |        |        |      |       |      | <b>42707</b> | <b>168.67</b> |

\*) Նշված ՓՅԷԿ-երի տեխնիկատնտեսական հիմնավորման աշխատանքները պատվիրված են մասնավոր ներդրողների կողմից:

Աղբյուրը՝ ՀՀ կառավարության 22.01.2009թ. N 3 արձանագրային որոշում

496. Սխեմայից երևում է, որ ընդգրկված 26 ՓՅԷԿ-երի շահագործման դեպքում մարզում էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությունը կավելանա 168.67մլն.կՎտժ.-ով, որը կհանգեցնի իր հերթին արդյունաբերական արտադրանքի ծավալի աճին և բարձր վարձատրվող հարյուրավոր աշխատատեղերի ստեղծման:

497. Հիմք ընդունելով վերոնշյալը պետք է եզրակացնել, որ ՀՀ Սյունիքի մարզի ՅԷԿ-երի ոլորտը՝ հիմնվելով էժան ռեսուրսների առկայության և ներկայումս աճող պահանջարկի վրա մեծ պոտենցիալ ունի և ի վիճակի է ապագայում ապահովելու երկրի էլեկտրաէներգիայի արտադրության էական մասնաբաժինն ու աջակցելու Հայաստանում էներգետիկ անվտանգությանը:

498. ՀՀ Սյունիքի մարզում ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրամադրված են ջրօգտագործման 46 թույլտվություններ և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից էլեկտրաէներգիա

արտադրելու 23 և ՓՅԷԿ-ներ կառուցելու և շահագործելու նպատակով 12 լիցենզիաներ: Ստորև ներկայացվում են այդ աղյուսակները.

Աղյուսակ 6.5. ՀՀ Սյունիքի մարզում ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրամադրված ջրօգտագործման թույլտվություններն՝ ըստ կազմակերպությունների

| Հ/Հ | Նպատակը  | Ջրօգտագործման թույլտվություն ստացողի անվանումը | Ջրօգտագործման թույլտվության տրման ամիս, ամսաթիվը և համարը |
|-----|--|--|---|
| 1   | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՅԷԿ-ի շահագործում | Սերգեյ Պողոսյան «Սմբուլ» ՍՊԸ «Անգեղակոթ» Մ ՀԷԿ | ՋԹ N-1457<br>13.07.2007թ-<br>13.07.2010թ.                 |
| 2   | Էլ.էներգիայի արտադրություն, ՀԷԿ-ի շահագործում  | Սերգեյ Պողոսյան «Սմբուլ» ՍՊԸ «Անգեղակոթ» Մ ՀԷԿ | ՋԹ N-1214<br>30.10.2006թ-<br>30.10.2009թ.                 |
| 3   | Էլ.էներգիայի արտադրություն, ՀԷԿ-ի շահագործում  | «Որոտան ՀԷԿ» ՓԲԸ «Տաթևլ» ՀԷԿ                   | ՋԹ N-1215<br>30.10.2006թ<br>30.10.2009թ.                  |
| 4   | Էլ.էներգիայի արտադրություն, ՀԷԿ-ի շահագործում  | «Որոտան ՀԷԿ» ՓԲԸ «Սպանդարյան» ՀԷԿ              | ՋԹ N-1216<br>30.10.2006թ-<br>30.10.2009թ.                 |
| 5   | Էլ.էներգիայի արտադրություն, ՀԷԿ-ի շահագործում  | «Կապան-Էներժի» ՓԲԸ Ողջի ՀԷԿ-2,ՀԷԿ-3            | ՋԹ N-0692<br>07.04.2005թ-<br>07.04.2008թ                  |
| 6   | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՅԷԿ-ի շահագործում | «Լեռ-Էքս» ՍՊԸ, N 2 և N 4 ՓՅԷԿ-եր               | ՋԹ N-1530<br>26.09.2007թ-<br>26.09.2010թ.                 |
| 7   | Էլ.էներգիայի արտադրություն, ՀԷԿ-ի շահագործում  | «Հակոբջանյան և Գալստյան ՀԷԿ ՍՊԸ»               | ՋԹ N-0317<br>18.06.2004թ-<br>18.06.2007թ.                 |
| 9   | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՅԷԿ-ի շահագործում | «Էնգելս Թունանյան» ՍՊԸ «Գեվորգավան» ՓՀԷԿ       | ՋԹ N-1457<br>13.07.2007թ-<br>13.07.2010թ.                 |
| 10  | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՅԷԿ-ի շահագործում | «Բենգար Էներժի» ՍՊԸ «Բենգար Էներժի» ՓՀԷԿ       | ՋԹ N-0925<br>20.10.2005թ-<br>20.10.2008թ                  |
| 11  | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՅԷԿ-ի շահագործում | «Աստղիկ Հովհաննես» ՍՊԸ «Հոկտեմբեր Փ ՀԷԿ »      | ՋԹ N-1038<br>14.03.2006թ-<br>14.03.2009թ.                 |
| 12  | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՅԷԿ-ի շահագործում | «Ոհնե» ՍՊԸ                                     |   |
| 13  | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՅԷԿ-ի շահագործում | «Զանգեզուր - 95» Ա/Կ «Շինուհայր» Փ ՀԷԿ         | ՋԹ N-0932<br>26.10.2005թ-<br>26.10.2008թ                  |
| 14  | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՅԷԿ-ի շահագործում | «Էլգիա» ՍՊԸ «Մանիշակաձոր» Փ ՀԷԿ                | ՋԹ N-0907<br>05.10.2005թ-<br>05.10.2008թ.                 |
| 15  | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՅԷԿ-ի շահագործում | «Էլգիա» ՍՊԸ «Գորիս» Փ ՀԷԿ                      | ՋԹ N-0906<br>05.10.2005թ-<br>05.10.2008թ.                 |
| 16  | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՅԷԿ-ի շահագործում | «Պարզև և Վարդան»ՍՊԸ «Զոր-Զոր ՀԷԿ-1»            | ՋԹ N-1250<br>27.11.2006թ-<br>27.11.2009թ.                 |



ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

|    |  |  |  |
|----|--|--|--|
| 17 | Էլ.էներգիայի արտադրություն, ՉԷԿ-ի շահագործում  | «Հ և Գ ՉԷԿ ՍՊԸ»                                | ՋԹ N-0596<br>15.12.2004թ-<br>15.12.2007թ.  |
| 18 | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՉԷԿ-ի շահագործում | «Ֆիրմա Գ. Ա. Խ.» ՍՊԸ «Գետափ Փ ՉԷԿ »            | ՋԹ N-1365<br>06.04.2007թ-<br>06.04.2010թ   |
| 19 | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՉԷԿ-ի շահագործում | Սերգեյ Պողոսյան «Ամբուլ» ՍՊԸ «Անգեղակոթ» Մ ՉԷԿ | ՋԹ N-1696<br>28.02.2008թ.-<br>06.12.2010թ. |
| 20 | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՉԷԿ-ի շահագործում | «Լորագետ ՉԷԿ»ՍՊԸ «Սիսական» Փ ՉԷԿ               | ՋԹ N-1035<br>09.03.2006թ-<br>09.03.2009թ   |
| 21 | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՉԷԿ-ի կառուցում   | «Տասման» ՍՊԸ «Գեղի-1» ՉԷԿ                      | ՋԹ N-1447<br>28.06.2007թ-<br>03.08.2008թ.  |
| 22 | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՉԷԿ-ի կառուցում   | «Էներգոցանցչին» ԲԲԸ «Ծավ» ՓՉԷԿ                 | ՋԹ N-1227<br>16.11.2006թ-<br>16.03.2007թ.  |
| 23 | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՉԷԿ-ի կառուցում   | «Լեռ-էքս» ՍՊԸ, N 5 և N 6 ՓՉԷԿ-եր               | ՋԹ N-1529<br>26.09.2007թ-<br>26.01.2008թ.  |
| 24 | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՉԷԿ-ի կառուցում   | «Տիգրան Աշխեն» ՍՊԸ «Տիգրան Աշխեն» ՓՉԷԿ-1       | ՋԹ N-1851<br>28.08.2008թ-<br>28.12.2008թ   |
| 25 | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՉԷԿ-ի կառուցում   | «Գելիզուլան» ՍՊԸ «Կանթեղ» Փ ՉԷԿ                | ՋԹ N-1988<br>23.12.2008թ-<br>23.04.2009թ   |
| 26 | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՉԷԿ-ի կառուցում   | «Քյու – Յաշ» ՍՊԸ                               | ՋԹ N-0231<br>19.05.2004թ-<br>19.05.2007թ.  |
| 27 | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՉԷԿ-ի կառուցում   | «Սինգլ Գոռ» ՍՊԸ «Սանդաղբյուր Փ ՉԷԿ»            | ՋԹ N-1055<br>03.04.2006թ-<br>03.04.2009թ   |
| 28 | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՉԷԿ-ի կառուցում   | «Կապան-Էներժի» ՓԲԸ «Ողջի» ՓՉԷԿ-1               | ՋԹ N-1839<br>11.08.2008թ-<br>11.12.2008թ   |
| 29 | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՉԷԿ-ի կառուցում   | «Լորագետ ՉԷԿ»ՍՊԸ «Սիսական-1» Փ ՉԷԿ             | ՋԹ N-1129<br>11.07.2006թ-<br>11.11.2006թ.  |
| 30 | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՉԷԿ-ի կառուցում   | «Խ և Մ ընկերներ» «Վարարակն» ՓՉԷԿ               | ՋԹ N-0978<br>26.12.2005թ-<br>26.04.2006թ.  |
| 31 | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՉԷԿ-ի կառուցում   | «Աֆամիա» ՍՊԸ «Դարբաս-2» ՓՉԷԿ,                  | ՋԹ N-1291<br>16.01.2007թ-<br>16.05.2007թ   |
| 32 | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՉԷԿ-ի կառուցում   | «Վեհ Լորեն» ՍՊԸ, «Լոր» ՉԷԿ-1                   | ՋԹ N-1366<br>10.04.2007թ-<br>10.08.2007թ.  |
| 33 | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՉԷԿ-ի կառուցում   | «Խաչատրյան եղբայրներ» ՍՊԸ «Դալի» ՓՉԷԿ          | ՋԹ N-1367<br>10.04.2007թ-<br>10.08.2007թ.  |
| 34 | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՉԷԿ-ի կառուցում   | «Զորաքար» Ա/Կ                                  | ՋԹ N-0420<br>27.07.2004թ-<br>27.11.2004թ   |

ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

|    |  |                                      |  |
|----|--|--------------------------------------|--|
| 35 | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՅԷԿ-ի կառուցում | «ՀԳԼՔ գրուպ» ՍՊԸ, «Որոտան-7» ՓՅԷԿ    | ՋԹ N-1512,<br>14.09.2007թ-<br>14.01.2008թ. |
| 36 | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՅԷԿ-ի կառուցում | «Սյունիք» ՍՊԸ «Ապրես» ՓՅԷԿ           | ՋԹ N-1221<br>02.11.2006թ-<br>02.03.2007թ.  |
| 37 | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՅԷԿ-ի կառուցում | «Ալենպիս» ՍՊԸ «Ալենպիս» ՓՅԷԿ         | ՋԹ N-0730<br>18.05.2005թ-<br>18.09.2005թ.  |
| 38 | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՅԷԿ-ի կառուցում | «Սիեզերք» ՍՊԸ «Իշխանասար» ՓՅԷԿ       | ՋԹ N-1522<br>25.09.2007թ-<br>25.01.2008թ   |
| 39 | Էլ.էներգիայի արտադրություն, ՍՅԷԿ-ի կառուցում | «Շաղատ» ՍՅԷԿ                         | ՋԹ N-1165<br>07.08.2006թ-<br>01.06.2007թ.  |
| 40 | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՅԷԿ-ի կառուցում | «Էմպաթիա» ՍՊԸ «Արավունս» ՓՅԷԿ        | ՋԹ N-1466<br>25.07.2007թ-<br>25.11.2007թ.  |
| 41 | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՅԷԿ-ի կառուցում | «Էմպաթիա» ՍՊԸ «Վարդանիճոր» ՓՅԷԿ      | ՋԹ N-1467<br>25.07.2007թ-<br>25.11.2007թ.  |
| 42 | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՅԷԿ-ի կառուցում | «Գրիար» ՓԲԸ «Մեղրի» ՓՅԷԿ,            | ՋԹ N-0153<br>20.04.2004թ-<br>20.08.2004թ.  |
| 43 | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՅԷԿ-ի կառուցում | «Քանար» ՓԲԸ «Սառնակունք» ՓՅԷԿ        | ՋԹ N-1204<br>12.10.2006թ-<br>12.10.2007թ.  |
| 44 | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՅԷԿ-ի կառուցում | «Գրիգոր Գուրգեն» Ա/Կ                 | ՋԹ N-1600<br>06.12.2007թ<br>06.12.2010թ.   |
| 45 | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՅԷԿ-ի կառուցում | «Բասա Շին» ՍՊԸ «Դաստակերտ» Փ ՅԷԿ     | ՋԹ N-1784<br>06.06.2008թ.<br>06.10.2008թ.  |
| 46 | Էլ.էներգիայի արտադրություն, ՓՅԷԿ-ի կառուցում | «Ա.Ա.Խաչատրյան» ՍՊԸ «Շուշանիկ» Փ ՅԷԿ | ՋԹ N-1972<br>25.11.2008թ-<br>25.11.2011թ.  |

Աղբյուրը՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն

Աղյուսակ 6.6. 2009թ. ապրիլի 1-ի դրությամբ ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող համաձայնագրով կողմից տրված լիցենզիաների համաձայն կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանները՝ ըստ կարգավորող ընկերությունների

| Կարգավորվող ընկերության անվանումը | Լիցենզիայի № | Լիցենզիայի գործողության ժամկետը |            | ՓՅԷԿ-ի անվանումը      | Դրված քային հզորությունը | Տարեկան արտադրանք | Ներդրումների ծավալը (առանց ԱԱՀ) |
|-----------------------------------|--------------|---------------------------------|------------|-----------------------|--------------------------|-------------------|---------------------------------|
|                                   |              | սկիզբ                           | ավարտ      |                       | կՎտ                      | մլն. կՎտ.ժ        | մլն. դրամ                       |
| 1                                 | 2            | 3                               | 4          | 5                     | 6                        | 7                 | 8                               |
| «Գրիար» ՓԲԸ                       | 130          | 30.04.2004                      | 30.04.2009 | Մեղրի <sup>2</sup>    | 6 520                    | 22,1              | 3 011,6                         |
| «Գրիար» ՓԲԸ                       | 131          | 30.04.2004                      | 30.04.2010 | Փամբակ * <sup>1</sup> | 20300                    | 79,2              | 9 182,7                         |
| «ՏԱՍՄԱՆ» ՍՊԸ                      | 176          | 03.08.2005                      | 03.08.2011 | Գեղի-1 <sup>1</sup>   | 4 090                    | 15,4              | 1 422,0                         |

ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

|                           |     |            |            |                            |       |      |        |
|---------------------------|-----|------------|------------|----------------------------|-------|------|--------|
| «Խ և Մ ընկերներ» ՍՊԸ      | 201 | 19.04.2006 | 19.04.2010 | Վարարակն <sup>2</sup>      | 590   | 2,3  | 369,5  |
| «Լորագետ ՅԷԿ» ՍՊԸ         | 213 | 11.08.2006 | 11.08.2009 | Սիսական 1 <sup>2</sup>     | 853   | 3,2  | 584,7  |
| «Էներգացանցշին» ԲԲԸ       | 225 | 30.11.2006 | 30.11.2009 | Ծալ <sup>2</sup>           | 2 740 | 8,6  | 1016,0 |
| «ԱՖԱՄԻԱ» ՍՊԸ              | 246 | 25.05.2007 | 25.05.2009 | Դարբաս ՓՅԷԿ-2 <sup>2</sup> | 904   | 3,6  | 758,1  |
| «Խաչատրյան Եղբայրներ» ՍՊԸ | 248 | 15.06.2007 | 15.06.2010 | Դալի <sup>2</sup>          | 3 920 | 13,5 | 1624,2 |
| «ՎԵՅ ԼՈՐԵՆ» ՍՊԸ           | 256 | 13.07.2007 | 25.05.2010 | Լոր ՅԷԿ-1 <sup>2</sup>     | 650   | 2,4  | 439,0  |
| «ՀԳՆՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ          | 266 | 29.10.2007 | 29.10.2010 | Որոտան-7 <sup>2</sup>      | 730   | 3,3  | 708,5  |
| «Քանար» ՓԲԸ               | 280 | 04.04.2008 | 07.02.2011 | Սառնակունք <sup>1</sup>    | 340   | 1,1  | 127,7  |
| «Տիգրան և Աշխեն» ՍՊԸ      | 304 | 03.12.2008 | 03.12.2010 | «Տիգրան և Աշխեն»           | 330   | 1,6  | 74,3   |

Աղբյուրը՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն

Աղյուսակ 6.7. 2009թ. ապրիլի 1-ի դրությամբ ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված լիցենզիաների համաձայն էլեկտրական էներգիա արտադրող փոքր հիդրոէլեկտրակայանները՝ ըստ կարգավորող ընկերությունների

| Կարգավորվող ընկերության անվանումը | Լիցենզիայի № | Լիցենզիայի գործողության ժամկետը |            | ՓՅԷԿ-ի անվանումը     | Դրված քային հզորությունը կՎտ | Տարեկան արտադրանք մլն. կՎտ.ժ |
|-----------------------------------|--------------|---------------------------------|------------|----------------------|------------------------------|------------------------------|
|                                   |              | սկիզբ                           | ավարտ      |                      |                              |                              |
| 1                                 | 2            | 3                               | 4          | 5                    | 6                            | 7                            |
| «Կապան Էներջի» ՓԲԸ                | 0023         | 25.06.1999                      | 25.06.2014 | «Ողջի 2,3» ՓՅԷԿ      | 12400                        | 34,07                        |
| «Հակոբջանյան և Գալստյան ՅԷԿ» ՍՊԸ  | 0024         | 25.06.1999                      | 25.06.1999 | «Շաքի» ՓՅԷԿ          | 840                          | 3,06                         |
| «Քյու Հաշ» ՍՊԸ                    | 0019         | 25.06.1999                      | 25.06.1999 | «Սեղրի» ՓՅԷԿ         | 840                          | 2,11                         |
| «Էլզիա » ՍՊԸ                      | 0113         | 17.10.2003                      | 17.10.2018 | «Գորիս» ՓՅԷԿ         | 180                          | 1,43                         |
| «Հ և Գ ՅԷԿ» ՍՊԸ                   | 0154         | 28.12.2004                      | 28.12.2019 | «Որոտնա» ՓՅԷԿ        | 1200                         | 6,41                         |
| «Ձանգեզուր-95» ԱԿ                 | 0191         | 27.12.2005                      | 27.12.2020 | «Շինուհայր» ՓՅԷԿ     | 800                          | 4,06                         |
| «Բենգար Էներջի» ՍՊԸ               | 0197         | 22.02.2006                      | 22.02.2001 | «Բենգար Էներջի» ՓՅԷԿ | 279                          | 1,02                         |
| «Լոռագետ ՅԷԿ» ՍՊԸ                 | 0198         | 28.03.2006                      | 28.03.2021 | «Սիսական» ՓՅԷԿ       | 514                          | 1,43                         |
| «Աստղիկ-Հովհաննես» ՍՊԸ            | 0204         | 31.05.2006                      | 31.05.2021 | «Հոկտեմբեր» ՓՅԷԿ     | 60                           | 0,07                         |
| «Սինգլ Գոռ» ՍՊԸ                   | 0212         | 21.06.2006                      | 21.06.2021 | «Սանդաղբյուր» ՓՅԷԿ   | 621                          | 2,00                         |
| «Լեռեքս Էներգիա» ՍՊԸ              | 0226         | 30.11.2006                      | 30.11.2021 | «Լեռեքս ՅԷԿ-2» ՓՅԷԿ  | 224                          | 1,18                         |
| «Ռինե» ՓԲԸ                        | 0220         | 27.10.2006                      | 27.10.2021 | «Ռինե» ՓՅԷԿ          | 90                           | 0,41                         |
| «Պարզև և Վարդան» ՍՊԸ              | 0229         | 29.12.2006                      | 29.12.2021 | «Զոր-Զոր ՅԷԿ-1» ՓՅԷԿ | 280                          | 1,12                         |
| «Էնգելս Թումանյան» ՍՊԸ            | 0236         | 02.02.2007                      | 02.02.2022 | «Գևորգավան» ՓՅԷԿ     | 30                           | 0,34                         |
| «Սմբուլ» ՍՊԸ                      | 0243         | 20.04.2007                      | 20.04.2022 | «Սմբուլ» ՓՅԷԿ        | 100                          | 0,82                         |
| «Ֆիրմա Գ.Ա.Խ.» ՍՊԸ                | 0252         | 22.06.2007                      | 22.06.2022 | «Գետափ» ՓՅԷԿ         | 740                          | 2,58                         |

|                       |      |            |            |                      |      |       |
|-----------------------|------|------------|------------|----------------------|------|-------|
| «Լեռնէքս Էներգիա» ՍՊԸ | 0259 | 14.09.2007 | 14.09.2022 | «Լեռնէքս ՅԷԿ-4» ՓՅԷԿ | 285  | 2,19  |
| «Շաղատ» ՍՊԸ           | 0261 | 27.09.2007 | 27.09.2022 | «Շաղատ» ՓՅԷԿ         | 55   | 0,28  |
| «Լեռնէքս Էներգիա» ՍՊԸ | 0278 | 28.12.2007 | 28.12.2022 | «Լեռնէքս ՅԷԿ-6» ՓՅԷԿ | 340  | 2,59  |
| «Ձորաքար» ՓԲԸ         | 0293 | 30.07.2008 | 30.07.2023 | «Այրի» ՓՅԷԿ          | 1280 | 4,35  |
| «Սյունիք» ՍՊԸ         | 0299 | 24.09.2008 | 24.09.2023 | «Ապրես» ՓՅԷԿ         | 1500 | 11,67 |
| «Լեռնէքս Էներգիա» ՍՊԸ | 0278 | 08.10.2008 | 08.10.2023 | «Լեռնէքս ՅԷԿ-3» ՓՅԷԿ | 256  | 1,88  |
| «Ա.Ա.Խաչատրյան» ՍՊԸ   | 0309 | 27.01.2009 | 27.01.2024 | «Շուշանիկ» ՓՅԷԿ      | 306  | 2,00  |

Աղբյուրը՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն

499. Շրջափակման մեջ և արտաքին էներգակիրներից կախման մեջ գտնվող Հայաստանի քաղաքական և սոցիալ-տնտեսական կայունությունը մեծապես կապված է երկրի կայուն տնտեսական զարգացման հետ, որը սերտորեն կապված է էներգետիկ ռեսուրսների մատչելիության և հուսալիության հետ: Նշված դրույթը նշանակում է, որ էներգիայի կայուն աղբյուրների մատչելիությունը կարևոր գործոն և նախապայման է պետության կայունության համար:

450. Էներգամատակարարման դիվերսիֆիկացումը, որն իր մեջ կներառի նաև վերականգնվող էներգիայի աղբյուրները, կնվազեցնի մատակարարման հետ կապված ռիսկերը և հանածո վառելիքի /գազ, նավթ, ածուխ և այլն./ օգտագործման բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Տեղական տնտեսական զարգացման և շրջակա միջավայրի պահպանման պայմաններում, վերականգնվող էներգիայի օգտագործումը լիովին կհամապատասխանի կայուն զարգացման հռչակված հայեցակարգին:

451. Վերականգնվող էներգիայի զարգացումը կխրախուսի նաև լրացուցիչ ներդրումներ էներգետիկայի բնագավառում և կավելացնի մրցունակությունը՝ ինչպես էներգետիկայի ոլորտի, այնպես էլ երկրի ընդհանուր տնտեսության: Բացի դրանից, վերականգնվող էներգիայի բազմաթիվ արտադրողներ կարող են դիտվել նաև որպես փոքր և միջին ձեռնարկություններ, ինչը կխթանի դրանց կենսունակությունը և դինամիզմը:

452. Ելնելով վերոնշյալից, Սյունիքի մարզում ԵԱՀԿ Ծրագրերի իրականացման գրասենյակը նախաձեռնեց մարզում գտնվող մի շարք փոքր ընտրված հիդրոկայանների համար Կիոտոյի Արձանագրության Մաքուր զարգացման մեխանիզմի (ՄՁՄ) ծրագիրը: Ծրագրի առաջին փուլը՝ «ՀՀ Սյունիքի մարզում գտնվող մի շարք փոքր ընտրված հիդրոկայանների համար Մաքուր զարգացման մեխանիզմի (ՄՁՄ) ծրագրի նախագծային փաստաթղթի մշակում» արդեն ավարտված է: Ներկայումս կազմակերպությունն իրականացնում է հետագա փուլերի նախապատրաստական աշխատանքները, որոնց նպատակն է աջակցել մարզին, պատրաստել Մաքուր մշակման մեխանիզմի փաթեթը, որն իր մեջ կներառի մի շարք փոքր հիդրոկայանների կառուցման նախագծեր: Նշված փաթեթը կներկայացվի Մաքուր մշակման մեխանիզմի Միջազգային Քարտուղարություն վավերացմանը՝ ինչը կապահովի լրացուցիչ ֆինանսական հոսքեր ներդրումային ծրագրերի համար, հետևաբար նաև շուկայի կենսունակությունն և գրավչությունը՝ Արտանետումների հավաստագրված նվազեցման վարկերից (ԱՅՎ) բխող լրացուցիչ եկամուտների շնորհիվ, որոնք պետք է առաջանան ՄՁՄ-ի շրջանակում իրականացվող ծրագրերից:

453. Վերլուծելով ներկա վիճակը և գնահատելով մարզի տնտեսության զարգացման միտումները կարելի է եզրակացնել, որ նոր աշխատատեղերի բացման հնարավորություններ կստեղծվեն տեղական ոչ մետաղական հանքավայրերի

շահագործման, գյուղ. մթերքների վերամշակման, առևտրի, սպասարկումների և տուրիզմի ոլորտներում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման դեպքում:

### Արդյունաբերության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը

454. Ոլորտի զարգացմանը խթանելու, արտադրական հզորությունների վերագործարկման, նոր աշխատատեղերի ստեղծման նպատակով մարզպետարանի կողմից նախորդ տարիներին իրականացվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես.

455. Հայ-բելառուսական միջկառավարական համագործակցության շրջանակներում, փոխադարձ այցելությունների արդյունքում մարզի և Բելառուսի Հանրապետության Մինսկի մարզի միջև ստորագրվել է առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության համաձայնագիր: Վերջինիս իրագործման նպատակով Մինսկի մարզի «Բելշին», «ԲելԱՁ», «Ամկադոր» գործարանների և մարզի հանքագործական ընկերությունների հետ կնքվեցին առևտրատնտեսական համագործակցության պայմանագրեր:

456. Հայ-իրանական համագործակցության շրջանակներում ՀՀ Սյունիքի մարզի և ԻԻՀ Արևելյան Ատրպատականի նահանգի միջև ստորագրվել են տարածաշրջանային համագործակցության հուշագրեր: Համագործակցության արդյունքում Սիսիանի տարածաշրջանում ստեղծվեց «Գրան-Մարկոս» քարի վերամշակման արտադրություն: ԻԻՀ Արևելյան Ատրպատականի նահանգի «Գրին Գարդեն» ընկերության հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել մարզում պարարտանյութերի արտադրության գործարանի կառուցման համար:

457. Մարզում արդյունաբերության ոլորտի զարգացմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներն են.

- 1) արդյունաբերական ներուժի ճիշտ գնահատում և միջազգային փորձի ուսումնասիրություն
- 2) Ոչ արդիական տեխնոլոգիաները նորերով փոխարինելու գործընթաց
- 3) Աջակցություն գործող ձեռներեցության կենտրոնների կայացմանը և նորերի ստեղծմանը
- 4) միջազգային շուկայում տնտեսության այլ ճյուղերում ոլորտի արտադրանքի և ծառայությունների ներդրում:

458. Առաջիկա տարիներին նախատեսվում է ՀՀ Սյունիքի մարզի պատվիրակության այց Բելառուսի Հանրապետության Մինսկի մարզ, Իրանի Իսլամական Հանրապետության Արևելյան Ատրպատականի նահանգ: Մարզպետարանի կողմից նախատեսվում է մարզի արդյունաբերական ձեռնարկությունների և Ռուսաստանի Դաշնության Կազանի Հանրապետության, Կալինինգրադի մարզի, Կրասնոդարի երկրամասի, Ռոստովի մարզի (ОАО “Копейский машиностроительный завод”, ОАО “Краснодаррисмаш”, ОАО “Донецкий экскаватор”) գործարար շրջանակների հետ համագործակցության եզրեր գտնել փոխշահավետ տրատնտեսական կապերի ստեղծման նպատակով:

**7. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

**7.1 Գյուղատնտեսության ոլորտի իրավիճակի վերլուծությունը մարզի բնատնտեսական պայմանները և տեղը Հանրապետության գյուղատնտեսության մեջ**

459. Սյունիքի մարզի գյուղատնտեսական հողատեսքերն ընդգրկում են մարզի ընդհանուր տարածքի 74.1%-ը (334019հա): Մարզը սահմանամերձ է և ըստ բնակլիմայական պայմանների բաժանվում է լեռնային, միջին լեռնային և բարձր լեռնային գոտիների: Մարզում, ըստ բարձունքային գոտիականության, հերթափոխվում են Հանրապետության տարածքին բնորոշ կլիմայի գրեթե բոլոր տեսակները՝ չոր մերձարևադարձային, չափավոր տաք, բարեխառն, ցուրտ լեռնային և ձյունամերձ: Սյունիքում է գտնվում Հանրապետության ամենատաք վայրը՝ Մեղրու ցածրադիր գոտին: Արևափայլքի տարեկան տևողությունը տատանվում է 2120 ժամից (Գորիս) մինչև 2700 ժամի (Մեղրի) սահմաններում: Տարվա ամպամած օրերի միջին թիվը կազմում է 40: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին 0.9 °C-ից (Մեղրի) - 9.8 °C է (Գորայք), հուլիս-օգոստոսին՝ 13.9-25.4°C: Օդի նվազագույն ջերմաստիճանը դիտվել է Գորայքում (-43°C), առավելագույնը՝ Մեղրիում (41°C): Տեղումների տարեկան քանակը տատանվում է 161 մմ (Մեղրի) մինչև 826 մմ (Սիսիանի լեռնանցք): Տեղումների առավելագույն մասը դիտվում է մայիսին, նվազագույնը՝ օգոստոսին: Աշնանը դիտվում է առատ տեղումների երկրորդ շրջանը: Տեղումների բաշխումը կապված է ոչ միայն բարձրության, այլև՝ լեռնաշղթաների ուղղության, դիրքադրման և ռելիեֆի ձևերի հետ:

460. Մարզի 43.8 հազ. հա վարելահողերից 2008թ. գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների կողմից օգտագործվել է 32.6հազ. հա, որից 22.0հազ. հա հացահատիկային մշակաբույսերի տակ: Համայնքներում փաստացի չի օգտագործվել 11.2 հազ. հա վարելահող, որից 5.0 հազ.հա սեփականաշնորհված է: Չօգտագործվող վարելահողերը հիմնականում գտնվում են բարձրադիր գոտում և ունեն մեծ թեքություններ:

461. 2008թ. օգտագործման նպատակով հողօգտագործողներին վարձակալությամբ հատկացվել է 22500հա հողամաս: 2007թ. համեմատությամբ վարձակալությամբ տրված հողամասերն ավելացել են 2000հա-ով /հիմնականում արտաավայրեր/:

462. Ըստ հողային հաշվեկշռի մարզում գյուղատնտեսական հողատեսքերի կառուցվածքը բնութագրվում է Աղյուսակ 7.1-ում ներկայացված տվյալներով:

Աղյուսակ 7.1. Սյունիքի մարզի գյուղատնտեսական հողատեսքերի կազմը բնորոշող ցուցանիշներն ըստ 2008թ. հաշվեկշռի տվյալների (հա)

|              | Գյուղատնտեսական հողատեսքերը ընդամենը | Այդ թվում   |                    |            |             |                |
|--------------|--------------------------------------|-------------|--------------------|------------|-------------|----------------|
|              |                                      | Վարելահողեր | Բազմամյա տնկարկներ | Խոտհարքներ | Արոտավայրեր | Այլ հողատեսքեր |
| Տարածքը /հա/ | 334019                               | 43846       | 1061               | 7642       | 175287      | 106183         |

463. Մարզի գյուղատնտեսական հողատեսքերի մեջ մեծ կշիռ ունեն արոտավայրերը /52.4%/ և վարելահողերը /13.1%/: Մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2008թ.-ի տվյալներով կազմել է 58.0 մլրդ. դրամ, որը կազմում է հանրապետության գյուղատնտեսության ամբողջ համախառն արտադրանքի 9.1%-ը: 2008թ. տվյալներով

Հանրապետության համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ձևավորման մեջ գյուղատնտեսության Սյունիքի մարզի բաժնեմասը կազմել է 1.4%:

**Մարզում գյուղատնտեսական հողերի օգտագործման վիճակը**

Աղյուսակ 7.2. ՀՀ Սյունիքի մարզում 2006-2008թթ գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքսի և բերքահավաքի տվյալները

| Ընդամենը մարզում | Հացահատիկ և հատիկաընդեղեն |                    |                 | Կարտոֆիլ           |                    |                 | Բանջարեղեն         |                    |                 | Խոտ  | Ծղոտ | Պտուղ              |                    | Խաղող /տ/ | Աշնանացան /հա/ |
|------------------|---------------------------|--------------------|-----------------|--------------------|--------------------|-----------------|--------------------|--------------------|-----------------|------|------|--------------------|--------------------|-----------|----------------|
|                  | Տարածությունը /հա/        | Ստացվել է բերք /տ/ | Միջինը բերք /տ/ | Տարածությունը /հա/ | Ստացվել է բերք /տ/ | Միջինը բերք /տ/ | Տարածությունը /հա/ | Ստացվել է բերք /տ/ | Միջինը բերք /տ/ |      |      | Տարածությունը /հա/ | Ստացվել է բերք /տ/ |           |                |
| 2                | 3                         | 3                  | 3               | 4                  | 5                  | 6               | 7                  | 8                  | 8               | 9    | 10   | 11                 | 12                 | 13        | 14             |
| 2006             | 19422                     | 11970,4            | 7,1             | 1822               | 27374,2            | 150,2           | 885                | 165133             | 186,5           | 52,6 | 16,7 | 2693               | 138591             | 897       | 1504,1         |
| 2007             | 19935                     | 45161,4            | 22,6            | 1806               | 31282              | 173,2           | 888                | 16628,1            | 187,2           | 95,1 | 28,0 | 2589,2             | 19747,6            | 1273      | 1442,2         |
| 2008             | 20390                     | 459869             | 22,6            | 1852               | 33299,7            | 180             | 930                | 178651             | 192             | 92,5 | 21,2 | 2589               | 200564             | 995       | 1538,5         |

464. Աղյուսակից ակնհայտ է, որ ավելացել է գրեթե բոլոր մշակաբույսերի բերքատվությունը:

465. Ներկայացված տվյալները հնարավորություն են տալիս հետևություն անելու, որ Սյունիքի մարզի գյուղատնտեսության համար առաջնահերթ հիմնախնդիր է տնտեսությունների մասնատվածությունը, հողատեսքերի փոքր չափերը: Վերջինիս հետևանքով ցածր է արտադրության արդյունավետությունը, հնարավոր չէ կիրառել անհրաժեշտ ցանքաշրջանառություն և արտադրության տեխնոլոգիաներ, դժվարություններ են ծագում գյուղատնտեսական արտադրության սպասարկումների, արտադրանքի իրացման և այլ բնագավառներում: Ստեղծված իրավիճակը պահանջում է տնտեսությունների միավորման, դրանց համատեղ գործունեության կազմակերպման մեխանիզմների (կոոպերացիաների ստեղծում և ֆերմերային տնտեսությունների հզորացում) մշակում և ներդրում:

**Մարզի գյուղատնտեսության ներկայիս մասնագիտացումը**

466. Մարզի գյուղատնտեսության մասնագիտական ուղղվածության և ճյուղերի հարաբերակցության մասին պատկերացում է տալիս գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքը (Աղյուսակ 7.3):

Աղյուսակ 7.3. Սյունիքի մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքը 2008թ.-ի տվյալներով (հաշվարկված 2008թ.-ի գներով)

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

|          | Գյուղատնտեսական<br>մթերքների անվանումը                            | ՀՀ համախառն<br>արտադրանքը<br>(մլրդ դրամ) | Տեսակար<br>ար կշիռը<br>ըստ<br>մթերքների<br>տեսակներ<br>ի (%) | Սյունիքի<br>մարզի<br>համախառն<br>արտադրանքը<br>(մլրդ դրամ) | Տեսակար<br>ար կշիռը<br>ըստ<br>մթերքների<br>տեսակներ<br>ի (%) | Սյունիքի<br>մարզի<br>տեսակարար<br>կշիռը ՀՀ<br>նկատմամբ<br>(%) |
|----------|---|--|--|--|--|---|
| <b>1</b> | <b>2</b>  | <b>3</b>                                 | <b>4</b>   | <b>5</b>   | <b>6</b>   | <b>7</b>  |
| 1        | Հացահատիկ   | 50.265                                   | 11.8   | 5.564  | 13.6   | 11  |
| 2        | Կարտոֆիլ  | 65.504                                   | 15.4   | 3.363  | 8.2  | 5.1   |
| 3        | Բանջարեղեն  | 70.153                                   | 16.5   | 1.518  | 3.7  | 2.1   |
| 4        | Բոստան  | 21.859                                   | 5.2  | 0.0072   | 0.017  | 0.03  |
| 5        | Պտուղ   | 27.015                                   | 6.4  | 4.412  | 10.8   | 16.3  |
| 6        | Խաղող   | 31.405                                   | 7.4  | 0.168  | 0.41   | 0.5   |
| 7        | Բուսաբուծական այլ<br>արտադրանք                                    | 158.099                                  | 37.3   | 25.731   | 63.0   | 16.2  |
|          | <b>Ընդամենը<br/>բուսաբուծական<br/>արտադրանք</b>                   | <b>424.3</b>                             | <b>100</b>   | <b>40.828</b>  | <b>100</b>   | <b>9.6</b>  |
| 1        | Միս   | 103.698                                  | 48.7   | 7.983  | 46.5   | 7.7   |
| 2        | Կաթ   | 76.130                                   | 35.7   | 6.486  | 37.7   | 8.5   |
| 3        | Զուլ  | 27.600                                   | 13.0   | 1.003  | 5.8  | 3.6   |
| 4        | Անասնաբուծական այլ<br>արտադրանք                                   | 5.572                                    | 2.6  | 1.700  | 9.8  | 30.5  |
| 5        | Ընդամենը<br>անասնաբուծական<br>արտադրանք                           | 213.0                                    | 100  | 17.172   | 100  | 8.06  |
|          | <b>Ընդամենը<br/>գյուղատնտեսության<br/>համախառն<br/>արտադրանքը</b> | <b>637.3</b>                             | <b>100</b>   | <b>58.0</b>  | <b>100</b>   | <b>9.1</b>  |

467. Ներկայացված տվյալներից երևում է, որ մարզն ունի անասնապահության /կաթ, միս/ և բուսաբուծության /հացահատիկ, կարտոֆիլ/ արտադրության ուղղություն: Վերջին տարիներին փաստացի ձևավորված մասնագիտացման հետ մեկտեղ պետք է նշել, որ մարզի բնակլիմայական պայմանները բարենպաստ են կորիզավոր հնդավոր պտղատեսակների համար: Առաջիկա ծրագրային միջոցառումները իրականացնելիս պետք է հաշվի առնել նշված նախընտրելի մասնագիտացումը:

**Գյուղատնտեսությունում արտադրության կազմակերպման ձևերը և նրանց չափերը**

468. ՀՀ Սյունիքի մարզում գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվում է գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների միջոցով: 2008թ-ի դրությամբ մարզում գործում էր 13390 գյուղացիական և ֆերմերային տնտեսություն, գյուղատնտեսական մթերքներ /կաթ, միս, հացահատիկ, պտուղ/ վերամշակող 52 կազմակերպություն:

Աղյուսակ 7.4. Սյունիքի մարզի գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպությունների միջին չափը՝ ըստ գյուղատնտեսական հողատեսքերի



(հա)

|         | Մեկ գյուղ. տնտեսությանը և առևտրային կազմակերպությանը բաժին ընկնող գյուղատնտեսական հողատեսքը | Այդ թվում |                 |         |
|---------|---|-----------|-----------------|---------|
|         |   | Վարելահող | Բազմամյա տնկարկ | խոտհարք |
| Սյունիք | 3.0   | 2.3       | 0.06            | 0.2     |

Աղյուսակ 7.5 Մեկ գյուղացիական տնտեսությանը և առևտրային կազմակերպությանը միջին հաշվով բաժին ընկնող անասնազխաքանակը (2009թ. հունվարի 1-ի դրությամբ)

/գլուխ/

|         | Մեկ գյուղացիական տնտեսությանը և առևտրային կազմակերպությանը միջին հաշվով բաժին ընկնող անասնազխաքանակը |            |                  |       |                           |
|---------|--|------------|------------------|-------|---------------------------|
|         | խոշոր եղջերավոր անասուններ   | որից Կովեր | Ոչխարներ և այծեր | Խոզեր | Պայմանական անասնազխաքանակ |
| Սյունիք | 3.9  | 1.8        | 5.0              | 0.3   | 4.60                      |

469. Ներկայացված տվյալներից ակնհայտ է, որ մարզում գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպությունների միջին չափը ըստ գյուղատնտեսական հողատեսքերի և գյուղատնտեսական կենդանիների միջին զխաքանակի բնորոշող ցուցանիշները վկայում են տնտեսությունների մասնատվածության մասին:

Աղյուսակ 7.6. Սյունիքի մարզում խոշոր անասնաբուծական տնտեսությունների /10 և ավելի կով, 50 և ավելի մաքի, 5 և ավելի խոզամայր/ քանակը 01.01. 2009թ դրությամբ

| Մարզը            | Տարածաշրջանը | Տավարաբուծություն | Ոչխարաբուծություն | Խոզաբուծություն | Տավարաբուծություն և ոչխարաբուծություն | Տավարաբուծություն և խոզաբուծություն | Ընդամենը |
|------------------|--------------|-------------------|-------------------|-----------------|---------------------------------------|-------------------------------------|----------|
| Սյունիք          | Կապան        | 45                | 8                 | 13              | 2                                     | 5                                   | 73       |
|                  | Գորիս        | 72                | 29                | 3               | 15                                    | 2                                   | 121      |
|                  | Սիսիան       | 101               | 21                | 6               |                                       | 3                                   | 131      |
|                  | Մեղրի        |                   |                   |                 |                                       |                                     |          |
| Ընդամենը մարզում |              | 218               | 58                | 22              | 17                                    | 10                                  | 325      |

470. Մարզում գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվում են 13390 գյուղացիական տնտեսություններ, որից 229-ը ֆերմերային տնտեսություններ են, որոնք զբաղվում են 63-ը՝ անասնապահությամբ, 55-ը՝ դաշտավարությամբ, 14-ը՝ այգեգործությամբ, 30-ը՝ մեղվաբուծությամբ, 52-ը՝ գյուղատնտեսական մթերքների վերամշակմամբ /կաթ, միս, հացահատիկ, պտուղ/, 15-ը՝ սերմարտադրությամբ:

### Սերմնաբուծությունը և տնկարանային տնտեսությունը

471. Ինչպես հանրապետության, այնպես էլ Սյունիքի մարզի բուսաբուծության ճյուղի արդյունավետ վարման հիմքը և վճռական գործոններից մեկը սերմնաբուծության և

տնկարանային տնտեսության զարգացումն է բարձրորակ սերմերի ու տնկանյութի արտադրության, պահպանման և օգտագործման համապատասխան համակարգի ձևավորման հիման վրա:

472. Հանրապետության ագրարային հատվածում իրականացված համակարգային փոփոխություններին ու հողի սեփականաշնորհմանը զուգընթաց, տարբեր պատճառներով տեղի ունեցած գործընթացների հետևանքով, լուծարվել են նախկինում գոյություն ունեցող սերմնաբուծության և տնկարանային տնտեսության համակարգը, որը մինչև այժմ դեռ լրիվ չի վերականգնվել:

473. ՀՀ գյուղատնտեսության նախարարության, միջազգային կազմակերպությունների և տնտեսավարող սուբյեկտների կողմից վերջին տարիներին սերմի և տնկանյութի արտադրության բարելավման ուղղությամբ ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ: Սակայն դրանք ևս չեն ապահովել հիմնախնդրի ամբողջական լուծումը և կրել են ժամանակավոր բնույթ, հիմնականում լուծել տեղական նշանակության խնդիրներ:

474. Հանրապետության պարենային անվտանգության ապահովման, գյուղատնտեսության և առաջին հերթին բուսաբուծության զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծելու գործում վճռորոշ դեր է ստանում բարձր վերարտադրության սերմերի և որակյալ տնկանյութի արտադրության կազմակերպումը: Նշված հիմնախնդիրների լուծումը պահանջում է սերմնաբուծության և տնկարանային տնտեսության զարգացմանն ուղղված ինչպես միջնաժամկետ, այնպես էլ երկարատև (մինչև 2010-2015թթ.-ը) միջոցառումների իրականացում, ինչը հնարավորություն կընձեռի խթանել սերմնաբուծության և տնկարանային տնտեսության զարգացումը և պայմաններ ստեղծել մարզում բարձրորակ սերմերի արտադրության ու օգտագործման համար:

475. Մարզում հացահատիկի և բանջարաբուստանային կուլտուրաների երաշխավորված և կայուն բերք ապահովելու նպատակով մարզպետարանի կողմից անհրաժեշտ ուշադրություն է դարձվել ցանվող սերմանյութի սերմաթարմացման, սերմափորձարկման և սերմնաբուծության զարգացման ոլորտի վրա, ինչպես նաև տնկարանային տնտեսության աշխատանքների կազմակերպմանը:

476. Մարզում գործում է հացահատիկային մշակաբույսերի տնկարանային տնտեսություն, որը մարզի գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին ապահովել է բարձր որակի սերմանյութով (էլիտա և առաջին վերարտադրության սերմերով):

477. 2006թ. կատարվել է 12հա տնկարանային ցանկ, ստացվել 28տ. «Սուպերէլիտա» սերմանյութ և 22հա «Սուպերէլիտա», ցանքից ստացվել է մոտ 60տ. «էլիտա» սերմանյութ: ՀՀ կառավարության 2007թ-ի մարտի 15-ի N541 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ցորենի և գարու սերմնաբուծության զարգացման ծրագրի» շրջանակներում 2007թ-ին մարզում արտադրվել է 15տ աշնանացան ցորենի, 5տ գարնանացան գարու սուպերէլիտային և 55տ աշնանացան ցորենի և 15տ. գարնանացան գարու էլիտային սերմացու, իսկ 2008թ-ին՝ 25տ աշնանացան ցորենի, 12տ գարնանացան գարու սուպերէլիտային և 394տ. աշնանացան ցորենի ու 50տ.գարնանացան գարու էլիտային սերմացու:

478. 2008թ ընթացքում մարզի սերմ արտադրողների միության ֆերմերների կողմից արտադրվել է աշնանացան ցորենի՝ 48տ. Սուպեր-էլիտա, 1200տոննա առաջին վերարտադրության սերմանյութ, հիմնականում «Բեզոստայա-1», «Ումանկա», «Կրոշկա», «Նահիրի-68» և «Ախթամար» սորտերի: Գարնանացան գարու՝ 16տ. Սուպեր-էլիտա, 60տ. էլիտա, 450տ. առաջին վերարտադրության սերմանյութ, հիմնականում տեղական «Նուտանս», «Ուկրաինական Վակուլա» սորտերի:

479. 2008թ կառավարության կողմից Սիսիանի և Մեղրու տարածաշրջաններին գարու, ցորենի և բազմամյա խոտերի ցանքատարածությունների ընդլայնման և արտադրության զարգացման նպատակով հաստատվել է սուբսիդավորման ծրագիրը և փաստացի տրվել է 255.8մլն դրամ գումար, որը տարածաշրջանների կապի հանգույցների միջոցով անմիջապես տրվել է յուրաքանչյուր շահառուի: Սիսիանի տարածաշրջանի 31 համայնքների, 7787.2հա ցանքատարածության, 2829 գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների տրվել է 250.8մլն դրամ գումար, Մեղրիում՝ 9 համայնքների, 1919.9հա ցանքատարածության, 270 շահառուների տրվել է 49մլն դրամ գումար, որի շնորհիվ մարզի ցանքատարածությունները ավելացել են 2000հա-ով: Նշված ներդրումները հիմնականում նպատակամղվել են մարզի գյուղատնտեսության զարգացմանը:

**Պտղաբուծություն**

480. 2006թ-ին պտղատու այգիների վերականգնման նպատակով մարզի տնկարանային տնտեսություններից (Տեղ, Մեղրի) գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին շուկայականից էժան գներով հատկացվել է 22460 հատ պտղատու և դեկորատիվ տնկիներ, հիմնվել է 6 հա նոր պտղատու այգի:

481. 2007թ-ին մարզի գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին, գյուղատնտեսական կազմակերպություններին պտղատու այգիների վերականգնման նպատակով Տեղ գյուղի և Մեղրի քաղաքի տնկարանային տնտեսություններից շուկայականից էժան գներով տրվել է 5000հա պտղատու և 1800հատ դեկորատիվ ծառերի տնկիներ:

482. 2958.2հա այգիներից ստացվել է 197476ցենտ. պտուղ, 1հա-ի միջին բերքը կազմել է 76,3ց: 184հա խաղողի այգիներից ստացվել է 12732ց. խաղող, 1հա-ի միջին բերքը կազմել է 69,2ց:

483. 2008թ-ին մարզում անհրաժեշտ ուշադրություն և աջակցություն է ցուցաբերվել այգեգործության զարգացման ուղղությամբ: Մարզի գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին, ինչպես նաև այլ կազմակերպություններին դեկորատիվ ծառերի տնկիներով ապահովելու նպատակով Կապանի տարածաշրջանում կազմակերպվել է տնկարանային տնտեսություն, որը առաջիկա 3-4 տարիների ընթացքում մարզի համայնքներին, հիմնարկ-ձեռնարկություններին և գյուղատնտեսական կազմակերպություններին կապահովի անհրաժեշտ դեկորատիվ ծառերի տնկիներով:

484. 2589հա այգիներից ստացվել է 20056.4ցենտներ համախառը բերք, մեկ հեկտարի միջին բերքը կազմել է 77.4ցենտներ: 184հա խաղողի այգիներից ստացվել է 995տ. խաղող, մեկ հեկտարի միջին բերքը կազմել է 54ցենտներ:

485. Սիսիանի տարածաշրջանում նախատեսվում է հիմնել 15հա պտղատու այգի՝ Դարբասի համայնքում վերականգնվող պտղի վերամշակման արտադրամասին պտղով ապահովելու նպատակով:

**Գյուղատնտեսական հիմնական ճյուղերում՝ բուսաբուծությունում և անասնաբուծությունում ստեղծված իրավիճակը**

486. Գյուղատնտեսական ճյուղերի արտադրության ներկայիս մակարդակի և առաջիկա միտումների գնահատման համար ներկայացնենք մարզի բուսաբուծության և անասնաբուծության արտադրական հիմնական ցուցանիշները:

Աղյուսակ 7.7. Գյուղատնտեսական մշակաբույսերի հիմնական արտադրական ցուցանիշները 2006-2008թթ.

ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

|                           | Տարածքը<br>(հազ. հա) |        |        | Բերքատվությունը<br>(g/հա) |       |       | Համախառն բերք<br>(հազ. տոննա) |          |          |
|---------------------------|----------------------|--------|--------|---------------------------|-------|-------|-------------------------------|----------|----------|
|                           | 2006                 | 2007   | 2008   | 2006                      | 2007  | 2008  | 2006                          | 2007     | 2008     |
| <b>Հացահատիկ</b>          |                      |        |        |                           |       |       |                               |          |          |
| Սյունիք                   | 19422                | 19933  | 20390  | 6.3                       | 22.6  | 22.6  | 12348                         | 45161.6  | 45987    |
| ՀՀ                        | 182405               | 176213 | 172838 | 11.6                      | 25.6  | 24.0  | 212545                        | 452522.2 | 4154178  |
| Մարզի տեսակարար կշիռը (%) | 10.6                 | 11.3   | 11.8   | 0.5                       | 0.8   | 0.9   | 5.8                           | 9.9      | 11.11    |
| <b>Կարտոֆիլ</b>           |                      |        |        |                           |       |       |                               |          |          |
| Սյունիք                   | 1822                 | 1806   | 1852   | 150                       | 173   | 179   | 27374                         | 31282.2  | 33299.7  |
| ՀՀ                        | 33045                | 31674  | 34298  | 163                       | 184   | 189   | 539476                        | 583934   | 648562.4 |
| Մարզի տեսակարար կշիռը (%) | 5.5                  | 5.7    | 5.3    | 92                        | 94    | 94    | 5                             | 5.3      | 5.1      |
| <b>Բանջարեղեն</b>         |                      |        |        |                           |       |       |                               |          |          |
| Սյունիք                   | 884                  | 887    | 929    | 186                       | 187   | 192   | 16513                         | 16625.7  | 17859.1  |
| ՀՀ                        | 24361                | 25607  | 24219  | 320                       | 330   | 340   | 779895                        | 845285.1 | 825337.6 |
| Մարզի տեսակարար կշիռը (%) | 3.6                  | 3.4    | 3.8    | 58                        | 65.6  | 56    | 2.1                           | 1.9      | 2.1      |
| <b>Բոստան</b>             |                      |        |        |                           |       |       |                               |          |          |
| Սյունիք                   | 1                    | 1      | 1      | 20                        | 20    | 60    | 0.002                         | 0.002    | 0.006    |
| ՀՀ                        | 4025                 | 5884   | 5446   | 335                       | 350   | 334   | 134935                        | 206295.1 | 182159.4 |
| Մարզի տեսակարար կշիռը (%) | 0.025                | 0.016  | 0.018  | 5.97                      | 5.71  | 17.96 | 0.0015                        | 0.00096  | 0.0032   |
| <b>Պտուղ և հատապտուղ</b>  |                      |        |        |                           |       |       |                               |          |          |
| Սյունիք                   | 2693                 | 2589.2 | 2589   | 51.4                      | 76.2  | 77.4  | 13859                         | 19747.6  | 20056.4  |
| ՀՀ                        | 35403                | 38020  | 36748  | 80.8                      | 68.4  | 86.4  | 286133                        | 260239   | 317834.8 |
| Մարզի տեսակարար կշիռը (%) | 7.6                  | 6.8    | 7.04   | 63.6                      | 111.4 | 89.5  | 4.8                           | 7.5      | 6.3      |
| <b>Խաղող</b>              |                      |        |        |                           |       |       |                               |          |          |
| Սյունիք                   | 184.8                | 184    | 184    | 48.5                      | 69    | 54    | 897                           | 1273     | 995      |
| ՀՀ                        | 15746                | 15888  | 16796  | 127.8                     | 137.7 | 110.6 | 201372                        | 218882   | 185831   |
| Մարզի տեսակարար կշիռը (%) | 1.17                 | 1.15   | 1.09   | 37.9                      | 50.1  | 48.8  | 0.44                          | 0.54     | 0.48     |

487. Աղյուսակում բերված տվյալներից ակնհայտ է, որ բոլոր մշակաբույսերի համար, բացառությամբ հացահատիկի և պտղի, մարզի բերքատվության ցուցանիշները զգալիորեն զիջում են հանրապետության միջին ցուցանիշին: Վերջիններս վկայում են, որ մարզում արդյունավետ չեն օգտագործվում գյուղատնտեսությունում առկա ռեսուրսները:

488. Սյունիքի մարզի գյուղատնտեսությունը գտնվում է ռիսկային գոտում, որտեղ գրեթե ամեն տարի անպակաս են տարերային աղետները: Ցրտահարություն, կարկտահարություն, երաշտ, հեղեղումներ, որոնց հետևանքով գրեթե ամեն տարի մարզի ազգաբնակչությունը տուժում է: Հետևաբար ապահովագրական համակարգի և բնական անցանկալի երևույթների դեմ պայքարի ձևավորումն ունի կարևոր ռազմավարական նշանակություն: Մարզում ապահովագրական համակարգի ներդրման դեպքում անհրաժեշտ է անպայմանորեն հաշվի առնել գյուղատնտեսության առանձնահատկությունները և գյուղատնտեսությունում տնտեսվարողների շահերը: Ստորև ներկայացվում են ապահովագրական համակարգի ձևավորման անհրաժեշտությունը փաստող որոշ տվյալներ 2006-2008թթ-ի համար:

- 1) 2006թ. արտադրվել է 123480g հացահատիկ, մեկ հեկտարի միջին բերքը կազմել է 6.3g., 273742g կարտոֆիլ, միջին բերքը 150,2g, բանջարաբոստանային կուլտուրաներ (կաղամբ, լոլիկ, վարունգ և այլն)՝ 165133g, միջին բերքը՝ 186,6g:
- 2) 2007թ-ին արտադրվել է 451616g հացահատիկ, 1հա-ի միջին բերքը 22.6g, 312822g կարտոֆիլ, միջին բերքը՝ 173.2g, 166257g բանջարաբոստանային կուլտուրաներ, միջին բերքը՝ 187.2g:
- 3) 2008թ-ին արտադրվել է 459870g հացահատիկ, 1հա-ի միջին բերքը 22.6g, 332997g կարտոֆիլ, միջին բերքը՝ 179.8g, 178591g բանջարաբոստանային կուլտուրաներ, միջին բերքը՝ 192g:

489. Սյունիքի մարզի անասնապահության ճյուղը բնութագրող ցուցանիշները 2007-2009թթ տվյալներով

Աղյուսակ 7.8. Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի 2006-2008թթ.-ի տվյալները (Հունվարի 1-ի դրությամբ)

(հազ.գլուխ)

|                            | Խոշոր եղջերավորներ |        |        | այդ թվում՝ կովեր |        |        | Խոզեր |       |       | Ոչխարներ և այծեր |        |        |
|----------------------------|--------------------|--------|--------|------------------|--------|--------|-------|-------|-------|------------------|--------|--------|
|                            | 2007               | 2008   | 2009   | 2007             | 2008   | 2009   | 2007  | 2008  | 2009  | 2007             | 2008   | 2009   |
| Սյունիք                    | 53.319             | 53.427 | 53.513 | 26.345           | 26.507 | 26.543 | 9.626 | 4.348 | 4.080 | 60.330           | 67.282 | 68.236 |
| ՀՀ                         | 592.1              | 620.2  | 629.1  | 297.1            | 307.1  | 310.6  | 137.5 | 152.8 | 86.7  | 591.6            | 632.9  | 637.1  |
| Մարզի տեսակ արար կշիռը (%) | 9                  | 8.6    | 8.5    | 8.9              | 8.6    | 8.5    | 7     | 2.8   | 4.7   | 10.2             | 10.6   | 10.7   |

Աղյուսակ 7.9. Անասնապահական հիմնական մթերքների արտադրության ծավալները 2006-2008թթ.-ին

/հազ.տոննա/

|                           | Իրացվել է միս կենդանի քաշով (հազ. տոննա) |       |       | Կաթ (հազ. տոննա) |       |       | Չու( մլն հատ) |       |       |
|---------------------------|--|-------|-------|------------------|-------|-------|---------------|-------|-------|
|                           | 2006                                     | 2007  | 2008  | 2006             | 2007  | 2008  | 2006          | 2007  | 2008  |
| Սյունիք                   | 9.2                                      | 9.4   | 9.7   | 52.5             | 54.4  | 56.4  | 13.5          | 16.4  | 20.9  |
| ՀՀ                        | 117.1                                    | 122.2 | 125.9 | 620.0            | 642.0 | 661.9 | 463.7         | 525.4 | 574.9 |
| Մարզի տեսակարար կշիռը (%) | 7.8                                      | 7.6   | 7.7   | 8.4              | 8.4   | 8.5   | 2.9           | 3.1   | 3.6   |

490. Ըստ Աղյուսակ 7.7-ի և Աղյուսակ 7.8-ի տվյալների մարզում 2006-2008թթ. ընթացքում նկատվում է գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի և անասնապահական մթերքների արտադրության որոշակի աճ:

491. Մարզի բուսաբուծության և անասնաբուծության ճյուղի հիմնական ցուցանիշների փոփոխության գնահատումը հնարավորություն է տալիս հետևություն անելու, որ ցածր է մշակաբույսերի բերքատվությունը և գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը: Արտադրության ծավալների ավելացումը հիմնականում իրականացվում է էքստենսիվ եղանակի հաշվին, ուստի առաջնահերթ հիմնախնդիրը գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության ու գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումն է:

492. Մարզի անասնաբուծության հիմնական ուղղվածությունը կաթնամսամթերքի արտադրությունն է: Մարզի բոլոր տարածաշրջաններում գործում են կաթի ընդունման 32 կետեր, որտեղ ընդունում են գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների արտադրած կաթը: Մի շարք մասնագիտացված և հարմարեցված արտադրամասերում արտադրվում է բարձրորակ պանիր, որի պահանջարկը հանրապետության շուկաներում բավականին բարձր է: Սակայն կաթի իրացումից գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների ստացված եկամուտը բավականին ցածր է, քանի որ կաթի 1 լիտրը իրացվում է 150-200 դրամով:

493. Մարզում լայն թափ են ստացել նաև թռչնաբուծությունն ու մեղվաբուծությունը: Վիճակագրական տվյալներով թռչունների գլխաքանակը արդեն հասնում է 136521-ի, իսկ մեղվաընտանիքներինը՝ 32081-ի:

494. Վերջին երկու տարիների ընթացքում Գորիսի և Կապանի տարածաշրջաններում ստեղծվել են 2 խոշոր տոհմային տնտեսություններ: Սյունիքի համայնքում ստեղծվել է «Արմեն և Սարմեն» ՍՊԸ-ը տավարաբուծական խոշոր տոհմային տնտեսություն, Ավստրիայից ներկրելով 450 գլուխ բարձրակիթ տոհմային երինջներ: Նախատեսվում է առաջիկա տարիներին տոհմային անասունների ձեռք բերման միջոցով կովերի գլխաքանակը հասցնել մինչև 800 գլուխ: Այդ տնտեսության բազայի վրա նախատեսված է մարզի գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին ապահովել բարձր մթերատու կենդանիներով:

Աղյուսակ 7.10. Մարզում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 01.01.2009թ դրությամբ

| Տարածաշրջանի անվանումը | Խ.Ե.Ա.      | Որից կովեր   | Ոչխար        | Այծեր        | Խոզեր       | Զիեր        | Թռչուններ   | Մեղուներ     |              |
|------------------------|-------------|--------------|--------------|--------------|-------------|-------------|-------------|--------------|--------------|
| 1                      | 2           | 3            | 4            |              | 7           | 8           | 9           | 10           |              |
| ԿԱՊԱՆ                  | 2007        | 9615         | 4662         | 5930         | 2484        | 3924        | 626         | 24328        | 9860         |
|                        | 2008        | 9999         | 4868         | 6949         | 2612        | 2020        | 608         | 25353        | 10595        |
|                        | <b>2009</b> | <b>9859</b>  | <b>4944</b>  | <b>7370</b>  | <b>2332</b> | <b>1686</b> | <b>572</b>  | <b>49948</b> | <b>10281</b> |
| ԳՈՐԻՍ                  | 2007        | 23519        | 11192        | 24534        | 574         | 3204        | 1245        | 43263        | 6075         |
|                        | 2008        | <b>23907</b> | <b>11712</b> | <b>29943</b> | <b>686</b>  | <b>939</b>  | <b>1224</b> | <b>43180</b> | <b>6772</b>  |
|                        | <b>2009</b> | <b>24162</b> | <b>12187</b> | <b>31157</b> | <b>650</b>  | <b>1376</b> | <b>1232</b> | <b>50098</b> | <b>8094</b>  |
| ՄԻՍԻԱՆ                 | 2007        | 18954        | 9835         | 24472        | 911         | 1548        | 527         | 33300        | 8399         |
|                        | 2008        | <b>18465</b> | <b>9364</b>  | <b>25152</b> | <b>825</b>  | <b>1122</b> | <b>508</b>  | <b>32400</b> | <b>8400</b>  |
|                        | <b>2009</b> | <b>17788</b> | <b>8866</b>  | <b>24528</b> | <b>760</b>  | <b>756</b>  | <b>471</b>  | <b>32458</b> | <b>11640</b> |
| ՄԵՂՐԻ                  | 2007        | 1231         | 656          | 674          | 751         | 950         | 75          | 5942         | 1898         |
|                        | 2008        | <b>1056</b>  | <b>563</b>   | <b>592</b>   | <b>523</b>  | <b>267</b>  | <b>64</b>   | <b>5028</b>  | <b>2074</b>  |

|  |      |       |       |       |      |      |      |        |       |
|--|------|-------|-------|-------|------|------|------|--------|-------|
|  | 2009 | 1704  | 546   | 989   | 450  | 262  | 70   | 4017   | 2066  |
| ԸՆԴԱՄ<br>ԵՆԸ   | 2007 | 53319 | 26345 | 55610 | 4720 | 9626 | 2473 | 106833 | 26232 |
|  | 2008 | 53427 | 26507 | 62636 | 4646 | 4348 | 2404 | 105961 | 27841 |
|  | 2009 | 53513 | 26543 | 64044 | 4192 | 4080 | 2345 | 136521 | 32081 |
| Աղբյուրը՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության տվյալներ |      |       |       |       |      |      |      |        |       |

### Մեղվաբուծություն

495. Մարզում մեղվաբուծության զարգացման համար առկա է բնակլիմայական բարենպաստ պայմանները: Մարզի տարածքը ունենալով տարբեր գոտիներ ցածրադիրից մինչև բարձրադիր, ալպիական և մարգագետինային արոտավայրեր բարենպաստ է էկոլոգիապես մաքուր մեղր արտադրելու համար:

496. Մեղվաբուծության շարժի դինամիկայից պարզ երևում է /Աղյուսակ 7.9/, որ մեղվաբուծությունը զարգացման լավ հեռանկար ունի: Եթե 2007թ հունվարի 1-ի դրությամբ մարզում պահվում էր 26232 մեղվաբուծանիք, ապա 2009թ հունվարի 1-ի դրությամբ այն կազմել է 32081 մեղվաբուծանիք կամ 2007թ համեմատ աճը կազմել է 22.3%:

### Տոհմային գործը

497. Անասնազխաքանակի մասնատումը, կերի կայուն բազայի բացակայությունը, կերային մշակաբույսերի ցանքատարածությունների նվազումը ոչ միայն հանգեցրեցին անասնազխաքանակի և անասնապահական մթերքների և հումքի արտադրության կրճատմանը, այլև լուրջ խոչընդոտներ ստեղծեցին լայնածավալ տոհմասելեկցիոն համալիր միջոցառումների իրականացման համար: Վերջինից անմասն չմնաց Սյունիքի մարզը:

498. Լուրջ խնդիրներ կան նաև գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման աշխատանքներում:

499. Հանրապետությունում անասնաբուծությունը զարգացնելու, բարձր մթերատու և տոհմային հատկանիշներով օժտված կենդանիներ աճեցնելու և նախիրներն ու հոտերը որակյալ կազմով համալրելու համար անհրաժեշտ է առաջին հերթին մարզում ստեղծել տոհմային տնտեսություններ, ընդլայնել գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման ծավալները:

500. 2008թ. խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 2006թ-ի համեմատությամբ ավելացել է 2067, մանրինը՝ 7473 գլխով: 2008թ առկա 26076 գլուխ կովերից արհեստական եղանակով սերմնավորվել է 4140 գլուխ կովեր, որը կազմում է կովերի ընդհանուր գլխաքանակի 15.8%-ը:

501. Ստեղծված իրավիճակի գնահատումից հետևում է, որ առաջնային խնդիր է համարվում արհեստական սերմնավորմամբ կովերի գլխաքանակի ընդլայնումը, այն հասցնելով կովերի առկա գլխաքանակի 60-70%-ը, որը կնպաստի կենդանիների հիվանդությունների կանխմանը և մթերատվության բարձրացմանը: Կարևորվում է նաև մարզում տոհմային տնտեսությունների ձևավորումը, որոնք տոհմային կենդանիներ կմատակարարեն մարզի անասնապահությամբ զբաղվող գյուղացիական տնտեսություններին:

## Անասնաբուժությունը

502. Ելնելով հանրապետության առանձին տարածաշրջաններում տիրող կենդանիների վարակիչ հիվանդությունների համաճարակային վիճակից և ղեկավարվելով «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքով, հանրապետությունում կենդանիների վարակիչ հիվանդությունները կանխելու նպատակով, իրականացվում են հակահամաճարակային միջոցառումներ:

503. Համապատասխան անասնաբուժական ծառայությունների կողմից ժամանակին կատարվել են գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների դեմ պայքարի, կարանտինային և հակահամաճարակային միջոցառումները: Պարբերաբար հրավիրվել է փնջային խորհրդակցություններ, որտեղ քննարկվել է մարզում անասնաբուժական և տոհմային աշխատանքների կազմակերպման վիճակը, անասնապահական մթերքների արտադրության և մթերման, սերմնավորման հարցերը, որոնց ուղղությամբ կատարվել են համապատասխան միջոցառումներ:

504. Նախկինում հանրապետությունում պայքարի միջոցառումներ էին իրականացվում կենդանիների 55 անվանում վարակիչ հիվանդության դեմ:

505. 2006-2008թթ.-ի պետպատվերի շրջանակներում կատարվել է բրուցելոզ և տուբերկուլոզ հիվանդությունների նկատմամբ տարեկան երկու անգամ ախտորոշիչ հետազոտություն և սիբիրախտ, դաբաղ, խշխշան պալար, պաստերելիոզ ու ժանտախտ հիվանդությունների նկատմամբ բուժադիախիլակտիկ պատվաստումներ:

506. Վերջին տարիներին գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների անվանացանկի կրճատման հետևանքով, հանրապետությունում որոշակիորեն վատթարացել է հակահամաճարակային վիճակը:

507. Սյունիքի մարզում ներկայումս գործում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության մարզային կենտրոն, որն իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է սննդամթերքի անվտանգության և անասնաբուժության բնագավառում «Սննդամթերքի անվտանգության մասին» և «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքների ու իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան վերահսկողություն: Մարզի համայնքներում աշխատում են 83 անասնաբուժներ, որոնք իրականացնում են անասնաբուժական բոլոր միջոցառումները:

508. Մարզում նշված աշխատանքների վերահսկողության պատասխանատուն հանդիսանում է սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության մարզային կենտրոնը: «Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» ՊՈԱԿ-ի մարզային աշխատակիցներն իրականացնում են ախտորոշիչ աշխատանքներ:

509. 2008թ ընթացքում 90-98%-ով պետպատվերի շրջանակներում կատարվել է գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների դեմ պատվաստումներ, ինչպես նաև ախտորոշիչ բոլոր հետազոտությունները և մնացած անասնաբուժական և անասնաբուժասանիտարական միջոցառումները:

510. Ստեղծված իրավիճակում Սյունիքի մարզում առաջնահերթ խնդիր է դառնում անասնաբուժական պարտադիր միջոցառումների մեջ ներառվող հիվանդությունների ցանկի ընդլայնումը, սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության մարզային կենտրոնի բազայի ամրապնդումը: Մարզի համայնքներում գործող անասնաբույժների աշխատանքի արդյունավետությունը պահանջում է ներդրումներ, որոնք կուղղվեն համայնքներում գործող անասնաբույժների գործունեության համար անհրաժեշտ բազայի ստեղծմանը:



**Գյուղատնտեսական մթերքների իրացումը և ապրանքայնության մակարդակը**

511. Գյուղատնտեսության կայունության, գյուղացիական տնտեսությունների եկամուտների ապահովման և գյուղատնտեսության վերարտադրության համար կարևոր հանգամանք է արտադրանքի իրացման խնդրի լուծումը, որը բնութագրվում է արտադրության ապրանքայնության մակարդակով: 2006թ.-ի հունվարի 1-ի դրությամբ ապրանքայնության մակարդակի ուղղությամբ կատարված ուսումնասիրությունների արդյունքները նարկայացված են Աղյուսակում 7.11-ում /2005թ-ի տվյալներ/:

Աղյուսակ 7.11 Գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության մակարդակը բնորոշող ցուցանիշներ

| Մթերքների անվանումը         | Ապրանքայնության մակարդակը (%) |                           |
|-----------------------------|-------------------------------|---------------------------|
|                             | Սյունիքի մարզ                 | Հայաստանի Հանրապետություն |
| Հացահատիկ                   | 32.1                          | 23.0                      |
| Կարտոֆիլ                    | 35.3                          | 42.3                      |
| Բանջարանոցային մշակաբույսեր | 42.9                          | 75.0                      |
| Պտուղ                       | 49.0                          | 53.1                      |
| Խաղող                       | 10.3                          | 83.7                      |
| Միս                         | 84.9                          | 80.3                      |
| Կաթ և կաթնամթերք            | 47.6                          | 45.1                      |
| Ձուլ                        | 34.6                          | 44.2                      |
| Բուրդ                       | 46.5                          | 48.6                      |
| Մեղր                        | 50.1                          | 50.9                      |

512. Չնայած վերջին տարիներին մարզում որոշակի դրական տեղաշարժեր կան գյուղատնտեսական մթերքների իրացման, հատկապես պտղատեսակների արտահանման ուղղությամբ, սակայն իրացման հիմնախնդիրները մարզում առավել սրված է: Վերջինիս մասին վկայում են աղյուսակում ներկայացված տվյալները. գյուղատնտեսության ապրանքայնության մակարդակը զգալիորեն ցածր է հանրապետության միջին ցուցանիշից: Ըստ հաշվարկների Սյունիքի մարզի գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության մակարդակը բավականին ցածր ցուցանիշ է և այն չի կարող ապահովել գյուղատնտեսության արդյունավետ վերարտադրություն:

513. Ներկայացված տվյալները վկայում են, որ մարզի գյուղատնտեսության համար կարևոր հիմնախնդիր է ապրանքայնության մակարդակի բարձրացումը, որի ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել համապատասխան միջոցառումներ, որոնցով մեծապես պայմանավորված է գյուղացիական տնտեսությունների կայունությունը և գյուղական բնակավայրերում աղքատության կրճատումը:

**Գյուղատնտեսությունում արտադրական ծախսերը և արդյունավետությունը**

514. Գյուղատնտեսական մթերքների մրցունակությունը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում մեծապես պայմանավորված է միավոր արտադրանքի վրա կատարվող ծախսերի մակարդակով:

515. Բարձրորակ տնկանյութի և սերմանյութի օգտագործման, ագրոտեխնիկայի պահանջների կատարման գյուղատնտեսական կենդանիների տոհմային

հատկանիշների բարելավման միջոցով անհրաժեշտ է բարձրացնել մշակաբույսերի և կենդանիների մթերատվությունը՝ արդյունքում բարձրացնելով արտադրության արդյունավետությունը:

516. Վերը նշվածից կարելի է հետևություն անել, որ մարզում առաջնային հիմնախնդիր է գյուղատնտեսական մթերքների արտադրության ինքնարժեքի իջեցման և արտադրության արդյունավետության բարձրացման ուղղությամբ միջոցառումների իրականացումը:

### Գյուղատնտեսական տեխնիկական ապահովվածությունը

517. Մարզում գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու համար կարևոր նշանակություն ունի գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին նորագույն տեխնիկայով հագեցվածությունը և ապահովվածությունը: Վերջին տարիներին գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան ֆերմերները համալրել են նորագույն տեխնիկայով: Միայն 2008թ կառավարությունը մարզին շուկայականից էժան գներով հատկացրել է 6 կոնալեկտ անիվավոր տրակտորներ, անհրաժեշտ գյուղատնտեսական գործիքներ և 2 միավոր կոմբայն, Լիճքի, Գեղիի, Վ.Խոտանանի, Սվարանցի համայնքներին, առաջիկայում ևս 4 կոնալեկտ կտրամադրվի, Խնձորեսկի, Անգեղակոթի, Շաքիի, Աշոտավանի համայնքներին:

518. 2008թ գյուղատնտեսական աշխատանքներին և բերքահավաքին մասնակցել է միջին հաշվով մարզի առկա տեխնիկայի 70-72%-ը:

Աղյուսակ 7.12. Գյուղատնտեսական տեխնիկայի առկայությունը և տեխնիկական վիճակը

| Տեխնիկայի տեսակը           | Սյունիքում           |                            | ՀՀ-ում               |                            |
|----------------------------|----------------------|----------------------------|----------------------|----------------------------|
|                            | Առկա քանակը (միավոր) | Սարքինության մակարդակը (%) | Առկա քանակը (միավոր) | Սարքինության մակարդակը (%) |
| Տրակտորներ                 | 1130                 | 78.1                       | 14732                | 78.7                       |
| Բեռնատար ավտոմեքենաներ     | 1023                 | 78.1                       | 14663                | 75.2                       |
| Հացահատիկահավաք կոմբայններ | 172                  | 83.1                       | 1410                 | 84.8                       |
| Տրակտորային կցասայլեր      | 556                  | 91.9                       | 6113                 | 87.5                       |
| Տրակտորային խոտհնձիչներ    | 251                  | 90                         | 1867                 | 86.3                       |
| Կերահավաք կոմբայններ       | 18                   | 94.4                       | 296                  | 73.3                       |
| Հատիկազտիչ մեքենաներ       | 92                   | 91.3                       | 456                  | 82.5                       |
| Տրակտորային շարքացաններ    | 192                  | 97.4                       | 1774                 | 89.2                       |
| Տրակտորային գութաններ      | 369                  | 92.7                       | 3710                 | 86.7                       |
| Կուլտիվատորներ             | 102                  | 95.1                       | 1977                 | 91.1                       |
| Հավաքիչ-մամլիչներ          | 234                  | 97.4                       | 1376                 | 90.6                       |

519. Տեխնիկայի ապահովվածության վիճակը գնահատելու համար դիտարկենք Սյունիքի մարզի գյուղացիական տնտեսությունների և հացահատիկային մշակաբույսերի հաշվով հացահատիկահավաք կոմբայնների ապահովվածությունը:

Աղյուսակ 7.13. Գյուղատնտեսական տեխնիկայի ապահովվածությունը 100 գյուղացիական տնտեսության հաշվով

| Տեխնիկայի տեսակը           | Սյունիք   |
|----------------------------|---|
|                            | 100 գյուղացիական տնտեսության հաշվով ապահովվածությունը |
| Տրակտորներ                 | 8.4   |
| Բեռնատար ավտոմեքենաներ     | 7.6   |
| Հացահատիկահավաք կոմբայններ | 1.2   |
| Տրակտորային կցասայլեր      | 4.1   |
| Տրակտորային խոտհնձիչներ    | 1.8   |
| Կերահավաք կոմբայններ       | 0.13  |
| Հատիկագտիչ մեքենաներ       | 0.68  |
| Տրակտորային շարքացաններ    | 1.4   |
| Տրակտորային գութաններ      | 2.7   |
| Կուլտիվատորներ             | 0.76  |
| Հավաքիչ-մամլիչներ          | 1.7   |

520. Ներկայացված տվյալներից ակնհայտ է, որ տրակտորների և բեռնատար ավտոմեքենաների ու մի շարք այլ տեխնիկական միջոցների ապահովվածության առումով մարզը գտնվում է միջին մակարդակի վրա: Սակայն տեխնիկայի օգտագործման արդյունավետության ուղղությամբ այստեղ կարևորվում է դրանց համատեղ օգտագործման մեխանիզմների ներդրումը:

521. Այստեղ խնդիր է տեխնիկայով ապահովվածության մակարդակի բարձրացումը և տեխնիկական վիճակի բարելավումը:

522. Ընդհանուր առմամբ տեխնիկական հավաքակազմը, ինչպես Սյունիքի մարզում, այնպես էլ ամբողջ հանրապետությունում ֆիզիկապես և բարոյապես մաշված է, առկա տեխնիկան իր հզորություններով չի համապատասխանում ներկայիս հողօգտագործման պայմաններին:

523. Տեխնիկայի օգտագործման վիճակի ուսումնասիրությունից ակնհայտ է, որ այդ բնագավառում առաջնահերթ հիմնախնդիրը տեխնիկայով ապահովվածության մակարդակի բարձրացումը և տեխնիկայի համատեղ օգտագործման մեխանիզմների (կոոպերացիա և այլ կազմակերպական ձևեր) ներդրումը:

### Համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ

524. Գյուղատնտեսության ճյուղի առանձնահատկություններով պայմանավորված գյուղացիական տնտեսությունները արտադրական գործընթացում ունենում են շրջանառու միջոցների համալրման անհրաժեշտություն: Բացի այդ գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարողները հաճախ ունենում են խոշոր ներդրումների անհրաժեշտություն:

525. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմը /գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն/ համագործակցում է մի շարք միջազգային կազմակերպությունների հետ, որոնք մեծ աջակցություն և օգնություն են ցուցաբերում գյուղատնտեսության բոլոր բնագավառների աշխատանքների կազմակերպման ուղղությամբ:

526. 2007թ. միջազգային կազմակերպությունների կողմից ներդրվել է մոտ 536 մլն. դրամ գումար՝ գյուղատնտեսական աշխատանքներին աջակցելու նպատակով.

«Ակցիա սովի դեմ» հիմնադրամ՝ 34մլն.դրամ, «Վորդ-Վիժն» կազմակերպություն՝ 62,5մլն.դրամ, «ՍԵՖ» 316մլն. դրամ, «Արեգակ» 123.5մլն.դրամ:

527. Նշված վարկերը հիմնականում նպատականդվել են մարզի գյուղատնտեսության զարգացմանը:

528. Ընթացիկ տարում գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագրի (ԾԻԳ-ի) շրջանակներում տարբեր տեսակի աշխատանքներ կազմակերպելու նպատակով ներդրվել է 31.3 մլն. դրամ գումար, իսկ գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի գրասենյակի (ԻՖԱԴ-ի) կողմից ոռոգման ջրատարի կառուցման նպատակով 52.5 մլն. դրամ գումար: Այդ աշխատանքները կշարունակվեն նաև 2009թ. ընթացքում:

529. Մարզում գյուղատնտեսության ոլորտին տրամադրված ներդրումների քանակի և դրանց ծավալների վերաբերյալ ներկայացված տվյալները վկայում են, որ ընդհանուր առմամբ չի բավարարում մարզի գյուղացիական տնտեսությունների վարկավորման պահանջը, որը խոչընդոտող գործոն է գյուղատնտեսության վերարտադրության, տեխնիկական վերազինման, արտադրության արդյունավետության ապահովման համար:

530. Մարզի գյուղատնտեսության ոլորտի առջև ծառայած հիմնախնդիրներից մեկը ճյուղի վարկավորումն է՝ կապված ինչպես վարկավորման ծավալների, այնպես էլ ժամկետների տոկոսադրույքի և գրավադրման պայմանների հետ:

531. Ներկա իրավիճակի վերլուծությունը և Սյունիքի մարզի գյուղատնտեսության ճյուղի առջև ծառայած հիմնախնդիրների բացահայտումը հնարավորություն է տվել սահմանելու ծրագրի հիմնական ուղղությունները:

### **Սյունիքի մարզի գյուղատնտեսության ճյուղի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների ու խոչընդոտների (ՈւԹՀԿ) վերլուծությունը**

532. Մարզի գյուղատնտեսության ճյուղում ներկա իրավիճակի վերլուծությունը և հիմնախնդիրների բացահայտումը հնարավորություն է տվել իրականացնելու տվյալ բնագավառում ուժեղ, թույլ կողմերի, հնարավորությունների ու խոչընդոտների վերլուծություն:

#### **Ուժեղ կողմեր են**

- 1) գյուղատնտեսական հողային ռեսուրսների որոշակի առկայությունը (մարզին է պատկանում հանրապետության վարելահողերի 5.6 %-ը, բազմամյա տնկարկների 10.7%-ը խոտհարքների 10.8%-ը, արոտավայրերի 7.1%-ը)
- 2) գյուղատնտեսության մասնագիտացումը պայմանավորող բնական պայմանների բազմազանությունը
- 3) մսակաթնային անասնապահության և հատկապես խոզաբուծության համար զարգացման հնարավորությունների առկայությունը
- 4) խոզերի գլխաքանակով հանրապետության մարզերի մեջ առաջատար տեղում լինելու հանգամանքը (այն 2006թ.-ի տվյալներով կազմել է 6.9% )
- 5) էկոլոգիական գյուղատնտեսություն վարելու նախադրյալների առկայությունը
- 6) մարզի գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրության ծավալների ընդլայնման և արտադրության արդյունավետության բարձրացման ձգտումը:

#### **Թույլ կողմերն են**

- 1) հողային ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործումը

- 2) աշխատուժի թերբեռնված օգտագործումը (գյուղատնտեսությունում ամբողջ տարին զբաղվածների տեսակարար կշիռը մարզում կազմում է 32.3 %)
- 3) գյուղատնտեսության ապրանքայնության ցածր մակարդակը (այն մարզի կտրվածքով կազմել է 48.3 %, որի հիմնական պատճառը գյուղմթերքների իրացման ենթակառուցվածքների անկատարությունն է, ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակը)
- 4) արտադրության մասնատվածությունը (գյուղացիական տնտեսությունները ունեն փոքր չափեր և դրանց խոշորացման միտումները դեռևս զգալի չեն, մեկ գյուղացիական տնտեսությանը պատկանող գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են 3 հա, իսկ պայմանական անասնազլխաքանակը՝ 1.8)
- 5) գյուղատնտեսության մեջ օգտագործվող ռեսուրսների սակավության հետևանքով ագրոտեխնիկական և զոոտեխնիկական պահանջների ոչ լիարժեք կատարումը
- 6) գյուղատնտեսության արտադրական ենթակառուցվածքների անկատար վիճակը և արտադրության պահանջներին համապատասխան դրանց ձևավորման չափազանց դանդաղ ընթացքը
- 7) ոռոգման ներտնտեսային ցանցի անբավարար վիճակը, դրանց անհամապատասխանությունը հողօգտագործման չափերին, ոռոգման ջրի մեծ կորուստների առկայությունը, դեռևս մեխանիկական ջրամատակարարման բարձր տեսակարար կշիռը, ջուր մատակարարող և ջուր օգտագործող սուբյեկտների միջև փոխհարաբերությունների անկատարությունը, ոռոգելի տարածքների սակավությունը (փաստացի ոռոգվող տարածքը ընդհանուր ցանքատարածությունների և բազմամյա տնկարկների նկատմամբ կազմում է 15.3%)
- 8) տոհմային գործի կազմակերպման անբավարար վիճակը, տոհմային տնտեսությունների բացակայությունը, արհեստական սերմնավորման տակ ընդգրկվող գլխաքանակի չափազանց ցածր տեսակարար կշիռը (կովերի 8.3%-ը)
- 9) տեխնիկական ապահովվածության ցածր մակարդակը առկա տեխնիկայի ֆիզիկական և բարոյական մաշվածությունը, դրա հետևանքով մեքենայացված աշխատանքների բարձր ինքնարժեքը և դրանց համապատասխան բարձր սակագների ձևավորումը համատեղ սկզբունքով տեխնիկայի օգտագործման կազմակերպական ձևերի կիրառումը գրեթե բացակայությունը
- 10) հողերի, մասնավորապես արոտների, խոտհարքների բարելավման ուղղությամբ աշխատանքների բացակայությունը
- 11) գյուղատնտեսության և սպասարկման ոլորտում կոոպերատիվների ձևավորման չափազանց դանդաղ ընթացքը
- 12) գյուղական բնակավայրերում գյուղատնտեսական հումքի վերամշակման արտադրական կարողությունների գրեթե բացակայությունը և դրանց ստեղծման դանդաղ ընթացքը
- 13) գյուղացիական տնտեսությունների կողմից մարկեթինգի, շուկայավարման չափազանց ցածր մակարդակը
- 14) գյուղատնտեսության վարկավորման ծավալների անբավարարությունը և վարկավորման տոկոսադրույքի, ժամկետների և գրավադրման անբարենպաստ պայմանների առկայությունը
- 15) գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի բացակայությունը:

**Հնարավորություններն են**

- 1) տնկարանային տնտեսության զարգացման, այգետարածքների ընդլայնման, կարտոֆիլի և հացահատիկային մշակաբույսերի սերմնաբուծության համակարգի բարելավման միջոցով գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության համախառն արտադրանքի և արտադրության արդյունավետության բարձրացումը
- 2) տոհմային գործի և անասնաբուժական ծառայությունների վիճակի բարելավման միջոցով գյուղատնտեսական կենդանիների մթերատվության ավելացումը և անասնապահական մթերքների որակի և արտադրության արդյունավետության աճը
- 3) վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակի բարձրացումը, մասնավորապես բազմամյա կերային մշակաբույսերի, կարտոֆիլի, հացահատիկի տարածքների ընդլայնումը
- 4) նպատակային վարկերի միջոցով գյուղատնտեսական հումքի վերամշակման փոքր կարողությունների ձևավորումը
- 5) գյուղացիական տնտեսությունների տեղեկատվության և խորհրդատվության մատչելիության բարձրացումը և համակարգի կատարելագործումը
- 6) գյուղատնտեսությունում իրականացվող վարկային ծրագրերի համապատասխան բաղադրիչների նպատակաուղղումը գյուղատնտեսության, վարկավորման, տնկարանային տնտեսության, սերմնաբուծության, տոհմային գործի, կոոպերացման, ձեռնարկատիրության զարգացման խնդիրներին:

### **Խոչընդոտներն են**

- 1) նշված հնարավորությունների իրականացման համար գյուղացիական տնտեսությունների սեփական միջոցների բացակայությունը
- 2) տվյալ տնտեսությունների համար վարկային (փոխառու) միջոցների սղությունը և անմատչելիությունը
- 3) արտադրանքի արտահանման համար տնտեսությունների սակավ հնարավորությունները և դրա իրականացմամբ զբաղվող կառույցների գրեթե բացակայությունը
- 4) գյուղատնտեսական արտադրության բարձր ռիսկի առկայության և ապահովագրական համակարգի բացակայությունը
- 5) մարզում սահմանամերձ գյուղատնտեսական հողերի առկայությունը:

## **7.2. Գյուղատնտեսության զարգացման ծրագրի նպատակները և ռազմավարությունը**

### **Ծրագրի հիմնական նպատակը**

533. Ծրագրի հիմնական նպատակն է Սյունիքի մարզում գյուղատնտեսության գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման ու կատարելագործման միջոցով ավելացնել բուսաբուծական և անասնաբուծական մթերքների ծավալները, բարձրացնել արտադրության արդյունավետությունը, լուծել իրացման հիմնախնդիրները, որի արդյունքում կավելանան գյուղացիական տնտեսությունների եկամուտները և կկրճատվի աղքատությունը գյուղական բնակավայրերում:

## Ոռոգման համակարգեր

534. ՀՀ կառավարության կողմից ընդունված «Ոռոգման համակարգի բարեփոխումներ» ծրագրով նախատեսվում է ոռոգման համակարգի կառավարման մասնակցային ձևը, որը նպատակ ունի բարելավելու և հուսալի դարձնելու ոռոգման համակարգը: Այդ բարեփոխումների էական մասն է կազմում Զրօգտագործողների ընկերությունների ստեղծումը, որոնց վերապահված է երկրորդական և երրորդական ոռոգման համակարգերի շահագործումը և պահպանումը:

535. Այս բնագավառում նախատեսվող կարևոր միջոցառումներն են.

- 1) ոռոգման գոյություն ունեցող համակարգերի և ոռոգման կարիքների գույքագրումը
- 2) ջրօգտագործողների գործող համակարգի վերջնական ձևավորումը
  - համակարգում էներգակիրների ծախսերի կրճատումը և ինքնահոս ջրամատակարարումների ընդարձակումը
- 3) փոքր և միջին կարգավորման ջրամբարների կառուցումը
  - համայնքներում ոռոգելի և խմելու ջրի վերաբերյալ առկա խնդիրների ուսումնասիրումը և դրանց լուծման միջոցառումների ժամանակացույցի կազմումը:

536. Մարզում գյուղատնտեսական մշակաբույսերից երաշխավորված և բարձր բերք ստանալու կարևորագույն պայմանը ոռոգման համակարգերի անխափան աշխատանքն է:

537. Մարզի 43846հա. վարելահողերից ոռոգվում են 6880հա-ը, որը խիստ ազդում է գյուղատնտեսական արտադրության ծավալների ավելացման և հողի մշակության արդյունավետության բարձրացման վրա: Խնդիրը կարգավորելու համար, մարզում վերակառուցվել և վերանորոգվել է ոռոգման ինքնահոս ջրագծերը, մայր առուները և ներքին ցանցերը, որի արդյունքում ավելացել է ոռոգման ցանքատարածությունները:

538. 2006թ. մարզում առկա վեց ջրօգտագործող ընկերությունների կողմից ոռոգվել է 1941հա ցանքատարածություն, մատակարարվել է 7.1հազ.խ.մ. ջուր, հավաքվել է 49679 հազ. դրամ վարձավճար, կամ վարձավճարների գանձումը կազմել է 79%, 2005թ-ի համեմատությամբ ապահովվելով 15% աճ:

539. 2007թ-ին ոռոգվել է 1173 հա ցանքատարածություն, մատակարարվել է 6506 հազ.խմ. ջուր, հավաքագրվել՝ 36358 հազ. դրամ վարձավճար, կամ վարձավճարների գանձումը կազմել է 72%:

540. 2008թ-ին անհրաժեշտ ուշադրություն է դարձվել մարզում գործող 6 ջրօգտագործողների ընկերության գործունեությանը, որոնց միջոցով կազմակերպվել է 1597հա ցանքատարածությունների ոռոգման աշխատանքներ, մատակարարվել է 5566հազ.խմ. ջուր, կամ վարձավճարների գանձումը կազմել է 83%:

541. «Ոռոգման համակարգերի հիմնանորոգում» ծրագրի շրջանակներում 2008թ վերանորոգվել է Աշոտավանի պոմպակայանը 7.46մլն.դրամ արժողությամբ: Պոմպակայանի վերանորոգման լրացուցիչ ոռոգվում են համայնքի շուրջ 50.0հա տնամերձ հողատարածքները, որոնց սպասարկման տակ կա 92 ջրօգտագործողներ: Պոմպակայանի վերանորոգմամբ վերացել են Աշոտավանի համայնքի ոռոգման հետ կապված խնդիրները:

542. «Հայջրնախագիծ» ինստիտուտ ՓԲԸ-ն «Հագարանյակի մարտահրավեր Հայաստանի հիմնադրամ» ՊՈԱԿ-ի պատվերով իրականացրել է «Սպանդարյանի (16.6 կմ երկարությամբ), Մեղրիի (33 կմ), Ծավ-Շիկահողի (9 կմ) և Նորաշենիկի (6.6 կմ)

ինքնահոս քրազծերի» նախնական նախագծերի կազմումը, որոնց համաձայն պետք է ոռոգվի Սպանդարյանում՝ շուրջ 1400.0 հա, այդ թվում նաև Իշխանասար համայնքի 179.0հա-ը, Մեղրիի՝ 797.0 հա, Ծավ-Շիկահողի՝ 178 հա և Նորաշենիկի՝ 160 հա հողատարածքները: Նախնական հաշվարկներով Սպանդարյանի քրազծի իրականացման արժեքը կազմել է շուրջ 912.0 մլն.դրամ, Մեղրիինը (վերջնական նախագծի համաձայն)՝ 1.8 մլրդ դրամ, Ծավ-Շիկահողինը՝ շուրջ 450.0 մլն դրամ և Նորաշենիկինը՝ շուրջ 400.0 մլն դրամ:

543. «Հազարամյակի մարտահրավեր» Հիմադրամ-Հայաստան ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել «Մեղրի ոռոգման ինքնահոս համակարգի» կառուցումը, որով Սյունիքի մարզի Մեղրի տարածաշրջանի շուրջ 682 հա հողատարածքներ, այդ թվում նաև 8 պոմպակայաններով ոռոգվող 632հա հողատարածքները կոռոգվեն ինքնահոս եղանակով: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև Որոտան-2 պոմպակայանի վերականգնումը, որը հուսալի ոռոգում կապահովի մոտ 400 հա հողատարածքներում: Նախնական հաշվարկներով վերականգնման արժեքը կազմում է շուրջ 515 մլն դրամ:

544. Ոռոգման համակարգերի բարելավման համար նախատեսված ֆինանսավորումների ծավալները տրված են [Հավելված 11.2-ում](#):

### **Իրացման շուկայի մատչելիության և արտադրողի պաշտպանվածության ապահովումը**

545. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ֆերմերների համար ներկայումս հրատապ է գյուղմթերքի մեծածախ շուկաների ձևավորումը: Այսօր ֆերմերներն իրենց արտադրանքն իրացնում են տարերայնորեն, պատահական վայրերում: Այս առումով, ինչպես նշվել է, կարևորվում է Մեղրիի ժամանակակից պահանջներին համապատասխան մեծածախ շուկայի ձևավորվումը, որը կօգնի նաև հանրապետության մյուս մարզերի գյուղմթերք արտադրողներին բերքի կազմակերպված իրացման և արտահանման գործում:

546. Սահմանված չափանիշներին համապատասխան պահեստային և սառնարանային տնտեսությունների բացակայության պատճառով, ֆերմերներն իրենց մթերքներն իրացնում են կարճ ժամանակահատվածում և այդ դեպքում մեծ գյուղատնտեսության առաջնահերթ խնդիրները, ապահովել հետադարձ կապը ֆերմերների հետ ծրագրերի իրագործման ընթացքում, մարզի տարածաշրջաններում ստեղծել գյուղատնտեսական ծրագրերի աջակցության գրասենյակներ:

### **Գյուղատնտեսության ոլորտում ֆինանսական միջոցների և ներդրումների ավելացում**

547. Ինչպես նշվել է ֆինանսական միջոցների մատչելիությունը կարևորագույն դեր ունի գյուղացիական տնտեսությունների տնտեսական բազայի ամրապնդման և գյուղարտադրության զարգացման համար: Դրա հետ կապված սկզբունքային նշանակություն ունի գյուղատնտեսության ոլորտի վարկավորման տոկոսադրույքների իջեցումը և գրավի պայմանների մատչելիության ապահովումը: Այս առումով անհրաժեշտ է հիշատակել Հայգյուղփոխբանկի նոր ռազմավարությունը, որի համաձայն էապես իջեցվեցին վարկային տոկոսադրույքները այն համայնքների համար, որտեղ չկան ժամկետանց պարտավորությունների բանկի նկատմամբ և որոշ միկրովարկերի համար պարզեցվեցին գրավի ձևակերպումները (առանց նոտարական վավերացման): Նման միտումների զարգացումը կմեծացնի վարկերի



մատչելիությունը, նորանոր մասնակիցներ կընդգրկվի վարկավորման գործընթացում և կարևոր խթան կհանդիսանա գյուղատնտեսական արտադրության համար:

548. Առաջիկայում հողերի կադաստրային արժեքի վերագնահատումը էապես կընդլայնի բանկային վարկավորման հնարավորությունները:

549. Անհրաժեշտ է առավել նպատակային օգտագործել Համաշխարհային բանկի աջակցությամբ նախատեսվող «Գյուղատնտեսության բարեփոխումներին աջակցություն» նոր ծրագիրը, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ նախատեսվող «Գյուղական տարածքների տնտեսական զարգացում» ծրագիրը: Գյուղատնտեսության ոլորտի վարկավորման առաջարկի պայմաններում գները լինում են զգալիորեն ցածր, քան ձմռան և վաղ գարնան ամիսներին: Պահեստային և սառնարանային տնտեսությունների ձևավորումը կնպաստի գյուղացիական տնտեսությունների եկամուտների և վերարտադրողական կարողությունների ընդլայնումը:

550. Պահեստային և սառնարանային տնտեսությունները գյուղական համայնքներում նպատակահարմար է կազմակերպել համատեղ օգտագործման (կոոպերատիվ) սկզբունքով: Պահանջվող ֆինանսավորումը սկզբնական ժամանակահատվածում հնարավոր է իրականացնել դրամաշնորհային ծրագրերով, այնուհետև նպատակային վարկերի և մասնավոր ներդրումների միջոցով:

551. Անասնապահությամբ մասնագիտացված Սյունիքի մարզում իրացման շուկայի մատչելիությանը և արտադրողի շահերի պաշտպանությանն ուղղված քայլ կարող է լինել գյուղական համայնքներում կաթի հավաքման և նախնական վերամշակման կետերի և փոքր սպանդանոցների հիմնումը:

552. Իրացման շուկայի մատչելիությունը և սպառողների շահերի պաշտպանվածությունը կնպաստի մարզում գյուղատնտեսական մթերքների իրացման, վերամշակման գործառույթ ունեցող տնտեսավարող սուբյեկտների կայացմանը:

553. Սյունիքում գյուղատնտեսության զարգացման ոլորտներից մեկը կարող է դառնալ ծխախոտի հումքի արտադրությունը: Նախկինում մարզի նախկին շրջաններում այն որոշակիորեն զարգացած էր: Օրինակ՝ Ղափանի նախկին շրջանում 1983 թվականի տվյալներով ծխախոտի ցանքատարածությունները կազմում էին 133հա, որից ստացվել էր 1654 տոննա ծխախոտի հումք, միջին բերքատվությունը կազմում էր 12.4 ցենտներ: Այսօր հայրենական ծխախոտ վերամշակող և արտադրող ձեռնարկությունների առկայության պայմաններում սա հնարավոր տարբերակ է և արտադրանքի իրացումն ապահովված կլինի:

554. Մի շարք գյուղական համայնքներում անհրաժեշտ է իրականացնել կրծողասպան /դեռատիզացիոն/ աշխատանքներ /գյուղապետարանների շենքերի, դպրոցների և մանկապարտեզների մասով/, որի համար կպահանջվի տարեկան շուրջ 6 մլն դրամ գումար:

### **Խորհրդատվական ծառայությունների ընդլայնումը**

555. Խորհրդատվական ծառայությունների բնագավառում Սյունիքի մարզի զարգացման ծրագրի հիմնական նպատակն է այդ ծառայությունների մատչելիության բարձրացումը, նրանց առավել նպատակային, հասցեացված օգտագործումը: Ծրագրի ռազմավարությունը այս ուղղությամբ ենթադրում է հետևյալ կարևոր միջոցառումների իրականացումը:

- 1) Մարզային ուսուցողական-խորհրդատվական ծառայության կողմից կազմակերպել ուսուցողական-խորհրդատվական դասընթացներ

- գյուղմթերքների արտադրության և վերամշակման առաջավոր տեխնոլոգիաների վերաբերյալ
- 2) Անցկացնել սեմինար դասընթացներ տնտեսավարման արդյունավետ ձևերի, մասնավորապես կոոպերացիայի տարբեր ձևերի, արմատավորման ուղղությամբ
  - 3) Ֆերմերներին տրամադրել խորհրդատվություն նոր ներդրվող թունաքիմիկատների, պարարտանյութերի օգտագործման կանոնների վերաբերյալ
  - 4) Մշակել տեղեկատվական թերթիկներ, բուկլետներ գյուղատնտեսությանը վերաբերվող մասնագիտական աշխատանքների մասին:

**Վերամշակող ձեռնարկությունների արդյունավետության բարձրացումը և ընդլայնումը**

556. Մարզի բոլոր տարածաշրջաններում անհրաժեշտ է ստեղծել կամ վերագործարկել կաթի մթերման և վերամշակման, միս և մսամթերք վերամշակող կառույցներ, կազմակերպել պտղի, բանջարեղենի չորացման փոքր արտադրամասեր, ծխախոտ ֆերմետացիոն և բուսայուղերի արտադրության փոքր արտադրամասեր, բրդի ընդունման և լվացման կետեր, հացաբուլկեղենի և հրուշակեղենի արտադրամասեր, բնական հյութերի և խտափայտների արտադրության, կաշվի, մորթեղենի վերամշակման, դեղաբույսերի արտադրության և փաթեթավորման արտադրամասեր և այլն:

557. Այս նպատակին կարելի է հասնել՝ ընդլայնելով արտադրանքի իրացման հնարավորությունները, ակտիվորեն համագործակցելով գոյություն ունեցող և պոտենցիալ գնորդների հետ: Առաջնահերթությունը պետք է տրվի փոքր ձեռնարկությունների ստեղծմանը: Մարզում ՓՄՁ-ների գործունեության ակտիվացումը կնպաստի համապատասխան ենթաճյուղերի վերականգնմանը: Անհրաժեշտ է նաև բանջարաբուստանային կուլտուրաների և պտղաբուծության զարգացման հետ համատեղ նախապայմաններ ստեղծել գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման, պահպանության և իրացման համար: Այս առումով կարևորվում է մարզում սառնարանային տնտեսության ստեղծումը:

558. Մարզում ներկայումս գործող գյուղատնտեսական հումք վերամշակող արտադրություններից են «Մեղրիի պահածոների գործարանը», «Կապանի պահածոների գործարանը» /գործում է փոքր կարողությամբ/:

559. Գյուղատնտեսական հումքի վերամշակող կարողությունների ձևավորումը և գոյություն ունեցող արտադրությունների ծավալների ընդլայնումը հնարավոր է դրամաշնորհների, նպատակային վարկերի միջոցով:

560. Գյուղատնտեսության զարգացման ծրագրի իրագործման համար պահանջվող ֆինանսական միջոցները ներկայացված են [Հավելված 7.1-ում](#):

561. Ծրագրի հաջող իրագործման դեպքում ակնկալվում են հետևյալ վերջնական արդյունքները.

- 1) մարզի հողային ռեսուրսների նպատակային օգտագործման ապահովում
- 2) բուսաբուծական մթերքների՝ հատկապես տարբեր պտղատեսակների, կարտոֆիլի, հացահատիկի արտադրության ծավալների ավելացում, արդյունավետության բարձրացում, մթերքների ապրանքայնության մակարդակի բարձրացում, հատկապես պտղի և դրանց վերամշակումից ստացված արտադրատեսակների արտահանման ծավալների էական ավելացում

- 3) անասնապահական մթերքների՝ հատկապես մսի, կաթի, արտադրության ծավալների ավելացում, արտադրության արդյունավետության բարձրացում, անասնապահական մթերքների ապրանքայնության բարձրացում
- 4) մասնագիտացված տնկարանային և սերմնաբուծական տնտեսությունների (տարբեր պտղատեսակների, կարտոֆիլի և հացահատիկային մշակաբույսերի) ձևավորում, որոնք հիմնականում կբավարարեն գյուղացիական տնտեսությունների պահանջարկը բարձրորակ տնկանյութի և սերմացուների նկատմամբ
- 5) բույսերի պաշտպանության (հատկապես պտղատու այգիներում) պայքարի կենտրոնացված միջոցառումների իրականացում
- 6) մարզում տոհմային տնտեսությունների ձևավորում, արհեստական սերմնավորման աշխատանքների ընդլայնման միջոցով կենդանիների տոհմային հատկանիշների պահպանում և կատարելագործում, տոհմաբուծական ծառայությունների ձևավորում
- 7) կերային բազայի ընդլայնում, բազմամյա արժեքավոր կերային մշակաբույսերի ծավալների ավելացում, խոտհարքների և արոտների արդյունավետ օգտագործում
- 8) մարզի գյուղատնտեսության մասնագիտացմանը համապատասխան փոքր վերամշակող արտադրական կարողությունների (պտղի, կաթի, մսի, բրդի) ձևավորում
- 9) գյուղատնտեսական տեխնիկայով մարզի ապահովվածության մակարդակի բարձրացում, տեխնիկայի համատեղ օգտագործման (կոոպերացման սկզբունքով) կառույցների ձևավորում
- 10) տեղեկատվական և խորհրդատվական համակարգի կատարելագործում և մատչելիության մակարդակի բարձրացում
- 11) խոշոր ապրանքային ֆերմերային տնտեսությունների և կոոպերատիվների ձևավորում
- 12) մարզում ապահովագրական հանակարգի ձևավորման համար նախադրյալների ստեղծում
- 13) զարգացած համայնքային ենթակառուցվածքների առկայություն, մասնավորապես ներհամայնքային և միջհամայնքային բարեկարգ ճանապարհների, հուսալի գործող կապի և հաղորդակցության ապահովում
- 14) հետևողական և արդյունավետ կերպով օգտագործել մարզի հողային և մարդկային ռեսուրսները՝ ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառման, ոռոգելի ցանքերի ընդարձակման, անմշակ հողերը ցանքաշրջանառության մեջ ներառելու միջոցով
- 15) ավելացնել բուսաբուծական մթերքների, հատկապես կարտոֆիլի ու հացահատիկի արտադրության ծավալները, բարձրացնել ապրանքայնության մակարդակը, էապես ընդլայնել հացահատիկաընդհանրային մշակաբույսերի ցանքատարածությունները
- 16) ավելացնել անասնապահական մթերքների, հատկապես մսի, կաթի արտադրության ծավալները, բարձրացնել անասնապահական մթերքների ապրանքայնությունը և արտադրության արդյունավետությունը
- 17) ընդլայնել կերային բազան, ավելացնել բազմամյա արժեքավոր կերային մշակաբույսերի ծավալները, արդյունավետ օգտագործել խոտհարքները և արոտները
- 18) բարելավել ոռոգման համակարգը, մասնավորապես՝ կառուցել նոր և վերանորոգել առկա ջրագծերը, պոմպակայանները, ջրանցքերը, բարելավել

- ռոշոզման ներտնտեսային համակարգը և վերացնել ջրօգտագործման ասպարեզում առկա թերություններն ու բացթողումները
- 19) անասնաբուժական ծառայությունների բարելավման միջոցով բարձրացնել գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը և ապրաքայնության մակարդակը
  - 20) արհեստական սերմնավորման աշխատանքների ընդլայնման միջոցով պահպանել և կատարելագործել կենդանիների տոհմային հատկանիշները
  - 21) աստշաճ ուշադրություն դարձնել գյուղատնտեսության արտադրական ենթակառուցվածքների բարելավմանը, աջակցելով տարածաշրջաններում մասնավոր սերմաբուժական կայուն տնտեսությունների ստեղծմանը
  - 22) յուրաքանչյուր տարածաշրջանում ստեղծել գյուղատնտեսական մթերքների ընդունման մեծածախ շուկա, դրանք կահավորելով պահպանման համար անհրաժեշտ սարքավորումներով
  - 23) գյուղական համայնքներում հիմնադրել գյուղատնտեսական մթերքների վերամշակման կառույցներ
  - 24) աջակցել մասնագիտացված սերմաբուժական տնտեսությունների /մասնավորապես հացահատիկի և կարտոֆիլի/ ձևավորմանը՝ մարզի գյուղացիական տնտեսությունների պահանջը բարձրորակ սերմացուների նկատմամբ բավարարելու նպատակով
  - 25) ապահովել գյուղատնտեսական վարկերի հասանելիությունն աղքատ գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսական ձեռնարկությունների համար
  - 26) նպատակային օգտագործել մարզում առկա գյուղատնտեսության գիտակ մասնագետների ուժերը, խորհրդատվությունը, բարելավել ճյուղերի նյութատեխնիկական սպասարկումը, մատչելիությունը
  - 27) բարձրացնել գյուղտեխնիկայով ապահովվածության մակարդակը և տեխնիկայի օգտագործման արդյունավետությունը՝ կոոպերացիայի և այլ կազմակերպական ձևերով համատեղ օգտագործման մեխանիզմների ներդրման միջոցով
  - 28) աջակցել մարզում հողերի խոշորացման և գյուղացիական տնտեսությունների միավորման գործընթացին
  - 29) մարզի բնակչությանը սիստեմատիկաբար իրազեկել գյուղատնտեսության ոլորտում իրականացվող միջոցառումների մասին
  - 30) ագրոտեխնիկական, զոոտեխնիկական, անասնաբուժական պահանջների կատարման ապահովում
  - 31) գյուղատնտեսության արտադրական ենթակառուցվածքների բարելավում
  - 32) գյուղատնտեսության ոլորտում ֆինանսական միջոցների և ներդրումների ավելացում
  - 33) վերամշակող ձեռնարկությունների արդյունավետության բարձրացում և ընդլայնում
  - 34) իրացման շուկայի մատչելիության և արտադրողի պաշտպանվածության ապահովում
  - 35) խորհրդատվական ծառայությունների ընդլայնում
  - 36) օրենսդրական դաշտի կատարելագործում:

## 8. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

### 8.1 Ոլորտի իրավիճակի վերլուծություն

#### Օրենսդրական դաշտ, ինստիտուցիոնալ համակարգ

562. Հայաստանի Հանրապետության բնապահպանության ոլորտում քաղաքականությունն ու օրենսդրությունը հիմնականում ձևավորվել և կատարելագործվել են վերջին 15 տարիների ընթացքում: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 10-րդ հոդվածի համաձայն պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը: Հայաստանն ակտիվորեն մասնակցում է միջազգային համագործակցության գործընթացներին, ստորագրել ու վավերացրել է բնապահպանական մի շարք միջազգային ու եվրոպական կոնվենցիաներ և դրանցից բխող արձանագրություններ:

563. Միջազգային այդ համաձայնագրերի ու կոնվենցիաների շրջանակներում Հայաստանը նպատակ ունի կանխարգելել կամ սահմանափակել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունը, վերացնել մթնոլորտի գերնորմատիվային աղտոտվածությունը, մեղմացնել կլիմայի գլոբալ փոփոխության բացասական հետևանքները, պահպանել կենսաբազմազանությունը, ապահովել վերականգնվող բնական ռեսուրսների վերարտադրության անհրաժեշտ ծավալները և բնական հավասարակշռվածությունն ապահովող պայմանները, ապահովել չվերականգնվող բնական ռեսուրսների բանական և արդյունավետ օգտագործումը:

564. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության և կառավարման խնդիրները մեծ չափով առկա են նաև Սյունիքի մարզում: Դրանք են՝ անտառային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, կենցաղային աղբի հեռացման և արդյունաբերական վտանգավոր թափոնների կառավարման խնդիրները, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, օգտագործումը, հողերի դեգրադացիայի կանխումը, անապատացմանը նպաստող անտրոպոգեն գործոնների նվազեցումը, մարգագետինների բարելավումը և արդյունավետ օգտագործումը:

565. Վերջին տարիների ընթացքում, օրենսդրական դաշտի բարելավման առումով, բավականին մեծ աշխատանք է կատարվել նշված խնդիրների լուծման համար. ընդունվել են ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք իրավական ակտեր և ծրագրեր: Դրանցից կարելի է նշել ՀՀ նոր անտառային օրենսգիրքը (2005թ.) և Հայաստանի անտառների ազգային ծրագիրը (2005թ.), «Զրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքը (2005թ.), «Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004թ.), «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (2006թ.), «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2005թ.), «Օգոնային շերտը քայքայող նյութերի մասին» ՀՀ օրենքը (2006թ.), «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքը (2006թ.) և «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» ՀՀ օրենքը (2007թ.) և այլն:

566. Բնապահպանության ոլորտում օրենսդրությունը մարզպետների համար նախատեսել է գործունեության որոշակի շրջանակ: «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.20 կետի համաձայն, բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում Սյունիքի մարզպետը՝

- 1) մասնակցում է բնության և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագրերի մշակմանը և իր լիազորությունների շրջանակներում ապահովում է

դրանց իրականացումը մարզի տարածքում

- 2) մարզի տարածքում վերահսկում է բնապահպանական օրենսդրության կատարումը և խախտման փաստերի վերաբերյալ տեղյակ է պահում համապատասխան մարմիններին
- 3) աջակցում է արգելոցների, արգելավայրերի, հատուկ պահպանվող գոտիների պահպանությանը և օգտագործմանը, որսագողության, ապօրինի ձկնորսության, ծառահատումների դեմ կազմակերպվող միջոցառումների իրականացմանը
- 4) համագործակցում է բնապահպանական խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիների հետ:

567. Բնագավառի խնդիրներով զբաղվելու իրավասություններ ունեն նաև տեղական ինքնակառավարման մարմինները: 1996 թվականին ընդունված և մինչև 2002 թվականը գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև բնապահպանության ոլորտը կարգավորող մինչև 2001 թվականն ընդունված ՀՀ օրենսդրական այլ ակտերը հիմնականում չէին պարունակում համայնքներին բնապահպանության ոլորտում համապատասխան լիազորություններով, պարտականություններով և պատասխանատվությամբ օժտող դրույթներ: Սակայն դրանից հետո իրավիճակը շտկվեց: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ նոր օրենքի 32-րդ հոդվածի համաձայն համայնքի ղեկավարը օրենքով կամ կառավարության սահմանած կարգով վարում է համայնքի բնապահպանական կադաստրը, 45-րդ հոդվածի համաձայն՝ բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում իրականացնում է համայնքի սեփականություն համարվող հողերի, անտառային և ջրային տարածքների, շրջակա միջավայրի պահպանության կազմակերպման՝ պարտադիր, ինչպես նաև պետության կողմից պատվիրակված հետևյալ լիազորությունները

- 1) վերահսկողություն է իրականացնում բնության պահպանության բնագավառում, կազմակերպում է ընդերքի, անտառային, ջրային և օդային տարածքների, ինչպես նաև բուսական ու կենդանական աշխարհի օգտագործման և պահպանման միջոցառումները
- 2) ապահովում է հողերի պահպանությունը հողատարումից, ողողումներից, ճահճացումից, քիմիական, ռադիոակտիվ նյութերով և արտադրական թափոններով աղտոտումից:

568. Բնապահպանության ոլորտը Սյունիքում ներկայացված է նաև որոշակի ինստիտուցիոնալ համակարգով: Մարզում բնապահպանությանը հիմնականում առնչվում են հետևյալ կառուցվածքային միավորները՝

- 1) ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունը
- 2) ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Սյունիքի տարածքային բաժինը
- 3) Մարզի անտառտնտեսությունները, որոնք գործում են ՀՀ գյուղատնտեսության նախարարության գերատեսչական ենթակայության տակ
- 4) ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության Հարավային ջրավազանային կառավարման տարածքային բաժինը
- 5) Բնապահպանական խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունները, մարզում գործող Օրիուս կենտրոնները:

569. Այսպիսով մարզում բնապահպանական իրավիճակը կառավարվում է որոշակի օրենսդրական և ինստիտուցիոնալ համակարգերի միջոցով:

**Անտառներ, կենսաբազմազանություն, բնատարածքներ**

570. Բնապահպանական առունով Սյունիքի մարզի ուժեղ կողմերից է լեռների ու անտառների առկայությունը: Հայաստանի Հանրապետության անհամաչափ տեղաբաշխված անտառածածկ տարածքները զբաղեցնում են Հանրապետության մակերեսի մոտ 11,2 տոկոսը և երկրում հարաբերականորեն անտառածածկ են համարվում Հյուսիսում՝ Տավուշի և Լոռու մարզերը, իսկ Հարավում՝ միայն Սյունիքի մարզը: Սյունիքի ընդհանուր անտառային ֆոնդը կազմում է 94825 հա, ներառյալ 68912 հա անտառները և 25913 հա թփուտները: Սյունիքի մարզի անտառածածկ տարածքները գտնվում են մարզի հարավային հատվածում և դրանց մի մասը ներկայացված է նաև արգելոցների և արգելավայրերի տեսքով: Մարզի դիրքը և ռելիեֆը նպաստել են կենսաբազմազանության մեծ տեսականու, էնդեմիզմի բարձր մակարդակի և հարուստ ագրոկենսաբազմազանության ձևավորմանը: Մարզը Հայաստանի այն տարածքներից է, որոնք ունենալով հարուստ և ինքնատիպ կենսաբազմազանություն, միաժամանակ ենթարկվում են այն վտանգող մարդածին և տեխնածին մի շարք գործոնների ազդեցությունը: Այդ ազդեցության հետևանքով տեղի են ունենում բնական միջավայրի, էկոհամակարգերի և դրանց համակեցությունների տեսակային կազմի փոփոխություն, ընդհուպ առանձին տեսակների ոչնչացում, կենսառեսուրսների գերօգտագործում, աղտոտում: Մարզում ԲՀՊՏ-ը (արգելոցներ, բնության հուշարձաններ) կազմում են Սյունիքի մարզի մակերեսի մոտ 10%-ը: Լանդշաֆտային և կենսաբանական հարուստ բազմազանություն և բնական էկոհամակարգերի վրա անտրոպոգեն ու տեխնոգեն ակտիվ ճնշում ունեցող մարզի համար պահպանվող տարածքների նշված քանակությունը խիստ անբավարար է: ԲՀՊՏ-ում անբավարար են ներկայացված մարզի համար սոցիալ-տնտեսական և բնապահպանական, այդ թվում նաև կենսաբազմազանության պահպանության առունով մեծ նշանակություն ունեցող լեռնային, մարգագետնաարոտավայրային և անտառային էկոհամակարգերը: 2009թ. հունվարի 1-ի դրությամբ Սյունիքում գործում են Շիկահողի արգելոցը, Բողաքարի, Գորիսի, «Աև լիճ» և «Սոսու պուրակ» արգելավայրերը ([Հավելված 8.1](#)): Սյունիքի մարզի բնության հուշարձանների ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967 որոշմամբ, որը խմբագրվել է ՀՀ կառավարության 2009թ. հունվարի 8-ի N53 որոշմամբ: Ըստ նոր խմբագրված տարբերակի մարզում կա ՀՀ բնության 56 հուշարձան, որից՝ 20-ը՝ երկրաբանական, 16-ը՝ ջրաերկրաբանական, 13-ը՝ ջրագրական, 4-ը՝ բնապատմական, 3-ը՝ կենսաբանական ([Հավելված 8.2](#)):

571. Անտառներով համեմատաբար հարուստ Սյունիքը գտնվում է որոշակի հակասական վիճակում՝ մի կողմից առկա են հարուստ և գեղատեսիլ անտառներ, իսկ մյուս կողմից՝ հանքային պաշարներով՝ մետաղներով, քարերով հարուստ ընդերքը հանքարդյունահանվում է, որը սոցիալ-տնտեսական դրական հետևանքների հետ մեկտեղ մարզում առաջացրել է բնապահպանական բազում խնդիրներ:

572. Գործող հանքարդյունաբերությանը զուգահեռ իրականացվում է նաև հանքային պաշարների հետազոտություն և գնահատում, որը կարող է մարզի տարածքում փոխել հանքարդյունաբերության աշխարհագրությունը: Հանքարդյունաբերության տեղաշարժը, կլուծի բազմաթիվ ռազմավարական հարցեր, բայց էկոլոգիայի տեսանկյունից լուրջ մտահոգությունների պատճառ է, քանի որ՝ որքան շատանան հանքավայրերը, այնքան կմեծանա շրջակա միջավայրի աղտոտվածությունը, կվտանգվի անտառների ճակատագիրը:

573. Մարզի անտառտնտեսությունների գործունեությունը լուրջ բարեփոխումների խնդիր ունի: Այդ ձեռնարկություններին պետական բյուջեից տրվող սահմանափակ աջակցությունը ստիպում է նրանց նորմալ տնտեսվարելու համար առավելագույն կերպով օգտագործել անտառը, միևնույն ժամանակ չավելացնելով

անտառավերականգնման ծախսերը: Անտառում այս իմաստով տնտեսվարելու և՛ հնարավորություն և՛ անհրաժեշտություն չկա, այլ անհրաժեշտ է անտառային օրենսգրքով սահմանված անտառների կայուն կառավարում: Սյունիքի անտառներն այդ «ինքնապահպանման-ինքնածախսածածկման» ներուժը, ռեսուրսներն ու հնարավորությունները չունեն և այս առումով միայն ազգային-պետական աջակցության և ներդրումների շնորհիվ է, որ անտառները կարող են երկար ժամանակաշրջանի ընթացքում պահպանվել, վերականգնվել և փոխանցվել սերունդներին:

574. Որպես եկամտի ստացման աղբյուր անտառը պետք է շահագործվի այնքան, որքան նա կարող է տալ՝ միաժամանակ պահպանելով իր ինքնավերականգնման հնարավորությունը և ոչ ավելին: Պարզ է, որ փայտանյութի պաշարները որոշակի սահմանից այն կողմ չեն կարող օգտագործվել և այստեղ չափից անցումը անտառի ինքնավերականգնման կարողությանը լուրջ վնաս կարող է հասցնել: Սյունիքի անտառներում բացի փայտանյութից կան նաև բավական քանակությամբ պտղատու ծառեր ու թփուտներ, որոնց պտուղները կարելի է արդյունաբերական ծավալներով օգտագործել պահածոների, հյութերի, դեղաբույսերի արտադրություն կազմակերպելու համար:

575. Սյունիքի անտառները նաև առողջարար և գեղատեսիլ են: Անտառների, որոշակի չափով նաև բուժիչ հանքային ջրերի, պատմամշակութային հուշարձանների, ռելիեֆի այս ձևավորված ամբողջությունը խոսում է մարզում առողջարաններ հիմնելու, ինչպես նաև զբոսաշրջությունը զարգացնելու մեծ ներուժի մասին:

576. Կարևոր է համայնքների, հասարակության լայն շերտերի մասնակցությունը անտառի պահպանության հարցերում: Այստեղ համայնքների, հասարակության և պետության փոխհամաձայնեցված, ներդաշնակ գործունեությունը կարող է ապահովվել միայն տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակության լայն խավերի, հասարակական կազմակերպությունների ակտիվ ներգրավման միջոցով: Օրենսդրական որոշակի բազա կա /ՀՀ Սահմանադրություն, ՀՀ միջազգային պայմանագրեր, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, ՀՀ Անտառային օրենսգրքը և այլն/, հասարակությանը նույնպես այս գործընթացներում ներգրավելու համար և այդ ներգրավվածությունը որոշակի չափով առկա է, սակայն այն բավարար համարել չի կարելի, քանզի ակնկալվում է ավելի մեծ մասնակցություն այս խնդիրներին: Ինչ-որ տեղ հասարակության անբավարար մասնակցությունն այստեղ հենց մարդկանց մի սովոր հատվածի կրավորական դիրքորոշման արդյունք է:

577. Հասարակության անդամները նաև կոնկրետ համայնքների բնակիչներ են: Մի շարք բնակավայրեր տեղադրված են անտառաշատ տարածքներում և կարծես թե այդ բնակավայրերի բնակչությունը ամենասերտ հոգեկան, ֆիզիկական, փոխներգործուն կապի մեջ է գտնվում տվյալ բնակավայրի անտառի հետ: Այսօր անտառային հարցերով հիմնականում որոշումներն ընդունվում են իշխանության բարձր մակարդակներում, բայց ստացվում է այնպես, որ անտառկառավարմանը վերաբերող մի շարք հարցեր ունեն ոչ միայն ազգային պետական այլ նաև տվյալ համայնքների համար համայնքային նշանակություն: Ցանկալի է, որ այս իրողությունը բոլոր դեպքերում հաշվի առնվի և պրակտիկայում ավելի շատ հնարավորություն ստեղծվի նաև համայնքներում քննարկել անտառկառավարման հարցերը և մասնակցել որոշումների ընդունման գործընթացին:

578. Սյունիքի մարզում համայնքների վարչական սահմաններում գտնվող անտառների կայուն կառավարումն իրականացվում է անտառտնտեսությունների կողմից: Սեկ անգամ չէ, որ քննարկվել են անտառների կայուն կառավարումը տեղական ինքնակառավարման մարմիններին հանձնելու խնդիրները: Խնդիրը կարևոր նշանակություն ունի և դեռ ենթակա է քննարկումների: Այստեղ մոտեցումը հետևյալն է՝ եթե համայնքային անտառկառավարումը կարող է նպաստել անտառի պահպանմանը,



ինքնավերականգնմանը և ապահովել օպտիմալություն, ապա անտառների մի մասը համապատասխան համայնքների կառավարմանը հանձնելը կարող է արդյունավետ լինել:

579. Սյունիքի անտառներին լուրջ վնաս հասցրեցին 1990-ական թթ. կատարված անտառափայտումները, որոնք պայմանավորված էին տնտեսական ու էներգետիկ ճգնաժամով՝ Էլեկտրոէներգիայի, գազի մատակարարման, կենտրոնացված ջերմամատակարարման բացակայությամբ: Էներգետիկ իրավիճակի բարելավման շնորհիվ անտառափայտումները զգալիորեն նվազել են, տեղի է ունենում մարզի բնակավայրերի գազիֆիկացում, որը զգալիորեն կրճատում է բնակչության վառելիքայտի պահանջարկը: Գործընթացը հնարավորություն կտա հատկապես անտառներին մոտ գտնվող գյուղերում զգալիորեն կրճատել անտառափայտումները և բարձրացնել անտառի ինքնավերականգնման ներուժը:

580. Անտառի պահպանմանը կնպաստեն նաև մարզում աղքատության հաղթահարման խնդիրները, բնապահպանական խնդիրներին բնակչության իրազեկումը, էկոդաստիարակությունը և այլն:

Վերոնշյալ բոլոր հարցերի վերաբերյալ մարզպետարանում պարբերաբար անց են կացվում քննարկումներ, որոնց արդյունքում ձևավորված կարծիքները, առաջարկությունները ներկայացվում են ՀՀ կառավարությանը, իրավասու պետական, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին:

### Ջրային ավազան

581. Մարզի տարածքով են հոսում Հանրապետության երեք խոշոր գետեր՝ Արաքսը (Մեղրիի տարածաշրջանի և Իրանի սահմանով), Որոտանը և Ողջին: Այստեղ են գտնվում նաև Գազանա, Կապույտ, Ալ, Սև փոքր լճերը և Սպանդարյանի, Բալաքի, Տոլորսի, Շամբի, Դավիթ-Բեկի և Գեղիի (շինարարությունն անավարտ է) ջրամբարները:

Աղյուսակ 8.1 Հարավային ջրավազանային կառավարման տարածքի գետավազանները

| Գետավազան | Նկարագիր  | Հոսք<br>(մլն.մ <sup>3</sup> /տարի) |
|-----------|---|------------------------------------|
| Որոտան    | Որոտան գետն իր վտակներով՝ Գորիս, Վարարակ, Դալի, Լորագետ, Սիսիան, Շաքի և մանր ու միջին այլ վտակներ | 725                                |
| Ողջի      | Ողջի գետն իր վտակներով՝ Աճանան, Գեղի և այլ բազմաթիվ փոքր գետեր                                    | 502                                |
| Մեղրի     | Մեղրի գետն իր փոքր գետերի ջրհավաքներով  | 166                                |

Աղյուսակ 8.2. Սյունիքի խոշոր լճերի և ջրամբարների բնութագրերը

| Անվանումը        | Ծավալը (մլն.մ <sup>3</sup> ) | Հայելու մակերեսը (հա) |
|------------------|------------------------------|-----------------------|
| Սև լիճ (27080)   | 9.0                          | 2                     |
| Սպանդարյան (ջր.) | 257                          | 1025                  |
| Տոլորս           | 96.8                         | 480                   |
| Քարահունջ        | 1.27                         | 18.3                  |
| Շամբ             | 13.6                         | 112                   |

|           |     |    |
|-----------|-----|----|
| Դավիթ-Բեկ | 2.5 | 14 |
| Գեղի      | 15  | 35 |

582. Արդյունաբերական կեղտաջրերով աղտոտված միակ գետը Ողջին է: Այն հիմնականում աղտոտվում է թափոնակուտակիչներում խոշոր մասնիկներից մաքրված Քաջարանի և Կապանի կոմբինատների տեխնոլոգիական կեղտաջրերով՝ մարզի հարավ-արևելյան սահմանի մոտակայքում:

583. Արդյունաբերական կեղտաջրերը հիմնականում աղտոտված են պղնձամոլիբդենային հանքաքարի հանքահարստացման (ֆլոտացիայի) ընթացքում օգտագործված ռեագենտների մնացորդներով (քսանտոգենատ, սոլյարայուդ, նատրիումի սուլֆիդ, տեխնիկական յուղեր, կիր և այլն):

584. Թափոններն առաջանում են լեռնահանքային արտադրության ընթացքում և իրենցից ներկայացնում են հանքահանման ժամանակ առանձնացված դատարկ ապարներ, կամ հանքահարստացման արդյունքում առանձնացված վտանգավոր թափոններ՝ պոչեր: Վերջիններիս ազդեցությունը շրջակա միջավայրի վրա նվազեցնելու նպատակով հատուկ թափուկատարով՝ (հիմնականում թունելախորշերով անցկացված) տեղափոխվում և կուտակվում են թափոնակուտակիչներում (Քաջարանի, Կապանի և Արծվանիկի): Այդ նպատակով լեռնահանքային ոլորտի արդյունաբերական ձեռնարկությունները ծախսում են զգալի ֆինանսական միջոցներ:

585. **Օդային ավազանն** աղտոտվում է հիմնականում արդյունաբերական ձեռնարկությունների, ավտոտրանսպորտի արտանետումներից: Սթնոլորտային օդի աղտոտվածության մոնիթորինգի արդյունքներով՝ Հանրապետության առավել աղտոտված բնակավայրերի ցանկում Սյունիքի քաղաքները բացակայում են /ԿԶԾ կետ768/: Ստացիոնար աղբյուրներից արտանետումների կրճատման համար հեռանկարային լուծումը բնապահպանական տեսակետից նախընտրելի տեխնոլոգիաների ներդրման համար պետության կողմից նպաստավոր միջավայրի քաղաքականության մշակումն է: Մարդկանց առողջության և կյանքի որակի ապահովման համար կարևորվում է նաև քաղաքներում կանաչ տարածքների, ռեկրեացիոն գոտիների պահպանման և համաչափ զարգացման խնդիրը, որը առավել կարևորվում է ամառվա ամիսներին ջերմային սթրեսներին հարմարվելու համար:

586. Մարզում բնապահպանության օրենսդրության խախտումների պատկերը տրված է Աղյուսակ 8.3-ում:

Աղյուսակ 8.3. ՀՀ Սյունիքի մարզում բնապահպանության օրենսդրության խախտումները 2008 թվականին

| Հ.Հ. | Ցուցանիշներ                                     | Չափի միավորը | Քանակը   |
|------|---|--------------|----------|
| 1    | Ստուգված օբյեկտների քանակը                      | Միավոր       | 37       |
| 2    | Հայտնաբերված խախտումների քանակը                 | Միավոր       | 51       |
| 3    | Վարչական տույժի համար սահմանված գումար          | Հազ.դրամ     | 1620     |
| 4    | Վարչական տույժի ենթարկվածների քանակը            | Մարդ         | 30       |
| 5    | Վնասի հատուցման գումարն ըստ արձանագրությունների | Հազ. դրամ    | 134430.2 |
| 6    | Վնասի հատուցման արձանագրությունների քանակը      | Միավոր       | 24       |
| 7    | Հայտնաբերված խախտումների քանակը մարզի           | Միավոր       | 33.4     |

|   |   |           |        |
|---|---|-----------|--------|
|   | 100000 բնակչի հաշվով  |           |        |
| 8 | Վարչական տույժի համար սահմանված գումարը վարչական տույժի ենթարկված մեկ անձի հաշվով | Հազ. դրամ | 54     |
| 9 | Վնասի հատուցման գումարն այդ նպատակով կազմված մեկ արձանագրության հաշվով            | Հազ. դրամ | 5601.3 |

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ աշխատակազմի Սյունիքի մարզային գործակալության տվյալներ:

587. Մարզում բնապահպանության ոլորտը բնութագրող մի շարք ցուցանիշների վերաբերյալ տվյալները ներկայացված են Աղյուսակ 8.4-ում

**Աղյուսակ 8.4. Բնապահպանության ոլորտում ՀՀ Սյունիքի մարզի իրավիճակը բնութագրող մի քանի ցուցանիշներ (Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ տվյալներ)**

| Հ.Հ. | Ցուցանիշը   | 2006թ.    | 2007     |
|------|---|-----------|----------|
| 1    | Մթնոլորտային արտանետումներ անշարժ աղբյուրներից /տոննա/  | 259.1     | 258.6    |
| 2    | Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը մեկ քառ. կմ-ի հաշվով,  | 57.5      | 57.4     |
| 3    | Մթնոլորտ արտանետված փոշու քանակը /տոննա/  | 124.8     | 124.8    |
| 4    | Բնապահպանական ընթացիկ ծախսերի իրականացումը /մլն դրամ/   | 161.5     | 273.2    |
| 5    | Բնապահպանական հիմնական արտադրական միջոցների փաստացի արժեքները /մլն դրամ/  | 9429.9    | 9903.1   |
| 6    | Բնապահպանական հիմնական արտադրական միջոցների արժեքները հիմնական արտադրական միջոցներ ունեցող մեկ կազմակերպության հաշվով /հազ. դրամ/ | 1885981   | 2475785  |
| 7    | Բնապահպանական հիմնական արտադրական միջոցների հիմնավերանորոգման համար իրականացվող ծախսերը /հազ. դրամ/                               | 26732.4   | 111276   |
| 8    | Բնապահպանական և բնօգտագործման վճարներ /հազ. դրամ/   | 2751781   | 15021.2* |
| 8.1  | Բնապահպանական վճարներ /հազ. դրամ/   | 17976.1   | 1892.7*  |
| 8.2  | Բնօգտագործման վճարներ /հազ. դրամ/   | 2733805.1 | 13128.5* |

(\*-Աստղանիշով նշված տվյալները վերցված են ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Սյունիքի տարածքային բաժնից)

**8.2 Բնապահպանության ոլորտի խնդիրները և ռազմավարությունը**

588. Սյունիքի մարզում բնապահպանության ոլորտում անհրաժեշտ է իրականացնել հետևյալը.

- 1) Մարզի արդյունաբերա-բնապահպանական համալիր ծրագրի ընդունում և իրականացում, որը կնպաստի մարզի սոցիալ-տնտեսական հզորացմանը: Մարզում գերակայություն է հատկապես հանքարդյունաբերական և բնապահպանական ռազմավարությունների համադրումը, որը հնարավորություն կտա ապահովել հանքարդյունաբերության վերազինումը ժամանակակից անթափոն, էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաներով, նվազեցնել շրջակա միջավայրի և մասնավորապես՝ անտառների աղտոտումը: Արդյունաբերական և բնապահպանական

- ռազմավարության մեջ հնարավոր տարբերակ է ընդհանրապես անտառային կամ դրանց մոտ տարածքներում երկար ժամանակով հանքարդյունահանման արգելումը՝ մինչև եկող սերունդների կողմից նոր, արդիական տեխնոլոգիաների կիրառումը
- 2) Տնտեսական աճին զուգընթաց լավագույն, բնապահպանական տեսակետից անվտանգ և ռեսուրսախնայող տեխնոլոգիաների ներդրման խթանում՝ ապահովելով վնասակար արտանետումներ ունեցող հին տեխնոլոգիաների դուրսն ուղումը
  - 3) Մարզում ձեռնարկությունների բնապահպանական վարկանշման մեխանիզմների, այդ թվում՝ միջազգային ISO ստանդարտների մշակույթի կիրառում
  - 4) Տնտեսագիտորեն հիմնավորված՝ բնօգտագործման վճարների համակարգի կիրառում, որը կապահովի նոր հանքավայրերի խնայողաբար շահագործումը
  - 5) Պոչամբարների և տարբեր պատճառներով լքված և չշահագործվող հանքավայրերի էկոլոգիական իրավիճակի բարելավմանը նպատակաուղղված ռեկուլտիվացիայի ծրագրերի իրականացում, որն անհրաժեշտ է ջրային ռեսուրսների և հողերի հետագա աղտոտումը կանխարգելելու և բնական էկոհամակարգերը վերականգնելու համար: Բնապահպանական վճարների դրույքաչափերի ավելացում՝ շրջակա միջավայրն աղտոտող ձեռնարկությունների մոտ աղտոտման ծավալների նվազման գծով վարքագծի փոփոխման խթանների ստեղծման համար
  - 6) Բնապահպանական հիմնախնդիրների լուծման մեջ համայնքների մասնակցության ուժեղացում, դրանց լուծման ուղիների վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինների իրազեկության բարձրացում: Անհրաժեշտ է կազմակերպել միջոցառումներ, որոնք կնպաստեն համայնքների մասնակցության ակտիվացմանը ԲՀՊՏ կառավարման գործընթացներում, քանի որ այդ տարածքների համար սահմանված ռեժիմը համենատաքար մեծ հնարավորություններ է ստեղծում տնտեսական մեխանիզմների կիրառման համար: Մասնավորապես կարևորելով զբոսաշրջության ոլորտի զարգացումը ընդհանուր տնտեսական զարգացման մեջ, անհրաժեշտ է աջակցել համայնքների նախաձեռնություններին՝ էկոտուրիզմի զարգացման և համապատասխան ենթակառուցվածքների ստեղծման նպատակով
  - 7) Էկոլոգիական կրթության մեջ մարզի կրթական հիմնարկների, հանրակրթական դպրոցների, մարզի բնապահպանական ինստիտուցիոնալ համակարգի ներառում
  - 8) Այլընտրանքային էներգիայի աղբյուրների կիրառում
  - 9) Մարզի գազամատակարարման ցանցի ընդլայնում: Շատ բնակավայրերում տնային տնտեսությունների կողմից որպես ջեռուցման հիմնական միջոց է դիտվում վառելիքայտը, որը, որպես կանոն, հատվում է այդ բնակավայրերի հարևանությամբ գտնվող անտառներից և դրանով իսկ զգալի վնաս է հասցվում այդ տարածաշրջանների շրջակա միջավայրին: Անտառամերձ գյուղերի գազիֆիկացումը այս առումով պետք է առաջնահերթ համարվի
  - 10) Հողերի որակի և բերրիության չափորոշիչների մշակում. որակյալ մոնիթորինգի, հողօգտագործման նորմավորման, հաշվառման և վերահսկողության համակարգի ձևավորում: Վնասված գյուղատնտեսական և բնական հողատարածքների վերականգնման համար անհրաժեշտ է մշակել խթանման տնտեսական մեխանիզմներ: Վարելահողերի մի մասն ինչպես ամբողջ Հանրապետությունում, այնպես էլ Սյունիքի մարզում չի օգտագործվում՝ ինչպես ներդրումների, այնպես էլ մեխանիզացիայի, պարարտանյութերի և այլ պարագաների բացակայության պատճառով
  - 11) Արոտավայրերի և խոտհարքերի ռացիոնալ կառավարում: Ներկայումս մանր գյուղացիական տնտեսությունները, աղքատության և կազմակերպված կոոպերացիայի բացակայության պատճառով, հիմնականում չեն կարողանում իրենց փոքր հոտերը քշել հեռավոր անառային արոտավայրեր և ստիպված են օգտագործել միայն գյուղամերձ կերահանդակները: Արդյունքում վերջիններս

- գտնվում են չափազանց մեծ ծանրաբեռնվածության տակ, իսկ հեռավոր կերտահանդակների վիճակը, որպես արոտավայր չօգտագործելու արդյունքում, նկատելիորեն բարելավվում է
- 12) Բնապահպանական որոշումների կայացման գործում հասարակության մասնակցության ընդլայնում
  - 13) Համայնքային անտառկառավարման կիրառում մարզի անտառամերձ համայնքներում: Հանրապետությունում նախապատրաստվում են փորձնական ծրագրեր, որոնց հետագա զնահատումը հիմք կհանդիսանա համայնքային անտառկառավարման եղանակների և ծավալների սահմանման համար: Այս գործընթացը պետք է ընթանա տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և հասարակական կազմակերպությունների համագործակցության նորարարական մեխանիզմների կիրառման ճանապարհով:
  - 14) Մարզի տարածաշրջաններում որսահանդակների ստեղծում, որը հնարավորություն կտա որսը կազմակերպել միայն սահմանված վայրերում և կնպաստի կենսաբազմազանության պահպանմանը
  - 15) Բնության հատուկ պահպանվող նոր տարածքների ստեղծում: Արդեն ընթացքի մեջ է «Զանգեզուր» պետական արգելավայրի, «Բողաքար» արգելավայրի բազայի հիման վրա «Արևիկ» ազգային պարկի և «Գորիս» արգելավայրի բազայի հիման վրա՝ «Որոտան» արգելավայրի ստեղծման գործընթացը
  - 16) Կապան, Գորիս, Սիսիան, Մեղրի, Ագարակ քաղաքների՝ կեղտաջրերի մաքրման կայանների վերակառուցում: Զեռնարկությունների կողմից նախնական մաքրման համակարգերի ստեղծումը էականորեն կնվազեցնի ջրային ավազանների վրա աղտոտման ճնշումը
  - 17) Կենցաղային կոշտ թափոնների կենտրոնացված աղբավայրերի կառավարման պլանների մշակում և վերանշակման համար բիզնես ծրագրերի մշակում: Մարզի քաղաքներում արտադրական և կենցաղային թափոնների կառավարման՝ հավաքման, տեսակավորման և կազմակերպված վնասագերծման խնդիրը կարևորվում է ինչպես անմիջական վնասի կանխարգելման, այնպես էլ հողերի ռեսուրսների և ջրային ավազանների աղտոտման հետևանքների վերացման համար հետագայում պահանջվող խոշոր ներդրումների անհրաժեշտությամբ: Գործնականում արդյունաբերական թափոնները և շինարարական աղբը կոշտ կենցաղային թափոնների հետ հեռացվում են քաղաքային և գյուղական աղբյուսներ: Համապատասխան նորմատիվամեթոդական փաստաթղթերի բացակայության պայմաններում աճում է կոշտ աղբի կուտակիչների և աղբավայրերի առկա վիճակի բացասական ազդեցության հավանականությունը բնակչության առողջության և շրջակա բնական միջավայրի, հատկապես՝ հողի վրա: Ներկայումս Սյունիքում թափոնների հեռացման նպատակով կիրառվող եղանակները համարժեք չեն: Պետական և մասնավոր մի շարք ձեռնարկությունների միջոցով քաղաքապետարանների կողմից մատուցվող աղբահեռացման ապակենտրոնացված ծառայությունների որակի և կարողությունների միջև էական տարբերություններ կան: Աղբահավաքման եղանակները և կիրառվող ենթակառուցվածքը ստանդարտից ցածր են, որի արդյունքում տեղի են ունենում աղբի մեծ կուտակումներ, աղբը հաճախ չի հեռացվում, առաջանում են սանիտարա-հիգիենիկ անբարենպաստ պայմաններ: Թափոնների հեռացման համակարգի կատարողականության բարելավման համար անհրաժեշտ է մշակել նշված համակարգի արդիականացման ռազմավարական ծրագիր, որը ենթադրում է աշխատանքների իրականացում մի քանի ուղղություններով՝ խոշոր բնակավայրերի հատակագծերով նախատեսված աղբավայրերի կառավարման պլանների մշակում, առաջնահերթ նվազագույն ներդրումներ պահանջող բարելավման և

ցանկապատման աշխատանքների իրականացում, միջհամայնքային աղբավայրերի նախագծում և դրանց շահագործման համար տեխնիկական միջոցների տրամադրում, աղբամշակման գործարանի կառուցում: Միաժամանակ անհրաժեշտ է ուժեղացնել վերահսկողությունը համայնքների տարածքների սանիտարական վիճակի նկատմամբ

18) Օդային և ջրային ավազանի աղտոտվածության քիմիական վերլուծության շրջիկ լաբորատորիայի ձեռքբերում, որը հնարավորություն կտա կատարել մի շարք բնապահպանական վերլուծություններ:

589. Բնապահպանության ոլորտի ֆինանսավորումը ներկայացված է [Հավելված 8.3-ում](#):

## 9. ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

### 9.1 Զբոսաշրջության ոլորտի իրավիճակի վերլուծությունը

590. Զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժերից մեկն է, որի զարգացումը նպաստում է կայուն տնտեսական առաջընթացին, շրջակա միջավայրի պահպանությանը, համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը, աղքատության հաղթահարմանը, պատմամշակութային ժառանգության և ավանդույթների պահպանությանն ու զարգացմանը, մշակութային արժեքների փոխադարձ արժևորմանը:

591. ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության վիճակագրական տվյալների համաձայն, վերջին տարիներին մինչև 2008 թվականը համաշխարհային զբոսաշրջային այցելությունների միջին տարեկան աճը կազմել է 4-4.5%, 2007 թվականին այն անցել է 6%-ի սահմանագիծը, 2008 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում համաշխարհային զբոսաշրջային այցելությունների աճի տեմպը 2007 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 3.7%, իսկ տարեկան աճի տեմպի կանխատեսումը 2-3% է: Համաշխարհային տնտեսական զարգացումների ներկա սցենարի պահպանման դեպքում 2009 թվականի ընթացքում կանխատեսվում է համաշխարհային զբոսաշրջային այցելությունների մինչև 2% աճ:

592. Զբոսաշրջությունը Հայաստանի տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից մեկն է և հայտարարված է տնտեսության գերակա ճյուղ: Շնորհիվ Հայաստանի Հանրապետությունում վարվող պետական քաղաքականության, զբոսաշրջության բնագավառում վերջին տարիներին արձանագրվել է քանակական և որակական աճ: Զգալիորեն զարգացել են ենթակառուցվածքները՝ ճանապարհները, նոր միջազգային չափանիշներին համապատասխանող օդանավակայանը, հյուրանոցային տնտեսությունը, սննդի ու զվարճանքի օբյեկտները, բարձրացել է մատուցվող ծառայությունների որակը: Զբոսաշրջությունը երկրում արձանագրել է այցելուների թվի կայուն և դինամիկ աճ: 2001 թվականից ի վեր Հայաստան կատարված միջազգային զբոսաշրջային այցելությունների միջին տարեկան աճը կազմում է 25%, 2007 թվականին միջազգային զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է ավելի քան 510 000՝ 2006 թվականի համեմատ աճելով 33.5 %-ով: 2008 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին Հայաստան ներգնա զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 402000՝ 2007 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 10.1 %-ով: Ինչպես համաշխարհային զբոսաշրջային այցելությունները, 2008 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին Հայաստանում նույնպես զբոսաշրջային այցելությունների աճի տեմպի նվազում է արձանագրվել: Այնուամենայնիվ զբոսաշրջային այցելությունները Հայաստան շարունակում են աճել, իսկ 2009 թվականին Հայաստան ներգնա զբոսաշրջային այցելությունների քանակի թիրախը 700000-ի սահմանագիծը հատելն է: Վերջին տարիներին զբոսաշրջության ոլորտի մարքեթինգային քաղաքականության շրջանակներում ծրագրային միջոցառումները հիմնականում ուղղված են եղել համաշխարհային շուկայում Հայաստանի, որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի, նկարագրի ձևավորման շարունակական կատերալագործմանը: 2007թ. մարտ ամսին Համաշխարհային տնտեսական Ֆորումի կողմից առաջին անգամ հրապարակված «Շրջագայությունների և զբոսաշրջության մրցունակություն» համաթվով Հայաստանը դասակարգված 124 երկրների շարքում զբաղեցնում էր 74-րդ տեղը: Համաձայն կատարված զբոսաշրջային այցելությունների վիճակագրական հետազոտության արդյունքների Հայաստանում միջազգային զբոսաշրջիկների կատարած ծախսերը նույնպես դինամիկ աճում են: 2006 թվականին այն կազմել է շուրջ 299 մլն, իսկ 2007 թվականին՝ 400 մլն ԱՄՆ դոլլար: Մոտ

20 հազ. մարդ ուղղակիորեն աշխատում է զբոսաշրջության ոլորտում (ընդհանուր աշխատուժի 1.7%-ը): 2007թ. հունվար-դեկտեմբերին Հայաստան են այցելել 510287 միջազգային զբոսաշրջիկներ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 282240 զբոսաշրջիկների դիմաց:

593. Այս ամենին զուգահեռ Սյունիքի մարզում ոլորտի դինամիկան դեռևս համահունչ չէ Հայաստանի զարգացումներին և երկրում ոլորտի զարգացմանը զուգընթաց կարևորվում է Սյունիքում առկա զբոսաշրջային ներուժի հիման վրա զբոսաշրջության զարգացման ապահովումը, որը մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման հարցում զգալի դեր կխաղա:

### Սյունիքի զբոսաշրջային ներուժի նկարագրությունը

594. Սյունիքի մարզում առկա է զգալի զբոսաշրջային ներուժ, որը Նախկին ԽՍՀՄ օրոք որոշակիորեն օգտագործվում էր: Սյունիքի մարզի տարածքում զբոսաշրջությունն իր զարգացման բարձր մակարդակին էր հասել 1970-1980-ական թվականներին: Այս տարածքով էին անցնում երկու զբոսաշրջային երթուղիներ՝ թիվ 121 երթուղին «Հայաստանով և Ադրբեջանով» և թիվ 122 երթուղին՝ «Հարավային Անդրկովկասով»: Այս երթուղիները գործում էին ԽՍՀՄ առկայության պայմաններում: Զբոսաշրջիկների համար իրականացվում էր նաև տեղական 15-օրյա հանգստի կազմակերպում: Բնագավառում գործում էին Կապանի «Սյունիք» տուրիստական-էքսկուրսիոն միավորումը, Գորիսի տուրիստական բազան և Սիսիանի տուրիստական բյուրոն: Ներկայումս վերոնշյալ երթուղիները չեն գործում, իսկ կազմակերպությունները սեփականաշնորհվել և իրենց նշանակությանը չեն ծառայում: Զբոսաշրջության անկումը սկսվեց 1988 թվականից և 1991-1992թթ. բնագավառը մարզում դադարեց գոյություն ունենալ: Առ այսօր մարզի տարածքում զբոսաշրջության բնագավառում լուրջ ներդրումներ ու աշխատանքներ չեն իրականացվել, իսկ դրան զուգահեռ, այսօրվա շուկայական հարաբերությունները լայն հնարավորություններ են տրամադրում զբոսաշրջության զարգացման շնորհիվ հարստացնելու պետական և տեղական բյուջեները ու նկատելի բարելավելու մարզի սոցիալ-տնտեսական վիճակը:

595. Մարզի զբոսաշրջային ներուժը ներկայացված է Սյունիքի հարուստ, գեղատեսիլ և առողջարար բնությամբ, անտառներով, լեռներով, պատմամշակութային արժեքներով, բնության հուշարձաններով, բուժիչ ջրաղբյուրներով և ենթակառուցվածքներով: Սյունիքը հարուստ է գեղատեսիլ լեռներով: Մարզում են գտնվում ՀՀ երկրորդ լեռնագագաթը՝ Կապուտջուղը /3904մ/, Խուստուլի լեռը /3214մ/, Բարգուշատի լեռնաշղթայի գեղատեսիլ բարձունքները՝ Աճանան /Տափասար/ լեռը /2393մ/, Կատարը /3012մ/ և այլն:

596. Սյունիքն առատ է նաև ստորերկրյա քաղցրահամ, հանքային թերմալ ջրերով, որոնցից են Սիսիան-Ուռուտյան, Լիճք-Տաշտունյան, Քարաշեն-Խոզնավարյան հանքային աղբյուրները, «Քաջարան» թերմալ ջուրը, որը «Ջերմուկի» նմանօրինակն է:

597. Մարզի քաղաքներում գործում են հյուրանոցներ, մասնավոր հյուրանոցատիպ հանգրվաններ, հանրային սննդի օբյեկտներ: Զբոսաշրջության նպատակներին կարող է ծառայել նաև Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հարմարավետ հանգստյան տունը:

598. Մարզը հարուստ է պատմամշակութային և բնության հուշարձաններով, տեսարժան վայրերով: Հայաստանում հայտնի են Սյունիքի մարզի զբոսաշրջային գրավչության բնական օբյեկտները ([Հավելված 8.2](#)): Մարզի զբոսաշրջության զարգացման համար նշանակալի և գլխավոր դեր կարող են խաղալ Տաթևի վանական համալիրը, Քարահունջի աստղադիտարանը: Տաթևի վանքը միջնադարյան ճարտարապետության ակնառու հուշարձան է, որն ընդգրկում է Գրիգոր Լուսավորչի,



Պողոս-Պետրոս եկեղեցիները (խաչագմբեթային սրահի տեսքով, ընթերասեղաններով 4 անկյուններում և որմնանկարներով, 10-րդ դ.), Սուրբ Աստվածածին եկեղեցին (գմբեթային սրահի տեսքով, 11-րդ դ.), ամենաուշագրավ հուշարձանը՝ ճոճվող սյունը (904թ.):

599. Մարզում զբոսաշրջության զարգացման գործընթացում մեծ ներուժով կարող է հանդես գալ մասնավոր հատվածը, որի ընդգրկումն այս բնագավառում անհրաժեշտ և նպատակահարմար է: Գրեթե բոլոր հյուրանոցները և հանրային սննդի օբյեկտները մասնավոր սեփականություն են: Այստեղ առկա սպասարկման ցածր որակը և մատուցվող ծառայությունների պակաս լինելը բացատրվում է սպառողների (պատվերների) սակավությամբ կամ բացակայությամբ: Վերջիններիս առկայության դեպքում մասնավոր հատվածը հանդես կգա իր բոլոր առավելություններով:

600. Զբոսաշրջության զարգացման գործընթացում կարևորվում է հուշանվերների շուկայի առկայությունը և զարգացումը: Մարզում կան շնորհալի վարպետներ, որոնք այսօրվա դրությամբ կատարում են սակավաթիվ պատվերներ կամ էլ իրացնում են իրենց արտադրանքը մայրաքաղաքում և Հանրապետության սահմաններից դուրս: Պահանջարկի առկայության դեպքում հուշանվերների շուկան մարզում շատ արագ կարող է վերականգնվել այս վարպետների և առևտրական կազմակերպությունների միջոցով:

601. Մեծ հետաքրքրություն կարող է առաջացնել մարզի բուսական աշխարհը բժշկության և յուրահատուկ սննդատեսակների առումով:

602. Զբոսաշրջության զարգացման կարևոր բաղադրիչներից է նաև սյունեցու կերպարը. խառնվածքը, հյուրասիրությունը: Սիսիանի պանիրը, Քարահունջի թփի օղին, Կապանի «ժինգյալով հացը», Մեղրու նուռն ու թուզը կարող են դառնալ զբոսաշրջային գրավչության տարրեր:

603. Չնայած ենթակառուցվածքների զարգացած չլինելուն այնուամենայնիվ որոշակի չափով զբոսաշրջիկներ /այդ թվում՝ մարզի տարածքով դեպի Արցախ և Իրան գնացող/ են այցելում Տաթևի վանք, Ջորաց Քարեր և մարզի համայնքները կամ դրանց բնակիչները, որոնք կարող են լինել զբոսաշրջիկների պոտենցիալ ծառայություն մատուցողներ, ներկայումս ոչ մի օգուտ չեն քաղում այդ այցելություններից: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տուրիստների 75%-ը բավականին հետքերոված է գյուղական կյանքով, բիոսննդով, հայկական լավաշի պատրաստման արարողությամբ, տնական պանրով, կարագով, գինով, չորացրած մրգերով և այլն, գյուղերում առկա են կարողություններ՝ ցուցադրելու համար զուտ հայկական մշակութային ծեսեր: Այդ ամենը որպես զբոսաշրջիկներին մատուցվող ծառայություններ ներկայացնելու գիտելիքների լուրջ պակաս կա: Բացի դրանից, զարգացած չեն նաև անհրաժեշտ ենթակառուցվածքները (հյուրատներ, հուշանվերների վաճառակետեր, արագ սննդի կետեր, հանգստի վայրեր և այլն): Ակնհայտ է, որ մարզում հյուրատների զարգացումն ունի մեծ ներուժ զբոսաշրջության ոլորտի հզորացման գործում, քանզի այն հնարավորություն է ընձեռում սահմանափակ ռեսուրսներով զգալիորեն խթանել մարզում գիշերելու տեղերի քանակությունը: Հայտնի է, որ ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան զբոսաշրջիկները նախընտրում են հյուրատները, որոնք ավելի հարմար են և էժան:

604. Ներկայումս, համայնքային բյուջեների սղության և ներդրումային ծրագրերի բացակայության պայմաններում, զբոսաշրջության տարածաշրջանային զարգացման հնարավորությունները շատ ցածր են:

605. Պետական մակարդակով մարզի զբոսաշրջության վերակենդանացման խնդրի լուծումից հետո միայն կարելի կլինի խոսել զբոսաշրջության տարածաշրջանային զարգացման հնարավորությունների մասին, որոնք առաջին հերթին կապված են մարզի զբոսաշրջային ներուժի համակարգված ու տեղական ինքնակառավարման

մարմինների արտասահմանյան երկրների հետ ունեցած և հնարավոր կապերի օգտագործման, ինչպես նաև մասնավոր հատվածի ակտիվացման հետ:

606. Այսօր պետական և համայնքային բյուջեների սղության պայմաններում անհրաժեշտ է օգտվել դրանց զգալի համալրման հնարավորությունից, ի հաշիվ Սյունիքի մարզի հարուստ բնական, զբոսաշրջային ռեսուրսների արդյունավետ օգտագործման:

Մարզում զբոսաշրջության զարգացման հիմնական խոչընդոտներն են.

- 1) Մարզի հեռավորությունը Երևանից /միջազգային օդանավակայանից /մարզի տարածքով անցնող միջպետական նշանակության մայրուղին միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու, Երևան-Սեդրի երկաթուղագծի առկայության և զբոսաշրջության զարգացման համար ենթակառուցվածքներ ստեղծվելու դեպքում, այդ հեռավորությունը կարող է վերածվել զբոսաշրջության զարգացման համար կարևոր գործոնի, քանի որ զբոսաշրջային տեսանկյունից պատմամշակութային և բնության հուշարձանների առումով այն հետաքրքրություն է ներկայացնում և կարող է դառնալ Հայաստանի կարևոր զբոսաշրջային երթուղիներից մեկը/
- 2) Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ցածր մակարդակը
- 3) զբոսաշրջային տնտեսության բացակայությունը
- 4) գործող զբոսաշրջային կազմակերպությունների բացակայությունը
- 5) զբոսաշրջության կտրվածքով մարզի վերաբերյալ գովազդային նյութերի սակավությունը
- 6) մասնավոր հատվածի շահագրգռման մեխանիզմների բացակայությունը
- 7) հստակ վիճակագրական տվյալների բազայի բացակայությունը, ֆինանսական միջոցների սղության պատճառով պատմամշակութային հուշարձանների և այլ գրավչությունների ոչ պատշաճ պահպանությունը
- 8) միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների, զբոսաշրջային ենթակառուցվածքային օբյեկտների ֆիզիկական և որակական վիճակների անբավարար լինելը
- 9) Սյունիքում օդային և երկաթուղային տրանսպորտի բացակայությունը
- 10) զբոսաշրջության բնագավառում ներդրումային ծրագրերի սակավությունը:

## 9.2 Զբոսաշրջության ոլորտի զարգացման ռազմավարությունը

607. Կանխատեսումների համաձայն մարզն ամեն տարի կարող է ընդունել և սպասարկել մոտ 6000 և ավելի զբոսաշրջիկ: Եթե մեկ զբոսաշրջիկի սպասարկման համար միջին եկամուտը ընդունենք 200-250 ԱՄՆ դոլար (5-6 օրյա ուղևորություն), ապա զբոսաշրջիկային կազմակերպությունները կարող են ստանալ ընդհանուր առմամբ 1.0-1.3 մլն. ԱՄՆ դոլարի եկամուտ: Շահութաբերության նվազագույն նորմայի դեպքում (40-50%) զուտ եկամուտը կկազմի 0.5-0.65 մլն. դոլար:

608. Մարզի ներկա սոցիալ-տնտեսական վիճակում վերոնշյալ թվերը զգալի են: Մանավանդ, որ Տաթևի վանական համալիրի վերանորոգումից հետո 2011 թվականից սկսած դրանք կբազմապատկվեն:

609. Զբոսաշրջության զարգացման շնորհիվ կլուծվեն մի շարք սոցիալական հիմնախնդիրներ (աշխատատեղերի ստեղծում, շուկայի ընդլայնում և այլն):

610. Սյունիքի մարզում զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ ռազմավարությամբ.

- 1) Սյունիքի մարզում զբոսաշրջության զարգացման համալիր ծրագրի մշակում, որն իր մեջ կընդգրկի առկա ներուժի ամբողջական ուսումնասիրությունը, իրավիճակի գնահատականը և զարգացման ուղղությունների նախանշումը: Արդյունավետ գործելու դեպքում մարզի տնտեսության մեջ զբոսաշրջության մասնաբաժինը կարելի է հասցնել ցանկալի արդյունքի և այն կարող է առաջնային տեղ զբաղեցնել լեռնահանքային արդյունաբերության. էներգետիկայի և գյուղատնտեսության կողքին
- 2) Զբոսաշրջության զարգացման համար առաջնահերթ է ենթակառուցվածքների ներդաշնակ զարգացումը՝ հյուրանոցային համալիրների, հանգստյան տների վերանորոգում, վերակառուցում, կառուցում, մարզում առկա մշակութային ժառանգության՝ պատմամշակութային հուշարձանների գույքագրում, Տաթևի համալիրի վերանորոգման, Վահանավանքի և մարզի մյուս համալիրների վերանորոգման ավարտում, առանձին համալիրների վերանորոգում, վերակառուցում կամ մասնակի նորոգում, դեպի պատմամշակութային հուշարձաններ տանող ավտոճանապարհների վերանորոգում
- 3) Մարզի տարածքում էկոտուրիզմի զարգացման խթանում ([Ֆինանսավորումը ներկայացված է \(Հավելված 9.1-ում\)](#))
- 4) Մարզի՝ նախկինում գործող օդանավակայանների վերագործարկում, փոքր ավիացիայի օգտագործում
- 5) Երկաթուղային տրանսպորտով կապի ապահովում Երևանի և արտաքին աշխարհի հետ: /Շուտով կսկսվի Իրան-Հայաստան երկաթուղագծի շինարարությունը/
- 6) Ակտիվ և արդյունավետ մարքեթինգային քաղաքականության իրականացման միջոցով ՀՀ Սյունիքի մարզի որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրամասի նկարագրի ձևավորումը և միջազգային շուկայում ներկայացումն ու ամրապնդումը, մարզի ինտերնետային կայքում զբոսաշրջության վերաբերյալ վեբ էջի ստեղծում և էջի արհեստավարժ կառավարում
- 7) Սփյուռքի հետ կապերի համատեքստում, արտասահմանում գտնվող հայության շրջաններում բարձրացնել Սյունիքի զբոսաշրջային գրավչությունը, ապահովել բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծումը մեր հայրենակիցների համար
- 8) Զբոսաշրջության զարգացման առաջնային ձևերի կիրառում:

611. Զբոսաշրջության բոլոր տեսակների ուսումնասիրությունը, ինչպես նաև Սյունիքի տարածաշրջանում զբոսաշրջության ներուժի և նախադրյալների առկայությունը հուշում են այս տարածաշրջանում գիտաճանաչողական, տարանցիկ, հետիոտն, գիտական, սպորտային, հանգստի կազմակերպման և բուժաճանաչողական տեսակների զբոսաշրջության զարգացման անհրաժեշտությունը: Ընդ որում, եթե բուժաճանաչողական և հանգստի կազմակերպման զբոսաշրջության տեսակների զարգացման համար տեղավորման հարմարավետությունը, սպասարկման մակարդակը կարևոր գործոններ են, ապա տարանցիկ, հետիոտն, սպորտային (ալպինիզմ) տեսակները պակաս պահանջկոտ են վերը նշված գործոնների նկատմամբ և բացի այդ, տարանցիկ զբոսաշրջությունը յուրահատուկ կայունացնող դեր կարող է խաղալ: Այսպես, մեծ քանակությամբ արտասահմանյան զբոսաշրջիկների անց ու դարձը տարածաշրջանում կարող է մեծ կայունացնող նշանակություն ունենալ Սյունիքի աշխարհաքաղաքական իրավիճակի վրա: Տարանցիկ զբոսաշրջության զարգացման գործընթացում կարևորվում է մարզի տարածքում զբոսաշրջային

ենթակառուցվածքային օբյեկտների համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին կամ դրանց կառուցումը նպատակահարմար կետերում: Այս խնդիրը անհրաժեշտ է լուծել պետություն-մասնավոր հատված կապի արդյունավետ օգտագործմամբ: Հատուկ ուշադրության են արժանի գիտական և գիտաճանաչողական զբոսաշրջության տեսակների զարգացման հեռանկարները: Անհրաժեշտ է իրականացնել պեղումներ և նմանատիպ այլ աշխատանքներ, որոնց նպատակահարմարությունը մարզի տարածքում կասկած չի հարուցում:

612. Այս խնդրի լուծումը կարելի է կապել գիտաճանաչողական և գիտական զբոսաշրջության տեսակների զարգացման գործընթացի հետ:

613. Ինչ վերաբերվում է հետիոտն սպորտային /լեռնագնացություն/ զբոսաշրջության տեսակներին, ապա այսօր էլ չեն ներդրումների շնորհիվ կարելի է իրականացնել և հետագայում զարգացնել զբոսաշրջության այս տեսակները: Վերոնշյալ ներդրումները անհրաժեշտ են առաջին հերթին երթուղիների մանրակրկիտ մշակման և միջոցների ձեռք բերման համար:

614. Հանգստի կազմակերպման և բուժաճանաչողական զբոսաշրջության տեսակների զարգացումը ավելի շատ ներդրումներ և ժամանակ է պահանջում: Մարզում զբոսաշրջության առաջնահերթ ձևերի (տարանցիկ սպորտային, հետիոտն) զարգացմանը զուգընթաց կստեղծվի նպաստավոր դաշտ հանգստի կազմակերպման և բուժաճանաչողական զբոսաշրջության տեսակների զարգացման համար:

1) Սյունիքի մարզի գլխավոր զբոսաշրջային գրավչության՝ Տաթևի վանքի վերանորոգում: «Տաթևի վանքի վերածնունդ և զարգացում» /Տաթև 2020/ ծրագիրն արդեն հաստատվել է Ազգային մրցունակության խորհրդի հոգաբարձուների խորհրդի կողմից և իրականացվելու է մասնավոր հատված-պետություն համագործակցության սկզբունքների ներքո: Ծրագրի արժեքը շուրջ 20 մլն ԱՄՆ դոլար է: Ծրագիրը բաղկացած է երեք փուլից՝ վանքի վերականգնում, 5 կիլոմետրանոց ճոպանուղու կառուցում և հյուրանոցային համալիրի կառուցում: Ծրագրով ամբողջությամբ վերականգնվելու է Տաթևի վանքի համալիրը: Հարակից բնակավայրերի բնակչության համար ստեղծվելու են երկարատև զարգացման հնարավորություններ՝ նոր աշխատատեղեր, կրթական համալիր և զբոսաշրջության կենտրոն: Կառուցվելու է ճոպանուղի, որը բավականին լավ հնարավորություն է ստեղծելու զբոսաշրջության զարգացման համար: Գոպանուղու կառուցման աշխատանքներն սկսվելու են 2009 թվականին: Այն կլինի ՀՀ-ում ամենաերկար ճոպանուղին: Տաթևի համալիրի շուրջ ստեղծվելու է մի փոքր կլաստեր (համախումբ): Ծրագրի իրականացման համար ֆինանսական միջոցների մեծ մասը մասնավոր ներդրումներ են, իսկ մի մասը /էլեկտրամոնտաժային աշխատանքներ, ճանապարհների կառուցում ու բարելավում և այլն/ կատարելու է ՀՀ կառավարությունը: Վանքի վերանորոգման ծախսերն ակնկալվում է փակել հյուրանոցի եկամուտներով, իսկ ճոպանուղին կինքնաֆինանսավորվի տոմսերի վաճառքով: Ծրագրի իրականացման աշխատանքները կտևեն մոտ 3 տարի և կավարտվեն 2012 թվականին: Ըստ Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի հաշվարկների՝ 2008թ. Տաթև է այցելել մոտ 7000 զբոսաշրջիկ: Գոպանուղու առաջացրած հետաքրքրությունը կարող է այդ թիվն առնվազն կրկնապատկել: Տաթևի վանքի վերականգնման ծրագիրը և վերածնունդը, ինչպես նաև վանքի մոտակայքում տուրիստական համալիրի ստեղծումը, Արարատի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում զբոսաշրջության զարգացման խթան կհանդիսանա, քանի որ Երևանից մինչև Տաթև զբոսաշրջիկները հնարավորություն կստանան մեկ երթուղու վրա այցելել խոր Վիրապ, Նորավանք, Ձորաց քարերի աստղադիտարան, Տաթև և այլն

- 2) Հյուրատների և հյուրասիրության ծառայությունների համակարգի զարգացում
- 3) Համայնքահեն Տուրիզմի (ՀՏ) զարգացման խթանում: Այս բնագավառը չափազանց կարևոր է Սյունիքի մարզի համար, քանզի այն իրենից ներկայացնում է տնտեսական գործունեության մի ձև, որի վրա զգալի թվով ներգրավված տեղական բնակչությունն ունի լուրջ վերահսկողություն, ներգրավվածություն և կառավարում, ինչպես նաև եկամուտների հիմնական մասն էլ մնում է տեղական տնտեսության մեջ: Համայնքի անդամները, անգամ նրանք ուղղակի ներգրավված չեն տուրիստական ձեռնարկություններում, ևս որոշակիորեն օգտվում են (հարկերի տեսքով ընդհանուր համայնքի եկամուտներ, բազմապատկիչ էֆեկտ և այլն.):

Զբոսաշրջության զարգացման ապահովման համար ձեռնարկվելիք քայլերը.

- 1) Մարզում զբոսաշրջության կենտրոնի ստեղծում
- 2) Զբոսաշրջության ուղիների և հոսքերի բոլոր հնարավոր տարբերակների ու պարամետրերի որոշում, տարածքի ռեկրեացիոն ծանրաբեռնվածության նորմերի սահմանում
- 3) Մարզի զբոսաշրջային տնտեսության գույքագրում
- 4) Բազմաբնույթ գովազդային նյութերի պատրաստում
- 5) Առավել հարմարավետ առանձնատների և անավարտ օբյեկտների վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծում
- 6) Շուկայի ուսումնասիրություն և գովազդային նյութերի տեղադրում (մարքետինգ)
- 7) Համակարգել մասնավոր հատվածի կողմից զբոսաշրջային ենթակառուցվածքային օբյեկտների տեղադրման, կառուցման աշխատանքները
- 8) Նախատեսել վերակառուցվող և նոր կառուցվող օբյեկտները որպես անկախ էներգիա և ջրամատակարարում, հեռուստառադիո և կապի միջոցներ, մուտքային ճանապարհներ ունեցող և ընդհանրապես միջազգային չափանիշներին համապատասխանող հանգստավայրեր
- 9) Նախատեսել ըստ զբոսաշրջության տեսակների նրանց տեղաբաշխման միջոցների բազմազան տեսակներ և կարգեր
- 10) Կազմակերպել համապատասխան կադրերի պատրաստումը և վերապատրաստումը
- 11) Մարզի զբոսաշրջության զարգացման ծրագիրը համաձայնեցնել մարզի սոցիալ-տնտեսական ծրագրի և ազգային անվտանգության, էկոլոգիական գործոնների հետ
- 12) Համագործակցություն ՓՄՁ զարգացմանն աջակցող կազմակերպությունների միջև: Ծրագրի իրականացումը հնարավորություն կընձեռի վեր հանել ՓՄՁ զարգացման այլ կարիքներ, որոնք կհոգան ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնը և այլ դոնոր կազմակերպություններ՝ նման կլաստերների ստեղծման և զարգացման հետագա ընթացքում:

## 10. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

615. Ծրագրում ընդգրկված քաղաքաշինության բնագավառի հիմնախնդիրները կապված են մարզի և դրանում ընդգրկված բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հանրակրթական դպրոցների շինարարության և հիմնանորոգման, առողջապահական, մշակութային, մարզական օբյեկտների, բնակֆոնդի և վարչական շենքերի հիմնանորոգման, բնակարանաշինության, բարեկարգման, քաղաքային համայնքներում բազմաբնակարան շենքերի կառավարման գործի բարելավման ու քաղաքաշինական այլ խնդիրների հետ:

### 10.1. Բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակում

616. Մարզի բնակավայրերում քաղաքաշինական գործունեությունը կանոնակարգելու, ներդաշնակ և անվտանգ կենսամիջավայրի ստեղծման ու անօրինական շինարարությունը կանխելու նպատակով նախատեսվում է կազմել քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր չունեցող Քաջարան և Դաստակերտ քաղաքների ու մարզի 98 գյուղական համայնքների գլխավոր հատակագծերը, ինչպես նաև ՀՀ Սյունիքի մարզի տարածքային հատակագծման նախագիծը, որի համար ըստ նախնական հաշվարկների պահանջվող գումարները ներկայացված են [Հավելված 10.1](#), [Հավելված 10.2](#), [Հավելված 10.3](#) -ներում:

### 10.2. Հանրակրթական դպրոցների շինարարություն և հիմնանորոգում

617. Մարզի 29 համայնքներում /Կապանի N 4, Կապանի N 12, Քաջարանի N 6, Շրվենանցի, Վարդավանքի, Տավրուսի, Դիցմայրիի, Աղվանիի, Նորաշենիկի, Բարգուշատի, Գորիսի N 1 հատուկ, Շուռնուխի, Բարձրավանի, Որոտանի, Տանձատափի, Մեղրիի N 2, Կարճևանի, Սիսիանի N 5, Սիսիանի N 1 հատուկ, Շամբի, Սալվարդի, Շենաթաղի, Հացավանի, Թասիկի, Բնունիսի, Բալաքի, Արևիսի, Լծենի և Գետաթաղի/ հանրակրթական ուսուցումը կատարվում է հարմարեցված շենքերում, ակունքներում, իսկ փախստականաբնակ գյուղերում՝ լքված խարխուլ տներում, հին գրասենյակների շենքերում, որոնք տասնյակ տարիներ չեն նորոգվել, չունեն սանհանգույցներ, սպորտ դահլիճներ կամ հրապարակներ: Ասբոհերձաքարերի ջարդվածության պատճառով անձրևաջրերը լցվում են շենքը և վնասում այն: Ուսուցման ընթացքը կազմակերպելու համար բացակայում են տարրական պայմաններ: Կապան քաղաքի Բեխ և Բաղաբուրջ թաղամասերում, որոնք նախկինում հանդիսացել են առանձին գյուղական բնակավայրեր և քաղաքից գտնվում են որոշակի հեռավորության վրա, դպրոցներ չեն գործում՝ շենքային պայմաններ չլինելու պատճառով: Նշված թաղամասերի երեխաների ուսուցման կազմակերպումը քաղաքի այլ դպրոցներում կապված է լուրջ դժվարությունների հետ: 2006 թվականին սկսվել է Խոզնավար, Լիճք, Վարդանիձոր և Նոնաձոր գյուղերի դպրոցների նոր շենքերի կառուցումը, ընդ որում Լիճք, Վարդանիձոր և Նոնաձոր գյուղերի դպրոցների շինարարությունն իրականացվում էր բարեգործական կազմակերպությունների միջոցներով: 2007 թվականին ավարտվել է Լիճք, Վարդանիձոր և Նոնաձոր գյուղերի դպրոցների նոր շենքերի կառուցումը: ՀՀ 2007 թվականի պետական բյուջեով հատկացված միջոցների հաշվին սկսվել է Եղեգ և Արավուս գյուղերի դպրոցական շենքերի կառուցման աշխատանքները, շարունակվել Խոզնավար գյուղի դպրոցական շենքի շինարարությունը: Մարզի դպրոցական շենքերը և շինությունները, հատկապես սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային հեռավոր համայնքներում գտնվում են կառավարության և մարզպետարանի ուշադրության

կենտրոնում և յուրաքանչյուր տարի ներդրումների ծավալներն ավելացվում է: Այդ նպատակով կառավարությունը 2008թ. պետբյուջեով Սյունիքի մարզի 15 դպրոցների հիմնանորոգման համար հատկացրել է 855 մլն դրամ /385 մլն դրամ Սյունիքի մարզպետարանին՝ 9 դպրոցների և 470 մլն դրամ քաղաքաշինության նախարարությանը՝ 6 դպրոցների հիմնանորոգման համար/: ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով շարունակվել է Եղեգ և Արավուս գյուղերի դպրոցական շենքերի կառուցումը, ավարտվել Խոզնավար գյուղի դպրոցի շինարարությունը: ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված է շարունակել և ավարտել Եղեգ և Արավուս գյուղերի դպրոցական շենքերի կառուցումը: ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով շարունակվել է 2007 թվականին սկսված 9 դպրոցների հիմնանորոգման աշխատանքները: 2009 թվականին նախատեսվում է հիմնանորոգել 6 դպրոց: Այդ տարիներին մարզում 1 մլրդ. 571 մլն. դրամի շրջանակներում կառուցվել է 6 նոր դպրոց, մեկ դպրոցի շինարարությունը ընթացքի մեջ է, 1 մլրդ. 95 մլն. դրամի շրջանակներում հիմնանորոգվել ու վերանորոգվել է 24 դպրոց:

618. Մարզում դպրոցների կառուցման և հիմնանորոգման գործում զգալի աջակցություն են ցուցաբերում «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն, Հայաստանի վերականգնող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը, Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամը, «Հովարդ Կարագյոզյան» հիմնադրամը, «Օթևան» երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը, «Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպությունը: 2006 թվականին Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից 84,8 մլն. դրամ է հատկացվել Լիճք, Վարդանիձոր և Նռնաձոր գյուղերում նոր դպրոցների կառուցման համար: Հայաստանի վերականգնող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից հատկացված 101,3 մլն. դրամով ջեռուցվել են մարզի 5 գյուղերի դպրոցներ: 2007 թվականին «Հովարդ Կարագյոզյան» հիմնադրամի կողմից 22,0 մլն. դրամով ջեռուցվել է Սիսիանի հատուկ գիշերօթիկ դպրոցը: 2008 թվականին ««Օթևան» երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից հատկացված 33,4 մլն. դրամով սկսվել է փախստականաբնակ Իշխանասար գյուղի նոր դպրոցի կառուցումը: 2006-2008 թվականներին մի շարք դպրոցների նորոգման նպատակով «Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից հատկացվել է 19,1 մլն. դրամ: Մարզպետի անմիջական նախաձեռնությամբ Լժեն գյուղում գնվել է երկհարկանի կահավորված բնակարան և տրվել գյուղի դպրոցին:

619. Մարզի հանրակրթության ոլորտում միայն 2005-07թթ. իրականացվել են մի շարք ծրագրեր (շենքերի վերանորոգման, գույքի թարմացման, ուսուցիչների, տնօրենների վերապատրաստման ծրագրեր), որոնք անշուշտ դրական ազդեցություն են ունեցել հանրակրթական ծառայությունների որակի վրա:

620. Մարզում «Հայ կրթական հիմնարկություն» ամերիկյան կազմակերպության կողմից (ֆինանսավորվում է հայ բարերարների կողմից) նախատեսվել է 2009թ ընթացքում իրականացնել մինչև 10 դպրոցական շենքերի վերանորոգման ծրագրեր:

621. Այնուամենայնիվ, բյուջեով նախատեսվող միջոցները բավարար չեն դպրոցների հիմնանորոգման աշխատանքներն անհրաժեշտ ծավալով կատարելու համար: Մարզում 61 դպրոցներ հիմնանորոգման առաջնահերթ խիստ կարիք ունեն: 19 դպրոցներ վնասվել են ռմբակոծությունների և ռազմական գործողությունների հետևանքով:

622. 2010-2013թթ. նախատեսվում է մարզում կառուցել 13 դպրոցական նոր շենքեր և հիմնանորոգել 61 դպրոց ([Հավելված N5.1.](#)):

### 10.3. Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում

623. Մարզի համայնքներում առկա 6 բժշկական կենտրոններն ու 11 առողջության առաջնային պահպանման կենտրոնները /այդ թվում՝ 92 բուժկետերը/ տասնյակ տարիներ չեն նորոգվել և դրանց մեծ մասը հիմնանորոգման կարիք ունի:

624. 2003-2008 թվականներին մարզի առողջապահական օբյեկտների նորոգման նպատակով ՀՀ պետական բյուջեով ֆինանսական միջոցներ չեն հատկացվել: ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով 65,4 մլն. դրամ է նախատեսվել Մեղրիի բժշկական կենտրոնի նորոգման նպատակով:

625. 2009 թվականի ընթացքում վարկային ծրագրի շրջանակներում նախատեսվում է կառուցել առողջության առաջնային պահպանման կենտրոն Տեղ համայնքում և վերանորոգել Տաթևի առողջության կենտրոնը՝ իրականացնելով ընդհանուր առմամբ շուրջ 220.000 ԱՄՆ դոլարի ներդրումներ:

626. 2009 թվականին նախատեսվում է նաև հիմնանորոգել Գորիսի բժշկական կենտրոնի հիվանդանոցի մասնաշենքը, ինչպես նաև հիվանդանոցին կից կառուցել նոր եռահարկ շինություն՝ ընդունարանի ծառայությունների, ծնարանային և վիրահատական բլոկերի տեղակայման նպատակով: Շինարարական աշխատանքներին ուղղված ներդրումները կկազմեն շուրջ 1.913.000 ԱՄՆ դոլար: Աշխատանքների ընթացքում հիվանդանոցային ծառայությունները կտեղափոխվեն Գորիսի բժշկական կենտրոնի պոլիկլինիկայի շենք:

627. Առողջապահական օբյեկտների պահպանությունն ու երկարակետությունը ապահովելու նպատակով անհրաժեշտ է 3 տարում հիմնանորոգել 10 առողջապահական օբյեկտ, որի համար նախատեսվում է 2011 թվականին հատկացնել 407,75 մլն. դրամ, 2012 թվականին՝ 758,05 մլն. դրամ և 2013 թվականին՝ 700,0 մլն. դրամ ([Հավելված 5.9](#)):

### 10.4. Մշակութային օբյեկտների հիմնանորոգում

628. Մշակույթի մի շարք օջախներ վնասվել են ռմբակոծությունների և ռազմական գործողությունների հետևանքով, որոնք վերջին տարիների ընթացքում չեն վերանորոգվել և հիմնանորոգման /շենքապահպան աշխատանքների իրականացման/ խիստ կարիք ունեն: Նախատեսվում է 2010-2013 թվականներին 1852500,0 հազ. դրամ հատկացնել մշակութային օջախների հիմնանորոգման և կառուցման համար ([Հավելված 5.2](#)):

### 10.5. Մարզական օբյեկտների հիմնանորոգում

629. ՀՀ Սյունիքի մարզում գործող 13 մարզադպրոցներն ու մարզակառույցները և 11 մարզադաշտերը տասնյակ տարիներ չեն նորոգվել, գտնվում են խիստ անբարվոք վիճակում, ինչը խոչնդոտ է հանդիսանում բնակչության շրջանում սպորտի զարգացմանն ու մասսայականացմանը:

630. Սպորտի զարգացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով նախատեսվում է 2010-2013 թվականներին մարզական օբյեկտներում կատարել 404,3 մլն. դրամի հիմնանորոգման և կառուցման աշխատանքներ ([Հավելված 5.2](#)):

### 10.6. Բնակարանաշինություն և քաղաքաշինական այլ խնդիրներ

631. Մարդկային աղքատության հետ առնչվող հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ Սյունիքի մարզի մարդկային աղքատության հաղթահարման գերակայություններն առնչվում են նաև բնակչության բնակարանային ապահովման,



քաղաքային տնտեսության բարեկարգման հիմնախնդիրների լուծման հետ, որոնց վերջնական նպատակը պետք է լինի մարզի բնակչության համար արժանավայել կենսապայմանների ապահովումը:

632. Մարզի բնակավայրերի, հատկապես սահմանամերձ բնակավայրերի բնակչության համար լուրջ խնդիր է մնում բնակարանային ապահովվածության հարցը:

633. Ռմբակոծությունների և ռազմական գործողությունների հետևանքով մարզի 17 բնակավայրերում 54 անհատական տներ քանդվել էին հիմնովին, իսկ 118 անհատական տուն դարձել չչահագործվող, վերականգնման ենթակա: Նախորդ տարիներին ՀՀ պետական բյուջեով հատկացված միջոցների հաշվին լուծվել է հիմնովին քանդված անհատական տների բնակիչներին բնակարանով ապահովելու հարցը: Մինչև 2007 թվականը չչահագործվող, վերականգնման ենթակա տների վերականգնման նպատակով ՀՀ պետական բյուջեով կամ այլ աղբյուրներով ֆինանսական միջոցներ չեն հատկացվել: Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի սեպտեմբերի 6-ի «Գումար հատկացնելու մասին» N997-Ա որոշմամբ ՀՀ Սյունիքի մարզպետարանին հատկացված 45,0 մլն. դրամի հաշվին ցույց տրված պետական ֆինանսական աջակցության շնորհիվ վերականգնվել է 31 անհատական տուն, իսկ մնացած 87 տների բնակիչները դեռևս գտնվում են անօթևան վիճակում: ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով վերոհիշյալ նպատակի համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

634. Մարզի 23 համայնքներում տարբեր պատճառներով և հիմնականում սողանքային երևույթների հետևանքով 236 անհատական տներ ստացել են տարբեր աստիճանի վնասվածքներ, որից 93-ը՝ 5-րդ և 4-րդ աստիճանի, որոնք ըստ գործող նորմատիվների ենթակա են վերաբնակեցման: Նշված խնդրի լուծման նպատակով 2003-2006 թվականներին ՀՀ պետական բյուջեով ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: ՀՀ 2007 թվականի պետական բյուջեով ՀՀ քաղաքաշինության նախարարությանը հատկացված միջոցների հաշվին 39.765 մլն. դրամով բնակարաններ են գնվել Քարահունջ գյուղի սողանքային գոտում գտնվող 5-րդ և 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող 8 անհատական տների բնակիչների համար: ՀՀ 2008-2009 թվականների պետական բյուջեներով վերոհիշյալ նպատակի համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

635. Մարզում առկա են նաև 3-րդ և 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող 29 բազմաբնակարան շենքեր /781 բնակարան/, որոնք ամրացման կամ վերաբնակեցման կարիք ունեն: Նախորդ տարիներին պետական բյուջեներով կամ այլ աղբյուրներով նշված խնդրի լուծման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

636. 1968 թվականի հունիսի 7-ին տեղի ունեցած երկրաշարժի հետևանքով Լեռնաձոր և Շիշկերտ գյուղերում վնասվել էր գյուղերի ողջ բնակարանային ֆոնդը: 35 ընտանիք Լեռնաձոր և 67 ընտանիք Շիշկերտ գյուղերում /Ծավ համայնքի տարածքում/ դեռևս շարունակում են բնակվել շահագործման ժամկետը սպառած, քայքայված, բնակության համար ոչ պիտանի վիճակում գտնվող փայտյա տներում: Նախատեսվում է նրանց համար պետական միջոցների հաշվին կառուցել նոր բնակելի տներ:

637. Մեղրի քաղաքում 42 սոցիալապես անապահով ընտանիքներ բնակվում են տարրական կենցաղային պայմաններից զուրկ և վթարային վիճակում գտնվող, 1800-ական թվականների վերջում կառուցված նախկին հիվանդանոցի և Մեղրի քաղաքի կիսաքանդ վիճակում գտնվող նախկին դպրոցի շենքերում, ինչպես նաև 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող անհատական տներում: ՄՁԾ-ով նախատեսվում է այս ընտանիքների բնակարանային խնդիրը լուծելու նպատակով կառուցել մեկ բազմաբնակարան շենք

638. Բնակարանաշինության 2010-2013թթ. ֆինանսավորումը ներկայացված է [Հավելված 10.5](#)-ում:

**10.7. Բնակֆոնդի և վարչական շենքերի հիմնանորոգում**

639. Շարունակում է հրատապ մնալ բազմաբնակարան շենքերի բնակֆոնդի հիմնանորոգման խնդիրը: Չնայած վերջին 4 տարիներին կատարված որոշ աշխատանքների, ՀՀ Սյունիքի մարզում առկա 601 բազմաբնակարան շենքերի ավելի քան 70%-ը, հատկապես դրանց ընդհանուր սեփականություն հանդիսացող մասերը /տանիքներ, վերելակներ և այլն/ 30 տարուց ավելի է, ինչ հիմնանորոգման չեն ենթարկվել և գտնվում են խիստ անբարվոք վիճակում: Շենքերի մեծ մասում անձրևաջրերը թափանցում են ներս, թուլացնում կրող պատերի ու կոնստրուկցիաների ամրությունը: 2008 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից 150,0 մլն. դրամ է հատկացվել Կապան քաղաքի բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգման նպատակով, որի շնորհիվ հիմնանորոգվել է 26 բազմաբնակարան շենքերի տանիքներ:

640. Հաշվի առնելով, որ մարզի քաղաքային բնակավայրերի բազմաբնակարան շենքերի հիմնանորոգման համար նախատեսվող ծրագիրը երկարաժամկետ է, որի արժեքը ըստ նախնական հաշվարկների կազմում է 1030,0 մլն. դրամ, ՄԶԾ-ով նախատեսվում է 2012 թվականին վերոհիշյալ նպատակով հատկացնել 247,0 մլն. դրամ: Միաժամանակ նախատեսվում է 2012 թվականին 100,0 մլն. դրամ Կապան քաղաքի բազմաբնակարան շենքերի վերելակների նորոգման նպատակով, որի նախահաշվային ընդհանուր արժեքը կազմում է 310,0 մլն. դրամ:

641. Նախատեսվում է նաև հիմնանորոգել Մեղրի և Ագարակ քաղաքների քաղաքապետարանների վարչական շենքերի լանջավոր տանիքները, որի համար անհրաժեշտ է համապատասխանաբար 9,0 և 5,0 մլն. դրամ:

Բնակֆոնդի և վարչական շենքերի հիմնանորոգման ֆինանսավորումը ներկայացված է [Հավելված 10.5](#)-ում:

**10.8. Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների ձևավորում**

642. Մարզի քաղաքային բնակավայրերում առկա 601 բազմաբնակարան շենքերից 333-ը ընդգրկված են 24 համատիրությունների մեջ, այդ թվում Կապան, Քաջարան և Դաստակերտ քաղաքների բոլոր բազմաբնակարան շենքերը: Շենքերի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի կառավարումը օրենքով սահմանված կարգով սեփականատերերի միջոցով իրականացնելու, շենքերի պահպանումը, շահագործումը և նորոգումը պատշաճ մակարդակով կատարելու նպատակով, նախատեսվում է ՄԶԾ-ի ժամանակահատվածում Գորիս, Մեղրի և Ագարակ քաղաքներում ձևավորել ևս 12 համատիրություն, որոնց մեջ կընդգրկվի 140 բազմաբնակարան շենք՝ համաձայն ստորև ներկայացվող ժամանակացույցի.

**Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց**

ՀՀ Սյունիքի մարզի քաղաքային համայնքներում բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների ձևավորման

| ՀՀ | Քաղաքի անվանումը | Նախատեսվող կառավարման մարմինը | Համատիրության մեջ ընդգրկվող բազմաբնակարան շենքերի թիվը | Կառավարման մարմնի ստեղծման ժամկետը (եռամսյակ, տարի) |
|----|------------------|-------------------------------|--|---|
| 1  | ք. Մեղրի         | Համատիրություն                | 28   | I եռ. 2010թ.  |
| 2  | ք. Գորիս         | Համատիրություն                | 3  | IV եռ. 2010թ.                                       |

|    |           |                |    |                |
|----|-----------|----------------|----|----------------|
| 3  | ք. Գորիս  | Համատիրություն | 12 | IV եռ. 2010թ.  |
| 4  | ք. Գորիս  | Համատիրություն | 14 | I եռ. 2011թ.   |
| 5  | ք. Գորիս  | Համատիրություն | 2  | I եռ. 2011թ.   |
| 6  | ք. Գորիս  | Համատիրություն | 3  | II եռ. 2011թ.  |
| 7  | ք. Գորիս  | Համատիրություն | 4  | III եռ. 2011թ. |
| 8  | ք. Գորիս  | Համատիրություն | 6  | IV եռ. 2011թ.  |
| 9  | ք. Գորիս  | Համատիրություն | 17 | I եռ. 2012թ.   |
| 10 | ք. Գորիս  | Համատիրություն | 2  | II եռ. 2012թ.  |
| 11 | ք. Գորիս  | Համատիրություն | 14 | III եռ. 2012թ. |
| 12 | ք. Ազարակ | Համատիրություն | 35 | III եռ. 2012թ. |

### 10.9. Կայուն զարգացման ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումներ

643. Մարզի բնակավայրերում տարբեր աստիճանի վնասվածություն ունեցող 236 անհատական տների ու որոշակի թվով տարբեր շինությունների հիմնական մասը գտնվում է մարզում առկա բազմաթիվ սողանքային գոտիներում:

644. Հետագայում անկանխատեսելի իրավիճակներից զերծ մնալու նպատակով ՄԶԾ ժամանակահատվածում նախատեսվում է իրականացնել ինժեներատեխնիկական հետազոտություններ և գեոդեզիական ռեժիմային դիտարկումներ՝ սողանքային պրոցեսի ակտիվությունը որոշելու, նրա հետագա զարգացումը հսկելու, ինչպես նաև շենքերի հետագա դեֆորմացիաները կանխատեսելու, դրա հիման վրա հիմնավորված միջոցառումներ ընտրելու և իրականացնելու նպատակով ([Հավելված 10.4](#)):

## 11. ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

### 11.1. ԵՆթակառուցվածքների ոլորտի իրավիճակի վերլուծություն

645. Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացումը ինչպես ԿԶԾ, այնպես էլ Սյունիքի մարզի զարգացման ծրագրի կարևոր գերակայություններից է: Մարզում ենթակառուցվածքների զարգացման հիմնական խնդիրները կապված են խմելու ջրի մատակարարման (ներառյալ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման և որակի բարելավման), կոյուղիների (ներառյալ մաքրման կայանների վերակառուցման և կառուցման), անմխիթար վիճակում գտնվող ճանապարհների (հատկապես գյուղական բնակավայրերի), ինչպես նաև գազամատակարարման խնդիրների հետ: Այս խնդիրները հատկապես զերակա են այն համայնքների համար, որոնք սահմանամերձ են և որոնց բնակչությունը հեռանում է հայրենի վայրերից, ինչպես նաև մեծ թվով բնակչություն ունեցող համայնքների համար:

### 11.2 Ծանապարհաշինություն, տրանսպորտային ենթակառուցվածքներ

646. Ֆիզիկական մեկուսվածությունը ԿԶԾ-ում սահմանված է որպես կարևորագույն գործոն, որը խոչընդոտում է կենսաբանական, սոցիալական ու հոգևոր-մշակութային պահանջումները բավարարելուն: Հայաստանում աղքատության մակարդակը ուղղակիորեն կապված է մարզերը Երևանից, համայնքները մարզկենտրոններից հեռավորության հետ և հատկապես այդ հեռավորությունները կապող ճանապարհների անմխիթար վիճակի հետ: Այս առումով աղքատության աստիճանը ուղղակիորեն կապվում է ճանապարհային ցանցի վիճակի հետ:

647. Համայնքների ֆիզիկական մեկուսացվածությունը վերացնելու նպատակով անհրաժեշտ է ռեսուրսներն ուղղել համայնքային նշանակության ճանապարհների շինարարությանը՝ հաշվի առնելով աղքատության վրա վերջիններիս առավել մեծ ազդեցության աստիճանը:

648. ՀՀ Սյունիքի մարզի միջպետական ու մասամբ հանրապետական նշանակության ճանապարհները համեմատաբար բարվոք, իսկ համայնքային ու մարզային նշանակության ճանապարհները անմխիթար վիճակում են: Համաձայն ՀՀ կառավարության 2008թ.-ի հունվարի 10-ի N112-Ն որոշման, ՀՀ Սյունիքի մարզով անցնում են 365.2կմ միջպետական, 478.2կմ հանրապետական և 220.4 կմ տեղական (որից 194.3 կմ մարզային ու 26.1կմ համայնքային ենթակայության) ճանապարհներ: Մարզի ամբողջ ճանապարհային ցանցի տարեկան պահպանման և վերականգնման համար անհրաժեշտ ֆինանսավորման պահանջը կազմում է շուրջ 1.8 մլրդ դրամ:

649. 2006թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվել են տարբեր նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգման, պահպանման ու շահագործման, ձմեռային պահպանության համար 4699.69 մլն. դրամ ընդհանուր գումարի աշխատանքներ, այդ թվում՝ միջպետական նշանակության ճանապարհների հիմնանորոգման համար՝ 1401.29 մլն. դրամ, հանրապետական նշանակության ճանապարհների հիմնանորոգման համար՝ 2546.2 մլն.դրամ /Մեղրի-Շվանիձոր-Վերիշեն-Ծավ-Կապան ավտոճանապարհի հիմնանորոգում, ավարտվել է Մեղրի-Շվանիձոր 20կմ ճանապարհահատվածի նորոգման ու ասֆալտապատման աշխատանքները/, պետական նշանակության ճանապարհների պահպանման ու շահագործման համար՝ 552.73 մլն. դրամ, մարզային նշանակության ճանապարհների պահպանման ու շահագործման համար՝ 52.0 մլն. դրամ և մարզի տարածքի ընդհանուր օգտագործման ավտոճանապարհների ձմեռային

պահպանության համար՝ 147.47 մլն. դրամ:

650. «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից հատկացված միջոցներով Սիսիան և Գորիս քաղաքներում իրականացվել են 131.8 մլն. դրամի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ:

651. 2007թ. ավարտվել է Սեղրի-Շվանիձոր-Վերիշեն-Ծավ-Կապան նոր կառուցված միջպետական նշանակության ավտոճանապարհի շինարարական աշխատանքները 15275.0 մլն. դրամ ընդհանուր գումարով:

652. 2007-2008թթ մարզի Սիսիան, Գորիս, Կապան, Սեղրի քաղաքներում իրականացվել են 786.85 մլն. դրամի ներհամայնքային փողոցների հիմնանորոգման աշխատանքներ, այդ թվում ՀՀ կառավարության 23 նոյեմբերի 2007թ N1433 -Ա որոշմամբ՝ 323.933 մլն դրամի, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի միջոցով՝ 256.232 մլն դրամի, ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին Կապան քաղաքի՝ Ա. Մանուկյան և Գ. Արզումանյան փողոցներում՝ 185.0 միլիոն դրամի, Սիսիանի քաղաքապետարանի կողմից՝ 21.0 մլն. դրամի ասֆալտապատման աշխատանքներ:

653. ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին 2007-2008թթ իրականացվել են մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների Մ-2-Ագարակ-Ուժանիս՝ 500.0 մլն դրամի, Մ-2-Դավիթ-Բեկ՝ 310.0 մլն. դրամի, Կապան - Վաչագան՝ 230.0 մլն. դրամի հիմնանորոգման աշխատանքներ:

654. 2007թ. մայիս ամսին գարնանային ձնհալի և սելավաջրերի հետևանքով Մ-2-Երևան-Գորիս- Իրանի սահման 244 կմ ճանապարհահատվածում ակտիվացան առկա սողանքային երևույթները: Նախագծային ինստիտուտի մասնագետների կողմից ճշտվեց սողանքի հետևանքով նշված հատվածին հասցրած վնասը: Ընդհանուր վնասի չափը կազմել է շուրջ 1250.0 մլն դրամ:

655. ՀՀ 2007-2008թթ. ՀՀ պետական բյուջեի հատկացված միջոցների հաշվին հիմնանորոգման աշխատանքներ են կատարվել հետևյալ կամուրջների վրա՝

- 1) Արաքս գետի վրայի Սեղրիի կամուրջ 83000.0 հազ. դրամ
- 2) Մ-2 Երևան-Գորիս-Սեղրի-Իրանի սահման, կմ328+180 (Ողջի գետ) Կամուրջ 4151.0 հազ. դրամ
- 3) ք. Կապան Ռ. Մինասյան փողոց կամուրջ 43000.0 հազ. դրամ

656. ՀՀ 2008թ. պետական բյուջեի միջոցների հաշվին հիմնանորոգվել է Մ-2 Երևան-Գորիս-Սեղրի-Իրանի սահման 18.87 կմ միջպետական նշանակության ավտոճանապարհը, ինչպես նաև S-8-49 ՊԽ/Մ-2/-Դավիթ-Բեկ կմ4+152-կմ5+252, Կապան-Վաչագան, Մ-2 Ագարակ-Ուժանիս տեղական նշանակության ավտոճանապարհները:

657. 2008թ IFAD միջազգային կազմակերպության միջոցով կատարվել են Խնձորեսկ համայնքի ավտոճանապարհների վերանորոգում 0.6 կմ՝ 86266.0 հազ. դրամ արժեքով:

658. «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի կողմից ավարտվել են մարզի Սալվարդ-Հացավան-Աշոտավան-Սիսիան՝ 12.5 կմ, Բռնակոթ-Սիսիան՝ 4.7 կմ, Դարբաս-Լժեն-Վաղատին-Աղիտու-Սիսիան՝ 20.0 կմ, Մ12 Վերիշեն-Խոզնավար ճանապարհահատվածների նախագծային աշխատանքները: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի սկսել համապատասխան ֆինանսավորման տրամադրման դեպքում:

### Ճանապարհաշինության ոլորտի խնդիրները.

659. Մարզային ենթակայության ճանապարհների զգալի մասը անցնում է խստաշունչ և երկարաձիգ ձմեռային կլիմայական պայմաններ ունեցող լեռնային և բարձր լեռնային գոտիներով, որոնք՝ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով, տասնյակ

տարիներ նորոգման չեն ենթարկվել: Ռմբակոծությունների, ռազմական տեխնիկայի հաճախակի տեղաշարժերի և մթնոլորտային տեղումների բացասական ազդեցությունների հետևանքով, մարզային ենթակայության ճանապարհների զգալի մասը քանդվել ու դարձել են տրանսպորտային միջոցների երթևեկության համար դժվարանցանելի, իսկ որոշ հատվածներում նույնիսկ անանցանելի: Առավել վերանորոգման կարիք ունեն 74.4 կմ մարզային ենթակայության ճանապարհներ:

660. Առաջարկվող ծրագրերի իրականացումը կապահովի տարվա բոլոր եղանակներին տրանսպորտային միջոցների հուսալի և անխափան երթևեկությունը, մարզային նշանակության ճանապարհների երկարակեցությունը, շահագործումը և պահպանումը, համայնքների և մարզկենտրոնի միջև մշտական տրանսպորտային կապը, ինչպես նաև կկանխի հեռավոր գյուղական համայնքների բնակչության մոտ նկատվող արտահոսքի միտումը:

661. Մարզային նշանակության ճանապարհների անհրաժեշտ շահագործման, պահպանության և երկարակեցության ապահովման ծախսերի համար կպահանջվի տարեկան 300.0 մլն. դրամ:

662. Մինչև նույն ժամանակ այս ոլորտում նախատեսված ոչ բոլոր միջոցառումներն են ժամանակին և ամբողջությամբ իրականացվել:

663. Ամփոփելով ճանապարհաշինության ոլորտի միջոցառումների իրականացման փորձը՝ կարելի է գալ հետևյալ եզրահանգումների:

- 1) 2008 թվականի սկզբի բնակլիմայական վատ եղանակային պայմանները խաթարել են ճանապարհաշինական աշխատանքները
- 2) Մրցույթներն ու պայմանագրային փաստաթղթերը պատրաստելու համար չի հատկացվել բավարար ժամանակ և որպես հետևանք, աշխատանքներն սկսվեցին պլանավորվածից ավելի ուշ և ընկան արդեն եղանակային ավելի վատ շրջան: Այլ կերպ ասած, մրցույթներն անհրաժեշտ է անցկացնել փետրվար-հունվար ամիսներին
- 3) Համապատասխան ու բավարար երաշխիքների դիմաց կանխավճարները պետք է կապալառուներին տրվեն այն նյութերը գնելու համար, որոնց գների տատանումների հավանականությունը բարձր է (օրինակ, բիտումը)
- 4) Հաշվետվությունների վիճակը խնդրահարույց է: Բացի այդ, մարզպետարանին լիարժեք տեղեկատվություն չի տրամադրվում դոնորների և հասարակական կազմակերպությունների գործունեության մասին:

664. 2010-2013թթ մարզային զարգացման ծրագրով նախատեսվում է համապատասխան ֆինանսավորման դեպքում մարզի տարածքում նորոգել 1063.4 կմ ընդհանուր երկարությամբ միջպետական, հանրապետական, մարզային և համայնքային նշանակության ճանապարհներ, բարելավել ճանապարհների պահպանությունը և շահագործումը, կառուցել Նորաշենիկ-Աղվանի-Տաթև-Լծեն-Որոտան(Սիսիան)-Նորավան-Մ2 60կմ երկարությամբ ճանապարհը: Մարզային նշանակության ճանապարհների հիմնական նորոգումների, շահագործման, պահպանման, ձմեռային պահպանության համար 2010-2013թթ. անհրաժեշտ է 6530600.0 հազ.դրամ, համայնքային նշանակության ճանապարհների հիմնանորոգման համար՝ 3278154.0 հազ. դրամ:

Աղյուսակ 10.1. ՀՀ կառավարության 2008թ. հունվարի 10-ի N112-Ն որոշմամբ ՀՀ Սյունիքի մարզային նշանակության կարգավիճակ ստացած ճանապարհների, ինչպես նաև ՀՀ Սյունիքի մարզային նշանակության ճանապարհների նկարագիրը՝ ըստ տարածաշրջանների

ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

| Հ/հ                        | Ծրագրի անվանումը          | Ծրագրի իրականացման անհրաժեշտության հիմնավորումը  | Ծրագրով նախատեսվող աշխատանքների համառոտ նկարագիրը   |
|----------------------------|---------------------------|--|---|
| <b>ԿԱՊԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ</b>  |                           |  |   |
| 1                          | Հ-77 Կապան-Գեղանուշ       | Սահմանամերձ այս գյուղերը տանող ճանապարհի առանձին հատվածներ պատերազմական գործողություններից և ռազմական տեխնիկայի հաճախակի տեղաշարժերից դարձել են խիստ դժվարանցանելի և դժվարություններ ստեղծել հասարակական տրանսպորտի աշխատանքների կազմակերպման համար: | 6կմ երկարությամբ ճանապարհի առանձին հատվածներում պետք է իրականացվեն հիմնանորոգման աշխատանքներ: Ճանապարհի առանձին հատվածներում պետք է իրականացվեն հակասողանքային միջոցառումներ  |
| 2                          | Հ-74 Մ-2-Կաղնուտ          | Սահմանամերձ այս գյուղ տանող ճանապարհը պատերազմական գործողություններից և տեղի ունեցած հեղեղներից դարձել է անբարեկարգ ու դժվարանցանելի   | 8.4կմ երկարությամբ ճանապարհի առանձին հատվածներ ունեն հիմնանորոգման անհրաժեշտություն:  |
| 3                          | Հ-78 Մ-2-Գեղի             | Սահմանամերձ ու ծայրամասային այս լեռնային գյուղի ճանապարհի վրա տարիներ շարունակ ծախսեր չանելու և և տեղի ունեցած հեղեղների հետևանքով այն դարձել է դժվարանցանելի:   | 8.0 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհը ունի հիմնանորոգման կարիք  |
| <b>ԳՈՐԻՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ</b>  |                           |  |   |
| 1                          | Հ-70 Մ-2 - Բարձրավան      | Սահմանամերձ ու ծայրամասային այս լեռնային գյուղի ճանապարհի վրա տարիներ շարունակ ծախսեր չանելու հետևանքով այն դարձել է դժվարանցանելի:  | 7.7 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհը հիմնանորոգման կարիք ունի: Անհրաժեշտ է իրականացնել սև կոպճային ծածկի վերականգնման, ինչպես նաև հեղեղներից ճանապարհի առանձին հատվածների փլուզումների հետևանքով վերացման աշխատանքներ: |
| 2                          | Տ-8-19 Մ-2-Քարահունջ-Հ-46 | Այս ճանապարհի վրա տարիներ շարունակ պահպանման ծախսեր չանելու հետևանքով դարձել է խիստ անբարեկարգ:  | 8.7կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհի վրա անհրաժեշտ է իրականացնել ա/բ ծածկի նորոգման աշխատանքներ:  |
| 3                          | Հ-67- Մ -12-Խնձորեսկ      | Սահմանամերձ այս գյուղեր տանող ճանապարհը խիստ քարուքանդ է եղել պատերազմական գործողությունների և ռազմական տեխնիկայի հաճախակի տեղաշարժերի հետևանքով:  | 3.5 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհի առանձին հատվածներ հիմնանորոգման խիստ կարիք ունեն  |
| <b>ՄԻՍԻԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ</b> |                           |  |   |
| 1                          | Տ-8-1 Մ-2 - Սիսիան        | Այս ճանապարհների վրա տարիներ շարունակ պահպանման ծախսեր չանելու հետևանքով դրանք դարձել են խիստ անբարեկարգ: Ա/Բ ծածկի առանձին հատվածներ քարուքանդ են եղել դժվարություններ ստեղծել հասարակական տրանսպորտի աշխատանքի համար:                              | 4.6 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհի առանձին հատվածներում անհրաժեշտ է իրականացնել ա/բ ծածկի և սև կոպճային ծածկի վերականգնման և հիմնանորոգման աշխատանքներ:  |

|                           |                         |   |  |
|---------------------------|-------------------------|---|--|
| 2                         | Հ-56 Սիսիան-Թասիկ-Արևիս | Այս ճանապարհների վրա տարիներ շարունակ պահպանման ծախսեր չանելու հետևանքով դրանք դարձել են խիստ անբարեկարգ: Ա/Բ ծածկի առանձին հատվածներ քարուքանդ են եղել դժվարություններ ստեղծել հասարակական տրանսպորտի աշխատանքի համար: | 15.0կմ ընդհանուր երկարությամբ այս ճանապարհներն ունեն հիմնանորոգման խիստ անհրաժեշտություն:  |
| <b>ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ</b> |                         |   |  |
| 1                         | Տ-8-34 Մ-2-Կալեր        | Ծայրամասային գյուղի ամրապնդում: Ծանապարհների անբարեկարգությունը խանգարում է հասարակական տրանսպորտի աշխատանքների կազմակերպմանը:  | Պ/խճուղուց դեպի այդ գյուղը տանող 12.5կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհների վրա տարիներ շարունակ պահպանման ծախսեր չանելու հետևանքով դրանք դարձել են խիստ անբարեկարգ: |

665. ՄԶԾ կարևոր խնդիրներից է Սյունիքի մարզի օդանավակայանների հնարավոր շահագործման ուսումնասիրությունների հարցը և դրանց վերագործարկումը: Մարզում նախկինում շահագործվել են քաղաքացիական ավիացիայի չորս օդանավակայաններ՝ «Սիսիան», «Գորիս», «Կապան» և «Մեղրի», որոնցից երեքը պատկանում են ՀՀ պաշտպանության նախարարությանը և միայն «Կապան» օդանավակայանը հանձնված է Կապանի քաղաքային համայնքին: Մարզի օդանավակայանների շահագործումը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում Փոքր ավիացիայի զարգացմանը և երկրի համար ունի ռազմավարական նշանակություն: Այն կապահովի մարզի ներգրավումը նոր տեխնիկական միջոցների շահագործման և տեխնոլոգիաների ներդրման գործում, կնպաստի տնտեսական զարգացմանն ու ինտեգրմանը և կմեծացնի մարզի դինամիկ կապվածությունը մայրաքաղաքի հետ: Մարզի օդանավակայանները երկար տարիներ չեն շահագործվել և դրանց վերագործարկման ու արդիականացման համար անհրաժեշտ կլինեն ֆինանսական ներդրումներ: Միևնույն ժամանակ, զբոսաշրջության զարգացման նպատակով մարզի պատմամշակութային հուշարձանների հարակից տարածքներում համապատասխան ուսումնասիրություններ կատարելուց հետո, կարող են ստեղծվել նաև գրունտային աերոդրոմներ և թռիչքային հրապարակներ, որոնք հնարավորություն կտան խթանելու զբոսաշրջային ոլորտի արդյունավետ գործունեությունը:

666. Ծրագրավորվող տարիների ընթացքում և դրանից հետո Սյունիքի մարզում նախատեսվում է տրանսպորտային ենթակառուցվածքների լայնածավալ շինարարություն: Այսպես՝ Հայաստանի և Իրանի միջև 2009-2013թթ. ընթացքում նախատեսվում է կառուցել ուղիղ երկաթգիծ, որի իրականացման համար իրանական կողմը նախատեսում է տրամադրել 400 մլն դոլարի վարկ: Միաժամանակ նշված տարիներին Հայաստանում Ասիական զարգացման բանկի վարկավորմամբ նախատեսվում է իրագործել «Հյուսիս-Հարավ» մայրուղու աշխատանքները: Այս նախագծերի իրականացման արդյունքում կապահովվեն տարանցիկ հնարավորություններ: Ծանապարհաշինության՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման վերաբերյալ տվյալները ներկայացված են [Հավելված 11.1-1](#)-ում: Համաշխարհային Բանկի միջոցների հաշվին նախատեսվում է 2010-2012 թվականներին իրականացնել շուրջ 17.9 մլն ԱՄՆ դոլարի ( մոտ՝ 6.623 մլրդ դրամ) ֆինանսավորում ([Հավելված 11.1-2](#)): Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման դեպքում Համաշխարհային Բանկի միջոցների հաշվին նախատեսվում է իրականացնել նաև Ա/ճ Մ-2, Երևան-Գորիս-Մեղրի-Իրանի սահման կմ182+000-կմ191+000 (գ.Սառնակունքից մինչև գ.Սպանդարյան)՝ 9 կմ, Ա/ճ Մ-2, Երևան-Գորիս-



Մեղրի-Իրանի սահման կմ196+000-կմ215+800 (գ.Անգեղակոթից մինչև Գորիսի տարածաշրջ. չհասած 4 կմ)՝ 19.8 կմ, Ա/Ճ Մ-2, Երևան-Գորիս-Մեղրի-Իրանի սահման կմ224+220-կմ235+350 (գ.Հարժիսի խաչմերուկից մինչև Մ-12 սկիզբը)՝ 11.13 կմ ճանապարհների վերանորոգման աշխատանքներ: Համապատասխան ֆինանսավորման դեպքում կվերանորոգվի Ագարակ-Կարճևան 4.01 կմ երկարությամբ ճանապարհը, որի արժեքը գնհատվել է 228.0 մլն. դրամ:

### 11.3 Զրամատակարարում

667. Խմելու ջրի աղբյուրներից անվտանգ ու մատչելի օգտագործելու խնդիրը ոչ միայն Հազարամյակի զարգացման նպատակների և ԿԶԾ-ի կարևոր թիրախներից մեկն է, այլև մարդկային աղքատության հաղթահարման գործոններից է:

668. Զրամատակարարումը մարզում իրականացվում է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Խմելու ջուրը ռազմավարական ռեսուրս է, որը չի մատակարարվում շատ համայնքներում, չնայած որ մարզի շատ բնակավայրերում գոյություն ունեն ջրի բնական պաշարներ: Այսպիսով՝ ջրամատակարարման ոլորտի խնդիրը կապված է ոչ թե ջրի պակասի, այլ հետևյալ խնդիրների հետ.

- 1) ջրամատակարարման համակարգերի հնամաշուքություն և քայքայվածություն, պահպանման և վերականգնման համար անհրաժեշտ ռեսուրսների բացակայություն, որը բերում է արտահոսքի ու կորուստների (հատկապես ներբնակավայրերի ցանցերում)
- 2) համայնքների կողմից ուշադրության պակաս
- 3) գանձումների ցածր մակարդակ
- 4) ջրի որակի խնդիրներ
- 5) ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման համակարգերի անբավարար վիճակի կամ դրանց բացակայությունը:

669. Կարիքների, արդյունավետության ու ընթացիկ վիճակի վերլուծության համար հաշվի են առնվել հետևյալ ցուցանիշները.

- 1) տեխնիկական և տնտեսական տվյալներ
- 2) հիդրոտեխնիկական կառույցների վերաբերյալ տվյալներ (ծավալ, հզորություններ և այլն)
- 3) ջրագծերի վերաբերյալ տվյալներ (երկարություն, ինժեներական պարամետրեր)
- 4) կարիքեր (օրական ծավալներ՝ խմելու և ոռոգման ջրի համար)
- 5) սակագներ
- 6) ջրի որակական հատկանիշներ
- 7) ջրահեռացման ծավալներ:

670. Մատակարար-սպառող և ներդնող-շահառու փոխհարաբերությունները ճիշտ պատկերացնելու համար կարևոր է ճիշտ գնահատել փոքր համայնքների կարիքները և դրանցում ներդրումների տնտեսական նպատակահարմարությունը:

671. Ոլորտի քաղաքականությունը հիմնականում ուղղված է բնակչությանը հասանելի, մատչելի և որակյալ խմելու ջուր մատակարարելու խնդրին, որը ուղղակիորեն կնպաստի աղքատության կրճատմանը մարզում: Հետևաբար, ոլորտում անհրաժեշտ են զգալի ներդրումներ, ներառյալ ջրամատակարարման առկա համակարգերի պահպանման և վերականգնման, ոլորտում գործող ընկերությունների կառավարման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև ջրամատակարարման համակարգերի բարելավման և արդիականացման համար անհրաժեշտ

Ֆինանսավորումը: Այնուամենայնիվ, սակագնային քաղաքականություն մշակելիս պետք է խուսափել սակագների և սպառողական վարձերի չափազանց բարձրացման միջոցով կապիտալ ներդրումների ծախսածածկումից: Կապիտալ ծախսերը հիմնականում պետք է իրականացվեն պետության կողմից՝ պետական ներդրումային ծրագրերի միջոցով:

672. Ջրամատակարարող ընկերությունների կառավարման համակարգի բարելավումը նույնպես կնպաստի մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը: Այդ ընկերությունների ֆինանսական կենսունակությունը պայմանավորված է շահագործման ծախսերի արդյունավետությամբ և վճարների հավաքագրման մակարդակի բարելավմամբ: Բացի այդ անհրաժեշտ է նաև նվազեցնել ջրի կորստի մակարդակը, որը հիմնականում ջրամատակարարման ցանցերի անմխիթար վիճակի հետևանքն է: Ջրի հաշվառման անկատար համակարգի բարելավումը նույնպես հանդիսանում է ոլորտի քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը:

673. ԿԶԾ-ն կարևորում է խմելու ջրի մատչելիության և հասանելիության, ինչպես նաև ջրի որակի խնդիրները, որոնք էապես ազդում են բնակչության կենսամակարդակի վրա: Մարզի 7 քաղաքային և 102 գյուղական համայնքներից միայն 6 քաղաքային (Կապան, Գորիս, Սիսիան, Քաջարան, Մեղրի, Ագարակ) և 13 գյուղական (Սյունիք, Աճառան, Քարահունջ, Հարթաշեն, Շինուհայր, Խոտ, Հարժիս, Հալիձոր, Ույծ, Աշոտավան, Իշխանասար, Սպանդարյան, Կարճևան) համայնքներն են խմելու ջուրը ստանում կենտրոնացված ջրամատակարարման համակարգերից, որտեղ սահմանված կարգով կատարվում է ջրի վարակազերծում: Մյուս բնակավայրերի, հատկապես գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերը հանդիսանում են համայնքային սեփականություն և գտնվում են խիստ անբարվոք ու մաշված վիճակում, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում բնակչությանը ստանդարտներին համապատասխան որակյալ ջրամատակարարման հարցում: Գլխամասային կառույցները չունեն սանիտարական պահպանման գոտիներ, բնակչությանը տրվող ջուրը հիմնականում չի վարակազերծվում: Սյունիքի մարզի գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունների 12.5%-ը չունեն ջրի ծորակ տանը կամ տան բակում և օգտվում են ընդհանուր ծորակից: Մարզի 65 համայնքներ կարիք ունեն խմելու ջրամատակարարման ցանցերի հիմնանորոգման և ՕԿԶ-ների կառուցման (Աղյուսակ 10.2):

Աղյուսակ 10.2. Սյունիքի մարզում խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման միջոցառումների ծրագիր 2010-2013թթ.

| ՀՀ   | Միջոցառման անվանումը                            | Երկարությունը<br>(կմ) | Խողովակի<br>տրամագիծը<br>(մմ)<br>ՕԿԶ-ի ծավալը<br>(խմ) | Բնակչության<br>թիվը |
|--|---|-----------------------|---|---------------------|
| 1  | 2   | 3                     | 4   | 5                   |
|  | Ընդամենը, այդ թվում                             | -                     | -   | -                   |
| «Հայջրնուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող |   |                       |   |                     |
| 1  | Կապան քաղաքի ներհամայնքային ցանցի հիմնանորոգում | 21,5                  | 75-300մմ, 2000խմ                                      | 45600               |
| 2  | Սյունիք գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում     | 3,0                   | 100,0մմ   | 1256                |

ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

|                                      |  |      |          |       |
|--------------------------------------|--|------|----------|-------|
| 3                                    | Գորիս քաղաքի ներքաղաքային ցանցի վերակառուցում, գոտիավորում | 21,0 | 75-300մմ | 23100 |
| 4                                    | Քարահունջ գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում              | 11,0 | 89,0մմ   | 1302  |
| 5                                    | Հարթաշեն գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում               | 4,0  | 89,0մմ   | 775   |
| 6                                    | Խոտ գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                    | 5,0  | 76,0մմ   | 1029  |
| 7                                    | Շինուհայր գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում              | 34,0 | 100մմ    | 2898  |
| 8                                    | Կարճևան գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                | 1,5  | 76,0մմ   | 273   |
| <b>Համայնքների կողմից սպասարկվող</b> |  |      |          |       |
| 1                                    | Քաջարան քաղաքի ներհամայնքային ցանցի հիմնանորոգում          | 1,0  | 100,0մմ  | 8500  |
| 2                                    | Չայքենո գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                | 5,0  | 50,0մմ   | 36    |
| 3                                    | Փայահան գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                | 5,0  | 50,0մմ   | 33    |
| 4                                    | Խորձոր գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                 | 1,5  | 76,0մմ   | 19    |
| 5                                    | Ն. Գյողաքլու գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում           | 1,5  | 76,0մմ   | 112   |
| 6                                    | Տանձավեր գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում               | 1,9  | 76,0մմ   | 208   |
| 7                                    | Քաջարան գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                | 0,5  | 76,0մմ   | 190   |
| 8                                    | Խդրանց գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                 | 3,6  | 76,0մմ   | 58    |
| 9                                    | Ագարակ գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                 | 1,5  | 76,0մմ   | 179   |
| 10                                   | Ճակատեն գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                | 7,0  | 76,0մմ   | 142   |
| 11                                   | Վ. Գյողաքլու գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում           | 5,0  | 76,0մմ   | 107   |
| 12                                   | Եղեգ գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                   | 1,0  | 50,0մմ   | 117   |
| 13                                   | Գեղանուշ գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում               | 2,0  | 100,0մմ  | 297   |
| 14                                   | Գոմարան գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                | 5,5  | 76,0մմ   | 60    |
| 15                                   | Կաղնուտ գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                | 2,0  | 76,0մմ   | 93    |
| 16                                   | Չափնի գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                  | 2,5  | 76,0մմ   | 59    |
| 17                                   | Արծվանիկ գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում               | 3,5  | 76,0մմ   | 567   |
| 18                                   | Դավիթբեկ գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում               | 11,0 | 100,0մմ  | 813   |
| 19                                   | Վ. Խոտանան գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում             | 1,0  | 76,0մմ   | 193   |
| 20                                   | Ծավ գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                    | 4,0  | 76,0մմ   | 118   |
| 21                                   | Շիշկերտ գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                | 2,0  | 76,0մմ   | 258   |
| 22                                   | Ն. Հանդ գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                | 1,2  | 76,0մմ   | 75    |

ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

|    |   |      |                           |      |
|----|---|------|---------------------------|------|
| 23 | Եղվարդ գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                          | 3,7  | 76,0մմ                    | 268  |
| 24 | Սևաքար գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                          | 1,0  | 76,0մմ                    | 98   |
| 25 | Գեղի գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                            | 1,0  | 76,0մմ                    | 146  |
| 26 | Սրաշեն գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                          | 3,0  | 76,0մմ                    | 92   |
| 27 | Մուսալամ գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                        | 1,2  | 76,0մմ                    | 79   |
| 28 | Լեռնաձոր գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                        | 1,0  | 76,0մմ                    | 356  |
| 29 | Տեղ գյուղի խմելու ջրի ներքին ցանցի կառուցում                        | 1,5  | 75-100մմ<br>700խմ և 300խմ | 2510 |
| 30 | Խոզնավար գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                        | 3,6  | 76,0մմ                    | 413  |
| 31 | Խնձորեսկ գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                        | 6,0  | 76,0մմ                    | 2146 |
| 32 | Որոտան գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                          | 1,1  | 89,0մմ                    | 291  |
| 33 | Վաղատուր գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                        | 3,6  | 76,0մմ                    | 469  |
| 34 | Քարաշեն գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                         | 0,5  | 89,0մմ                    | 635  |
| 35 | Բարձրավան գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                       | 38,0 | 89,0մմ                    | 209  |
| 36 | Արավուն գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                         | 6,0  | 100,0մմ                   | 209  |
| 37 | Կոռնիձոր գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                        | 11,5 | 100,0մմ                   | 1297 |
| 38 | Շուռնուխ գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                        | 7,0  | 76,0մմ                    | 208  |
| 39 | Խնածախ գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                          | 8,2  | 76,0մմ                    | 1100 |
| 40 | Թանասհատ գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                        | 2,4  | 76,0մմ                    | 465  |
| 41 | Մուցք գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                           | 4,0  | 100,0մմ                   | 375  |
| 42 | Սալվարդ գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                         | 3,7  | 76,0մմ                    | 401  |
| 43 | Շաղատ գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                           | 3,7  | 76,0մմ                    | 1191 |
| 44 | Արևիս գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                           | 1,6  | 76,0մմ                    | 141  |
| 45 | Սոֆլու գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                          | 7,0  | 76,0մմ                    | 143  |
| 46 | Ցղունի գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                          | 4,2  | 76,0մմ                    | 58   |
| 47 | Թասիկ գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                           | 9,6  | 76,0մմ                    | 294  |
| 48 | Մեղրի քաղաքի Արաքսաշեն թաղամասի խմելու արտաքին ջրագծի հիմնանորոգում | 8,0  | 100,0մմ                   | 4800 |
| 49 | Ագարակ քաղաքի ներհամայնքային ցանցի հիմնանորոգում                    | 10,5 | 76,0-200,0մմ              | 4800 |
| 50 | Լիճք գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում                            | 1,8  | 76,0մմ                    | 144  |

|    |  |     |        |     |
|----|--|-----|--------|-----|
| 51 | Վահրավար գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում   | 2,1 | 76,0մմ | 55  |
| 52 | Շվանիձոր գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում   | 1,1 | 76,0մմ | 282 |
| 53 | Տաշտուն գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում    | 0,8 | 76,0մմ | 137 |
| 54 | Վարդանիձոր գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում | 9,2 | 76,0մմ | 285 |
| 55 | Մարալզամի գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում  | 3,0 | 76,0մմ | 102 |
| 56 | Լեհվազ գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում     | 1,3 | 76,0մմ | 571 |
| 57 | Գուղենմիս գյուղի արտաքին ջրագծի հիմնանորոգում  | 1,1 | 76,0մմ | 40  |

674. Մարզի բնակավայրերի և հիմնականում գյուղական բնակավայրերի խմելու ջրամատակարարման ցանցերի հիմնանորոգման, ջրահեռացման ցանցերի /կոյուղագծերի/, կոյուղագծերի մաքրման ավազանների /սեպտիկների/ կառուցման համար կպահանջվի 16813.5 մլն. դրամ ([Հավելված 11.2](#)): 2009 թվականի ՀՀ պետական բյուջեով 245,0 մլն. դրամ է նախատեսված Տեղ գյուղի խմելու ջրի ներքին ցանցի կառուցման նպատակով, որի շրջանակներում կհիմնանորոգվի 15կմ ջրագիծ և կկառուցվի 700 ու 300 խմ տարողությամբ երկու ՕԿՁ: Վերոնշյալ ներդրումները հնարավորություն կստեղծեն համայնքի ջրամատակարարման համակարգը շահագործման հանձնել «Հայջրնուղկոյուղի» ՓԲԸ-ին, որը թույլ կտա առավել արդյունավետ կազմակերպել բնակչության խմելու ջրի մատակարարման գործը:

675. ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի տնօրինության տակ գտնվող վարկային ծրագրերով Ասիական զարգացման բանկի կողմից իրականացվող ծրագրով նախատեսվում է մարզի 27 բնակավայրերում 3.4 մլն. ԱՄՆ դոլարի չափով ջրամատակարարման բարելավմանն ուղղված աշխատանքներ իրականացնել: Բացի նշված վարկային ծրագրից, Կապան քաղաքի ջրամատակարարման բերալավման աշխատանքները ներգրավված են Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի կողմից իրականացվելիք ծրագրի նախնական ցանկում:

#### 11.4. Գազամատակարարում

676. Սյունիքի մարզի 113 բնակավայրերից գազիֆիկացված է ընդամենը 29 բնակավայր: Գազիֆիկացումը մարզի զարգացման կարևոր նախապայմաններից մեկն է: Երկարատև ձմեռները և այլընտրանքային էներգիայի աղբյուրների բացակայությունը ընդգծում են բնական գազի մատակարարման հրատապությունը համայնքների համար: Համայնքներում գերակայություն է համարվում գազամատակարարման ցանցի կառուցումը: Այսօր «Հայմուսգազարդ»-ի ներդրումները բավարար չեն ապահովելու համար գազամատակարարումը նույնիսկ հիմնական գազատարին կից համայնքներում, քանի որ նման միացումները փոքր համայնքներին տնտեսապես ձեռնտու չեն:

677. Գազի առկայությունը յուրաքանչյուր տնային տնտեսությունում հնարավորություն կտա տնտեսել տարեկան շուրջ 10-12մ<sup>3</sup> վառելիքայտ, որն իր հերթին, նշանակում է շրջակա միջավայրի էկոհամակարգի բարելավում: Համապարփակ ներդրումային պլանների միջոցով որոշ համայնքներ համակարգին

կարող են միանալ ոչ մեծ կապիտալ ծախսերի շնորհիվ:

678. Գազամատակարարման ոլորտում իրականացվելիք ներդրումային քաղաքականությունը պետք է ուղղված լինի գազամատակարարման հասանելիության աստիճանի բարձրացմանը: Մարզում արդեն աշխատանքներ են իրականացվել բազմաբնակարան շենքերում լոկալ ջեռուցման համակարգերի տեղադրման ուղղությամբ: Գազամատակարարման համար կատարվող շահագործման և պահպանման բոլոր ծախսերը փոխհատուցվելու են սպառողների կողմից: Բազմաբնակարան շենքերի արդյունավետ կառավարումը նույնպես կարևոր հարց է ջերմամատակարարման ծառայությունների հասանելիության և արդյունավետության բարելավման առումով:

679. Չնայած բաժանորդների թիվը 01.01.2009թ. դրությամբ խորհրդային տարիների համեմատ աճել է 40,5%-ով, կամ նախկինում 15321-ի դիմաց այն կազմել է 21536 բաժանորդ, մարզում բնակավայրերի գազիֆիկացումն իրականացվում է դանդաղ տեմպերով:

680. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի սեպտեմբերի 6-ի «Գումար հատկացնելու մասին» N997-Ա որոշմամբ ՀՀ Սյունիքի մարզպետարանին հատկացված միջոցների հաշվին 90.0 մլն. դրամի աշխատանքներ են կատարվել Արավուս ու Խնածախ գյուղերի գազիֆիկացման նպատակով: Արավուս գյուղի գազիֆիկացումն ավարտվել է, իսկ Խնածախ գյուղի գազիֆիկացման աշխատանքներն ավարտելու համար անհրաժեշտ է կատարել ևս 185.0 մլն. դրամի շինմոնտաժային աշխատանքներ: ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով վերոհիշյալ նպատակի համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

681. Իրականացվել է Իրան-Հայաստան գազամուղի շինարարությունը երկու փուլով՝ Մեղրի-Քաջարան (40կմ) հատված և Քաջարան-Արարատ (187կմ) հատված: Ներկայումս գազամուղը պատրաստ է Իրանից գազի ընդունմանը:

682. ՄԶԾ-ով նախատեսվում է գազիֆիկացման աշխատանքներ իրականացնել մարզի 32 բնակավայրերում, այդ թվում Մեղրի և Ագարակ քաղաքներում: Գազիֆիկացման համար նախատեսվում է 2010-2013 թվականներին կատարել 6697.0 մլն. դրամի ներդրումներ ([Հավելված 11.3](#)):

683. Ամփոփելով ենթակառուցվածքների բաժինը՝ անհրաժեշտ է նշել, որ միջոցների անբավարության պատճառով ենթակառուցվածքների վերականգնումն ու պահպանումը լայնածավալ չեն եղել, այնպես որ շահառուների պատկերացմամբ ներդրումների ազդեցությունը բավարար չի եղել ծառայությունների կենսունակությունն ապահովելու համար: Հետևաբար, հետագա ծրագրերով նախատեսվող միջոցառումները մանրակրկիտ կուսումնասիրվեն առավելագույնի հասցնելու համար իրականացվող միջոցառումների ազդեցությունը և մատուցվող ծառայությունների որակը:

684. Համայնքների մասնակցությունը մոնիտորինգի գործընթացներում, տեղական փորձի ու գիտելիքների օգտագործումն ու, որոշ դեպքերում, նրանց նպատակային մասնակցությունը կարող են շատ արժեքավոր լինել հատկապես այն դեպքերում, երբ խոսքը գնում է տվյալ համայնքի կողմից առաջադրված միջոցառման իրականացման աշխատանքներին:

## 12. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱՎՎՈՒԹՅՈՒՆ

### 12.1. Տարածքային կառավարում

#### 12.1.1. Վարչատարածքային բաժանում

685. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման ներկա համակարգը սահմանվել է 1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված և 2005 թվականի նոյեմբերի 27-ին որոշակի փոփոխությունների ենթարկված Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ: Համաձայն ՀՀ Սահմանադրության 11.1-րդ հոդվածի՝ ՀՀ վարչատարածքային միավորներն են մարզերն ու համայնքները: Սահմանադրության 82-րդ հոդվածի համաձայն Ազգային ժողովը կառավարության առաջարկությամբ սահմանում է Հանրապետության վարչատարածքային բաժանումը, իսկ 83.5-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորները և դրանց սահմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով: Սահմանադրության համաձայն, 1995թ. նոյեմբերի 7-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքը: Գորիսի, Կապանի, Մեղրու և Սիսիանի նախկին վարչական 4 շրջանների միավորումից ձևավորվեց ցամաքային տարածքով Հայաստանի Հանրապետության ամենամեծ մարզը՝ Սյունիքի մարզը, որը սկզբում ընդգրկում էր 113 համայնք, այնուհետև «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում կատարված վերջին փոփոխությունների արդյունքում ունի 109 համայնք, որից 7-ը՝ քաղաքային և 102-ը՝ գյուղական ([Հավելված 12.1](#)):

686. ՀՀ Սահմանադրության 88.1-րդ հոդվածի համաձայն, մարզպետները նշանակվում և ազատվում են ՀՀ Նախագահի կողմից վավերացված ՀՀ կառավարության որոշմամբ և իրագործում են կառավարության տարածքային քաղաքականությունը, համակարգում են գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: ՀՀ տարածքային կառավարման գործող համակարգի մեջ, մարզի կտրվածքով, մարզպետից և մարզպետարանից բացի, մտնում են նաև մարզային ենթակայության կազմակերպությունները, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունները: Վերջինները մի կողմից ուղղակիորեն ենթարկվում են համապատասխան վերադաս մարմիններին, մյուս կողմից՝ հանդիսանալով պետական կառավարման մարմիններ, միաժամանակ գտնվում են մարզպետի համակարգման ոլորտում:

#### 12.1.2. Գերակայություններ և հիմնախնդիրներ

687. Տարածքային կառավարման հարաբերություններն առանձին կարգավորող օրենք գոյություն չունի: Հայաստանի Հանրապետության մարզերում, ինչպես նաև Սյունիքի մարզում տարածքային կառավարման ներկա համակարգի օրենսդրական հիմքը կազմում են մի շարք առանցքային իրավական ակտեր, որոնց միջոցով էլ կարգավորվում են այդ հարաբերությունները:

688. Բնագավառում դեռևս չլուծված կարևոր խնդիրներից մեկը մարզպետարանների իրավասությունների հստակ սահմանումն է: Մարզպետների գործունեությունը հիմնականում կարգավորող «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի հրամանագրի համաձայն մարզպետներին իրավասություններ են վերապահված տնտեսական և հասարակական կյանքի տարբեր

ուղորտներում, սակայն դրանց իրականացումը պարզաբանող դրույթների ձևակերպումը հստակ չէ:

689. Հաշվի առնելով խնդրի համապետական բնույթը՝ մարզպետների լիազորությունների հստակ սահմանումը պետք է դիտարկել ընդհանուր օրենսդրության վերափոխման համատեքստում: Անհրաժեշտություն է զգացվում տարածքային կառավարման բնագավառի հարաբերությունների կարգավորումն իրականացնել առանձին օրենքի միջոցով, քանզի օրենքով կարգավորումը կամրապնդի տարածքային կառավարման իրավական հիմքերը, կհստակեցնի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների բաշխումը, թույլ կտա խուսափել կրկնվող գործառույթներից, կապահովի մարզերում սոցիալ-տնտեսական ներդաշնակ զարգացումը:

690. Կարևոր հիմնախնդիրներից է նաև մարզի խորհրդի դերի ակտիվացումը, հաշվի առնելով այն, որ մարզպետարանի և ՏԻՄ-երի միջև տեղեկատվության փոխանակման, առկա հիմնախնդիրների քննարկման, գերակայությունների սահմանման, մարզի բնակչության բոլոր հատվածների հետ անմիջական կապ հաստատելու, ինչպես նաև զարգացման պլանավորման ու ծրագրերի իրականացման հետ կապված գործընթացները քննարկող ու հաստատող կարևոր խորհրդակցական մարմին է /«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 81-րդ հոդվածով նախատեսված է, որ մարզի խորհրդի գործունեությունը կարգավորվում է նաև ՀՀ Նախագահի հրամանագրով/:

691. Տարածքային կառավարման բնագավառում 2010-2013թթ. գործունեության կարևորագույն ուղղություններն են.

- 1) Կանոնակարգել մարզպետարանի, ՏԻՄ-երի, ինչպես նաև ոչ պետական հատվածի փոխհարաբերությունները: Սա ենթադրում է մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքի փոփոխություններ, ստորաբաժանումների գործառույթների, առանձին պաշտոնների անձնագրերի դրույթների հստակեցում, ստորաբաժանումների վերակազմակերպում կամ նոր ստորաբաժանումների ստեղծում, որը պետք է հաշվի առնի երկրում և մարզում տեղի ունեցող հանրային ուղորտի բարեփոխումները և դրանց շրջանակներում տարածքային կառավարման մարմինների գործառույթների արդյունավետ իրականացումը: Քաղաքացիական կամ համայնքային ծառայության անալոգիայով անհրաժեշտ է ունենալ նաև մարզպետի, մարզպետի տեղակալների և այլ հայեցողական պաշտոնների հաստատված անձնագրեր: Իրականում այս պաշտոնների՝ օրենսդրությամբ նախատեսված լիազորությունների, իրավասությունների թվարկումը հենց այդ պաշտոնների անձնագրերի տվյալներն են: Անհրաժեշտ է համակարգել դրանք մեկ փաստաթղթի մեջ
- 2) Մասնագիտական հսկողության արդյունավետ կազմակերպման համար կառավարության կողմից անհրաժեշտ է մշակել և սահմանել պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման կարգերն ու չափորոշիչները, ինչը կնպաստի ինչպես այդ լիազորությունների արդյունավետ իրականացմանը, այնպես էլ դրանց կատարման նկատմամբ պատշաճ հսկողության սահմանմանը
- 3) Վերահսկողության գործառույթի հստակեցմանը զուգահեռ՝ ավելի մեծ կարևորություն տալ մարզպետարանի համակարգման գործառույթին, ելնելով ԿԶԾ-ով ամրագրված զարգացման ու աղքատության հաղթահարման գերակայությունների տրամաբանությունից
- 4) Վերանայել մարզային զարգացման պլանավորման բնագավառում մարզպետարանի գործառույթները, պարտականություններն ու իրավասությունները



- 5) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բնորոշել «Տարածքային կառավարման մարմին» հասկացությունը: Այս բնորոշումը չի հստակեցված: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով նշված է, որ տարածքային կառավարման մարմիններ են մարզպետները և Երևանի քաղաքապետը
- 6) Մշակել մարզպետարանի և մարզում գործող պետական կառավարման մարմինների միջև տեղեկատվական հոսքերի կարգավորման հայեցակարգ, որը թույլ կտա միասնականացնել սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրներին վերաբերող տվյալները, ստեղծել միասնական տվյալների բանկ, որը կհանդիսանա մարզային կյանքի բոլոր բնագավառների համար պաշտոնական տեղեկատվության աղբյուր: Այս ուղղությամբ հատկապես կարևորվում է ԱՎԾ-ի տարածքային ստորաբաժանումների հետ փոխհարաբերությունների արդյունավետության բարձրացումը
- 7) Հստակեցնել, պարզեցնել և արդյունավետ դարձնել մարզպետարանի կողմից ՏԻՄ-երին տրամադրվող մեթոդաբանական օգնությունը, դրա տրամադրման մեխանիզմը
- 8) Մարզային զարգացման գործընթացներում Սյունիքի մարզի խորհրդի դերը բարձրացնելու անհրաժեշտության դեպքում լրացուցիչ օրենսդրական հիմքեր ապահովելու նպատակով, ուսումնասիրել Սյունիքի մարզի խորհրդի գործող իրավասությունների շրջանակը: Սյունիքի մարզպետարանում կուտակվել է մեծ փորձ, որը հիմք է դնում մարզպետարանի և մարզի հասարակության միջև համատեղ գործողությունների իսկապես արդյունավետ իրականացման և դրանց հետագա զարգացման համար
- 9) Մշակել ոլորտային աշխատանքային խմբերի, մարզային զարգացման հանձնաժողովների, մարզի ՓՄՁ ԶՄԽ-ի կազմավորման մեխանիզմները, մշակել և հաստատել նրանց անդամների պարտականությունների և իրավասությունների ցանկը:

### 12.1.3 . Մարզպետարանի կառավարում

692. ՀՀ Սյունիքի մարզպետարանի կազմակերպական կառուցվածքը հաստատված է «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N1795 որոշմամբ /հետագա փոփոխություններով ու լրացումներով/: Նշված որոշման մեջ վերջին փոփոխությունները և լրացումները կատարվել են ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 2-ի N329-Ն որոշմամբ: Համաձայն վերջին փոփոխությունների՝ ներկայումս ընթանում է մարզպետարանի կազմակերպչական նոր կառուցվածքի ձևավորումը, որը կունենա [Հավելված 12.2](#)-ում ներկայացված տեսքը:

693. Մարզպետարանի գոյություն ունեցող կառավարման կազմակերպական կառուցվածքը հնարավորություն չէր տալիս ամբողջությամբ լուծելու առկա հիմնախնդիրները և արդյունավետ կերպով իրականացնելու մարզպետի լիազորությունները: Հասարակական հարաբերությունների անընդհատ փոփոխությունները և պետական կառավարման համակարգում իրականացվող բարեփոխումները թելադրեցին այդ կառավարման կազմակերպական կառուցվածքի վերափոխություններ:

694. Հետագայում այս փոփոխությունների դիմամիկան կարող է շարունակվել, քանի որ համակարգը պետք է հարմարեցվի գոյություն ունեցող զարգացումներին:

Կառուցվածքային փոփոխությունները պետք է դիտարկել օպտիմալության, ընդհանուր մոտեցումների պահպանման և աշխատանքների ռացիոնալ կազմակերպման տեսանկյունից:

695. Մարզի զարգացման ծրագրի իրականացումը դիտարկելու և հսկելու համար մարզպետարանում ձևավորվում է մոնիտորինգի և գնահատման համակարգ: ՄԳ համակարգը մանրամասնորեն ներկայացված է ՄԶԾ-ի «Մոնիտորինգի և գնահատման համակարգ» բաժնում:

696. Պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով կարևոր է նաև մարզպետարանի և նրանում յուրաքանչյուր աշխատատեղի համապատասխանեցումը ժամանակակից չափանիշներին՝ հագեցնելով մարզպետարանը համապատասխան տեխնիկայով, համակարգչային ծրագրերով և տեղեկատվության ստացման ժամանակակից միջոցներով: Վերջինս ենթադրում է նաև նոր որակական պահանջներ մարզպետարանի աշխատակիցների նկատմամբ, ինչի համար միայն քաղաքացիական ծառայության համակարգի ներդրման շրջանակներում իրականացվող ուսուցումը բավարար չէ: Այս նպատակին կարելի է հասնել նաև լրացուցիչ ուսուցման շնորհիվ:

#### 12.1.4 . Քաղաքացիական ծառայություն

697. Տարածքային կառավարման համակարգի արդյունավետ գործունեության երաշխիքներից մեկը քաղաքացիական ծառայության համակարգն է: Ներկայումս կարելի է արձանագրել, որ այն հիմնականում կայացել է: 2001 թվականից տարածքային կառավարման համակարգում ներդրվեց քաղաքացիական ծառայությունը, որը հնարավորություն տվեց տարանջատելու քաղաքական, հայեցողական և սպասարկող պաշտոնները քաղաքացիական՝ մասնագիտական ծառայողներից, որպես բարձրագույն քաղաքացիական ծառայող ճանաչելով աշխատակազմի ղեկավարներին: «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ դասակարգվեցին և նկարագրվեցին մարզպետարանի, ինչպես նաև հանրապետական գործադիր մարմինների՝ մարզում գործող տարածքային ծառայությունների քաղաքացիական ծառայության բոլոր պաշտոնները: «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի և հարակից ենթաօրենսդրական ակտերի ընդունումը դեռևս առաջին քայլերն են մասնագիտական քաղաքացիական ծառայության կայացման ճանապարհին:

698. Ծառայության մյուս տեսակների համար համապատասխան օրենսդրության ստեղծումը և այդ համակարգերի կայացումը խնդիր է առաջադրում վերանայելու քաղաքացիական, համայնքային և ընդհանրապես հանրային ծառայության հայեցակարգը: Ներկայումս անհրաժեշտ է ապահովել այդ ծառայությունների միջև ներդաշնակեցումը, ձևավորել կապ՝ ծառայության մեկ տեսակից մյուսին անցնելու համար: Այս իրավիճակը պահանջում է հանրային ծառայության մասին օրենսդրության ստեղծում՝ ապահովելով հանրային ծառայության միասնական սկզբունքներ: Այս ենթատեքստում անհրաժեշտ է ունենալ նաև պետական ծառայության համակարգի ամբողջական նկարագիրը, որտեղ նաև պետք է սահմանվեն քաղաքական և հայեցողական պաշտոնյաներին ներկայացվող պահանջները: Դրա հետ կապված՝ նախատեսվում է ընդունել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որն այս ոլորտում կամբողջականացնի իրավական դաշտը: Այս կարգավորումը հնարավորություն կտա նաև ունենալու հստակ դասակարգված պաշտոնյաների ցանկ՝ ըստ ծառայության տեսակների և խմբերի, համապատասխան պաշտոնների անվանումներով: Մասնագիտական պաշտոնները կկապվեն կատարվող աշխատանքի բովանդակության հետ, իսկ նրանց անվանումը կհամապատասխանեցվի կատարվող

աշխատանքի բնույթին: Վարչական պաշտոնները կտարանջատվեն մասնագիտականից, որը հնարավորություն կտա մշակելու անձնակազմի կառավարման տարբերակված քաղաքականություն:

699. Տարածքային կառավարման համակարգի արդյունավետությունը պահանջում է բարելավել մարզպետի և գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը: Մասնավորապես, անհրաժեշտ է նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով, մեխանիզմներ մշակել, համաձայն որոնց գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունները պետք է տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնեն մարզպետին իրենց գործունեության, ինչպես նաև տվյալ ոլորտը բնութագրող ցուցանիշների մասին: Միաժամանակ մարզպետը պետք է հնարավորություն ունենա հանձնարարականներ տալ համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին, ինչը պետք է ամրագրված լինի նրանց պաշտոնների անձնագրերում:

### 12.1.5. Էլեկտրոնային կառավարում

700. Մարզպետարանում իրականացվել են տարածքային էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման աշխատանքներ: Ներկայումս մարզպետարանն ունի էլեկտրոնային կառավարման համակարգ: Հայաստանի տարածքային կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրման արդյունքում Սյունիքի մարզն ինտերնետում ներկայացված է պաշտոնական էջով (<http://syunik.region.am>): Դա հնարավորություն է տալիս որոշակիորեն հրապարակային դարձնել տարածքային կառավարման մարմինների գործունեությունը՝ ապահովելով անհրաժեշտ տեղեկատվություն: Իհարկե, սա միայն առաջին քայլն է, որին պետք է հետևի կայքերում տեղադրված տեղեկատվության անընդհատ թարմացումը, ինչպես նաև համակարգիչներից օգտվելու՝ մարզպետարանի և ներուժային սպառողների գիտելիքների բարձրացումը:

701. Մարզպետարանի աշխատակիցների մեծ մասի համակարգչային ոչ բավարար գիտելիքները հնարավորություն չեն տալիս ամբողջությամբ օգտագործելու գոյություն ունեցող համակարգը: Ընդհանուր առմամբ անհրաժեշտ է վերջնականապես լուծել մարզպետարանի՝ համակարգիչներով և ժամանակակից կապի միջոցներով հագեցվածության հարցը, ստեղծել տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային սպասարկման բնագավառում արհեստավարժ թիմ: Տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացման պայմաններում տեղեկատվության արհեստավարժ ընդունման, ստացման մշակման և փոխանցման անհրաժեշտությունն էլ ավելի է ուժեղանում: Պետական կառավարման ոլորտում ներկայումս տեղեկատվությունը դարձել է հզոր ռեսուրս, որն անհրաժեշտ է ճիշտ կառավարել:

2010-2013 թվականների ընթացքում անհրաժեշտ է.

- 1) Ապահովել մարզպետարանի ֆունկցիոնալ գործունեության ապահովման տեսանկյունից կարևոր, ներքին փաստաթղթաշրջանառության արդյունավետ կազմակերպումը և այդ գործընթացում համակարգչային տեխնոլոգիաների պարտադիր կիրառումը
- 2) Մարզպետարանի պաշտոնական տեղեկատվության շրջանառությունն առավելագույն չափով իրականացնել էլեկտրոնային տարբերակով
- 3) Ունենալ համապատասխան ծրագրային ապահովում, հատկապես լիցենզավորված հակավիրուսային ծրագրեր, որոնք առավել անվտանգ կդարձնեն տվյալների

- պահպանումն ու օգտագործումը, կնվազեցնեն դրանց վնասն ու կորուստը
- 4) Ստեղծել ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային սպասարկման բաժին
  - 5) Մշակել պաշտոնական տեղեկատվության արխիվացման, պահպանման և դրանից հետագայում օգտվելու հստակ մեխանիզմ
  - 6) Քաղաքացիներից ստացվող նամակների գործընթացում կիրառել «Մեկ պատուհանի» սկզբունքը, ինչը հնարավորություն կտա առավել արդյունավետ դարձնել հատկապես բնակչության հետ մարզպետարանի փոխհարաբերությունները
  - 7) Ստեղծել միասնական տեղեկատվական ցանց Սյունիքի մարզի համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների և մարզպետարանի միջև
  - 8) Մարզին առնչվող մի շարք գործընթացներ, այդ թվում նաև գնումների գործընթացը կազմակերպել էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով:

702. Էլեկտրոնային կառավարման բնագավառում Սյունիքի մարզպետարանում որոշակի քայլեր արդեն արվել են: Առկա է տվյալների որոշակի բազա, որը սակայն կարիք ունի համակարգման, տվյալների թարմացման, ինչպես նաև դրանից օգտվելու մեխանիզմների մշակման: Հաշվի առնելով տվյալների բազայի կենսունակության, ինչպես նաև բազայում պարունակվող տվյալների արդիականության ապահովման անհրաժեշտությունը, պետք է կարգավորել նաև տվյալների բազայի համալրման խնդիրները: Փաստորեն, տվյալների բազան անհրաժեշտ է վերածել տվյալների բանկի:

703. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի թիվ 40-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2009 թվականի գերակա խնդիրների ծրագրով գերակա խնդիր է համարվել նաև ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը ՀՀ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, որի լուծման քայլ է հանդիսանում էլեկտրոնային փաստաթղթաշարժի «Mulberry» համակարգի ներդրումը ՀՀ մարզպետարաններում, ծրագրերի և փաստաթղթերի կազմումը, համակարգողների և օգտվողների ուսուցումը, շահագործման ընթացքում խորհրդատվությունը, ինտերնետ կապով ապահովված ՀՀ համայնքների թվի մեծացումը, այդ համայնքների կայքերում ավագանիների որոշումների տեղադրման գործընթացի վերահսկողությունը:

## 12.2. Տեղական ինքնակառավարում

### 12.2.1. Համայնքային խնդիրներ

704. Համաձայն «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի /հետագա փոփոխություններով ու լրացումներով/ Սյունիքի մարզն ունի 135 բնակավայր, որոնք ընդգրկված են 109 համայնքների կազմում: Համայնքների վարչական սահմանների նկարագիրը տրված է ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով: Մարզի 109 համայնքներից 7-ը քաղաքային համայնքներ են, 102-ը՝ գյուղական: Սյունիքի մարզում համայնքներն առավելապես կազմավորվել են «մեկ բնակավայր-մեկ համայնք» սկզբունքով: Մարզի 98 համայնքներ ընդգրկում են մեկական բնակավայր, իսկ 11 համայնքներ՝ 2 կամ ավելի բնակավայր: Համայնքներն ըստ բնակչության թվի ներկայացված են Աղյուսակ 12.1-ում:

**Աղյուսակ 12.1. Սյունիքի մարզի համայնքներն ըստ մշտական բնակչության թվի 2009թ. հունվարի 1-ի դրությամբ**

| Հ.Հ. | Դասակարգում ըստ բնակչության թվաքանակի | Համայնքների թիվը | Տոկոս մարզի համայնքների թվի նկատմամբ | Բնակչության ընդհանուր թիվը տվյալ համայնքներում /մարդ/ | Տոկոս մարզի բնակչության թվի նկատմամբ |
|------|---------------------------------------|------------------|--------------------------------------|---|--------------------------------------|
| 1    | 2                                     | 3                | 4                                    | 5   | 6                                    |
| 1    | Մինչև 100 բնակիչ                      | 17               | 15.6                                 | 1198  | 0.77                                 |
| 2    | 101-200 բնակիչ                        | 22               | 20.2                                 | 3101  | 2.00                                 |
| 3    | 201-500 բնակիչ                        | 34               | 31.2                                 | 10937   | 7.07                                 |
| 4    | 501-1000 բնակիչ                       | 14               | 12.8                                 | 9028  | 5.84                                 |
| 5    | 1001-3000 բնակիչ                      | 16               | 14.7                                 | 27004   | 17.46                                |
| 6    | 3001-5000 բնակիչ                      | 2                | 1.8                                  | 9700  | 6.27                                 |
| 7    | 5001-10000 բնակիչ                     | 1                | 0.9                                  | 8500  | 5.50                                 |
| 8    | 10 000-ից ավելի բնակիչ                | 3                | 2.8                                  | 85200   | 55.09                                |
|      | <b>ԸՆԴՀԱՆՈՒՐ</b>                      | <b>109</b>       | <b>100.0</b>                         | <b>152900</b>   | <b>100.00</b>                        |

Աղբյուրը՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՍԾ գործունեության համակարգման վարչության տվյալներ

705. Ներկայացված աղյուսակի վերլուծությունից պարզվում է, որ մարզի 109 համայնքներից 87-ը, /այդ թվում նաև Դաստակերտի քաղաքային համայնքը/ կամ չուրջ 79.8%-ն ունեն մինչև 1000 բնակիչ, 1001-3000 բնակիչ ունեն 16 համայնքներ կամ մարզի համայնքների 14.7%-ը, 3000-ից ավելի բնակիչ ունեն 6 համայնքներ կամ ընդհանուրի 5.5%-ը:

706. Սյունիքի մարզի համայնքները օրենսդրության շրջանակներում ենթարկվել են նաև որոշակի դասակարգման:

707. Այսպես՝ ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների ցանկը հաստատելու մասին» թիվ 713 որոշմամբ /հետագա փոփոխություններով ու լրացումներով/ հաստատված սահմանամերձ համայնքների (բնակավայրերի) ցանկում Սյունիքի մարզից ընդգրկված է 65 համայնք (86 բնակավայր): ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության բնակավայրերն ըստ բարձունքային միջերի դասակարգելու մասին» թիվ 756 որոշման /հետագա փոփոխություններով ու լրացումներով/ համաձայն մարզում կա 32 լեռնային և 12 բարձր լեռնային բնակավայր: Ընդհանուր առմամբ, մարզի 109 համայնքներից 87-ն ունի սահմանամերձ, բարձր լեռնային կամ լեռնային բնակավայրեր և միայն 22 համայնք չունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված որևէ կարգավիճակ ունեցող բնակավայր /Սյունիքի մարզի համայնքների վերաբերյալ բոլոր տվյալները ներկայացված են հետևյալ հավելվածներում՝ [Հավելված 12.1](#), [Հավելված 12.3](#), [Հավելված 12.4](#), [Հավելված 12.5](#), [Հավելված 12.6](#):

708. Մարզի համայնքներում կարևորագույն խնդիր է համայնքների կարողությունների բարձրացումը: Չնայած համայնքները իրավական հարթության վրա գոյություն ունեցող սուբյեկտներ են. բայց նրանց կարողությունները դեռևս թույլ են և ենթակա են հզորացման:

709. Համայնքների կարողությունների բարձրացման կարևոր նախապայման է դոտացիաների տրամադրումը: Վերջին տարիների դրական տեղաշարժերից մեկն այն է, որ պետական բյուջեով նախատեսված դոտացիաները բոլոր համայնքներին

հատկացվում են 100%-ով: Սակայն չլուծված հիմնախնդիրներից մեկը մնում է համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման ապահովումը:

710. Երկրորդ կարևոր հանգամանքը մարզային և համայնքային մակարդակներում բավարար կարողությունների ապահովումն է կադրերի հարցում, որը թույլ կտա ստանձնել նոր լիազորությունները և առավել արդյունավետ կառավարել տեղերում: Կարողությունների զարգացման մեթոդներից են ուսուցողական դասընթացները, որոնք պետք է կազմակերպվեն տեղական և կենտրոնական մակարդակով կառավարության կամ դոնորների կողմից:

711. Համայնքների բյուջեների հավաքագրման կարևոր նախապայմաններից մեկը պլանավորվող բյուջեների իրատեսությունն է և բազաների հստակությունը: Պլանավորվող ժամանակաշրջանում անհրաժեշտ է շարունակել համայնքների բյուջեներում հատկապես գույքահարկի, հողի հարկի, տուրքերի բազաների ճշգրտման աշխատանքները:

712. Այս բնագավառում մարզպետարանի կարևորագույն խնդիրներից է պետական մակարդակում ընթացող նոր նախաձեռնությունների մասին ՏԻՄ-երին տեղեկացնելը և համապատասխան մեթոդաբանական օգնություն տրամադրելը:

713. Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման վարչատարածքային կարևոր խնդիրներից են համայնքների սահմանների նկարագրումն ու քարտեզագրման աշխատանքները, համայնքների գլխավոր հատակագծերի կազմումը կամ դրանց ժամանակակից պայմաններին հարմարեցումը, համայնքների բյուջետային կարողությունների ամրապնդումն ու զարգացումը, ինչպես նաև բյուջեների հավաքագրման մակարդակի բարձրացումը՝ այն հասցնելով պլանավորված մակարդակին:

714. Տեղական ինքնակառավարման բնագավառի 2009-2012 թվականների գերակայություններն են.

- 1) Ամրապնդել ու զարգացնել համայնքների բյուջետային կարողությունները, ինչպես նաև բարձրացնել բյուջեների հավաքագրման մակարդակը
- 2) Նպաստել միջհամայնքային համագործակցության ընդլայնմանը
- 3) Մեթոդաբանական և տեխնիկական աջակցություն ցուցաբերել համայնքներին բյուջեների կազմման ու բազաների ճշգրտման աշխատանքներում:

715. Սյունիքի մարզի զարգացումը անբակտելիորեն կապված է մարզի համայնքների զարգացման հետ: Մարզում առկա հիմնախնդիրների լուծումը մեծ մասամբ ենթադրում է համայնքային բազմաթիվ հիմնախնդիրների լուծումներ: Համայնքային կարողությունների ամրապնդման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների արդյունավետ իրականացման համատեքստում մարզի զարգացումն էլ ավելի է կարևորվում:

716. Համաձայն ՀՀ Սահմանադրության 104-րդ հոդվածի տեղական ինքնակառավարումը ոչ միայն համայնքի տեղական նշանակության հարցերը լուծելու իրավունքն է, այլև կարողությունը: Այսինքն՝ համայնքները պետք է բավարար կարողություն ունենան լուծելու տեղական ինքնակառավարման՝ օրենսդրությամբ իրենց վերապահված հարցերը և իրականացնել լիազորությունները:

717. Հայաստանում ապակենտրոնացման քաղաքականությունը հիմնականում պայմանավորված է տարածքային մարմիններից տեղական ինքնակառավարման մարմիններին որոշակի լիազորությունների և իրավասությունների փոխանցմամբ: Այս գործընթացում կարևոր է հետևյալ սկզբունքի կիրառումը՝ եթե խնդիրն ավելի արդյունավետ կարող է լուծվել համայնքներում, ապա լիազորությունների փոխանցումը նպատակահարմար է, իսկ եթե լիազորությունների փոխանցումից հետո դրանք չեն

կատարվում, այսինքն արդյունքը բացասական է, ապա այդպիսի ապակենտրոնացումը կարող է միայն վնաս բերել հանրությանը: Խնդիրն այն է, որ ապակենտրոնացումը չպետք է ինքնանպատակ լինի, այլ ապահովի օպտիմալություն և արդյունավետություն: Ապակենտրոնացման քաղաքականությունն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է համայնքների որոշակի ներուժ, որը փոքր համայնքներում բացակայում է: Այդ առումով նպատակ է դրվում խոշորացնել համայնքները՝ կրճատելով դրանց թիվը՝ միավորելով մի քանի բնակավայր մեկ համայնքի մեջ: Կառավարության կողմից խրախուսվող միջհամայնքային միավորումների ստեղծումը կարելի է համարել ապակենտրոնացման արդյունավետության բարձրացման որոշակի քայլ: Միջհամայնքային միավորումներին աջակցելու նպատակն ամրագրված է նաև ՀՀ կառավարության գործունեության ծրագրում: Այն նախատեսված է նաև ԿԶԾ-ում: Նոր կազմավորվելիք միջհամայնքային միավորումները պետք է ստանան պետության ֆինանսական և տեխնիկական աջակցությունը: Այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ է ներգրավել նաև միջազգային կազմակերպությունների ջանքերն ու կարողությունները:

718. Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման ներկա ֆոնի վրա, հաշվի առնելով մարզի աշխարհագրական դիրքը, ռազմավարական նշանակությունը, սահմանամերձ, բարձր լեռնային և լեռնային բնակավայրեր ունեցող համայնքների մեծ տեսակարար կշիռը (79.8%), բնակավայրերի միջև եղած հեռավորությունը, բնակավայրերի բնակչության համատեղելիության և մենթալության մակարդակը /1990-ական թվականներին գյուղխորհուրդների և բնակավայրերի տարանջատումից հետո, անցած մոտ 20 տարիների ընթացքում ձևավորվել է մի սերունդ, որի համար տեղային հայրենասիրության գաղափարը որոշակիորեն արմատավորվել և դարձել է գյուղապահպանման կարևոր գործոններից մեկը/ անհրաժեշտ է այս հարցում Սյունիքի մարզում ցուցաբերել որոշակի տարբերակված մոտեցում: Մարզի համայնքների խոշորացման խնդիրը քննարկվել է մարզպետարանում և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն է ներկայացվել խոշորացման հնարավոր տարբերակներից մեկը, որը շեշտադրել է «Մեկ բնակավայր մեկ համայնք» սկզբունքի առավելագույն կիրառման անհրաժեշտությունը: Այդուսակ 12.2-ում ներկայացված է այդ տարբերակը.

**Այդուսակ 12.2. ՀՀ Սյունիքի մարզի համայնքների խոշորացման հնարավոր տարբերակ**

| Հ.Հ. | Համայնքի կենտրոնը | Միավորվող համայնքները |
|------|-------------------|-----------------------|
| 1    | Ագարակ            | Ագարակ                |
|      |                   | Խդրանց                |
| 2    | Եղվարդ            | Եղվարդ                |
|      |                   | Ուժանիս               |
| 3    | Սյունիք           | Սյունիք               |
|      |                   | Վարդավանք             |
| 4    | Վ.Խոտանան         | Վ.Խոտանան             |
|      |                   | Տավրոս                |
|      |                   | Շրվենանց              |
|      |                   | Ն.Խոտանան             |

|    |          |                 |
|----|----------|-----------------|
| 5  | Սվարանց  | Սվարանց         |
|    |          | Քաշունի         |
| 6  | Շաղատ    | Շաղատ           |
|    |          | Բալաք           |
| 7  | Լեհվազ   | Լեհվազ          |
|    |          | Վահրավար        |
| 8  | Լիճք     | Լիճք            |
|    |          | Տաշտուն         |
| 9  | Կուրիս   | Կուրիս          |
|    |          | Գուղեմնիս       |
| 10 | Թասիկ    | Թասիկ           |
|    |          | Թանահատ         |
| 11 | Սևաքար   | Սևաքար          |
|    |          | Չափնի           |
|    |          | Եղեգ            |
| 12 | Գորիս    | Գորիս           |
|    |          | Վերիշեն         |
|    |          | Ակներ           |
| 13 | Խնձորեսկ | Խնձորեսկ        |
|    |          | Ներքին Խնձորեսկ |

### 11.2.2. Համայնքային ծառայություն

719. 2001 թվականից սկսած ՀՀ պետական կառավարման ոլորտներում սկսեցին ներդրվել այդ բնագավառներում ծառայությունները կարգավորող օրենքներ: Կադրային քաղաքականության արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն էր զգացվում նաև համայնքներում և իշխանությունները ձեռնամուխ եղան համայնքներում միասնականացված կադրային քաղաքականության ապահովմանը: 2004թ. դեկտեմբերի 14-ին ընդունվեց «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ մտավ 2005թ. փետրվարի 26-ից:

720. Օրենքով ամրագրված են ՀՀ-ում համայնքային ծառայության հիմնական սկզբունքները, կարգավորված են համայնքային ծառայության պաշտոնների և դասային աստիճանների դասակարգման, պաշտոնների նշանակման, ատեստավորման, նրանց իրավական վիճակի, կազմակերպման և ղեկավարման, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ: Համայնքային ծառայության ներդրման գործընթացը ենթադրում էր որոշակի ժամկետներում որոշակի քայլերի հերթականությամբ իրականացում: Այդ ամենը սահմանված է օրենքով: Օրենքի եզրափակիչ և անցումային դրույթներում համայնքային ծառայության ներդրման գործընթացի համար սահմանված



են նաև որոշակի հստակ ժամկետներ և ըստ այդ ժամկետների ինչպես ամբողջ Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Սյունիքի մարզի 109 քաղաքային և գյուղական համայնքներում ներդրվեց համայնքային ծառայությունը: Ի տարբերություն քաղաքացիական ծառայության, որի ներդրումն իրականացվեց Հանրապետության մասշտաբով ստեղծված մեկ մարմնի՝ Քաղաքացիական ծառայության խորհրդի միջոցով, համայնքային ծառայության համար այդպիսի միավոր չի ստեղծվել, այլ օրենքով նախատեսվել է, որ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը, ընդհանուր նկարագիրը և մի շարք այլ գործառույթներ իրականացնում է ՀՀ կառավարության լիազորած պետական մարմինը: Այդպիսի մարմին ճանաչվեց ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը: ՀՀ տարածքային կառավարման նախարարի համապատասխան հրամաններով հաստատվեցին համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագիրը, խմբերում ընդգրկվող պաշտոնների անվանացանկը, մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը, թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ և ատեստավորում անցկացնելու համար թեստեր կազմելու և մրցույթ ու ատեստավորում անցկացնելու կարգերը և մի շարք այլ իրավական ակտեր, որոնք հանդիսանում են օրենքից բխող, բնագավառի իրավական կարգավորումը շարունակող փաստաթղթեր:

721. Մարզպետարանի առաջին քայլը եղել է բոլոր համայնքների ղեկավարների հետ «Համայնքային ծառայության մասին» օրենքի քննարկումը և յուրաքանչյուր համայնքի ղեկավարի աշխատակազմի պաշտոնների անվանացանկի կազմումը, որը տեղի է ունեցել մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՏԾ գործունեության համակարգման վարչության միջոցով: Գործընթացի արդյունքում՝ 2007 թվականին մարզի 109 համայնքներում կար 394 համայնքային ծառայության պաշտոն: 2007թ. հունվար-փետրվար ամիսների ընթացքում մարզի բոլոր համայնքներում կազմվել և համայնքների ղեկավարների կողմից հաստատվել է 394 պաշտոնի անձնագիր: Մարզպետարանը մարզի բոլոր 4 տարածաշրջանների համայնքների ղեկավարներին ցույց է տվել մեթոդական և խորհրդատվական օգնություն, աջակցել համայնքային ծառայության համակարգի ձևավորմանը: Համայնքներում պաշտոնների անձնագրերը հաստատելուց հետո սկսվեց դրանց համալրելու գործընթացը: Համաձայն օրենքի՝ պաշտոններում հաստիքացուցակի փոփոխումից հետո երկամսյա ժամկետում կարող են նշանակվել տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահաջները բավարարող միայն այդ մարմինների անժամկետ աշխատանքային պայմանագրերով աշխատողները՝ այսինքն առանց մրցույթի: Սկզբում մարզի համայնքներում այդ եղանակով համալրվել է 311 պաշտոն: Համայնքային ծառայողների համալրումը ըստ համայնքների 100 տոկոսով իրականացվեց մարզի միայն 44 համայնքներում: 65 համայնքներում մինչ համայնքային ծառայության ներդրումն աշխատող շատ աշխատակիցներ նոր պաշտոնների անձնագրերին չհամապատասխանելու պատճառով պաշտոնի չնշանակվեցին և այդ համայնքներում առաջացան 83 թափուր պաշտոններ, որոնցից միայն 55-ում՝ աշխատակազմի քարտուղարի պաշտոններ: Ընդհանուր առմամբ, մարզում 2007 թվականին, օրենսդրությամբ սահմանված կարգով, առանց մրցույթների համալրվեց համայնքային ծառայության պաշտոնների 78.9 տոկոսը:

722. Այնուհետև սկսվեց ներդրման երկրորդ և շարունակական փուլը, որն ընդգրկում է համայնքային ծառայողների վերաբերյալ տվյալների բանկ ստեղծելու, մրցույթներ անցկացնելու, վերապատրաստման, ատեստավորման և այլ գործընթացներ: ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմում 2007 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում ստեղծվեց Սյունիքի մարզի համայնքային ծառայողների վերաբերյալ տվյալների ծավալուն շտեմարան, որը յուրաքանչյուր համայնքային ծառայողի վերաբերյալ նախատեսում է 46 սյունակի լրացում: Շտեմարանի վարումն

իրականացվում է մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՏԾ ԳՀ վարչության կողմից, տվյալները պարբերաբար թարմացվում են և ներկայացվում ՀՀ տարածքային կառավարման նախարարություն: 2008թ. ընթացքում վերապատրաստվել են 40 առաջատար համայնքային ծառայողներ: Մարզի 76 համայնքներում համայնքային ծառայության 111 թափուր պաշտոնների համալրման համար սահմանված կարգով հայտարարվել էին մրցույթներ, սակայն, պաշտոնների անձնագրերի պահանջները բավարարող քաղաքացիների դիմումներ չլինելու պատճառով, մրցույթներ են կայացել միայն 22 համայնքներում:

723. Պրակտիկան ցույց տվեց, որ ոլորտում առկա են որոշակի խնդիրներ, որոնք պետք է դիմամիկ լուծում ստանան: Համայնքների մի զգալի մասը պատրաստ չէ համայնքային ծառայության գործընթացին: Ներկայումս բնակչության փոքր թվաքանակ ունեցող գյուղական համայնքներում համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերի պահանջներին բավարարող կադրերի խիստ պակաս կա, դրա վկայությունն է վերը նշված այն փաստը, որ 2007 թվականին համայնքային ծառայության ներդրման առաջին փուլում համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի 55 պաշտոններ, պաշտոնի անձնագրի բարձրագույն կրթության և աշխատանքային որոշակի ստաժի պահանջների ներկայացման հետևանքով մնացին թափուր:

724. Այս ամենով հանդերձ համայնքային ծառայությունը Սյունիքի մարզի համայնքներում որոշակիորեն կայացավ: Իրավիճակում առկա բացթողումները շտկելուն և զարգացումներն ապահովելուն օգնության եկան «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում 2008 թվականի սեպտեմբերին ընդունված և 2008թ. դեկտեմբերի 5-ից ուժի մեջ մտած փոփոխություններն ու լրացումները, որոնք թույլ կտան ավելի արդյունավետ ներդնել համայնքային ծառայության համակարգը: Համակարգի ներդրման քանակական ցուցանիշների վերաբերյալ պատկերացում կարող են տալ Աղյուսակ 12.3.-ում ներկայացված տվյալները.

**1. Աղյուսակ 12.3. ՀՀ Սյունիքի մարզի համայնքային ծառայության պաշտոնների համալրումը 2009թ. մարտի 1-ի դրությամբ**

| Հ.Հ  | Պաշտոնների խմբերի, ենթախմբերի անվանումը | Պաշտոնների քանակը մարզում | Այդ թվում՝         |                  | Պաշտոնների համալրման տոկոսը |
|--|---|---------------------------|--------------------|------------------|-----------------------------|
|  |   |                           | բաղեցված պաշտոններ | Թափուր պաշտոններ |                             |
| 1  | Գլխավոր պաշտոններ                       | 109                       | 44                 | 65               | 40.4                        |
| Այդ թվում՝   |   |                           |                    |                  |                             |
| 1.1  | Առաջին ենթախումբ                        | 3                         | 2                  | 1                | 66.7                        |
| 1.2  | Երկրորդ ենթախումբ                       | 106                       | 42                 | 64               | 39.6                        |
| 2  | Առաջատար պաշտոններ                      | 66                        | 57                 | 9                | 86.4                        |
| Այդ թվում՝   |   |                           |                    |                  |                             |
| 2.1  | Առաջին ենթախումբ                        | 16                        | 14                 | 2                | 87.5                        |
| 2.2  | Երկրորդ ենթախումբ                       | 1                         | 1                  | 0                | 100.0                       |
| 2.3  | Երրորդ ենթախումբ                        | 50                        | 42                 | 7                | 84.0                        |
| 3  | Կրտսեր պաշտոններ                        | 211                       | 165                | 46               | 78.2                        |
| Այդ թվում՝   |   |                           |                    |                  |                             |
| 3.1  | Առաջին ենթախումբ                        | 155                       | 132                | 23               | 85.2                        |
| 3.2  | Երկրորդ ենթախումբ                       | 51                        | 30                 | 21               | 58.8                        |
| 3.3  | Երրորդ ենթախումբ                        | 5                         | 3                  | 2                | 60.0                        |
| <b>Ընդամենը համայնքային ծառայության բոլոր պաշտոնները</b> |   | <b>386</b>                | <b>266</b>         | <b>120</b>       | <b>68.9</b>                 |

Աղբյուրը՝ ՀՀ Այունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳԱՏԾ գործունեության համակարգման վարչության տվյալներ

725. Ինչպես երևում է աղյուսակից, 2009թ. մարտի 1-ի դրությամբ մարզում առկա է 386 պաշտոն, որից թափուր է 120-ը կամ մարզի համայնքային ծառայության պաշտոնների 68.9%-ը:

726. Համայնքի ղեկավարի աշխատակազմերում թափուր է 65 գլխավոր պաշտոն կամ գլխավոր պաշտոնների 40.4%-ը: Համայնքային ծառայության թափուր պաշտոններից ժամանակավորապես զբաղեցված է 44 պաշտոն:

727. Լուրջ աշխատանքներ պետք է տարվեն աշխատակազմերի հատկապես գլխավոր պաշտոնների երկրորդ ենթախմբի 64 պաշտոնների համալրման ուղղությամբ, որովհետև այդ ենթախմբում հիմնականում ընդգրկված են գյուղական համայնքների ղեկավարների աշխատակազմերի քարտուղարների պաշտոնները:

728. Ծրագրավորվող 2010-2013 թվականներին, համաձայն օրենսդրության պահանջների, պետք է կազմակերպվի համայնքային ծառայողների շարունակական վերապատրաստումը, որին կհետևի ատեստավորումը: Դրա համար անհրաժեշտ է համայնքային ատեստավորման և մրցութային հանձնաժողովներին ապահովել անհրաժեշտ տեխնիկական միջոցներով, համակարգչային ծրագրերով, ատեստավորման կազմակերպման համար անհրաժեշտ հարցաշարերով, տեղեկատվական նյութերով և փաստաթղթերով: Համայնքային ծառայության համակարգի արդյունավետ ներդրման ապահովման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- 1) Համայնքային մրցութային և ատեստավորման հանձնաժողովներն ապահովել անհրաժեշտ տեխնիկայով, համակարգիչներով, ծրագրերով
- 2) Կազմակերպել համայնքային մրցութային և ատեստավորման հանձնաժողովների անդամների վերապատրաստում
- 3) Ապահովել համայնքային ծառայության օրենսդրական փաստաթղթերի և հարցաշարերի տրամադրումը համապատասխան հանձնաժողովներին
- 4) Համայնքային ծառայողների տվյալների շտեմարանի, քաղաքացիական ծառայողների վերաբերյալ ունեցած տվյալների հիման վրա, ստեղծել մարզի միասնական կադրային ուղղվածությամբ տեղեկատվական համակարգ, որը տեղեկություններ կպարունակի պաշտոնների և համապատասխան կադրերի վերաբերյալ, թափուր պաշտոնները հնարավորինս արագ համալրելու նպատակով
- 5) Խորհրդատվական աջակցություն ցուցաբերել համայնքներին արդյունավետ գործող և օպտիմալ կառուցվածքներ սահմանելու, ինչպես նաև դրանց համապատասխան համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկել համայնքային ծառայողների վարձատրության միասնական համակարգ սահմանելու ուղղությամբ
- 6) Համայնքային ծառայության գործընթացի ներդրման ընթացքում առաջացած խնդիրների պարբերաբար քննարկում և ահմրաժեշտության ղեկքում, օրենսդրական նոր փոփոխությունների նախագծերի մշակում և դրանց սահմանված կարգով ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը
- 7) Մարզում համայնքային ծառայության ներդրման վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ներկայացվող տեղեկատվության տրամադրման մեխանիզմների հստակեցում, տեղեկատվության առանձին ձևերի պարզեցում, մարզպետարանի կողմից ներկայացվող տեղեկատվության, մասնավորապես, համայնքային ծառայողների վերաբերյալ տեղեկատվության ամփոփ և ավելի կոմպակտ ձևերի սահմանում

8) Համայնքային, քաղաքացիական և մի շարք այլ ծառայությունների ներդաշնակեցում, ծառայության մեկ տեսակից մյուսին անցնելու կապի ստեղծում: Սա ենթադրում է հանրային ծառայության մասին օրենսդրության ստեղծում՝ ապահովելով հանրային ծառայության միասնական սկզբունքներ: Այս ենթատեքստում անհրաժեշտ է ունենալ նաև պետական ծառայության և տեղական ինքնակառավարման համակարգի ամբողջական նկարագիրը, որտեղ նաև պետք է սահմանվեն քաղաքական և հայեցողական պաշտոնյաներին ներկայացվող պահանջները: Արդեն նշվել է, որ նախատեսվում է ընդունել «Հանրային /պետական/ ծառայությունների մասին» ՀՀ օրենքը, որն այս ոլորտում կընդհանրացնի իրավական դաշտը:

### 12.2.3. Տեխնիկական ապահովվածություն

729. Տեղական ինքնակառավարման համակարգում կարևոր և դեռևս ամբողջությամբ չլուծված խնդիրներից մեկը շարունակում է մնալ համայնքների տեխնիկական զինվածության մակարդակի բարձրացումը: Համայնքները ժամանակակից տեխնիկայով և հեռահաղորդակցության համակարգերով (ինտերնետային կապ, ցանցային ծրագրեր և այլն) ապահովելը բավարար չէ այդ գործընթացի արդյունավետ իրականացման համար: Հարկավոր է նաև բարձրացնել ՏԻՄ-երի կարողությունները՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ:

730. Անհրաժեշտ է խնդիր դնել մինչև 2010 թվականը մարզի բոլոր համայնքները ժամանակակից համակարգիչներով և իրենց գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ համակարգչային ծրագրերով ապահովելու համար: Համակարգչին տիրապետելու հմտությունները պետք է ներառվեն համապատասխան համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերում՝ իրականացնելով ծրագրերի ուսուցման և վերապատրաստման դասընթացներ:

731. Համայնքների մեծ մասը պատշաճ կերպով տեղեկացված չէ օրենսդրական փոփոխություններին, որոնք տեղի են ունենում տեղական ինքնակառավարման օրենսդրության մեջ: Պաշտոնական տեղեկագրերի ոչ մատչելի գները հնարավորություն չեն տալիս համայնքներին կազմակերպել բաժանորդագրություն և տեղեկանալ իրականացվող զարգացումներին ու փոփոխություններին: Այս խնդրի լուծման նպատակով մարզային թերթերի միջոցով տեղական ինքնակառավարման ոլորտին առնչվող իրավական ակտերի ոչ պաշտոնական հրապարակումը նույնպես արդյունավետ չի կարող լինել: Խնդրի լուծման ամենաարդյունավետ ճանապարհը Հայաստանի Իրավական Տեղեկատվական համակարգի կողմից իրականացվող Հայաստանի Հանրապետությունում գործող իրավական ակտերի պաշտոնական էլեկտրոնային հրապարակումից օգտվելն է՝ ինտերնետային կայքի միջոցով: Ներկայումս գործում է [www.arlis.am](http://www.arlis.am) կայքը: Համակարգը մշակվել է Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցությամբ, «Պատասխանատվական բարեփոխումների ծրագրի» շրջանակներում: Հաճախորդներն իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարության «Պաշտոնական տեղեկագիր» փակ բաժնետիրական ընկերությունը: Համակարգի բաց տեղադրումը ինտերնետում հնարավորություն է տալիս ունենալ ցանկացած իրավական ակտի ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային տարբերակը, որը համայնքների կողմից գործող օրենսդրության վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի բարձրացման կարևոր գործոն է:

#### 12.2.4. Համայնքների զարգացում

732. 2000 թվականից սկսած տարածքային զարգացման անհամաչափությունները Հայաստանում սկսել են խորանալ տնտեսական աճի արագացմանը զուգընթաց և հիմնականում արտահայտվում են Երևանի տնտեսական դերի և նշանակության աճով, որի արդյունքում կենսամակարդակի տարբերությունը Երևանի և Հայաստանի մարզերի, այդ թվում նաև Սյունիքի միջև անընդհատ աճել է՝ վերջին տարիներին հասնելով անցանկալի չափերի: Տնտեսական զարգացման անհամաչափությունների հետագա չվերահսկվող աճը խիստ անցանկալի է: Մասնավորապես, անհամաչափ տարածքային զարգացումը խնդիրներ է առաջ բերում ինչպես երկրի ներքին կայունության առումով, այնպես էլ նպաստում է տնտեսապես թույլ զարգացած տարածաշրջաններից բնակչության արտահոսքին ու մայրաքաղաքում անվերահսկելի կենտրոնացմանը: Սյունիքի մարզի զարգացումը պետք է նպաստի այս համրապետական նշանակության խնդրի լուծմանը, որի լուծման ուղիները նախանշվել են ՀՀ կառավարության կողմից:

733. Մարզի զարգացման ծրագրի կարևոր գերակայություններից է մարզի և համայնքային զարգացման ծրագրերի ներդաշնակության ապահովումը: Ոլորտային կտրվածքով մարզի զարգացման ծրագիրը բաժանված է ոլորտների և յուրաքանչյուր ոլորտի ծրագրերի շահառուները բնակվում են կոնկրետ համայնքներում: Սյունիքի, մարզի զարգացման ծրագիրը կարելի է բնորոշել որպես մարզի կազմում ընդգրկված համայնքների զարգացման ծրագրերի համրագումար: Ուստի մարզի և համայնքների ծրագրերի ներդաշնակությունը խիստ կարևոր գործոն է:

734. Մարզի զարգացման ծրագրում համայնքները պետք է դիտարկվեն որպես շահառուներ, իսկ տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմինները կատարողներ: Այս առումով նպատակահարմար է հնարավորինս կոնկրետացնել համայնքների ՏԻՄ-երի, պետական և տարածքային կառավարման մարմինների լիազորությունները և պատասխանատվությունը մարզի զարգացման ծրագրում:

735. Մարզի և համայնքների զարգացման ծրագրերի ներդաշնակության ու արդյունավետության ապահովման հաջորդ գրավականն այն է, որ առաջիկա տարիներին մարզի համայնքները, տեղական իշխանությունները համայնքային զարգացման քառամյա ծրագրերի, ինչպես նաև ոլորտային ծրագրերի մշակման ընթացքում հիմք ընդունեն և կողմնորոշվեն մարզի զարգացման ծրագրով:

736. Այս մոտեցումը Սյունիքում 2009-2012 թվականների կտրվածքով դիտարկվում է այլ կերպ, քանի որ մինչև մարզի զարգացման ծրագրի ՀՀ կառավարության կողմից հաստատվելը, համայնքներն արդեն ունեն իրենց հաստատված քառամյա զարգացման ծրագրերը:

737. Սյունիքի մարզի 109 համայնքներից 97-ում 2008 թվականի հոկտեմբերի 12-ին կայացան տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ և նույն թվականի նոյեմբերի 13-ին նշված համայնքների ղեկավարներն ու համայնքների ավագանիները ստանձնեցին իրենց լիազորությունները: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի համաձայն նորընտիր համայնքների ղեկավարների ներկայացմամբ համայնքների ավագանիները նոյեմբերի 13-ից սկսած եռամսյա ժամկետում հաստատեցին համապատասխան համայնքների քառամյա զարգացման ծրագրերը: Փաստորեն, 2009 թվականի մարտի 1-ի դրությամբ մարզի բոլոր համայնքներում համայնքների զարգացման քառամյա ծրագրերը հաստատված են և ներկայացված Սյունիքի մարզպետարան: Համայնքների քառամյա զարգացման ծրագրերի կազմման վրա մարզպետարանի կողմից պատշաճ ուշադրություն է դարձվել: Չնայած նրան, որ տեղական ինքնակառավարման օրենսդրությունը համայնքային զարգացման ծրագրերի մշակման միասնական

մոտեցումներ և պահանջներ չի սահմանել, այնուամենայնիվ, մարզպետարանը համայնքների ծրագրերի կազմման միասնական մեթոդաբանական ուղեցույցներ է պատրաստել և տրամադրել համայնքներին: Դրանց հիման վրա համայնքային զարգացման ծրագրերը որոշակիորեն համապատասխանեցվել են միասնական կառուցվածքային չափանիշներին, ինչի հետևանքով որոշ համայնքներում սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը իրատեսական որոշակի հիմնավորումներ ունեն:

738. Մարզի բոլոր 109 համայնքների քառամյա զարգացման ծրագրերում ընդգրկված ոլորտային կապիտալ ծրագրերի իրականացման համար պահանջվող գումարը կազմում է շուրջ 24,48 մլրդ դրամ ([Հավելված 12.7](#)): Համայնքների մի շարք հիմնախնդիրներ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գնահատվել են առավել առաջնահերթ, որոնց լուծման համար պահանջվող ընդհանուր գումարը կազմում է շուրջ **4.66 մլրդ** դրամ ([Հավելված 12.8](#)):

739. Նկատի ունենալով ներկա իրողությունը, ինչպես նաև մարզային և համայնքային զարգացման ծրագրերի ներդաշնակության ապահովման անհրաժեշտությունը, 2009-2012 թվականներին անհրաժեշտ է իրավական հարթության վրա ունենալ համայնքների զարգացման ծրագրերի մշակման, իրագործման միասնական մեթոդաբանություն, որը թույլ կտա խուսափել կրկնողություններից և բարձրացնել սուղ միջոցների օգտագործման արդյունավետությունը:

740. 2009-2012թթ. անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել համայնքային զարգացման ծրագրերի իրականացման վրա: Հաշվի առնելով այն իրողությունը, որ դեռևս ձևավորված չէ բնակչության ակտիվ մասնակցություն, ծրագրերի քննարկման և հաստատման ավանդույթ, նպատակահարմար է, որ մարզի տարածքում գոյություն ունեցող առավել ակտիվ հասարակական կազմակերպությունների և տեղեկատվական-վերլուծական կենտրոնների մասնակցությամբ, սկզբնական շրջանում պետության աջակցությամբ, հետագայում համայնքների և միջհամայնքային միավորումների միջոցով, համայնքներում իրականացվեն հարցումներ և ուսումնասիրություններ՝ պարզելու համար բնակչության կարիքները, ցանկությունները, դժգոհությունները, ինչպես նաև սահմանելու համայնքային հիմնախնդիրների լուծման առաջնահերթությունները, հետագայում ծրագրերում նկատված բացթողումներն ուղղելու, ծրագրերի դիմամիկան ապահովելու և խնդիրների լուծման հնարավորություններն ավելի իրատեսական դարձնելու համար:

741. Դեռևս 2004 թվականից Սյունիքի մարզպետարանը ձեռնամուխ է եղել մարզի համայնքների հիմնախնդիրների ուսումնասիրությանը, քննարկմանը և դրանց լուծման ուղիների որոշմանը: Սյունիքի մարզպետի աշխատանքային ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր տարի մարզպետը կատարում է այցելություններ մարզի տարբեր համայնքներ, որտեղ բարձրացվում են ամենատարբեր բնույթի հարցեր և խնդիրներ: Հիմք ընդունելով մարզպետի այցերի ընթացքում բարձրացված այդ խնդիրները և համագործակցելով տեղական ինքնակառավարման մարմինների հետ, համայնքների ղեկավարների հետ համատեղ կազմվում է յուրաքանչյուր համայնքի վերաբերյալ հիմնախնդիրների կտրվածքով տվյալների բանկ, որոշվում է ավելի առաջնահերթ և հրատապ լուծում պահանջող խնդիրների խումբը և այդ հիմքով կազմվում է փաստաթուղթ ՀՀ Սյունիքի մարզի առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների մասին, որի հիման վրա էլ հետագայում կազմվում են համայնքների զարգացման ծրագրերը:

742. Այս համատեքստում կարևորվում է նաև համայնքային զարգացման հիմնական ուղղությունների նախանշման փաստը: Համայնքների զարգացման կարևոր նախապայմաններ են.

- 1) Համայնքային ենթակառուցվածքները. (ճանապարհներ, ջրամատակարարման, ջրառուցման, գազամատակարարման համակարգեր, կապի միջոցներ, սոցիալական և կրթական ենթակառուցվածքներ)
- 2) Համայնքի բնակիչների ներուժը՝ սեփական հմտությունները և գիտելիքները, ընդհանուր նպատակի համար գործելու իրենց ընկալումը, փոխադարձ հանդուրժողականությունը
- 3) Քաղաքացիական հասարակության և հանրային կազմակերպությունների ցանցի առկայությունը, համայնքի պաշտոնական և ոչ պաշտոնական ինստիտուցիոնալ կազմը
- 4) Համայնքի բոլոր բնակիչների շրջանում իրավունքների և պարտականությունների մասին իրազեկության բարձրացումը, որը հնարավորություն կտա իրականացնել, երաշխավորել և պաշտպանել տեղական կառավարման որոշումներ ընդունելու և այդ գործընթացին մասնակցելու իրավունքները (արդարադատության հասանելիության, տեղեկատվության և կրթության, առողջապահության և լիարժեք կյանքով ապրելու համար նմանատիպ այլ ասպեկտներ)
- 5) Համայնքի բնակիչների և դրսի սուբյեկտների միջև կառուցողական համագործակցության հարաբերությունների հաստատումը
- 6) 2010-2013 թվականներին ջանքեր պետք է ներդրվեն միջհամայնքային համագործակցության ամրապնդման և խորացման ուղղությամբ: Հաշվի առնելով համայնքների միությունների արդեն իսկ կուտակած որոշակի փորձն ու համագործակցության դրսևորումները, պետք է միջոցներ ձեռնարկվեն նաև միջհամայնքային միավորումների ստեղծման ուղղությամբ:

743. Համայնքների զարգացման խնդիրների լուծմանն օգնում է նաև համայնքների ուժեղ և թույլ կողմերի վերլուծությունը, որը հնարավորություն է տալիս անհրաժեշտ գործողություններ իրականացնել թույլ կողմերը վերացնելու կամ նվազագույնի հասցնելու համար:

744. Սյունիքի մարզի համայնքների ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները վերլուծվել են Աղյուսակ 12.4-ում: ՈւժԹՎ վերլուծության արդյունքում ներկա իրավիճակի պատկերը հետևյալն է.

**Աղյուսակ 12.4. ՀՀ Սյունիքի մարզի համայնքների ուժեղ, թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները**

| Ուժեղ կողմերը   | Թույլ կողմերը   |
|---|---|
| <ul style="list-style-type: none"> <li>❖ Մարզի տարբեր ոլորտներում մասնագետների առկայությունը</li> <li>❖ Բարձրագույն կրթությամբ մարդկանց առկայությունը</li> <li>❖ Բնակչության աշխատասիրությունը</li> <li>❖ Բնատարածքային հայրենասիրության գաղափարի առկայությունը</li> <li>❖ Քաղաքացիական որոշակի ակտիվությունը</li> <li>❖ Գործող հասարակական կազմակերպությունների առկայությունը մարզում</li> <li>❖ Հասարակական կազմակերպությունների որոշակի ազդեցությունը</li> <li>❖ Աշխատանքային փորձի առկայությունը</li> <li>❖ Հասարակական նախաձեռնությունները</li> <li>❖ Պետական և տեղական իշխանությունների համագործակցության, գործընկերության</li> </ul> | <ul style="list-style-type: none"> <li>❖ Փոքր ու միջին ձեռնարկատիրության դանդաղ զարգացումը</li> <li>❖ Արտագաղթելու միտումը, միգրացիան</li> <li>❖ Որակյալ կադրերի թույլ ընդգրկվածությունը</li> <li>❖ Տեղեկացվածության և գիտելիքների պակասը</li> <li>❖ Անտարբերությունը</li> <li>❖ Համագործակցության պակասը</li> <li>❖ Արտաքին աղբյուրներից կախվածությունը</li> <li>❖ Համայնքի կառավարմանը մասնակցելուն շահագրգռվածության պակասը</li> <li>❖ Հասարակության բևեռացվածությունը և սոցիալական խմբերի միջև կապերի բացակայությունը</li> <li>❖ Մարզի հեռավորությունը Երևանից</li> </ul> |

|  |  |
|--|--|
| <ul style="list-style-type: none"> <li>❖ առկայությունը</li> <li>❖ Միջհամայնքային որոշակի համագործակցության առկայությունը</li> <li>❖ Միջազգային որոշակի կազմակերպությունների առկայությունը մարզում</li> <li>❖ Մարզային մակարդակով որոշակի համագործակցությունը Իրանի Իսլամական Հանրապետության նահանգների հետ</li> </ul>  | <ul style="list-style-type: none"> <li>❖ Վնասակար ավանդույթները</li> <li>❖ Ոչ-ֆորմալ կապերի գերակայությունը</li> <li>❖ Առաջարկությունների և նախաձեռնությունների նկատմամբ որոշ պաշտոնյաների բացասական տրամադրվածությունը</li> <li>❖ Դեպքերի հետևից գնալու որոշ միջին ղեկավարների սովորույթը</li> <li>❖ Տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մասին օրենքների անկատարությունը</li> <li>❖ Մարզի տարածքի կտրտվածությունը</li> <li>❖ Անբավարար պետական աջակցությունը</li> </ul> |
| <p><b>Հնարավորությունները</b></p>  | <p><b>Վտանգները</b></p>  |
| <ul style="list-style-type: none"> <li>➢ Առկա արտադրական ձեռնարկությունների վերագործարկումը</li> <li>➢ Մարզում ուսումնական բազայի առկայությունը (հանրակրթական, ԲՈՒՀ-ական)</li> <li>➢ Մարզում միջազգային կազմակերպությունների առկայությունը</li> <li>➢ Մարդկանց մոտ շահագրգռվածության և մոտիվացիայի առկայությունը</li> <li>➢ Բիզնեսի կազմակերպման հնարավորությունները</li> <li>➢ Աշխատանքային արտագաղթի արդյունքում նյութական ռեսուրսների կուտակումը և արտաքին միջավայրի հետ փոխգործակցումը</li> <li>➢ Պետական ռազմավարական ծրագրերը</li> <li>➢ Պետական կառավարման ապակենտրոնացումը</li> <li>➢ Դրական փորձերի ստեղծումը և տարածումը</li> <li>➢ ԶԼՄ-ների զարգացումը</li> <li>➢ Մասնագիտական բավարար ռեսուրսները</li> <li>➢ Իրանի հետ կապեր հաստատելու հնարավորությունը</li> <li>➢ Ճանապարհների օգտագործումը</li> </ul> | <ul style="list-style-type: none"> <li>✓ Արտագաղթը, աշխատուժի արտահոսքը</li> <li>✓ Ժողովրդագրական փոփոխությունները</li> <li>✓ Ուսումնական համակարգի վատթարացումը</li> <li>✓ Տեղեկատվության պակասը</li> <li>✓ Երիտասարդ կադրերի և երիտասարդության արտահոսքը</li> <li>✓ Կոռուպցիայի առկայությունը</li> <li>✓ Անտարբերությունը</li> <li>✓ Բնական և տեխնածին աղետների վտանգը:</li> </ul>   |

745. Մարզի համայնքների զարգացման խնդիրները քննարկվում և ծրագրերի տեսք են ստանում նաև հասարակական որոշ կազմակերպությունների նախաձեռնությամբ և այնուհետև ներառվում են համայնքների զարգացման ծրագրերում: Այսպես՝ 2007 թվականի ընթացքում «Սյունիքի քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը ԵԱՀԿ Երևանյան Գրասենյակի և «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ-ի ցուցաբերած ֆինանսական աջակցության շնորհիվ մարզի 30 համայնքներում իրականացրել է հետազոտություններ և յուրաքանչյուր համայնքի համար կազմել համայնքի կարիքների գնահատման և տնտեսական զարգացման ներուժի բացահայտման ծրագիր՝ հայերեն և անգլերեն լեզուներով: Աղյուսակ 12.5-ում ներկայացված են այդ բացահայտումների և գնահատումների արդյունքում մարզի 22 համայնքների բացահայտված և գնահատված հիմնախնդիրները:

**Աղյուսակ 12.5. «Սյունիքի քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն» ՀԿ կողմից ՀՀ Սյունիքի մարզի 22 համայնքներում բացահայտված և գնահատված հիմնախնդիրները**

| Հ/Հ | Համայնքի անվանումը | Ծրագրի անվանումը                         | Գումարի չափը /հազ. դրամ/ |
|-----|--------------------|--|--------------------------|
| 1   | Աճանան             | Աճանան համայնքի ոռոգման ջրագծի կառուցում | 58326,0                  |



ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

|                 |           |   |                 |
|-----------------|-----------|---|-----------------|
| 2               | Աշոտավան  | Աշոտավան համայնքի ոռոգման ջրագծի կառուցում                                    | 5136,0          |
| 3               | Ալվանք    | Ալվանք համայնքի խմելու ջրագծի ներքին ցանցի կառուցում                          | 41882,1         |
|                 |           | Ալվանք համայնքի մշակույթի տան հիմնանորոգում                                   | 2877,0          |
| 4               | Գեղանուշ  | Գեղանուշ համայնքի խմելու ջրագծի ներքին ցանցի կառուցում                        | 36096,4         |
| 5               | Դավիթբեկ  | Դավիթ-Բեկ համայնքի մանկապարտեզի բացօթյա տաղավարի կառուցում                    | 743,8           |
|                 |           | Դավիթ-Բեկ համայնքի մշակույթի տան վերանորոգում                                 | 12421,3         |
| 6               | Հարթաշեն  | Հարթաշեն համայնքի սպորտի և միստերի դահլիճների վերանորոգում                    | 8457,6          |
| 7               | Կարճևան   | Կարճևան համայնքի մշակույթի տան վերանորոգում                                   | 4756,3          |
|                 |           | Կարճևան համայնքի խմելու ջրագծի ներքին ցանցի կառուցում                         | 16770,9         |
|                 |           | Կարճևան համայնքի ոռոգման ջրագծի վերակառուցում                                 | 29201,8         |
| 8               | Քարահունջ | Քարահունջ համայնքի խմելու ջրագծի ներքին ցանցի նորոգում                        | 35777,9         |
| 9               | Խոտ       | Խոտ համայնքի ոռոգման ջրագծի կառուցում   | 22983,3         |
| 10              | Խնձորեսկ  | Խնձորեսկ համայնքի խմելու ջրագծի ներքին ցանցի նորոգում                         | 7481,3          |
|                 |           | Խնձորեսկ համայնքի ոռոգման ջրագծի և ներքին ցանցի նորոգում                      | 28613,4         |
| 11              | Խոզնավար  | Խոզնավար համայնքի խմելու ջրագծի վերակառուցում                                 | 12324,1         |
| 12              | Լեհվազ    | Լեհվազ համայնքի մշակույթի տան մասնակի վերանորոգում                            | 2253,0          |
|                 |           | Լեհվազ համայնքի ոռոգման ջրագծի կառուցում                                      | 8915,0          |
| 13              | Ն. Հանդ   | Ն. Հանդ համայնքի ոռոգման ջրագծի կառուցում                                     | 33051,2         |
| 14              | Նռնաձոր   | Նռնաձոր համայնքի ոռոգման ջրագծի արտաքին և ներքին ցանցի կառուցում              | 46358,0         |
| 15              | Սալվարդ   | Սալվարդ համայնքի մշակույթի պալատի, դպրոցի, գյուղապետարանի տանիքի վերանորոգում | 2928,1          |
| 16              | Շիկահող   | Շիկահող համայնքի խմելու ջրագծի կառուցում                                      | 31479,5         |
| 17              | Շաղատ     | Շաղատ համայնքի մշակույթի տան մասնակի վերանորոգում                             | 712,2           |
| 18              | Շվանիձոր  | Շվանիձոր համայնքի խմելու ջրհավաք քլորացման ավազանի կառուցում                  | 2502,8          |
| 19              | Սյունիք   | Սյունիք համայնքի մշակույթի տան տանիքի վերանորոգում                            | 3029,6          |
| 20              | Տաթև      | Տաթև համայնքի ոռոգման ջրագծի վերակառուցում                                    | 67356,2         |
|                 |           | Տաթև համայնքի կոյուղու վերակառուցում  | 8422,4          |
|                 |           | Տաթև համայնքի խմելու ջրագծի վերակառուցում                                     | 2097,2          |
| 21              | Ծավ       | Ծավ համայնքի խմելու ջրագծի վերանորոգում և ակունքի տեղափոխում                  | 26312,0         |
| 22              | Վաղատին   | Վաղատին համայնքի ջրագծի երկու ակունքների վերակառուցում                        | 1254,6          |
| <b>ԸՆդամենը</b> |           |   | <b>560521,0</b> |

746. Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից ներկայումս մարզի մի շարք համայնքներում իրականացվում են հետևյալ ծրագրերը.

**Աղյուսակ 12.6 . Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում իրականացվող ծրագրերը 2009 թվականի ապրիլ ամսվա դրությամբ**

| Հ.Հ | Համայնքի անվանումը | Ծրագրի համառոտ նկարագրությունը   |
|-----|--------------------|--|
| 1.  | Գորիս              | Հեռակետային վարժարան-դպրոցի շենքի և ջեռուցման համակարգի վերակառուցում<br>Թատրոնի ջեռուցման համակարգի կառուցում |
| 2.  | Սրաշեն             | Դպրոցի, համայնքի կենտրոնի շենքի կառուցում  |
| 3.  | Իշխանասար          | Դպրոցի շենքի կառուցում   |
| 4.  | Շինուհայր          | Դպրոցի հիմնանորոգում   |
| 5.  | Կոռնիձոր           | Համայնքի կենտրոնի շենքի կառուցում  |
| 6.  | Մեղրի              | Մաղաքի կոյուղու ներքին ցանցի վերակառուցում<br>Արաքսաշեն թաղամասի ջրազծի կառուցում                              |
| 7.  | Տանձատափ           | Համայնքային կենտրոնի հիմնանորոգում   |
| 8.  | Սիսիան             | Մշակույթի տան հիմնանորոգում  |
| 9.  | Ագարակ             | Մշակույթի տան հիմնանորոգում  |

**Համայնքների զարգացման ռազմավարությունը**

747. Սարգի համայնքների զարգացման ռազմավարության առաջնահերթություններն են.

- 1) Տարածքային կառավարման բարելավում, տարածքային կառավարման մարմինների գործառույթների, կարողությունների բարելավում, կառավարման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում, թափանցիկության բարձրացում
- 2) Տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացում, ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացում, միջհամայնքային համագործակցության խթանում
- 3) Տեղական ինքնակառավարման ոլորտում կառավարման հմտությունների ու ունակությունների բարձրացում, հանրային ծառայությունների տեղեկատվական կենտրոնների ստեղծում
- 4) Սահմանամերձ, բարձրլեռնային, լեռնային և փախստաբնակ համայնքներում ծրագրերի իրականացում
- 5) Քաղաքացիների մասնակցության խթանմանն ուղղված ծրագրերի իրականացում:
- 6) Մեկից ավելի բնակավայր ընդգրկող համայնքներում յուրաքանչյուր բնակավայրի զարգացման ծրագրի` առանձին մասով համայնքի զարգացման ծրագրի մեջ սահմանում
- 7) Նպաստել համայնքների ավագանիների կայացմանը և դրանց աշխատանքների հրապարակայնության ու թափանցիկության բարձրացմանը
- 8) Բարձրացնել համայնքների բյուջեներին պետական ֆինանսական օժանդակության համակարգի արդյունավետությունը: Կատարելագործել ֆինանսական համահարթեցման մեխանիզմները
- 9) Իրականացնել աշխատանքներ` տարածքային անհամամասնությունների նվազեցման և համապատասխան ծառայությունների մատչելիության ավելացման համար
- 10) Մինչև 200 բնակիչ ունեցող գյուղական համայնքներում, նշված համայնքներն ավելի բաց համակարգեր դարձնելու նպատակով, համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուներին ներկայացվող 2 տարվա հաշվառում ունենալու փոխարեն օրենսդրությամբ առնվազն երեք ամսվա հաշվառման պահանջի սահմանում
- 11) Սարգի համայնքների համար տեղեկատվական միացյալ բանկի ստեղծում
- 12) Աջակցություն համայնքերին` միջհամայնքային միավորումների ստեղծման գործում

- 13) Սարգի համայնքային ենթակառուցվածքների (ճանապարհներ, ջրամատակարարում, գազամատակարարում) զարգացման ուղղությամբ աշխատանքների իրականացում
- 14) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների մատչելիությունն ու որակը բարձրացնելու նպատակով պարտադիր լիազորությունների իրականացման կարգերի, նորմատիվների և չափորոշիչների սահմանում
- 15) Սարգի բոլոր գյուղական համայնքների ղեկավարների աշխատակազմերի ապահովում առնվազը մեկ համակարգչով և մեկ տպող սարքով
- 16) Բարձր լեռնային և սահմանամերձ շրջաններից բնակչության արտագաղթի կանխման նպատակով համալիր ծրագրի մշակում և իրականացում: /«Հայաստանի /Հանրապետության սահմանամերձ տարածաշրջանների զարգացման համալիր ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունում/:

### 12.3. Քաղաքացիական հասարակություն

748. Քաղաքացիական հասարակության կայացումը Հայաստանում ունի իր առանձնահատկությունները և պայմանավորված է երկրի սոցիալ-տնտեսական, մշակութային, պատմական, քաղաքական բնութագրիչներով:

749. Ըստ արևմտյան որոշ մասնագետների կարծիքի՝ քաղաքացիական հասարակության երեք կարևոր բաղադրիչներն են պետության տնտեսական համակարգը, գաղափարախոսությունը և քաղաքական կառուցվածքը:

750. Սյունիքի մարզում այս երեք տարրերի օպտիմալ համադրումը կարող է ապահովել քաղաքացիական հասարակության կայացման արդյունավետ ճանապարհ:

751. Ընդհանուր առմամբ հասարակության մի մասը կրավորական և սպասողական դիրքորոշում ունի մարզում ընթացող գործընթացների նկատմամբ, որն ունի օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ: Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգի գործունեության կարևոր ուղղություններից մեկը պետք է լինի այդ կրավորական դիրքորոշման վերացումը և հասարակության լայն խավերի ընդգրկումը, մասնակցությունը մարզային զարգացման գործընթացներին: Արդյունավետ կառավարման նախապայմաններից մեկը հենց ակտիվ քաղաքացիական հասարակության կայացումն ու որոշումների ընդունման գործընթացում բնակչության և քաղաքացիական ակտիվ խմբերի մասնակցության ապահովումն է: Քաղաքացիական հասարակության տարբեր խավերի մասնակցությունը կառավարման գործընթացներում ոչ միայն ժողովրդավարության ամրապնդման երաշխիքն է, այլև կարողությունների զարգացման բնագավառում կարևորագույն գործոններից մեկը:

752. Համայնքային և մարզային զարգացման ծրագրերի մշակման և իրականացման ընթացքում մասնակցային մոտեցումը կնպաստի տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների բարձրացմանը՝ համայնքների զարգացմանն ուղղված այլընտրանքային կարծիքների հավաքագրման և համապարփակ ծրագրերի կազմման աշխատանքներում: Միևնույն ժամանակ, ՏԻՄ-երը պետք է զարգացնեն իրենց կառավարչական հմտությունները՝ մասնակցային գործընթացներն արդյունավետ համակարգելու նպատակով: Համայնքներում ՄԶԾ-ով նախատեսված միջոցառումներ իրականացնելիս, հատկապես դրանց պլանավորման, ինչպես նաև մոնիտորինգի և գնահատման ժամանակ, մասնակցային մոտեցումը կապահովի թափանցիկություն և հրապարակայնություն, ինչպես նաև կբարձրացնի բնակչության վստահությունը տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հանդեպ:

753. 2010-2013 թվականների ընթացքում տարածքային կառավարման և տեղական

ինքնակառավարման մարմինների առավել թափանցիկ գործունեությունն ապահովելու նպատակով, մարզպետարանի աշխատակազմի, ՏԻՄ-երի և մարզի հասարակական կազմակերպությունների ջանքերով, նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

754. Մարզի տարածքում գործող ՁԼՄ-ների միջոցով պարբերաբար հաղորդումներ հեռարձակել՝ ներկայացնելով մարզպետի, մարզպետարանի և մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեությունը, ներկայացնելով գոյություն ունեցող հիմնախնդիրները և կատարվող ծրագրերը, պարբերաբար հրապարակել առավել լայն կիրառություն ունեցող օրենքների և նորմատիվ իրավական ակտերի, դրանցում կատարվող փոփոխությունների վերաբերյալ հաղորդագրություններ՝ տալով պարզաբանումներ և մեկնաբանություններ:

755. Պարբերաբար և համակարգված ձևով կազմակերպել մարզպետի, նրա տեղակալների և մարզպետարանում այլ ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց այցելությունները համայնքներ, որոնք պետք է ուղեկցվեն տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքի բնակչության հետ հանդիպում-քննարկումներով, որոնց ժամանակ մարզի առաջին դեմքերից բնակչությունը հնարավորություն կունենա ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և բացատրություններ:

756. Մարզի զարգացման ծրագրի, այդ թվում՝ մարզի տարածքում պետական բյուջեի և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի մասին պետք է պատրաստվեն հանրամատչելի տեղեկատվական թերթիկներ և առաքվեն բոլոր համայնքներին:

757. Հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին էլ ավելի մասնակից դարձնել մարզի խորհրդի միստերին, ինչպես նաև մարզպետարանում ձևավորվող ժամանակավոր հանձնաժողովների աշխատանքներին:

758. Մարզպետարանի, մարզում գործող պետական մարմինների գործունեությունը հնարավորինս հրապարակային, թափանցիկ և պատասխանատու դարձնելու նպատակով, անհրաժեշտ է ներդնել պատասխանատու մարմինների և պաշտոնատար անձանց հաշվետվության նոր համակարգ: Այս համակարգի ձևավորումը նույնպես պետք է իրականացվի մարզում գործող ոչ-պետական կազմակերպությունների գործունե մասնակցությամբ:

759. Մարզում կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական ուղղությունը պետք է լինի մարզպետարանի, պետական մարմինների գործառույթների հստակեցումը և կառավարման համակարգի կատարելագործումը:

760. Մարզում կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում արդյունավետ կլինի.

- 1) առավելագույնս կատարելագործել և հստակեցնել պետական ծառայության հիմքերը
- 2) թափանցիկ և մատչելի դարձնել պետական տնտեսական քաղաքականության իրագործման մեխանիզմները, ապահովել բնակչության լայն շրջանակների մասնակցությունը պետական հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում
- 3) հետևողականորեն բարձրացնել զանգվածային լրատվական միջոցների և հասարակական միավորումների դերը պետական հակակոռուպցիոն ռազմավարության քարոզչության խնդրում:

761. Կոռուպցիայի դեմ պայքարը պետք է լինի առավելագույնս հրապարակային հասարակության իրազեկման և նրա կողմից վերահսկման պայմաններում: Դա պետք է արտահայտվի ինչպես կոռուպցիայի հետևանքների, այնպես էլ կիրառված պատժամիջոցների վերաբերյալ իրազեկմամբ, ինչը կօգնի վերականգնել

հասարակության վստահությունն ու հավատն արդարացի և անաչառ պետական ծառայության նկատմամբ:

762. Սկզբնական շրջանում ստեղծել քաղաքային և մի քանի գյուղական համայնքների պաշտոնական ինտերնետային էջեր, որոնք հետագայում նախատիպ կհանդիսանան գյուղական մյուս բոլոր համայնքների համար:

763. Փորձնական ծրագրեր իրականացնել մի քանի համայնքներում՝ կազմակերպելու համայնքի զարգացման ծրագրի, բյուջեի կամ գլխավոր հատակագծի և հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների հրապարակային քննարկումներ:

764. Համայնքների հնարավորություններից ելնելով հրապարակել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի և համայնքի բյուջեի հանրամատչելի և վերլուծական ձեռնարկներ և դրանք անվճար տարածել համայնքի բնակչությանը:

765. Հասարակական կազմակերպությունների և համայնքի ակտիվ հասարակական խմբերի ներկայացուցիչներին հրավիրել համայնքի ավագանու նիստերին:

766. Համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու որոշումների մեկական օրինակ տեղադրել համայնքի ղեկավարի նստավայրի հանրության համար մատչելի վայրերում:

767. Հրապարակել բոլոր այն որոշումները, որոնք վերաբերում են պետության կամ միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող սերմացուների, վառելիքի, պարարտանյութերի և այլ նյութերի բաշխմանը:

768. Հասարակական կազմակերպությունների ջանքերով կազմակերպել բնակչության իրազեկման ծրագրեր, որոնց արդյունքում բնակչությանն իրավական տեղեկատվություն և խորհրդատվություն կտրամադրվի գույքային իրավունքների գրանցման, պայմանագրային հարաբերությունների հաստատման և բանկային վարկերի ստացման վերաբերյալ:

769. «Տեղական հանրաքվեի մասին» օրենքի դրույթներից ելնելով՝ նախաձեռնել և իրականացնել համայնքային հանրաքվե՝ ստեղծելով դրա նախադեպ և համայնքային հետաքրքրություն ունեցող հարցի քննարկում հանրաքվեի միջոցով:

770. Քաղաքացիական հասարակության ակտիվության ապահովման համար անհրաժեշտ է հանրային կառավարման հարաբերություններում մշտական մասնակցային դեր վերապահել գոյություն ունեցող տարաբնույթ կազմակերպություններին և հասարակական խմբերին (օրինակ, ջրօգտագործողների ընկերություններ, համայնքների միություններ, ՓՄՁ զարգացման մարզային խորհուրդ, դպրոցական խորհուրդներ և այլն):

771. Համայնքներին խրախուսելու համար մարզպետարանում ստեղծել «Տարվա համայնք» պաշտոնական մրցանակաբաշխություն, որը կնախատեսի որոշակի ֆինանսական և այլ տիպի օգնություններ շահող համայնքին:

772. Ցանկալի է Հ1 հեռուստաալիքով ունենալ «Մարզային ժամ» ծրագիր, որը պարբերաբար, Հանրապետության մասշտաբով մեկ ամսվա ընթացքում ընդգրկուն մեկ հաղորդում կհատկացնի յուրաքանչյուր մարզի:

**13. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

**13.1 Քարաթափերի կանխարգելում**

Հիմնախնդրի նկարագրությունը և ներկա վիճակը

773. Մարզի տարածքի բարդ երկրաբանական կառուցվածքը, ռելիեֆային առանձնահատկությունները, լեռնային ապարների որոշակի կազմավորումների տարածվածությունը, կլիմայական պայմանները և սեյսմիկ իրավիճակը նպաստավոր պայմաններ են ստեղծում քարաթափերի առաջացման համար: Քարաթափերի առաջացման և զարգացման գործոններն են՝ լեռնային ապարների հողմահարումը, ինտենսիվ ճեղքավորությունը, մակերևութային և ստորգետնյա ջրերի ներգործությունը, սեյսմիկ ցնցումները, ինչպես նաև պայթեցման աշխատանքները:

774. Մարզի տարածքում քարաթափերի խնդրի կարգավորումն ունի ռազմավարական նշանակություն, ուստի դրա հիմնովին լուծումը պահանջում է ՀՀ կառավարության և մարզային իշխանությունների լուրջ միջամտությունը և վերահսկողությունը՝ ապահովելու համար մարզի քարաթափերի գոտիներում գտնվող բնակավայրերի կայուն զարգացումը, ենթակառուցվածքների, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների շահագործումը:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի գործառույթները քարաթափերի կանխարգելման հիմնախնդիրների լուծման հարցում

Մարզպետարանը՝

- 1) համայնքի ղեկավարի ներկայացմամբ բնագավառի համապատասխան ոլորտի պատասխանատու լիազոր մարմնին է ներկայացնում տեղեկատվություն քարաթափերի, դրա հետ կապված արտակարգ իրավիճակի կամ վտանգի մասին
- 2) կազմակերպում է անվտանգության ապահովմանն ուղղված առաջնահերթ միջոցառումներ
- 3) կազմակերպում է գույքագրում ու միջոցառումների ծրագրերի մշակում և ներկայացնում համապատասխան ոլորտի պատասխանատու լիազոր մարմնին
- 4) կազմակերպում է ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող աշխատանքների իրականացումը:

Աղյուսակ 13.1. ՀՀ Սյունիքի մարզի բնակավայրերում քարաթափերի վտանգավոր գոտիները

| Հ/Հ | Բնակավայրի անվանումը | Քարաթափման տարածքը /Հա/ |
|-----|----------------------|-------------------------|
| 1   | ք. Կապան             | 2.2                     |
| 2   | ք. Մեղրի             | 1.5                     |
| 3   | ք. Ազարակ            | 0.8                     |
| 4   | Շվանիձոր             | 0.3                     |
| 5   | Գեղի                 | 0.3                     |
| 6   | Կավճուտ              | 1.0                     |
| 7   | Խոզնավար             | 0.5                     |
| 8   | Վաղատուր             | 5.0                     |
| 9   | Նռնաձոր              | 0.3                     |

|    |          |     |
|----|----------|-----|
| 10 | Կարճևան  | 0.3 |
| 11 | Լեռնաձոր | 1.0 |
| 12 | Չագեձոր  | 0.5 |

### 13.2. Բնական աղետներ

775. Սյունիքի մարզում բնական աղետներից առավել վտանգ են ներկայացնում սողանքները, սելավները, գարնանային վարարումների հետևանքով առաջացած ջրհեղեղները:

776. Մարզի տարածքում առկա են յոթ տասնյակից ավելի սողանքային գոտիներ: Առավել ակտիվ և վտանգավոր սողանքային գոտիները գտնվում են Կապանի, Գորիսի և Սիսիանի տարածաշրջաններում:

789. Սողանքային գոտիներից յոթը գտնվում է Կապան քաղաքում:

777. Կապան քաղաքի Մուշեղ Հարությունյան փողոցի սողանքային գոտին առաջին անգամ շարժվել էր 1994թ. օգոստոսին, որի հետևանքով 3 մարդ մահացել էր, ինչպես նաև տեղաշարժվել էր 400.000մ<sup>3</sup> գրունտ: Իսկ երկրորդ անգամ սողանք տեղի էր ունեցել 1996թ. փետրվար ամսին: Նշված փողոցում իրացման տակ էին ընկել 37 տուն և օժանդակ շինություններ: Սողանքային գերխոնավացման աղբյուրը գրունտային ջրերի առկայությունն էր:

778. Ակտիվ և վտանգավոր սողանքային գոտի է նաև Կապանի Արփիկ թաղամասի 80 հա տարածքը, որից առավել ակտիվ գործողության մեջ է գտնվում 15 հա:

779. Սողանքային գոտի է նաև Կապանի կայարանամերձ տեղամասը՝ 8 հա, Համլետաշեն (Շղարշիկ) տեղամասը՝ 4 հա, Բաղաբուրջ տաղամասը՝ 10 հա և Գեղանուշ գյուղի 32 հա տարածքները:

780. Սիսիանի տարածաշրջանում սողանքային գոտում են գտնվում Շաղաթ և Բալաք գյուղերը:

781. Գորիսի տարածաշրջանում սողանքային գոտի է նաև Քարահունջ գյուղը: Սողանքային երևույթներ են նկատվել նաև Վերիշեն գյուղի բարձրադիր մասի Ղազի բնակավայրի տարածքում: Սողանքային գոտում է գտնվում նաև Երևան-Կապան ավտոճանապարհի 244կմ հատվածը:

782. Գարնանային հնարավոր հեղեղումները կանխարգելելու նպատակով մարզի տարածքում պետք է կատարվեն հետևյալ միջոցառումները.

- 1) Կապան քաղաքում Ողջի և Կավարտ գետերի գրունտի մաքրում և տեղափոխում
- 2) Գորիս քաղաքում Վարարակն գետի հունի մաքրում, հենապատերի և կամուրջների հիմքերի ամրացում
- 3) Սպանդարյան, Շորինձոր, Սանձիձոր, Քոլատակ հեղեղատարների հունի մաքրում
- 4) Մեղրի քաղաքում գետի հունի մաքրում, Գաբիոնդի շարվածքում հենապատի կառուցում
- 5) Սիսիան քաղաքում Որոտան գետի հունի մաքրում տիղմից, Հարամու գետի հենապատի կառուցում:

### 13.3 Տեխնածին աղետներ

783. Մարզում տեխնածին վթարներից են ավտովթաները, կենցաղային և անտառային հրդեհները, պայթյունները, շենքերի, շինությունների հանկարծակի փլուզումները:

784. Վերոնշյալ աղետների պատճառ են հանդիսանում հիմնականում բնակչության կողմից անվտանգության կանոնների չիմացությունը և ոչ ճիշտ կիրառությունը:

785. Տեխնածին աղետներից խուսափելու և նվազագույնի հասցնելու համար կարևորվում է տեղական հեռուստատեսության դերը՝ բնակչության շրջանում

բացատրական աշխատանքների անցկացման, անվտանգության կանոնների իրազեկման հարցում:

#### **13.4. Բնական և տեխնածին աղետների ռիսկի նվազեցում**

786. Բնական և տեխնածին աղետների ժամանակ բնակչության պաշտպանվածության խնդիրը պետք է միշտ լինի բարձր մակարդակի վրա:

787. Առաջին և ամենակարևոր պայմանը ռիսկերի նվազեցման գործընթացում հասարակության պատրաստվածությունն է բնական և տեխնածին աղետներին:

788. Լավ տեղեկացված բնակչությունը մեծ պատասխանատվությամբ է արձագանքում անվտանգության աստիճանի բարձրացման նպատակով իրականացվող ամեն մի գործողության:

789. Ռիսկերի նվազեցման գործընթացում կարևորվում է աղետների վերաբերյալ տեղեկատվական, վերլուծական, ինչպես նաև ազդարարման, իրազեկման աշխատանքների կազմակերպման և իրագործման դերը:

790. 2010-2013թթ. մարզում բնական և տեխնածին աղետների ռիսկի նվազեցման համար կպահանջվի 487.0 մլն. դրամ ֆինանսական միջոցներ ([Հավելված 13.1](#)):



#### 14. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

791. ՄԶԾ առաջընթացի տեսանկյունից չափազանց կարևորվում է իրականացվող միջոցառումների մոնիտորինգը և գնահատումը, որն անհրաժեշտ է նաև նպատակային շահագրգիռ կողմերի հետ հետադարձ կապի պահպանման և նրանց տեսակետներն ու կարիքները հաշվի առնելու համար:

792. Մոնիտորինգի և գնահատման հայեցակարգի մշակման, իսկ հետագայում նաև դրա իրականացման նպատակով ՀՀ Սյունիքի մարզպետի 2009թ. փետրվարի 11-ի թիվ 25-Ա որոշմամբ հաստատվել է մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խմբի կազմը, որտեղ ընդգրկվել են մարզպետարանի ոլորտային ստորաբաժանումների ղեկավարներ և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ

793. Խմբերի ղեկավարը Սյունիքի մարզպետի տեղակալ է:

794. ՄԳ համակարգով նախատեսված խմբի գործունեության արդյունքները ամփոփվում են ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության կողմից:

ՄԶԾ ՄԳ-ն մի համակարգ է, որը

- 1) համապատասխանում է ԿԶԾ մոնիտորինգի համակարգին
- 2) ուշադրության կենտրոնում է պահում առաջնայնություններն արտացոլող ցուցանիշները
- 3) ճկուն է
- 4) նպաստում է կարևոր ցուցանիշների համար համայնքային մակարդակի տվյալների ստեղծմանը
- 5) թափանցիկ է

#### Տարեկան աշխատանքային պլան

795. ՄԶԾ-ի իրականացմանն աջակցելու, աշխատանքները համակարգելու, ինչպես նաև ՄԳ իրականացման համար պլանավորված միջոցառումները, արդյունքները և ֆինանսական ներդրումները ամփոփ ներկայացնող փաստաթղթի առկայության նպատակով մշակվում է Տարեկան աշխատանքային պլան (ՏԱՊ), որի նպատակն է.

- 1) Համախմբել բոլոր նախատեսվող միջոցառումները ՄԶԾ նպատակների իրականացման համար
- 2) Ներառել միջոցառումների իրականացման ցուցանիշները և արդյունքները տրամաբանական հենքում
- 3) Սահմանել այն կազմակերպությունները, որոնք պատասխանատու են կոնկրետ միջոցառումների իրականացման համար
- 4) Կոնկրետացնել միջոցառումների իրականացման ժամկետները
- 5) Սահմանել ֆինանսական միջոցներով չափահովված միջոցառումների համար ֆինանսավորման ռազմավարությունը:

796. Ընդհանուր առմամբ ՏԱՊ-ում ներկայացվում են այն միջոցառումները, որոնց իրականացման համար պատասխանատու է մարզպետարանը, ինչպես նաև արձանագրվում են այն հիմքերը, որոնց վրա կառուցվելու են մոնիտորինգի աշխատանքները: Այս փաստաթղթում ներկայացվում է նաև ֆինանսական խնդիրների նկարագիրը, ինչպես նաև ֆինանսական միջոցներով դեռևս չափահովված միջոցառումների իրականացման համար ֆինանսական աղբյուրների բացահայտման ռազմավարությունը:

797. ՏԱՊ-ի բոլոր նախատեսվող միջոցառումները ամփոփված են Տրամաբանական

հենքում:

798. Տրամաբանական հենքն օգնում է.

- 1) նկարագրել այն խնդիրները, որոնց իրականացմանն ուղղված է տվյալ միջոցառումը
- 2) բացահայտել այն կարևոր նկատառումները, որոնք պետք է հաշվի առնել արտաքին գործոնների առումով, քանի որ դրանք կարող են ազդել դրված գերակա նպատակների իրականացման վրա
- 3) սահմանել այն ցուցանիշները, որոնք կիրառվելու են տվյալ նպատակի իրականացումը չափելու համար
- 4) բացահայտել, թե որ աղբյուրներից են ստացվելու յուրաքանչյուր ցուցանիշը չափելու համար անհրաժեշտ տվյալները
- 5) հատկորոշել այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ է իրականացնել, ինչպես նաև սահմանել այն ժամկետները, որոնց սահմաններում պետք է իրականացվեն տվյալ նպատակները
- 6) բացահայտել անհրաժեշտ միջոցները և ներդրումները:

799. ՄԶԾ մոնիտորինգի համակարգը համապատասխանեցված է ՀՀ ԿԶԾ-ի մոնիտորինգի համակարգին և ներառում է այն բոլոր ցուցանիշները, որոնք հնարավոր կլինի գնահատել մարզային մակարդակով:

800. ԿԶԾ մոնիտորինգի համակարգում տեղ են գտել 177 ցուցանիշ, որոնցից 36-ը համարվում են հիմնական և վերաբերում են վերջնական ցուցանիշներին, 141-ը՝ գործոնային և վերաբերում են միջանկյալ ցուցանիշներին: Այդ ցուցանիշները դասակարգվում են ըստ հետևյալ բաղադրիչների՝

- 1) Աղքատության կրճատումն և բարեկեցության աճ
- 2) Կրթություն
- 3) Առողջապահություն
- 4) Հիմնական հանրային ծառայություններ և բնակարանային հիմնախնդիրներ
- 5) Մաղաքացիական մեկուսացվածություն և անհավասարություն
- 6) Բնապահպանական կայուն զարգացում

801. ՄԶԾ ՄԳ իրականացման փուլում կարևոր է նաև, որ մարզպետարանը համագործակցի ԿԶԾ քարտուղարության հետ, քանի որ ՄԶԾ-ներում նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնց իրականացումը պետք է ապահովեն հենց մարզպետարանները: Դրանք են.

- 1) ԿԶԾ-ով նախատեսված մարզում իականացվող միջոցառումների մոնիտորինգ
- 2) Մազրի մակարդակով ԿԶԾ-ի ցուցանիշների մոնիտորինգ և վերլուծություն
- 3) Պետական աջակցության կարիք ունեցող ընտանիքների մոնիտորինգ և գնահատում
- 4) Քաղաքացիական հասարակության կառույցների զարգացում
- 5) ԿԶԾ-ի մասին հանրության իրազեկության բարձրացում:

### **ՄԶԾ ՄԳ համակարգի կառուցվածքը**

802. ՄԶԾ մոնիտորինգի և գնահատման համակարգը բաղկացած է չորս հիմնական բաղադրիչներից.

- 1) քաղաքականության ուսումնասիրում
- 2) ՄԶԾ ցուցանիշների և թիրախների վերանայում
- 3) մասնակցային մոնիտորինգ և գնահատում
- 4) ազդեցության գնահատում:

803. Քաղաքականության վերլուծության հիմքը ՏԱՊ-ի տրամաբանական հենքն է և մոնիտորինգի այս տեսակի ժամանակ ՄԳ խումբը քննության է առնում նախատեսված միջոցառումների առաջընթացը, բացահայտում է խոչընդոտները և հետազոտում անելիքները:

804. ՄԶԾ-ի ցուցանիշները և ոլորտները վերանայվում, խմբավորվում են ըստ ՄԶԾ-ի կարևորագույն թեմաների, այն է՝

- 1) տնտեսական զարգացում
- 2) կենսամակարդակ
- 3) ՓՄՁ զարգացում
- 4) գյուղատնտեսության զարգացում
- 5) առողջապահություն
- 6) կրթություն
- 7) սոցիալական պաշտպանություն
- 8) համայնքային զարգացում
- 9) շրջակա միջավայրի պաշտպանություն:

805. Հաստատված ժամանակացույցի համաձայն ՀԿ-ների կողմից իրականացվում է մասնակցային մոնիտորինգի և գնահատման միջոցառում՝ մասնակցային որևէ մեթոդաբանության կիրառմամբ:

806. Մասնագիտական անկախ գնահատում իրականացնելու նպատակով, կազմակերպվում է ՄԶԾ որևէ ոլորտի միջոցառումների ազդեցության գնահատում: Այս հետազոտությունները թույլ են տալիս.

- 1) անցկացնել քաղաքականության ուսումնասիրության ու ցուցանիշների մոնիտորինգի եզրակացությունների համադրում
- 2) ստանալ ՄԶԾ-ի իրականացման ու արդյունքների խորացված պատկեր՝ ըստ առանձին կարևորագույն ոլորտների և ունենալ մի մեխանիզմ, որի շնորհիվ կարելի է տեղերից ստանալ ՄԶԾ-ի արդյունավետության վերաբերյալ կարծիքներ (ինչպես, օրինակ, աղքատների համար առանձին ծառայությունների մատչելիությունը):

807. ՄԳ համակարգի առաջին և երկրորդ տարրերն իրականացվում են մարզպետարանի ՄԳ խմբի կողմից: Այս երկու տարրերը կարելի է համարել ներքին մոնիտորինգ և գնահատում: Իսկ երրորդ և չորրորդ տարրերը համարվում են արտաքին ՄԳ տեսակ, քանի որ դրանք հիմնականում իրականացվում են քաղաքացիական հասարակության սուբյեկտների և անկախ մասնագետների կողմից՝ ապահովելով նաև ՄԳ համակարգի համապարփակությունը և չեզոքությունը: Բացի այդ այս տարրերի առկայությունը թույլ է տալիս հանրության լայն շրջանակներին մասնակցելու և վերահսկելու մարզային մակարդակում զարգացման նախաձեռնությունների պլանավորման, իրականացման և գնահատման գործընթացները: Կարևոր է նշել նաև, որ վերջին երկու տարրերը հնարավորություն են տալիս քանականապես տվյալները համալրել որակական գնահատականներով, ինչն ամբողջական է դարձնում ՄԳ ընդհանուր պատկերը և օգնում բարձրացնել պլանավորման արդյունավետությունը:

808. Այնուամենայնիվ, ՄՄԳ և ազդեցության գնահատումը ևս համակարգվում է մարզպետարանի ՄԳ խմբի կողմից, քանի որ վերջինս պատասխանատու է ողջ համակարգի գործառնության համար: Սակայն, այս պարագայում մարզպետարանի ՄԳ խմբի մասնակցությունը սահմանափակվում է իրականացնողներին ցուցաբերվող տեխնիկական աջակցությամբ և տեղեկատվության տրամադրմամբ: Այսպիսով՝ ամրապնդվում է նաև կապը մարզպետարանի և մարզի քաղաքացիական հասարակության խմբերի հետ:

## ՄԶԾ-ի մոնիտորինգի ցիկլը

809. Յուրաքանչյուր տարվա ընթացքում, սկսած հունվարից մոնիտորինգի տվյալները օգտագործվում են ՄԶԾ-ի տարեկան վերանայման և ՏԱՊ-ի մշակման նպատակով: Ընդհանուր առմամբ, ՄԳ ցիկլը ենթադրում է.

- 1) միջանկյալ (կիսամյակային) ընթացիկ հաշվետվություն, որը պատրաստվում է հուլիս-օգոստոս ամսիներին և հիմնվում է քաղաքականությունների ուսումնասիրության վրա
- 2) տարեկան հաշվետվություն, որը պատրաստվում է տարվա վերջում և հաջորդ տարվա սկզբին: Այն կազմվում է ՄԳ համակարգի բոլոր տարրերի վերաբերյալ առկա հաշվետվությունների ամփոփ վերլուծության արդյունքում
- 3) մոնիտորինգի սեմինար-խորհրդակցություն, որը անց է կացվում հաջորդ տարվա մարտ ամսին, որի ընթացքում բոլոր ներգրավված կողմերի հետ միասին քննության են առնվում մոնիտորինգի տարեկան ընթացիկ հաշվետվությունը և սահմանվում են հաջորդ տարվա հիմնական խնդիրները:

## ՄԳ հաշվետվությունները

810. Մոնիտորինգի միջանկյալ և տարեկան հաշվետվությունները պատրաստվում են մարզպետարանի ՄԳ խմբի կողմից:

811. Միջանկյալ հաշվետվությունը ներառում է տրամաբանական հենքի հիման վրա կատարած քաղաքականությունների վերլուծության արդյունքները: Այն մշակվում է ՏԱՊ-ի տարվա առաջին կիսամյակում իրականացված և իրականացվելիք միջոցառումների առաջընթացի գնահատման արդյունքում: Միջանկյալ հաշվետվությունը պատրաստվում է հուլիս-օգոստոս ամիսներին:

812. Տարեկան հաշվետվությունը ամփոփում է տարվա ընթացքում ՏԱՊ-ով նախատեսված բոլոր միջոցառումների վերաբերյալ ՄԶԾ ՄԳ համակարգի չորս տարրերի իրականացումից ստացված արդյունքների ամփոփ վերլուծությունները: Այն պատրաստվում է դեկտեմբեր-հունվար ամիսներին և ներառում է հետևյալ բաժինները.

- 1) ԿԶԾ-ի մոնիտորինգի պետական համակարգի ամփոփագիրը՝ շեշտը դնելով մարզին հատուկ հիմնախնդիրների վրա
- 2) ՄԶԾ-ի շրջանակներում իրականացված միջոցառումները և դրանց գծով կատարված ծախսերը
- 3) Տարվա ընթացքում իրականացված գնումները
- 4) ՄԶԾ-ով սահմանված միջոցառումների իրականացման ընթացքի ամփոփումը, քաղաքականությունների ուսումնասիրության արդյունքները՝ տարվա կտրվածքով
- 5) Տարեկան առաջընթացը՝ ՄԶԾ-ի մոնիտորինգի ցուցանիշների նկատմամբ
- 6) Մասնակցային մոնիտորինգի և գնահատման ամփոփ արդյունքները
- 7) Ազդեցության գնահատման ամփոփ արդյունքները
- 8) Հաջորդ տարվա հիմնախնդիրներ, այդ թվում՝ քաղաքականությունների ուրվագծում:

813. ՄԳ տարեկան հաշվետվությունը պատրաստելուց հետո կազմակերպվում է ՄԳ արդյունքները ամփոփող տարեկան սեմինար-խորհրդակցություն, որին մասնակցում են ինչպես մարզային խորհրդի, այնպես էլ քաղաքացիական հասարակության և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչները: Տարեկան սեմինար-խորհրդակցությունը կազմակերպվում է մոնիտորինգային գործունեության վերաբերյալ եզրակացությունների քննարկման և տարածման համար:

814. Սենինար-խորհրդակցությունը պետք է դիտվի նաև որպես կարևոր մի նախաձեռնություն քաղաքացիական հասարակությունը ՄՁԾ-ի մոնիտորինգի մեջ ընդգրկելու, ինչպես նաև ՄՁԾ-ի հաջողությունները ցուցադրելու և նոր դոնորներ ներգրավելու համար:

815. Մոնիտորինգի խմբի աշխատանքներին պարբերաբար պետք է հետևի Սարգային խորհրդի կազմում ընդգրկված մարզային զարգացման հանձնաժողովը: Նրա դերը վճռորոշ է մոնիտորինգի համակարգի կայացման և արդյունավետ գործառնության ապահովման գործում:

816. Չափազանց կարևոր է ՄՁԾ ՄԳ համակարգի ինստիտուցիոնալացմանն ուղղված քայլերի իրականացումը: Խոսքը վերաբերում է հատկապես մասնակցային ՄԳ-ին և ազդեցության գնահատմանը:

817. Այս համակարգի կենսունակության և հետագա զարգացման երաշխիքը կլինի ՄԳ-ի որպես մարզային զարգացման ինստիտուցիոնալ համակարգի անբաժանելի մասի ամրագրումը ՄՁԾ մոդելի բաղադրիչների կազմում: Այս համակարգի արմատավորումը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ իրականացնել ԿՁԾ-ի ՄԳ համակարգը մարզային մակարդակում, բարձրացնել տարբեր դոնորների կողմից այս բնագավառում իրականացվող միջոցառումների հասցեականությունը:

Աղյուսակ 14.1. ՄՁԾ մոնիտորինգի և գնահատման ընթացակարգը

| Մոնիտորինգի և գնահատման բաղադրիչը           | Իրականացման նպատակը  | Իրականացման ընթացակարգը  | Արդյունքը  | Իրականացնող կողմը                 |
|---|--|--|--|-----------------------------------|
| Քաղաքականության վերամայում                  | Տարին երկու անգամ՝ ՍԱԴ-ի նկատմամբ առաջընթացը չափելու նպատակով: | 1. ՍԱԴ-ի տրամաբանական հենքով նախատեսված միջոցառումների, դրանց արդյունքների և թիրախների վերլուծություն:<br>2. ՍԱԴ-ի իրականացման ընթացքում ծագած հիմնախնդիրների բացահայտում:<br>3. Հաշվետու հաջորդ ժամանակաշրջանում իրականացվելիք միջոցառումների արդյունավետության բարձրացմանն ուղղված հանձնարարականների մշակում:<br>4. Արդյունքների վերլուծություն և հաշվետվության պատրաստում:<br>5. Շահագրգիռ բոլոր կողմերի իրազեկում: | Կիսամյակային հաշվետվություն                        | Մարզպետարանի ՄԳ խումբ             |
| ՄՁԾ ցուցանիշների և թիրախների վերլուծություն | ՄՁԾ-ի ցուցանիշների վերլուծություն և ցուցակի թարմացում          | 1. ՄՁԾ և մարզային մակարդակում ԿՁԾ առաջընթացը գնահատող ելակետային ցուցանիշների հավաքագրում:<br>2. Վերոհիշյալ ցուցանիշների թարմացում:<br>3. Ցուցանիշների համեմատական վերլուծություն՝ ՄՁԾ ազդեցությունը գնահատելու նպատակով:<br>4. Արդյունքների վերլուծություն և հաշվետվության պատրաստում<br>5. Շահագրգիռ բոլոր կողմերի իրազեկում:  | Մոնիտորինգի և գնահատման տարեկան հաշվետվություն     | Մարզպետարանի ՄԳ խումբ             |
| Մասնակցային մոնիտորինգ և գնահատում          | ՄՁԾ-ի առաջընթացի վերաբերյալ հանրության կարծիքների և            | 1. ՄՁԾ համապատասխան ոլորտի/ների ընտրություն<br>2. ՄՄԳ մեթոդաբանության ընտրություն<br>3. Հետազոտական գործիքների մշակում, մեթոդների և ընթացակարգերի  | Մասնակցային մոնիտորինգի և գնահատման հաշվետվություն | Քաղաքացիական հասարակության խմբեր, |

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

|                       |   |  |                                      |                   |
|-----------------------|---|--|--------------------------------------|-------------------|
|                       | արձագանքների վերլուծություն                   | <p>հստակեցում</p> <p>4. Հետազոտական խմբի ձևավորում</p> <p>5. Դաշտային աշխատանքների իրականացում</p> <p>6. Արդյունքների վերլուծություն և հաշվետվության պատրաստում</p> <p>7. Շահագրգիռ բոլոր կողմերի իրազեկում</p>  |                                      | տեղական<br>ՀԿ-ներ |
| Ազդեցության գնահատում | ՄՁԾ որևէ ոլորտում մասնագիտական հետազոտություն | <p>1.ՄՁԾ համապատասխան ոլորտի/ների ընտրություն</p> <p>2. ՄՄԳ մեթոդաբանության ընտրություն</p> <p>3. Հետազոտական գործիքների մշակում, մեթոդների և ընթացակարգերի հստակեցում</p> <p>4. Հետազոտական խմբի ձևավորում</p> <p>5. Դաշտային աշխատանքների իրականացում</p> <p>6. Արդյունքների վերլուծություն և հաշվետվության պատրաստում</p> <p>7. Շահագրգիռ բոլոր կողմերի իրազեկում</p> | Ազդեցության գնահատման հաշվետվություն | Անկախ փորձագետներ |

**15. ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ**

818. ՄԶԾ իրագործման համար պահանջվող ֆինանսական միջոցները և նրանց ծախսման ուղղությունները գնահատված են՝ պահանջվող ընդհանուր գումարը կազմում է ավելի քան 71.9 մլրդ դրամ, արտարժույթով նախատեսվող ՄԶԾ ֆինանսավորման ծավալները՝ 437.9 մլն ԱՄՆ դոլար և 208.9 մլն եվրո: Հաշվի առնելով առկա տնտեսական միտումները և մակրոտնտեսական ցուցանիշների հնարավոր փոփոխությունները, առանձին ոլորտների ֆինանսավորումը նախատեսվել է ոչ բոլոր ուղղություններով, իսկ փոքր և միջին ձեռնարկատիրության, արդյունաբերության, էներգետիկայի և մի քանի այլ ոլորտների ֆինանսավորումը ծրագրով չի նախատեսվել: Այդ ոլորտների համար նշվել են զարգացման համար նախատեսվող միջոցառումները, դրանց ֆինանսավորման հնարավոր ուղիները:

819. **Սոցիալական ոլորտների** ընդհանուր ֆինանսավորումը կազմում է 27.981 մլրդ դրամ՝ ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 38.9%-ը:

820. **Կրթության ոլորտի** ֆինանսավորումը հիմնականում ուղղված է դպրոցաշինությանը՝ կրթական օբյեկտների կառուցմանը և նորոգմանը: Ոլորտի ֆինանսավորման համար անհրաժեշտ է շուրջ 10.371 մլրդ դրամ /ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 14.4%-ը/:

821. **Մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի** ոլորտի ֆինանսավորման համար անհրաժեշտ է 2.767 մլրդ դրամ (3.8%), որի սահմաններում նախատեսվում է իրագործել 23 ծրագիր, որոնցից են՝ Կապանի երկրագիտական թանգարանի շենքի, մշակույթի պալատի, լողավազանի հիմնանորոգումները, մարմնամարզության և արվեստի դպրոցների ջերմամատակարարման ցանցերի կառուցումը, Սիսիան և Մեղրի քաղաքների մշակույթի պալատների հիմնանորոգումները, Մեղրիում տիպային հրաձգարանի և մարզադպրոցի կառուցումը, Գորիսի մարզադպրոցի դահլիճի հիմնանորոգումը, իննը գյուղական համայնքներում մշակույթի տների և ակումբի շենքերի վերանորոգումը:

822. **Առողջապահության ոլորտի** ֆինանսավորումը կազմում է 14.766 մլրդ դրամ (20.5%): Նախատեսվում է իրականացնել բժշկական մի շարք կենտրոնների, հիվանդանոցների շենքերի հիմնանորոգումը, 24 գյուղական համայնքների ամբուլատորիաների, բուժկետերի վերանորոգումը և անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերումը, արտահիվանդանոցային պոլիկլինիկական, հիվանդանոցային, շտապ օգնության, ախտաբանաանատոմիական և այլ ծառայությունների ֆինանսավորումը:

823. **Սոցիալական պաշտպանության ոլորտի ֆինանսավորման համար** կպահանջվի 77 մլն դրամ (0.1%): Նախատեսվում է ֆինանսավորել թեք հարթակների կառուցումը քաղաքային համայնքների մշակութային և սպորտային կենտրոններում, Գորիսում առողջակրթական վերականգնողական կենտրոնի ստեղծումը, 20 հաշմանդամների համար առողջարանային ուղեգրերի ձեռքբերումը, մարզում տարբեր սպորտային միջոցառումների անցկացումը և այլն:

824. **Արդյունաբերություն և էներգետիկայի ոլորտում** ՄԶԾ-ով ֆինանսավորում չի նախատեսված:

825. **Գյուղատնտեսության ոլորտի** ֆինանսավորման համար նախատեսված է ծախսել 2.923 մլրդ դրամ (4.1%): Ոլորտի ֆինանսավորումն ուղղված է ոռոգման համակարգերի կառուցմանը, նորոգմանը, արհեստական սերմնավորման կայանների, մեքենատրակտորային պարկերի ստեղծմանը, անասնաբուժական տեղամասերի վերակառուցմանը, անասնաբուժական լաբորատորիաների վերանորոգմանը, դրանց համար անհրաժեշտ գույքի ձեռքբերմանը, գյուղական համայնքներում կրծողասպան աշխատանքների իրականացմանը:

826. **Բնապահպանության ոլորտի** ֆինանսավորման համար նախատեսվում է ծախսել 399 մլն դրամ (0.6%): Ֆինանսավորումը նախատեսվում է ուղղել տարածաշրջաններում

որսահանդակների ստեղծմանը, Օդային և ջրային ավազանի աղտոտվածության քիմիական վերլուծության շրջիկ լաբորատորիայի ձեռքբերմանը:

827. **Ջրոսաշրջության ոլորտում** քանի որ Տաթևի վանական համալիրի վերանորոգման աշխատանքներն արդեն ընթացքի մեջ են, առկա տնտեսական միտումներից ելնելով, զբոսաշրջության առանձին ֆինանսավորումը ծրագրով նախատեսվել է ընդամենը 42 մլն դրամ (0.1%)՝ էկոտուրիզմի ենթակառուցվածքների կառուցման համար: Տաթևի վանական համալիրի վերականգնման ծրագրի իրականացման ընթացքում անհրաժեշտությունից ելնելով զբոսաշրջության ուղղությամբ իրականացվելիք ֆինանսավորումը կվերանայվի և կկատարվեն ճշգրտումներ:

828. **Մարզային և համայնքային ենթակառուցվածքների ոլորտում** ֆինանսավորման համար նախատեսվում է ծախսել 34.839 մլրդ դրամ (48.4%): Այստեղից պարզ է դառնում, որ մարզի ծրագրի ֆինանսավորման զգալի մասը ուղղված է ենթակառուցվածքներին:

829. **Ճանապարհաշինության բնագավառում** նախատեսվում է իրականացնել մարզային նշանակության ճանապարհների հիմնական նորոգումներ, շահագործում, պահպանում, ձնեռային պահպանում և մի շարք համայնքային նշանակության ճանապարհների հիմնանորոգում: Ճանապարհաշինության համար նախատեսվում է ծախսել 11.329 մլրդ դրամ (15.7%):

830. **Ջրամատակարարման բնագավառում** ֆինանսավորումը կազմում է 16.814 մլրդ դրամ (23.4%):

Մարզի համայնքների **գազիֆիկացման** գործընթացի շարունակման համար նախատեսվում է ծախսել 6.697 մլրդ դրամ (9.3%): Գազիֆիկացման ֆինանսավորումը կընդգրկի 39 համայնք, որոնցում են մաս Մեղրի և Ագարակ քաղաքային համայնքները:

831. **Քաղաքաշինության խնդիրներին վերաբերող ոլորտում** նախատեսվում է ծախսել 5.241 մլրդ դրամ (7.3%):

833. **Արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության բնագավառում** նախատեսվում է իրականացնել բնական և տեխնաժին աղետների ռիսկի նվազեցման աշխատանքներ՝ քարաթափերի կանխարգելում, սողանքների, սելավների, հեղեղումների վտանգների վերացում: 2010-2013թթ. մարզում բնական և տեխնաժին աղետների ռիսկի նվազեցման համար նախատեսվում է ծախսել 487 մլն դրամ (0.7%):

833. Մարզի բոլոր 109 համայնքների քառամյա զարգացման ծրագրերում ընդգրկված ոլորտային կապիտալ ծրագրերի իրականացման համար պահանջվող գումարը կազմում է շուրջ 28,5 մլրդ դրամ, որը նախատեսված է համայնքների նշված ծրագրերով:

834. ՀՀ Սյունիքի մարզի ծրագրի ֆինանսավորումն ըստ բնագավառների՝ տրված է [Հավելված 15.1](#)-ում: Արտարժույթով նախատեսվող ՄԶԾ ֆինանսավորման ծավալները ներակայացված են [Հավելված 15.2](#)-ում: